

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասախոսությունների ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ

«ՀԱՅԱԳԻՏԱԿ» 1998

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀ /ԲՆԱՇԽԱՐՀ/

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորել
Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Գրախոս՝ պ.գ.թ. Ռ.Յ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ձեռնարկում համառոտակի շարադրված է հայ ժողովրդի
ամբողջական պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր
օրերը:

Գրքում օգտագործվել են հրապարակի վրա եղած
մասնագիտական գրականությունը, բուհական դասագրքերը,
ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի բազմաթիվ
գիտաշխատողների ջանքերով վերջին տարիներին հրատարակված
դպրոցական դասագրքերի, ձեռնարկների նյութերը, պատմա-
գիտության վերջին ձեռքբերումները մի շարք վիճահարույց
հիմնախնդիրների վերաբերյալ:

Ձեռնարկը նախատեսվում է բուհերի ոչ մասնագիտական
ֆակուլտետների ուսանողների, բուհ ընդունվողների, պատմության
ուսուցիչների և ընթերցող լայն հասարակայնության համար:
Մասնագետների և ընթերցողների դիտողությունները շնորհա-
կալությամբ հաշվի կառնվեն:

Բազմադարյան հարուստ մշակույթ ու պատմություն ունեցող հայ
ժողովրդի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Այն իր բարձրագույն
դիրքի պատճառով հայտնի է եղել նաև «Հայկական բարձրավանդակ»,
«Լեռնային երկիր» կամ «Լեռնային կղզի» անուններով: Հայկական
լեռնաշխարհը հյուսիսից սահմանակից է Փոքր Կովկասին, արևելքից՝
Կասպից ծովին և Ուրմիա լճին, արևմուտքից՝ Անտիտավրոսի, հարավից
Կորդվաց լեռներին: Հայկական լեռնաշխարհը ակտիվ երկրաշարժային
գոտի է, որտեղ այսօր էլ շարունակվում են լեռնակազմական
գործընթացները: Այնտեղ է գտնվում Մերձավոր Արևելքի միակ գործող
հրաբխային գագաթը՝ Թոնդուրեկը, որի խառնարանից այժմ էլ ժայթքում
են հրաբխային բեկորներ, տաք գոլորշի և գեյզերներ: Առաջին խոշոր
երկրաշարժի մասին տվյալները վերաբերում են մ.թ. 341թ. ըստ մի հույն
հեղինակի երկու Մասիսները միմյանցից հեռացել և բախվել են՝
մեջտեղում առաջացնելով բլուր: Հայտնի են 893թ. Դվինի, 1319թ. Անիի,
1679թ. Գառնիի, 1926թ. Լենինականի, 1931թ. Չանգեզուրի, 1937թ.
Երևանի, 1988թ. Սպիտակի երկրաշարժերը:

Հայկական լեռնաշխարհը արևելքից արևմուտք կտրատում են երեք
խոշոր լեռնաշղթաներ: Հյուսիսում՝ Փոքր Կովկասն է, որը սկսվում է
Բաթումի մոտից, տարածվում դեպի արևելք և հարավ-արևելք՝ անցնելով
Գեղամա և Դարաբաղի լեռներով: Նրանց հարևանությամբ Հայաստանի
Հանրապետության ամենաբարձր լեռն է Արագածը /4096մ/, երկրորդը՝
Կապուտ Ջուղը /3906մ/, որը Փոքր Կովկասի ամենաբարձր գագաթն է:
Հայկական լեռնաշխարհի կենտրոնում երկրորդ լեռնաշղթան է՝
Հայկական պարը, որը սկսվում է լեռնաշխարհի ամենաբարձր գագաթից՝
Բիբլիական Արարատից /Մեծ Արարատ՝ 5165մ, Փոքր Արարատ՝ 3925մ/:
Հարավում երրորդ լեռնաշղթան է՝ Հայկական Տավրոսը:

Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը Սիփանն է
/4434մ/, որը ընկած է Վանա լճից /Բզնունյաց/ հյուսիս: Հայկական
լեռնաշխարհի երեք խոշոր լճերն են՝ Սևանը /Գեղամա/ ծովի
մակերևույթից բարձրությունը 1916մ է, հայտնի է նրա իշխան ձուկը/, Վանը
(հայտնի են Աղթամար, Կտուց, Լիմ կղզիները և տառեխ ձուկը,
բարձրությունը՝ 1720մ, ունի աղի ջուր/, Ուրմիան /Կապուտան/
ամենածանծաղ լիճն է, չունի կենդանական աշխարհ:

Խոշոր գետերը. 1. Արաքս /Երասխ/: Հաճախ անվանել են մայր
գետ: Այն սկիզբ է առնում Բյուրակնյան լեռներից, հոսելով արևելք:

խառնվում է Կուր գետին, լցվում Կասպից ծովը: Ունի 914 կմ երկարություն:
2. Եփրատը՝ երկրորդ խոշոր գետը, իր երկու ճյուղերով՝ Արևմտյան
Եփրատ. սկզբնավորվում է Երզրումից հյուսիս ընկած Ծաղկավետ
լեռներից, երկրորդը՝ Արևելյան Եփրատ /Արածանի/. սկիզբ է առնում
Ծաղկանց լեռներից: Երկուսն էլ հոսում են արևելքից արևմուտք, Ակն
քաղաքի մոտ խառնվում, հարավում միանում Տիգրիսին, լցվում Պարսից
ծոց: Հայաստանի մասում ունի 500 կմ երկարություն: Երրորդ գետը՝
ճորոխն է /345 կմ/ սկիզբ է առնում Երզրումից հյուսիս, հոսում արևմուտք,
ապա՝ հյուսիս-արևելք և Բաթումի մոտ լցվում Սև ծով: 4. Տիգրիսը Հայաս-
տանով անցնում է 380 կմ, նույնպես ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և
Արևելյան: Առաջինը սկիզբ է առնում Ծավք կամ Ծովք լճից, երկրորդը՝
Հայկական Տավրոսից: Տիգրիսը Հայաստանի հարավում է և թափվում է
Պարսից ծոց՝ Եփրատի հետ: 5. Կուր գետը սկզբնավորվում է Հայկական
լեռնաշխարհում և թափվում Արաքսի հետ Կասպից ծով /1113 կմ/
Ներկայիս Հայաստանի գետերն են՝ Հրազդանը, Աղստևը, Դեբեդը, Ախուր-
յանը, Ռոտանը, Արփան, Ռջշին և այլն: Նշանավոր դաշտերն են Արարա-
տյան, Շիրակի, Աշո, Երզրումի, Երզնկայի, Ալաշկերտի և այլն: Ըստ
բնակլիմայական պայմանների բաժանվում է երեք գոտու՝ ցածրադիր 350-
1000 մ ծովի մակերևույթից բարձր /աճում է խաղող, բամբակ, նուռ, դեղձ
և այլն/, նախալեռնային՝ 1000-1500 մ /հացահատիկ, գարի, երբեմն՝
խաղող/, լեռնային 1500-2000 մ և ավելի /ցրտադիմացկուն հացահատիկ,
գարի: Հարուստ է ալյան մարգագետիններով/: Անտառներ կան
Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Տայքում: Կենդանիներից
տարածված են վարազը, աղվեսը, գայլը, առյուծը, արջը, բորենին,
նապաստակը, եղջերուն: Ջարգացած էր մեղվապահությունը, ձիաբուծու-
թյունը, որդան կարմիր որդի բազմացումը:

Հայկական լեռնաշխարհի հարուստ է օգտակար հանածոներով.
օրինակ՝ աղով /Նախիջևան, Կողբ, Կաղզվան/, պղնձով /Ձանգեզուր,
Ալավերդի/, նավթով /Երզրում/, երկաթով /Վանա լճի հարավը/, ոսկով
/Ապեր, Ձող և այլն/, շինքարով /Շիրակ/, հանքային բուժիչ ջրերով
/Ջերմուկ, Արզնի/ և այլն:

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից գոյություն
են ունեցել երկու հայկական պետություններ՝ Մեծ Հայքը /Արմենիա մայրո/
և Փոքր Հայքը /Արմենիա մինոր/: Երբեմն Մեծ Հայքի աշխարհներից մեկը՝
Ծովքը ևս առանձնացվում է, քանի որ եղել է առանձին թագավորություն:
Հայ ժողովրդի կյանքում ամենամեծ դերը կատարել է Մեծ Հայքը, որը
ըստ 7-րդ դարի «Աշխարհացոյցի» բաժանվել է 15 խոշոր մարզերի /

աշխարհ կամ նահանգ/ Գուգարք, Տայք, Բարձր Հայք /Կարնո աշխարհ/,
Ծովք /Չորրորդ Հայք/, Աղծնիք, Տարոն-Տուրուբերան, Կորդուք /Կործայք,
Մոկք /Մոկս/, Վասպուրական, Պարսկահայք, Փայտակարան, Ուտիք,
Արցախ, Սյունիք և Այրարատ:

Մեծ Հայքի տարածքը հավասար է 311 հազ. քառ. կմ, Փոքր Հայքը՝
68,5 հազ. կմ: Մեծ Հայքի բոլոր 15 աշխարհները միասին ունեն 191
գավառ, որից 37-ը՝ Վասպուրականում, 20-ը՝ Այրարատում: Ամենախոշոր
և նշանավոր աշխարհը Այրարատն է: Բավական է ասել, որ հայոց
մայրաքաղաքների մեծ մասը /Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր,
Կարս, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան/
գտնվել են Այրարատում: Այժմ Հայաստանի Հանրապետության 29,8 հազ.
քառ. կմ տարածքն ամբողջությամբ իր մեջ չի ընդգրկում Մեծ Հայքի ոչ մի
աշխարհ: Մեր հանրապետության կազմում ամենաշատ գավառներ
մտնում են Սյունիքից և Այրարատից, ավելի քիչ Գուգարքից և մեկ գավառ՝
Ուտիքից /Տավուշ/:

Այժմ պայքարում ենք 5-րդ աշխարհի՝ Արցախի համար:
Հայաստանի երբեմնի մասն է կազմել Միջերկրական ծովի հյուսիս-
արևելքում ընկած Կիլիկիան՝ մոտ 50 հազ. քառ. կմ տարածությամբ:
Ուրեմն երեք թագավորությունները միասին զբաղեցրել են ավելի քան
400 հազ. քառ. կմ տարածք:

2. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ - ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարդկային հասարակության պատմությունը պայմանականորեն
բաժանվում է հինգ հասարակարգերի. ա/ նախնադարյան-համայնական
հասարակարգ, բ/ ստրկատիրություն, գ/ ֆեոդալիզմ, դ/ կապիտալիզմ /
ազատ շուկայական հասարակարգ/, ե/ սոցիալիզմ: Շատերը միտք են
հայտնում, որ սոցիալիզմը շինծու /արհեստական/ հասարակարգ է, ուստի
հասարակարգերը չորսն են: Գիտությունը ապացուցել է, որ երկրագունդը
առաջացել է միլիարդավոր տարիներ առաջ՝ արևային համակարգի
պայթյունից, երկար ժամանակ եղել է հրե մի գունդ, աստիճանաբար սառել
է, ժամանակի ընթացքում նրա վրա առաջացել են մթնոլորտը, ջուրը, ապա՝
բուսական և կենդանական աշխարհը: Ըստ Դարվինի կենդանական ավելի
պարզ ձևերից՝ միաբջիջ ամեոբաներից տեսակների զարգացման
ընթացքում առաջացել են ավելի բարդ ձևեր՝ մինչև ամենաբարդ

մարդանման կապիկները, որից էլ, հետագայում աշխատանքի շնորհիվ ձևավորվել է մարդը: Անցումը կապիկից մարդուն, ըստ գիտնականների, տեղի է ունեցել 2 միլիոն տարի առաջ: Այդ պրոցեսը ամենավաղ նկատվել է Մերձավոր Արևելքում /այդ թվում Չայաստանում/: Աշխատանքի շնորհիվ ավելի կատարելագործվել է կապիկի ձեռքը, որը նպաստել է ուղեղի զարգացմանը: Ժամանակի ընթացքում ուղղվել է նրա քայլվածքը և այսպես հանդես է եկել բանական մարդը՝ հոմո սափիենսը: Քանի որ նախնադարյան մարդու գործիքները տարբեր ժամանակներում պատրաստվել են տարբեր նյութից, ուստի ըստ այդմ էլ գիտնականները նախնադարյան հասարակարգը բաժանել են տարբեր ժամանակաշրջանների. 1/ Քարե դար, 2/ Պղնձե դար /էնեոլիթ/, 3/ Բրոնզե դար, 4/ Երկաթե դար: Քարե դարը իր հերթին բաժանվում է 3 շրջանի. ա/ հին քարե դար /պալեոլիթ/, բ/ միջին քարե դար /մեզոլիթ/, գ/ նոր քարե դար /նեոլիթ/:

Պալեոլիթը տևել է մի քանի հարյուր հազար տարի և ավարտվել է ք.ա. 12-րդ հազարամյակում, մեզոլիթը 14 հազ. տարի առաջ: Չայկական լեռնաշխարհը հանդիսացել է պալեոլիթի ամենահին օջախներից մեկը: Բավական է ասել, որ նախկին ԽՍՀՄ-ի տարածքում հայտնաբերված նախնադարյան մարդու հնագույն գործիքները, որոնք պատրաստվում էին հիմնականում կայծքարից, գտնվել են Չայաստանի տարածքում՝ Արտին լեռան համակարգի մեջ մտնող Սատանի դար, Արեգունի, Չարավային կոչվող բլուրների, Արցախի Ազոխ բնակավայրի, Արզնիի պեղումների ժամանակ: Նրանց տարիքը հաշվվում է 800 հազար տարի:

Նախնադարյան մարդիկ ապրում էին մարդկանց մեծ խմբերով, որոնք կապիկից մարդուն անցման շրջանում կոչվում էին հոտեր, իսկ արդեն բանական մարդու՝ հոմո սափիենսի հանդես գալու ժամանակ՝ տոհմեր: Տոհմերը միմյանց հետ կապված էին արյունակցական կապերով, զբաղվում էին բույսերի և պտուղների հավաքչությամբ, վայրի կենդանիների որսով, ավելի ուշ նաև՝ ձկնորսությամբ: Մ.թ. առաջ /Քրիստոսից առաջ/ երեք հարյուր հազար տարի առաջ Չայաստանում սկսվում է կլիմայի շեշտակի փոփոխություն, մերձարևադարձային կլիման հյուսիսում սկսված սառցակալման հետևանքով վերածվում է բարեխառնի:

Կլիմայի սառեցումը ստիպում է նախնադարյան մարդուն զբաղվելու իր հագուստի պրոբլեմով, այսինքն՝ հարկադրում է մարդուն մտածել, կատարելագործել ուղեղը, բարելավել աշխատանքային գործիքները՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը: Սառցադաշտի հանդես գալը ստիպեց մարդուն նաև իրերի չփման

միջոցով ստեղծելու կրակը, որը միաժամանակ եփած մթերքներ ուտելու և վայրի գազաններից պաշտպանվելու հզոր միջոց էր: Կրակի հայտնագործումը բնության նկատմամբ մարդու առաջին խոշոր հաղթանակն էր: Պալեոլիթի վերջին ժամանակաշրջանում, քանի որ տղամարդիկ հիմնականում զբաղվում էին որսորդությամբ և կարող էին երկար ժամանակ բացակայել տնից, ընտանիքում կնոջ դերը ավելի մեծ էր, նույնիսկ զավակները ճանաչվում էին մոր կողմից, մանավանդ որ, բազմամուսնության պատճառով հաճախ հայտնի չէր երեխայի հայրը: Այսպես անցում է կատարվում դեպի մայրիշխանություն: Արտադրողականության բարձրացումը, բնության ուժերի դեմ պայքարը նախնադարյան տոհմերին ստիպեցին միավորվել ավելի մեծ խմբերում՝ ցեղերում: Այս ժամանակաշրջանը համընկավ սառցադաշտի հալվելուն և անցնելուն դեպի մեզոլիթ, որը տևել է մ.թ.ա. 12-ից 7-րդ հազարամյակները: Մեզոլիթի ժամանակաշրջանում մարդկային հոտի փոխարեն վերջնականապես ձևավորվում է մայրական տոհմային համայնքը, սկսվում է մայրիշխանության դարաշրջանը: Մեծ գործածում է ստանում նեոլիթը: Տոհմերի փոխարեն ավելի հաճախակի են դառնում ցեղերը: Նեոլիթը /մ.թ.ա. 7-5-րդ հազարամյակներ/ աչքի է ընկնում անցումով մայրիշխանությունից դեպի հայրիշխանությունը, քանի որ առաջ է գալիս գույգամուսնությունը և որսորդության կողքին՝ երկրագործությունը: Ավելի կատարելագործվում են աշխատանքային գործիքները: Չանդես են գալիս սայլը, կավե ամանները:

Նեոլիթի շրջանում ցեղերի միավորումից աստիճանաբար հանդես են գալիս ցեղային համայնքները: Բնության անհասկանալի ուժերի նկատմամբ անզորությունը մարդկանց մոտ աստիճանաբար ծնեց կրոնական հավատալիքներ, այսինքն այն ամենը, ինչ մարդը ի վիճակի չէր հասկանալ՝ սկսեց աստվածացնել: Այսպես առաջացան երկնքի, արեգակի, քրի, կենդանիների պաշտամունքը, որոնց մատուցում էին զոհեր: Բուսականության և կենդանիների պաշտամունքը կոչվում է տոտեմիզմ: Այսպես հանդես եկավ բազմաստվածությունը՝ հեթանոսությունը:

Արդեն 5-րդ հազարամյակի վերջին և չորրորդի սկզբին մ.թ.ա. հայտնաբերվում է պղինձը, այսպես սկսվում է էնեոլիթը՝ պղնձե-քարե դարը, որը տևում է մինչև 4-րդ հազարամյակի վերջը: Այդ ժամանակ ընտելացվում են այծը, ոչխարը, խոշոր եղջերավոր անասունները:

Մ.թ.ա. 3-րդ հազ. սկզբից անագի և պղնձի խառնուրդից մարդը ստանում է բրոնզը՝ դարձնելով իր գործիքների հիմնական նյութը: Բրոնզե

դարը տևում է մինչև մ.թ.ա. 10-րդ դարը: Բրոնզեդարյան մշակույթը հայտնաբերվել է Հայաստանի բազմաթիվ վայրերում Հառիճ /Թալին/, Թագավորանիստ /Վանաձոր/, Լճաշեն /Սևանի ափին/:

Բրոնզե դարում ավարտվում է վերջնականապես անցումը դեպի հայրիշխանություն:

Մեր թ.ա. 10-րդ դարում աշխարհում հայտնաբերվում է երկաթը, որով սկսվում է երկաթե դարը, սակայն Հայաստանում այն հայտնաբերվել է ավելի վաղ մ.թ.ա. 14-րդ դարում: Երկաթի հայտնագործումը հեղաշրջում առաջացրեց պատմության մեջ: Ավարտվեցին աշխատանքի հասարակական բաժանումները՝ երկրագործությունը բաժանվեց անասնապահությունից, արհեստները՝ երկրագործությունից: Երկաթը բարձրացրեց արտադրողականությունը, առաջացրեց սոցիալական անհավասարություն, այսինքն, մի խումբ մարդիկ՝ ավագանին սկսեց ավելի շատ տիրանալ աշխատանքի արդյունքին: Ցեղերից առաջացան ավելի մեծ խմբեր՝ ցեղային միություններ: Ցեղերի ավելի չունևոր մարդկանց սկսեցին ստրկացնել: Ստրուկներ էին դարձնում նաև հարևան ցեղերի ռազմագերիներին: Այսպես առաջացավ դասակարգային հասարակությունը, որի համար նախկին ցեղային միությունների փոխարեն պետք էր ճնշման ուժեղ գործիք՝ պետություն: 4-2-րդ հազարամյակներում ձևավորվում են աշխարհի մի շարք պետություններ՝ եգիպտոսը, Շումերը, Աքքադը և այլն:

3 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Երկրագնդի վրա ապրող հազարավոր ժողովուրդներ այսօր խոսում են մոտավորապես 4 հազար լեզուներով. դրանցից մեկն է հայերենը, որով խոսում են մոտ 8 մլն. հայերից 5-6 միլիոնը: Երկար ժամանակ հայ ժողովրդի և նրա լեզվի առաջացման մասին գիտնականների շրջանում ընթացել են բուռն վեճեր: Այդ հարցի պատասխանը առաջինը փորձել է տալ 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացին: Ըստ նրա «Հայոց պատմության» Հայկի և Բելի ընդհարումից հետո, Հայկը բնակություն է հաստատում մի լճի ափին /Վան/, որտեղ հետո հաղթում է Բելին: Այդ վայրի անունից ծագում է Հայոց ծոր անունը, երկիրը կոչվում է Հայք: Այս առապելի համաձայն հայ ժողովրդի և Հայաստանի անվանումները ծագում են Հայկից: Հետագայի բոլոր պատմիչները կրկնել են այս տեսակետը մինչև 18-րդ դարի վերջը՝ պատմաբան Միքայել Չամչյանը:

Ուրիշ հեղինակներ հայ ժողովրդի ծագումը կապում էին Նոյի առասպելի հետ, վրացական առասպելի Թորգոմի 8 որդիներից Հայոսի, հունական առասպելի՝ Արմենիոսի անունների հետ: Սակայն այս բոլոր բացատրությունները առասպելական են և ոչ լրիվ հավատ ներշնչող: Հետագայում լակադեմիկոսներ Մառը և Ղափանցյանը ապացուցեցին, որ հայերը եկվորներ չեն, այլ տեղաբնիկներ են: Սակայն սխալմամբ նրանք էլ հայերենը համարում էին խառնածին լեզու, այսինքն՝ հնդեվրոպական և կովկասյան լեզուների խառնուրդ: Մինչդեռ, խառնածին լեզուներ չեն լինում: 19-րդ դ. եվրոպացի լեզվաբաններ Պետերմանը, Վինդիշմանը, Հյուբշմանը ապացուցեցին, որ հայերենը իր ծագումով հնդեվրոպական լեզու է: Նույն տեսակետն են այժմ պաշտպանում լեզվաբաններ Իվանովը, Գամգրելիձեն և ուրիշներ: Վերջիններս ցույց տվեցին, որ հնդեվրոպական ժողովուրդների /հնդիկներ, պարսիկներ, սլավոններ, գերմանացիներ, հույներ, հայեր և այլն/ հայրենիքը եղել է յոթ Բալկանները, Հնդկաստանը, Սև ծովի հյուսիսային շրջանը, այլ՝ Հայկական լեռնաշխարհը, որից հետագայում տարածվել և զբաղեցրել են ներկայիս Հնդկաստանից եվրոպա ընկած տարածքը, ուստի կոչվում են հնդեվրոպական: Նախա-ժողովրդից տեղում մնացել են միայն հայերն ու պարսիկները: Այս վերջինը գիտականորեն ապացուցված և պաշտոնական տեսակետն է:

Ի՞նչ ցեղեր ու ժողովուրդներ են բնակվել Հայկական լեռնաշխարհում և նրա շրջակայքում նախքան հայ ժողովրդի կազմավորումը:

1. Փոքր Ասիայի՝ Հայկական լեռնաշխարհին հարևան շրջանները մ.թ.ա. 2-րդ հազարամյակում բնակեցված էին հնդեվրոպական խեթական ու լուվիական իրար ազգակից ցեղերով: Խեթական պետությունը՝ Խաթթին առաջացել է մ.թ.ա. 18-րդ դարում և գոյություն է ունեցել մինչև մ.թ. ա. 12-րդ դարի սկիզբը: Մայրաքաղաքն է եղել Խաթուսասը: Խեթերն ունեցել են իրենց սեպագիր գրերը:

Խեթերը սերտ շփում ունեին Հայկական լեռնաշխարհի ցեղերի հետ, իսկ նրանց ազգակից լուվացիները նաև ապրել են լեռնաշխարհի արևմտյան ծայրամասերում: Լուվացիները գրել են հիերոգլիֆներով:

2. Լեռնաշխարհի հարավային գոտին մասամբ բնակեցված է եղել խուռիական ցեղերով: Խուռիների հիմնական զանգվածը բնակվում էր Հյուսիսային Միջագետքում: Այստեղ մ.թ.ա. 17-րդ դարում խուռիները ստեղծում են Միտաննի պետությունը՝ Վաշուզանն մայրաքաղաքով:

3. Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում՝ Վանա լճից մինչև Եփրատ գետը տարածվում էր Նաիրի ցեղային միությունը:

Այն բաղկացած էր բազմաթիվ ցեղերից: Նրանց գլուխ էին կանգնած ցեղապետ-արքայիկները: Ասորեստանի արքաներն իրենց թալանչիական արշավանքների ժամանակ բախվում էին Նաիրի միության 30, 40 անգամ 60 և ավելի ցեղերի միացյալ ուժերի հետ:

4. Արարատյան դաշտում և նրանից հյուսիս տարածվում էր էթիունի ցեղային միությունը: Արևմուտքում այն սահմանակից էր Նաիրիին, արևելքում ընդգրկում էր Սևանա լճի ավազանը: Սևանա լճի շրջակայքը կոչվում էր «Վեդուրի էթիունի» /«Ջրային էթիունի»/: էթիունիի կենտրոնական մասն էր կազմում Ազա երկիրը, որի տարածքի վրա այժմ գտնվում է Երևանը:

5. Հայկական լեռնաշխարհի հյուսիս արևմուտքում գտնվում էր Դայա ցեղային միությունը: Նրա անունը փոխանցվել է հայկական Տայք նահանգին:

6. Վանա լճից դեպի հարավ ձգվող տարածքը զբաղեցնում էր ութ ցեղերից բաղկացած Ուրատրի /կամ Ուրուատրի/ ցեղային միությունը: Հայկական լեռնաշխարհում ապրում էին և ուրիշ ցեղեր: Եփրատի աջ ափին ընկած էր Թեգարամա երկիրը, որն Աստվածաշնչում անվանվում է «Թորգոմի տուն»: Վերջինից հարավ Մելիդ /Մելիտինե, Մալաթիա/ երկիրն էր:

Հայ ժողովրդի կազմավորումը սկսվել է Ք.ա. երրորդ հազարամյակում և վերջնականապես ավարտվել մ.թ.ա. 2-րդ դարում: Այդ գործընթացին մասնակցել են վերոհիշյալ ցեղերը: Սակայն նրանում վճռական դեր են կատարել էթնիկական /ազգային/ երկու միավորներ՝ Հայասա-Ազգիի բնակիչներ հայ և Արմե-Շուբրիա ցեղային միության արմեն ցեղերը:

Արմե-Շուբրիա. մ.թ.ա. 23-րդ դարի արձանագրություններում հանդիպում ենք առաջին հիշատակություններին Արմանի կամ Արմանում երկրի մասին: Երկիրը հիշատակվում է նաև Ուրմե-Ուրումե-Արմե և այլ ձևերով: Խոսքը վերաբերվում է Հայկական լեռնաշխարհում հանդես եկած Արմե-Շուբրիա երկրի մասին, որն ընկած էր Շոփքի, Աղծնիքի և Տարոնի շրջանում: Կրճատ սրանց ասում են արմեններ: Արմենների մասին հիշատակությունները շարունակվում են մինչև մ.թ.ա. 8-ից 5-րդ դդ.: Արգիշտին 773թ. գրավում է Արմե-Շուբրիա ցեղային միությունը և միացնում իր պետությանը: Արմենների մասին տեղեկություններ է պահպանվել հույն հռչակավոր պատմիչ Հերոդոտի մոտ մ.թ.ա. 5-դ դարում:

Հայասա /Հայասա-Ազգի/. Մ.թ.ա. 15-րդ դարում Տայքում, Բարձր Հայքում և Փոքր Հայքում հանդես է գալիս 2-րդ հայկական ուժեր

իշխանությունը՝ ցեղային միությունը՝ Հայասա-Ազգին՝ Եփրատի ափին ընկած Կումախա՝ հետագայում Անի-Կամախ մայրաքաղաքով: Ասա վերջավորությունը նշանակում է տեղ, երկիր, այսինքն Հայասա՝ Հայաստան: Հայասայի մասին հիշատակում են խեթական արձանագրությունները: Մեզ են հասել Կարաննի, Անիա արքայիկ-ցեղապետերի անունները, որոնք հիշատակվում են իբրև թագավորներ:

խեթական թագավորները հաճախ բախվել են Հայասայի հետ Մ.թ.ա. 14-րդ դարի սկզբներին: Նրանք երկու արշավանք են կատարել Հայասայի դեմ, բայց չեն կարողացել հաղթել նրան: Դարի կեսերին խեթերը կրկին արշավում են Հայասայի վրա և համառ պայքարն ավարտվում է դաշինքով: Խաթթիի թագավորն իր քրոջը ամուսնացնում է Հայասայի արքա Խուկաննասի հետ: Վերջինս պարտավորվում է հավատարիմ մնալ Խաթթիին, ռազմական օգնություն ցույց տալ նրան և այլևս ապաստան չտալ խեթական փախստականներին:

Սակայն պայմանագիրը խախտում է Հայասայի նոր արքան՝ Անիան: Նա գրոհում է Խաթթիի վրա և մեծ ավար տանում: Այնուհետև Խաթթիի թագավորը մեծ զորքով ներխուժում է Հայասա, գրավում նրա քաղաքներն ու ետ ստանում գերեվարած խեթերին: Շուտով Հայասան վերականգնում է իր անկախությունը:

Արմենները ու հայասները միմյանց հետ գտնվում էին սերտ կապերի մեջ: Հարավի ժողովուրդներն իրենց աշխարհագրական դիրքով ավելի շատ շփվում էին արմենների հետ, ուստի բոլոր ժողովուրդները մեզ ճանաչում են արմեններ- Արմենիա անուններով: Վրացիները շփվում էին հայասանների հետ, որոնք ապրում էին իրենցից հարավ /սամխրիթի/, որից էլ սոմենի-հայ, սոմխեթի-Հայաստան անունները:

[Քանի որ հայասները ավելի հզոր ցեղային միություն էին, իրենց ենթարկեցին արմեններին և ձևավորված նոր ժողովրդի համար ընտրեցին ինքնանվանման հայ ձևը:]

2-նայած արմեններն ու հայերը կազմեցին հայ ժողովրդի էթնիկական հիմքը, սակայն այդ գործընթացին մասնակցեցին բազմաթիվ այլ ցեղեր և այլ ժողովուրդներ՝ կիմերներ, սկյութներ, ուրարտացիներ, նաիրյան ցեղեր:

Հայ ժողովրդի կազմավորման գործընթացի ավարտի մասին վկայում է հույն հեղինակ Ստրաբոնը՝ նա նշում է, որ մ.թ.ա. 2-րդ դարում Հայկական լեռնաշխարհում բոլորը խոսում էին մեկ ընդհանուր լեզվով՝ հայերենով, ուրեմն ավարտվել էր այդ երկարատև գործընթացը:

4. ՈՒՐԱՐՏՈՒ- ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում կազմավորվում են մի շարք ցեղային միություններ՝ Նաիրի, Արմե-Շուբրիա, Հայասա-Ազգի և այլն: Այս ցեղային միությունների հետագա մերձեցումը հանգեցրեց նրան, որ մ.թ.ա. 9-րդ դարի առաջին կեսին պատմության քառերաբեմ իջավ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություններից մեկը՝ Վանա լճի շրջակայքում՝ Ուրարտույ կամ Արարատյան երկիր, Վանի թագավորություն և այլ անուններով: Առայսօր գիտնականների շրջանում վեճեր են ընթանում այն հարցի շուրջը, թե այդ պետությունը զուտ հայկական թե նախահայկական պետություն էր: Գիտնականների մի խումբը (Բ. Պիտտորովսկի, Ի. Դյակոնով, Գ. Սարգսյան և ուրիշներ/ գտնում են, որ այդ պետությունը հայկական էր, և ուրարտացիները հայեր էն, չնայած նրանցում մեծ դեր են խաղացել հայկական ցեղերը: Նրանց հակառակորդները՝ հակաուրարտագետները (Բ. Ուլուբաբյան, Բ. Իշխանյան, Լ. Շահինյան և ուրիշներ/ պնդում են, որ Ուրարատու պետություն չի եղել, այլ դա նույն Ուրարտու-Ուրարատ-Արարատ լեզվական անցման հետևանքով Արարատի անվան աղավաղված ձևն է, այսինքն, պետք է ասել ոչ թե Ուրարտու, այլ Արարատի կամ Արարատյան թագավորություն, մանավանդ, որ Ուրարտու ձևով այդ պետությանը անվանել են հարևան ասորեստանցիները, իսկ իրենք իրենց երկրին բնակիչներն անվանել են Բիայնիլի: ✓

Ուրարտուի կամ Ուրուատուի ձևով այս պետությունն առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. 13-րդ դարում:

Պետության հիմնադիրը Արամեն էր (Արամը/ մ.թ.ա. /859- 843թթ./, ուստի դինաստիան նրա անունով հաճախ կոչում են Արամեական:)

Արամը երկար պայքար է մղել իր պետության հիմնադրման առաջին օրերից հարևան հզոր Ասորեստանի դեմ: Նրա հաջորդ Սարգուր I-ը /835-825թթ. մ.թ.ա./ կառուցեց մայրաքաղաք Տուշպան /այժմ՝ Վան/ և շարունակեց պայքարը Ասորեստանի դեմ: Նա իր թողած մի արձանագրությունում իրեն անվանում է «մեծ, հզոր, տիեզերքի արքա»: Իշպուհինը /825- 810 մ.թ.ա./ իր պետության սահմանները Վանա լճից հասցրեց մինչև Ուրմիա և միացրեց Մուսասիր քաղաքը, որը դարձրեց երկրի հոգևոր կենտրոնը:

Մ.թ.ա. 9-րդ դարի վերջից Ուրարտուն դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը: Դա հետևանք էր երկրի սոցիալ-տնտեսական բուռն զարգացման և Ասորեստանի թուլացման: }

Նշպուհինի որդին՝ Մենուան /810- 786 մ.թ.ա./ իր պետությանը միացրեց Տարոնը, Ճոփքը՝ հասնելով մինչև Եփրատի աջ ափը: Նա առաջինն էր, որ գնահատեց Արարատյան դաշտի նշանակությունը և այնտեղ կատարեց զգալի շինարարական աշխատանք:

Արաքսի աջ ափին Մենուան կառուցեց քաղաք-ամրոց՝ Մենուախինիլի /Մենուայի քաղաք/ անունով: Նշանավոր է նրա կառուցած ջրանցքը Վանում՝ 72կմ երկարությամբ, որը հայտնի է Շամիրամի ջրանցք անունով: Արևմուտքում Մենուան հասավ մինչև Ճոփք և Մելիդ /Մալաթիա/ իշխանությունները: Նրա օրոք ավարտվում է Տուշպայի պաշտպանական կառույցների շինարարությունը:

Մենուային հաջորդեց նրա որդի Արգիշտի I-ը /786- 764 մ.թ.ա./, որի օրոք երկիրը հասավ իր հզորացման գագաթնակետին: Կրկնվեցին արշավանքները Ճոփք, Մելիդ, Խաթթի, որտեղից բերվեց 30 հազ. գերի: Իր գահակալման 5-րդ տարում՝ 782 թ. մ.թ.ա., այժմյան Երևանի հարավ-արևելյան մասում, Արին-Քերդ բլրի վրա, նա կառուցեց մի հզոր քաղաք-ամրոց և կոչեց Էրեբունի: Այդ մասին հաղորդում են 1950թ. Արին-Քերդում հայտնաբերված Արգիշտիի թողած երկու արձանագրությունները. «Նալդ աստծու մեծությամբ, Արգիշտի» որդի Մենուայի, այս հզոր քաղաք-ամրոցը կառուցեցի, նրա անուն սահմանեցի Էրեբունի՝ Բիայնիլի երկրի հզորացման և թշնամիների սարսափեցման ու խաղաղեցման համար»:

Գիտնականներն ապացուցում են, որ դա նույն Երևանն է՝ Էրեբունի-Էրեվունի-Երևան լեզվական անցման արդյունքը: Դրանով մերժվում է այն տեսակետը, ըստ որի Երևանի անվանումը կապված է Նոյի Արարատից առաջին երևացող բնակավայրի երևալու հետ: Էրեբունիում Արգիշտին կառուցեց բազմաթիվ շենքեր, տաճարներ, տնկեց այգիներ և բնակեցրեց 6 հազար գերիների: 1998թ. լրացավ Երևանի հիմնադրման 2780-ամյակը: Արարատյան դաշտում Արգիշտին հիմնադրեց Արգիշտիխինիլի քաղաքը /հետագայում Արմավիր մայրաքաղաքը/: Դյուսիսում Արգիշտին գրավեց Շիրակը, Դայա երկիրը /Տայք/, ապա պարտության մատնեց հարևան Ասորեստանին՝ նրանից խլելով բազմաթիվ հողեր: Պետության տարածքը հասավ հետագայի պատմական Մեծ Հայքի հիմնական մասին: }

Ուրարտուն իր հզոր դիրքը պահպանեց Սարգուր II-ի /764-735 մ.թ.ա./ գահակալության առաջին շրջանում: Ուրարտական բանակը արշավեց Զլդըր լճի և Սևանի շրջակայքը: Վերջին տարիներին Ասորեստանը զգալիորեն ուժեղացավ և 743թ. Թիգլաթպալասար III-ի օրոք Ուրարտուից գրավեց հարևան մի շարք շրջաններ: Ռուսա I-ի օրոք /735- 714/ Ուրարտուն ենթարկվեց քոչվոր կիմերների հարձակումներին:

Ռուսան Տուշպայի մերձակայքում հիմնեց Ռուսախիմիլի նոր մայրաքաղաքը:

714թ. մ.թ.ա. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը արշավանք ձեռնարկեց Ուրարտուի դեմ: Նա գրավեց ու թալանեց հարուստ Մուսասիր քաղաքը, որտեղ գտնվում էր խալդ աստվու տաճարը, հսկայական քանակության ոսկի տարավ: Լսելով Մուսասիրի ավերման մասին Ռուսան ինքնասպան եղավ: Ամբողջ 8-րդ դարի ընթացքում Ուրարտուն ենթարկվեց նոր արշավանքների կիմերների, իսկ 7-րդ դարում՝ Ասորեստանի և սկյութների կողմից և հետզհետե թուլացավ: Վանի թագավորության վերջին շրջանի նշանավոր թագավորներից էր Ռուսա II -ը /685- 645/, որն հայտնի է իր բազմաթիվ շինարարական աշխատանքներով: Նա էրեբունիի տարածքում Կարմիր Բլուրում կառուցել է Թեյշեբայինի քաղաքը: Մ.թ.ա. 7-րդ դարի վերջին Փոքր Ասիայում հզորացավ Մարաստանը /այժմ Պարսկաստան/, որը 612թ. կործանեց Ասորեստանը, իսկ 580-ական թթ.՝ Ուրարտուն, որի վերջին թագավորը Ռուսա III-ն էր /605-585/:

Ուրարտուն ունեցել է հարուստ մշակույթ: Մեզ է հասել նրանց գիրը՝ 450 սեպագիր արձանագրություն: Գրերը գրվում են ձախից աջ: Ուրարտացիներն ունեցել են, ըստ մի արձանագրության, 79 աստված. գլխավորը խալդին էր, որի տաճարը Մուսասիրում էր: Երկրորդ աստվածն էր Թեյշեբան /ջրի աստված/: Մայրաքաղաքի աստվածուհին էր Տուշպեյան, արևինը՝ Շիվինին:

Ուրարտուն ունեցել է հարուստ քանդակագործություն, ճարտարապետություն, ջրանցքաշինություն: Հայտնի էր Երևանի տարածքում Հրազդանից թունելով Ռուսա II-ի հանած ջրանցքը, որը մինչև այժմ էլ ջուր է մատակարարում Արարատյան դաշտին:

Վանի թագավորությունն աչքի էր ընկնում 2-3 շարք պարիսպներ, միջնաբերդեր ունեցող քաղաքներով /Տուշպա, էրեբունի, Արգիշտիխիմիլի, Թեյշեբայինի, Ռուսախիմիլի և այլն/: Ուրարտական տաճարներից նշանավորը Մուսասիրում խալդին նվիրված տաճարն էր:

Պալատական շենքերի ներքին պատերը ծածկվում էին բազմազույն որմնանկարներով՝ աստվածների, պաշտամունքային երևույթների պատկերներով:

Արարատյան թագավորությունը հին արևելյան տիպի ստրկատիրական պետություն էր, որի գլուխ կանգնած էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ:

Պետության հիմքը բանակն էր, որը երկիրը պաշտպանում էր օտար

հարձակումներից, օգտագործվում էր նաև հարկերի հավաքման գործում: Այն բաղկացած էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից:

Ըստ հակաուրարտագետների այս ամբողջ հարուստ մշակույթն ու պատմությունը զուտ հայկական են, իսկ ուրարտագետների կարծիքով՝ նախահայկական, շատ հայկական ընդհանրություններով:

5. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Մ.թ.ա. 7-րդ դ. վերջերին Առաջավոր Ասիայում հզորացավ Մարաստանը /այժմ՝ Պարսկաստան/, որի հարվածների տակ 612թ. կործանվեց երբեմնի հզոր Ասորեստանի մայրաքաղաք Նինվե, իսկ 685թ.՝ Վանի թագավորությունը: Ըստ Մովսես Խորենացու բերած մի ավանդական պատմության մարերի թագավոր Կիաքսարի հետ Նինվեի գրավմանը և Ուրարտուի կործանմանը մասնակցել են հայկական ցեղերը՝ «հայոց առաջին պսակավոր», Հայկ Նահապետի տոհմից սերված Պարույրի՝ Սկայորդու որդու գլխավորությամբ: Հավանաբար Պարույրը եղել է Արմեն-Շուբրիայի արքան, և Կիաքսարը իրեն մատուցած ծառայության դիմաց նրան ճանաչել է իբրև Հայոց թագավոր: 609թ. Սկայորդու և մարերի համատեղ ուժերը գրավում են Տուշպան, որի շրջակայքում 585 թվականից հիմնվում է նոր թագավորություն: Տուշպա-Վանում ամրացած Պարույր արքայի ազգականներից Երվանդ Սակավակյացը հիմնում է նոր թագավորական դինաստիա, որն հայտնի է «Երվանդունյաց» կամ «Երվանդական» անուններով /585- 201թթ./: Հիմնականում նախկին պետության սահմաններում Երվանդունիները միավորում են Երկիրը, որը հարավից սահմանակից էր Մարաստանին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ մերձսևծովյան շրջաններին: Հայկական գործի թիվն այդ ժամանակ հասել էր 48 հազարի՝ 40 հազարը հետևակ, 8 հազարը՝ հեծյալ:

Շուտով հզորացող Երվանդունյաց Հայաստանը բախվում է իր նախկին դաշնակցի՝ Մարաստանի հետ: Այդ պայքարում հայերին աջակցում են պարսից Աքեմենյանները՝ Կյուրոս Մեծի գլխավորությամբ, որոնք ապստամբել էին Մարաստանի դեմ:

Կյուրոսին հաջողվում է տապալել Մարաստանի իշխանությունը: Նրան այդ գործում օգնում էր նոր հայոց թագավոր Տիգրան I-ը՝ Երվանդ Սակավակյացի որդին: Մ.թ.ա. 550թ. Կյուրոսը ստեղծում է պատմության մեջ մինչ այդ գոյություն ունեցած աշխարհակալ տերություններից

ամենամեծը՝ Աքեմենյան պարսկական տերությունը:

Հայկական թագավորությունը, որպես Կյուրոսի դաշնակից, իր արտոնյալ տեղն ուներ այդ տերության համակարգում: Սակայն վիճակը փոխվեց Աքեմենյան Դարեհ I թագավորի օրոք: Նրա դաժան իշխանությունը մեծ դժգոհություն էր առաջացնում ամբողջ տերության մեջ: Նրա դեմ ապստամբում են տերության գրեթե բոլոր երկրները, նաև Հայաստանը: Ապստամբած երկրների թվում էր նաև Բաբելոնիան, որտեղ ապստամբության գլուխ էր կանգնել հայ Արախսան: Արախսան հայտարարել էր իրեն Բաբելոնի թագավոր՝ Նաբուքոդոնոսոր անունով:

Մ.թ.ա. 522- 520թթ. Դարեհը դաժանորեն ճնշում է ապստամբությունը և վերամիավորում տերությունը: Այդ գործողությունների փառաբանումն է պարունակում նրա հայտնի Բեհիսթունյան արձանագրությունը: Եռալեզու արձանագրության պարսկերեն և էլամերեն մասերում Հայաստանը անվանվում է «Արմենիա», հայերը՝ «արմինացի»: Բաբելոնն մասում այն շարունակում է հնացած ձևով՝ «Ուրարտու» /Ուրաշտու/ անվանվել, իսկ բնակիչները՝ «ուրարտացի» թեև, ինչպես տեսանք, Ուրարտուն արդեն գոյություն չուներ:

Ապստամբած Հայաստանի դեմ Դարեհը երկու մեծ բանակ է ղեկավարում: Բանակներից մեկը վարում էր հայ Դադարշիսը, մյուսը՝ պարսիկ մի զորավար: Նրանք հինգ ճակատամարտ են տալիս ապստամբած հայերին, մինչև որ հաջողվում է ընկճել նրանց: Հայաստանը ժամանակավորապես կորցնում է իր անկախությունը և ընկնում պարսից Աքեմենյանների տիրապետության տակ:

Մոտ երկու դար Երվանդունյաց Հայաստանը եղել է Աքեմենյան տերության 20 սատրապություններից /նահանգներից/ 13-րդը և 18-րդը: 13-րդ սատրապության կենտրոնը Տուշպա-Վանն էր, 18-ինը՝ Երեբունին: Աքեմենյանների օրոք Հայաստանը տնտեսական վերելք ապրեց: Նրա տարածքով էր անցնում Դարեհի կառուցած «Արքայական ճանապարհի» 300 կմ հատվածը:

— Մ.թ.ա. 401թ. պարսից թագավորի դեմ ապստամբում է իր եղբայրը և պարտություն կրում: Նա վարձել էր հույն զինվորների 10 հազարանոց /բյուր/ մի ջոկատ, որն այժմ ստիպված է լինում նահանջել: Ճանապարհը տանում է Միջագետքից դեպի Սև ծով՝ Հայաստանի միջով: Այդ ջոկատի հրամանատարն էր հայտնի հույն գրող, պատմիչ ու զորավար Քսենոփոնը, որն իր տպավորությունները գրի է առել «Անաբասիս» աշխատության մեջ:

Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերից էին, ըստ Քսենոփոնի՝ կարդուխները, մարդերը, տաուխները և այլն, որոնք շուտով միաձուլվեցին հայ ժողովրդին:

Աքեմենյանների տիրապետության վերջին շրջանում Հայաստանը բաժանվում է երկու մասի՝ Մեծ Հայաստանի /Մեծ Հայք/ և Փոքր Հայաստանի /Փոքր Հայք/: Փոքր Հայքը գրավում էր Եփրատ գետի վերին հոսանքից դեպի արևմուտք, մինչև Հալիս գետի վերին հոսանքն ընկած հողերը:

— Մ.թ.ա. 4-րդ դ. Աքեմենյան տերությունը բռնել էր քայքայման ուղին: Նրա անկումն արագացրեց Բալկանյան թերակղզու հյուսիսում գտնվող Մակեդոնիայի արքա Ալեքսանդր Մեծի ձեռնարկած արշավանքը: Ալեքսանդր Մակեդոնացին մ.թ.ա. 334թ. իր զորքով անցավ Սևծովյան նեղուցները և երեք տարվա ընթացքում նվաճեց Աքեմենյան տերության արևմտյան մասը՝ ներառյալ Եգիպտոսը:

Մ.թ.ա. 331թ. Ասորեստանի Գավգամելա վայրում Ալեքսանդրը վճռական հաղթանակ է տանում Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ III-ի նկատմամբ: Դարեհը փախուստի է դիմում և ապա սպանվում իր մերձավորների ձեռքով: Գավգամելայի ճակատամարտին ևս մասնակցել են Մեծ Հայքի և Փոքր Հայքի ռազմաջոկատները: Մեծ Հայքի ջոկատի հրամանատարն էր Երվանդ սատրապը:

Ստեղծվում է մի նոր հսկա տերություն՝ Մակեդոնիայից մինչև Հնդկաստան:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով Առաջավոր Ասիայում սկսվում է այսպես կոչված «հելլենիզմի» դարաշրջանը:

Մակեդոնացու զորքերը Հայաստան չեն մտնում բացի Սպերից, որտեղ կային ոսկու հանքեր: Հայաստանն, այսպիսով, վերականգնվում է որպես ինքնուրույն թագավորություն: Հայաստանի թագավոր է դառնում վերջին ակեմենյան սատրապ, Գավգամելայի ճակատամարտի մասնակից Երվանդ III-ը:

Փոքր Հայքը ևս ազատագրվում է և դառնում անկախ թագավորություն:

Ալեքսանդրի հսկայածավալ տերությունը երկար կյանք չունեցավ: Տիրակալի մահվանից հետո /մ.թ.ա. 323թ./ այն բաժանվեց մի քանի մասերի: Դրանցից երեք խոշորներն էին՝ Եգիպտոսը, Մակեդոնիան և Սելևկյան տերությունը: Մ.թ.ա. 3-րդ դարում Սելևկյանները անընդհատ փորձում էին տիրանալ Հայաստանին կամ գոնե հարկատու դարձնել նրան: Սակայն Հայաստանին հաջողվում էր պահպանել իր

անկախությունը:

Երկրի մայրաքաղաք է դառնում ուրարտական Արգիշտիխիմիլի քաղաքի հիման վրա առաջացած հայկական Արմավիր քաղաքը: Կառուցվում են նաև մի շարք այլ քաղաքներ: Ախուրյանի և Արաքսի խառնարանի վայրում հիմնվում է Երվանդաշատ խոշոր քաղաքը: Այդ քաղաքը ժամանակի ընթացքում դառնում է հայկական թագավորության մայրաքաղաք՝ փոխարինելով Արմավիրին: Ախուրյանի ափին ստեղծվում է խոշոր քաղաք-սրբավայր Բագարանը: Հիմնադրվում են Երվանդավան ու Երվանդակերտ բնակավայրերը:

Մ.թ.ա. 3-րդ դարի առաջին կեսում Երվանդունիները տարածում են իրենց իշխանությունը Կոմմագենե /հին Կումմուխ/ երկրի վրա: Այդ երկիրը բաժանված էր Հայաստանի Ծոփք երկրամասից Եփրատ գետով: Շուտով Կոմմագենեն և Ծոփքը անջատվում են հայկական թագավորությունից և դառնում ինքնուրույն միացյալ պետություն: Այստեղ իշխում է Երվանդունյաց տոհմից ծագող Սամոս թագավորը, որին հաջորդում է նրա որդին Արշամը: Սամոսի օրոք ստեղծվում է Սամոսատ քաղաքը Կոմմագենեում, իսկ՝ Արշամը կառուցում է Արշամաշատը՝ Ծոփքում:

Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունը, սակայն, երկար կյանք չի ունենում և բաժանվում է երկու մասի՝ Ծոփքի և Կոմմագենեի:

Այսպիսով, մ.թ.ա. 3-րդ դարի վերջերին կար հայկական չորս թագավորություն՝ Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք և Կոմմագենե:

6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՇԵՍ Ի-Ի ՕՐՈՔ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Մոլվեսե խորենացին մանրամասն նկարագրում է, թե ինչպես մանուկ ժամանակ Արտաշեսը հալածանքների էր ենթարկվել Հայաստանի թագավոր Երվանդ IV-րդ Վերջինի /մ.թ.ա. 220- 201/ կողմից: Սա վախենում էր, որ Արտաշեսը, հասունանալով, կխլի իրենից արքայական գահը: Այդպես էլ լինում է: 201թ. Անտիոքոսի օգնությամբ Արտաշեսը մտնում է Հայաստան, ճակատամարտում պարտության մատնում Երվանդի զորքերին, գրավում Երվանդաշատ մայրաքաղաքը: Երվանդը սպանվում է: Արտաշեսը թագավորական շուքով թաղում է նրան: 7

Ծոփքում ևս իշխանությունից զրկվում և սպանվում է տեղի Երվանդունիների վերջին ներկայացուցիչ Քսերքսես արքան: Արտաշեսը Մեծ

Հայքում, իսկ Ջարեհը Ծոփքում իբրև Սելևկյան նահանգապետեր՝ ստրատեգոսներ կառավարում են երկիրը:

Սակայն այսպիսի վիճակը տևում է ընդամենը տաս տարի: Մ.թ.ա.190թ. Անտիոքոս III-ը Մագնեսիա քաղաքի մոտակայքում ծանր պարտություն է կրում դեպի Արևելք խորացող Հռոմեական հանրապետության զորքերից: Սելևկյան տերությունը սկսում է քայքայվել: Արտաշեսն ու Ջարեհը դաշինք են կնքում հռոմեացիների հետ և իրենց հայտարարում անկախ երկրների թագավորներ. Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Ջարեհը՝ Ծոփքում: Փոքր Հայքը և Կոմմագենեն ևս վերականգնում են իրենց անկախությունը:

Արտաշես I-ը /մ.թ.ա. 189 մոտ 160թթ./ եղել է հայ ժողովրդի պատմության ամենանշանավոր քաղաքական ու ռազմական գործիչներից մեկը: Արտաշեսը մեծ համբավ է ունեցել հին աշխարհում: Նրան ճանաչում ու հիշատակում են բազմաթիվ հունա-հռոմեական հեղինակներ: Մովսես Խորենացու «Պատմության» մեջ պահպանվել են Արտաշեսի մասին հյուսված ժողովրդական ավանդություններ և պատմական տեղեկություններ: Արտաշեսի, նրա հզորության մասին պատմում էին նաև հին Վրաստանում: Վերջապես, մեզ են հասել և Արտաշեսի թողած վավերագրերը՝ հողաբաժան սահմանաքարերի վրա արամերեն լեզվով գրված արձանագրությունները: Դրանց մեջ նա հանդես է գալիս որպես «Արտաշես արքա, Բարեպաշտ, որդի Ջարեհի, Երվանդական»: Արտաշեսը թև միայն մոր կողմից էր ծագում Երվանդական տոհմից, բայց և այնպես իր տիտղոսի մեջ նա իրեն ներկայացնում է որպես այդ տոհմի սերունդ: Դրանով նա ցանկանում էր ընդգծել իր կապը Հայաստանի նախորդ թագավորական տոհմի հետ և օրինական գահակալությունը: Սակայն փաստորեն Արտաշեսը հայկական նոր թագավորական դինաստիա է հիմնադրել, որը և նրա անունով կոչում ենք Արտաշեսյան /թ.ա. 189- Ք.հ.1թ./: 8

Հայկական լեռնաշխարհի բոլոր ծայրամասերի բնակչությունն արդեն վաղուց հայալեզու էր: Սակայն նրա մի մասը շարունակում էր մնալ հարևան պետությունների կազմում: Մեծ Հայքի թագավորների խնդիրն էր միավորել այդ բնակչությունը հայկական պետության սահմաններում: Այդ տեղի է ունենում Արտաշես I-ի օրոք:

Արտաշես I-ը սկսում է իր միավորիչ գործունեությունը Հայաստանի համար դժվարին պայմաններում: Մ.թ.ա. 3-րդ դ. վերջերին Հայաստանում լուծել ճնշման էր ենթարկվել իր հարևան երկրների՝ Սելևկյան պետության Ատրպատականի և Վրաստանի կողմից, որոնք մի շարք երկրամասեր էին

խլել նրանից: Արտաշես I-ը պիտի վերականգներ այդ կորուստները և ապա շարունակեր հայկական հողերի միավորման գործը:

Հույն աշխարհագետ Ստրաբոնը հակիրճ ու ճշգրիտ նկարագրել է Արտաշես I-ի կատարած արշավանքները և թվարկել դրանց ընթացքում միացված երկրամասերը:

Արտաշեսի արևելյան արշավանքն ուղղված էր դեպի Կասպից ծով: Այստեղ էին գտնվում Արաքսի և Կուրի խառնարանի շրջանից դեպի ծովը ձգվող հայաբնակ Կասպից երկիրը, Փայտակարանը և Պարսպատունիքը, որոնք ժամանակավորապես ընկել էին Ատրպատականի իշխանության տակ:

Հյուսիսային ուղղությամբ կատարվում է երեք արշավանք, որոնց ընթացքում գրավվում են Գուգարք /Գոգարենե/ և Կղարջք երկրամասերը, որոնք մ.թ.ա. 3-րդ դ. նվաճվել էին Վրաստանի կողմից: Հյուսիսային արշավանքներից մեկի ժամանակ ազատվում է գերության մեջ Վրաստանում գտնվող Արտաշեսի որդի Ջարեհը:

Շուտով, օգտվելով Հայաստանի արևմտյան սահմանների մոտ ստեղծված խառը վիճակից, Արտաշեսին հաջողվում է Մեծ Հայքին միացնել Կարինը և Դերջանը: >

Քացի այդ, Արտաշեսը դաշինք է կնքում Ճոփքի թագավոր Ջարեհի հետ և նրանք, միացյալ ուժերով, նվաճում ու բաժանում են իրար մեջ Եփրատի հովտում գտնվող Եկեղիք երկրամասը և նրան կից հողերը, որոնք հնում կազմում էին հայերի բնօրրան Հայասայի մասը:

✓ Մեծ Հայքի ամենավտանգավոր հարևանը մնում էր Սելևկյան տերությունը: Անտիոքոս III-ի մահվանից հետո հայկական գործերը մտնում են Սելևկյանների իշխանության տակ գտնվող երկրամասերից մեկը՝ Տնորիք և միացնում Մեծ Հայքի պետությանը: Այն ետ վերադարձնելու Սելևկյանների փորձերն անցնում են ապարդյուն: >

Այսպիսով, Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով Մեծ Հայքի պետության տարածքը հասավ Հայկական լեռնաշխարհի սահմաններին, քացի Ճոփքից, որը տակավին մնում էր անկախ: Արտաշեսի միավորիչ գործունեության հաջողության պատճառներն էին ա/ հայ ժողովրդի կազմավորման գործընթացի ավարտը, բ/ երկրի սոցիալ-տնտեսական վերելքը և գ/ նահանգների միջև սերտ կապերի առկայությունը:

Ընդարձակ տերությունն ամրապնդելու նպատակով Արտաշեսն իրականացրեց մի շարք բարեփոխումներ:

✓ Հայաստանը նոր մայրաքաղաքի կարիք ուներ և Արտաշես I-ը

ներկայիս խոր Վիրապի տեղում, Արաքսի առաջացրած թերակղզում հիմնադրեց Արտաշատ քաղաքը: Այն շուտով դարձավ հին աշխարհի քաղաքական, առևտրական ու մշակութային կենտրոններից մեկը: Պատահական չէ, որ այն կառուցվել է Արարատյան դաշտում, որտեղ հատվում էին հարավից հյուսիս և Արաքսի վրայով՝ արևմուտքից արևելք ձգվող առևտրական ուղիները:

Արտաշատը կոչվել է Արտաշես I-ի անունով: Քաղաքի կառուցման տեղը ընտրելու և հատակագիծը կազմելու գործում հայոց արքային օգնել է կարթագենացի հռչակավոր զորավար Հաննիբալը, այնպես որ Արտաշատը ունեցել է նախապես կազմված հատակագիծ: Նրա պարիսպները երեք կողմից ողողվել են Արաքսի թերակղզի կազմող հոսանքով, իսկ չորրորդ կողմից քաղաքը պաշտպանված է եղել խրամով ու պատվարով:

Արտաշատի հիմնադրման ժամանակ այնտեղ է տեղափոխվել նախկին մայրաքաղաք Երվանդաշատի բնակչության մի մասը: >

Մ.թ.ա. 2-րդ դարում Հայաստանում հիմնադրված քաղաքների թվին են պատկանում նաև Արտաշեսի հայր Ջարեհի անունը կրող մի քանի քաղաքներ: Նրանցից հայտնին Ջարեհավանը կամ Ջարիշատն էր:

Արտաշես I-ի օրոք իրականացվեց հայ ժողովրդի պատմության մեջ առաջին հողային ռեֆորմը, որի մասին պատմում են այդ արքայի թողած հողաբաժան սահմանաքարերը, որոնցից մինչև այժմ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվել է շուրջ մեկ տասնյակ: Դրանց նմուշները վիշապի պատկերներով կարելի է տեսնել Հայաստանի պետական պատմական թանգարանում /վիշապաքարեր/:

✓ «Արտաշեսը, - գրում է Խորենացին, - հրամայում է որոշել գյուղերի և ագարակների սահմանները»: Մովսես Խորենացին ավելացնում է. «Արտաշեսի ժամանակ մեր հայոց աշխարհում անմշակ հող չմնաց՝ ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացրել երկիրը»:

Արտաշես I-ինը նորաստեղծ Արտաշատում տաճար է կառուցում, որի մեջ տեղադրվում է հայոց աշխարհի հովանավոր աստվածուհի Անահիտի արձանը և նրա կողքին՝ Արտաշեսի հայրական նախնիների՝ իր հայր Ջարեհի ու պապերի քանդակները: Վերակառուցվում է բանակը, որի չորս ուղղությունների հրամանատարներ են նշանակվում նրա 4 որդիները, իսկ 5-րդ որդին դառնում է քրմապետ:

Պետության կառավարումը հեշտացնելու նպատակով նրա ամբողջ տարածքը բաժանվում է 120 գավառների, որոնք այն ժամանակ կոչվում էին ստրատեգիաներ:

Արտաշեսի օրոք բարեփոխվել են նաև տոմարն ու օրացույցը: Ճշգրտվել են ամիսները, շաբաթները, տարվա ժամանակները: Պատահական չէ, որ Արտաշեսն այս բազմաթիվ բարի գործերի համար ստացել էր Բարեպաշտ անունը: Գահակալության վերջում նա պատերազմել է Կովկասից ներխուժած ալանների /օսերի/ դեմ: Պատերազմն ավարտվել է փոխզիջմամբ, և Արտաշեսն ամուսնացել է ալանների արքայադստեր՝ Սաթենիկի հետ: Նրանց հարսանիքի ճոխ նկարագրությունը վկայում էր երկրի բարգավաճ վիճակի մասին:

Արտաշեսը մահացավ մ.թ.ա. 160թ. իր հաջորդներին թողնելով հզոր մի տերություն:

9.10 + 7. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՁՈՐԱՑՈՒՄԸ
ՏԻՂՐԱՆ ՄԵԾԻ ՕՐՈՔ

Արտավազդ I-ը իշխել է 160-115թթ. մ.թ.ա.: Արտավազդը ստիպված ընդունեց Պարթևստանի գերիշխանությունը և իր եղբայր Տիրան-Տիգրանի որդուն՝ Տիգրանին իբրև պատանդ հանձնեց պարթևներին: 115-95թթ. կառավարեց նրա եղբայրը՝ Տիրան-Տիգրան I-ը: Տիգրան I-ի մահից հետո պարթևները համաձայնեցին նրա որդուն ազատել պատանդությունից՝ 70 հովիտների դիմաց: Տիգրանը վերադարձավ Հայաստան և հասուն տարիքում ստանձնեց հայկական գահը: Պատմության մեջ նա մտավ որպես Տիգրան Մեծ /95-55թթ./: Նա իր ժամանակի խելացի, կրթված գործիչներից էր, օժտված էր ռազմական ընդունակություններով: Առաջինը նա ձեռնամուխ եղավ բանակի ամրապնդմանը: Կարողացավ վարպետորեն օգտագործել հարևան երկրների միջև հակասությունները, [սկսել խոշոր նվաճումներ: Դրան նպաստեց նաև երկրի տնտեսության բուռն զարգացումը:]

94թ. նա գրավեց և Մեծ Հայքին միացրեց Ծոփքը: Չարեհի թու Արտանես թագավորը ենթարկվեց Տիգրանին: Այս պարթևներից Տիգրանը ետ վերադարձրեց 70 հովիտները: (Տիգրանը դաշինք կնքեց արևմտյան հզոր հարևան Պոնտոսի հետ: Դաշինքը նրա թագավոր Միհրդատ VI Եվպատորի հետ Տիգրանն ամրապնդեց ամուսնական կապով՝ ամուսնանալով նրա դուստր Կլեոպատրայի հետ: Պոնտոսը իր հերթին նվաճումներ էր կատարում Փոքր Ասիայում՝ բախվելով Հռոմի հետ: 93-91թթ. հայ-պոնտական ուժերը ներխուժեցին Կապադովկիա, բայց հետո, չկամենալով բախվել Հռոմի հետ, դուրս եկան: Փաստորեն հայ-

պոնտական դաշինքը Հայաստանին միառժամանակ փրկեց հայ-հռոմեական կոնֆլիկտից: Օգտվելով հռոմեա-պոնտական/Միհրդատյան/ պատերազմներից՝ Տիգրանը սկսում է իր նվաճումները արևելքում, հարավում և հարավ-արևմուտքում: 88-85թթ. հայկական բանակը /120 հազար/ Բագարատի և Մերուժանի գլխավորությամբ գրավում է Ատրպատականը, Հյուսիսային Միջագետքը՝ այնտեղ տիրում Եդեսիային ու Սծբինին: Ներխուժում Պարթևստանի ամառային մայրաքաղաք Էկբատան և ստիպում պարթևների թագավորին հօգուտ Տիգրանի հրաժարվելու արքայից-արքայի տիտղոսից: Տիգրանը կտրում է դրամներ այդ մակագրությամբ: Շուտով հայերն իրենց են ենթարկում հարավում նաև Ադիաբենեն, Օսրոյենը և Կորդուքը:

83թ. Տիգրանը շարժվեց հարավ-արևմուտք, հասավ Սելևկյանների մայրաքաղաք Անտիոք և գրավեց այն: 500 հազար բնակչությամբ այդ քաղաքը նա դարձրեց իր երկրորդ մայրաքաղաքը: 84-83թթ. ընթացքում Տիգրան Մեծը գրավում է Միջերկրականի հյուսիս-արևելյան ափին ընկած Դաշտային Կիլիկիան և այնտեղ բնակեցնում որոշ թվով հայերի, ապա շարժվում է հարավ, գրավում Փյունիկիայի մի մասը, գերի վերցնում Սելևկյանների թագուհի Սելենե Կլեոպատրային, հասնում Պաղեստինի սահմաններին: 74-71թթ.), օգտվելով Հռոմում Սպարտակի ապստամբությունից, Տիգրանը մոտեցավ Եգիպտոսի սահմանագլխին ընկած Պտղոմայի քաղաքին և պաշարեց այն: Այսպիսով, Հայաստանը դարձավ Արևելքի ամենախոշոր պետությունը: Նրա սահմանները Կասպից ծովից ձգվում էին մինչև Միջերկրական ծով և Եգիպտոս: Բանակի թիվը ենթակա երկրների ուժերով հասնում էր 300 հազարի: Արտաշատ մայրաքաղաքը գտնվում էր արդեն տերության ծայրամասում, իսկ Անտիոքը ընկած էր արևմուտքում: Տիգրանը վճռեց հիմնադրել նոր մայրաքաղաք: Աղձնիք աշխարհում /այժմ՝ Դիարբեքի վիլայեթ/ նա հիմնեց մայրաքաղաք Տիգրանակերտը՝ մ.թ.ա. 80- 70թթ.: Այնտեղ կառուցեց բազմաթիվ շենքեր ու պալատներ, 25մ բարձրությամբ պարիսպներ, տեղավորեց մեծ թվով օտարերկրացի վաճառականների:

Շուտով Տիգրանակերտը դարձավ Արևելքի ամենախոշոր քաղաքներից: Որոշ տվյալներով ուներ մինչև կես միլիոն բնակչություն: Տիգրանի հսկայածավալ տերությունը արևելյան տիպի ստրկատիրական պետություն էր, ուներ խիստ բազմազգ բնակչություն: Երկրի շրջաններն ուժեղ տնտեսական կապերով չէին կապված միմյանց հետ, ուստի այս կայսրությունը երկար չձմաց և շուտով փլուզվեց:

8. ՀԱՅ-ՀՌՈՍՆԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՕՐՈՔ

Հայաստանի հզորացումը խիստ անհանգստացնում էր հռոմեացիներին, որոնք վճռել էին Պոնտոսին հաղթելուց հետո շարժվել դեպի արևելք:

70-ական թ. վերջին Հռոմը Միհրդատի դեմ պատերազմում ունեցավ հաջողություններ: Հռոմեական հայտնի զորավար Լուկուլլոսը կարողանում է պոնտացիներին դուրս մղել իրենց գրաված բոլոր հողերից: Միհրդատը նահանջում է Պոնտոս, օգնություն խնդրում Տիգրանից: Տիգրանը թույլ է տալիս քաղաքական լուրջ սխալ: Վախենալով բախվել հռոմեացիներին՝ նա ցուցաբերում է ավելորդ զգուշություն՝ մերժելով Միհրդատի խնդրանքը: Հռոմեացիները գլխովին ջախջախում են Միհրդատին և ստիպում փախչել Հայաստան: Լուկուլլոսը դեսպաններ է ուղարկում Տիգրանի մոտ՝ առաջարկելով Միհրդատին հանձնել իրեն: Տիգրանը հրաժարվում է: Ետ վերադարձող դեսպանները կարողանում են լրտեսել տեղանքը:

69թ. մ.թ.ա. Լուկուլլոսը անցնում է Եփրատը, մտնում Տիգրանի տերության սահմանները: Հռոմեացիները Ծոփքի վրայով շարժվում են դեպի Տիգրանակերտ: Այդ ժամանակ Տիգրանը իր զորքով գտնվում էր իր տերության ծայր հարավում՝ շարունակում էր ամրապնդել դիրքերը Պաղեստինում և ի վիճակի չէր փակել Լուկուլլոսի ճանապարհը: Տիգրանը կարողանում էր միայն Մերուժան զորավարի գլխավորությամբ 3 հազարանոց հեծելազոր ուղարկել հռոմեացիների դեմ: Մերուժանը Տիգրանակերտի մոտակայքում հասնում է հռոմեացիներին և անհավասար մարտում հերոսաբար զոհվում: Հռոմեացիները 6 ամիս պաշարում են Տիգրանակերտը: Զաղաքի պաշտպանները հերոսաբար դիմադրում են հռոմեացիներին՝ Մանկայոսի գլխավորությամբ: Հայկական 6 հազարանոց մի զորաջոկատ կարողանում է գիշերով ճեղքել հռոմեացիների ամրությունները, մտնել քաղաք և այնտեղից դուրս բերել զանձարանն ու արքայի ընտանիքը: Պաղեստինից Տիգրանը հասնում է Տիգրանակերտ և վճռում այնտեղ տալ մեծ ճակատամարտ: Այն տեղի է ունենում 69թ. հոկտեմբերի 6-ին: Հռոմեացիներին հաջողվում է անցնել հայկական բանակի թիկունքը և պարտության մատնել հայերին: Հռոմեացի պատմիչ Պլուտարքոսը Լուկուլլոսի հաղթանակը ուճացնելու նպատակով գրում է, թե հայերը Տիգրանակերտի ճակատամարտում տվել են 100 հազար զոհ, իսկ հռոմեացիները՝ 100 մարդ: Օտարերկրացիները, լսելով Տիգրանի պարտության մասին, բացում են քաղաքի դարպասները:

(Զաղաքում սկսվում է սարսափելի կողոպուտ: Միայն Լուկուլլոսը ստանում է 17 միլիոն ռուբլի՝ ոսկով: Տիգրանը անցնում է պարտիզանական պայքարի՝ անընդհատ հարվածի տակ պահելով արևելք շարժվող հռոմեացիներին: Հակահռոմեական պայքարին միանում է Միհրդատը:)

68թ. Լուկուլլոսը շարժվում է Արտաշատ՝ այնտեղ ծննդն էլու նպատակով: Աշնանը նա հասնում է Արածանի գետին, որտեղ սեպտեմբերին տեղի է ունենում երկրորդ ուժեղ ճակատամարտը: Նրա մասին պատմում են 2 հռոմեացի հեղինակներ՝ Լուկուլլոսին զովերզող Պլուտարքոսը և Կասիոսը: Պլուտարքոսը թաքցնում է ճակատամարտի արդյունքը՝ ասելով, որ հռոմեացիները նեղվեցին ցրտից, հայրենիքի կարոտից չշարժվեցին դեպի Արտաշատ և վերադարձան Հռոմ: Կասիոսը խոստովանում է, որ հայկական հեծելազորը Արածանիում խիստ նեղություն պատճառեց հռոմեացիներին և ստիպեց նահանջել: Լուկուլլոսի բանակը օրեցօր նոսրացավ՝ տալով զոհեր և դասալիքներ:

68թ. վերջին հռոմեացիները դուրս շարժվեցին Հայաստանից՝ 67թ. Ձելայի /Պոնտոս/ ճակատամարտում Տիգրանն ու Միհրդատը գլխովին ջախջախեցին Լուկուլլոսին: Վերջինս փախավ Հռոմ: 66թ. զայրացած Հռոմի սենատը Տիգրանի դեմ նետեց նշանավոր զորավար Պոմպեոսին՝ 60 հազար զորքով: Նա պարտության մատնեց պոնտական զորքին, իսկ Միհրդատը փախավ իր որդու մոտ՝ Ղրիմ և ինքնասպան եղավ: Պոմպեոսի դրդմամբ Տիգրանի որդի Տիգրան Կրտսերը խռովություն բարձրացրեց հոր դեմ: Պարթևները ետ խլեցին 70 հովիտները: Պարտություն կրելով՝ Տիգրան Կրտսերը նախ փախչում է պարթևների, ապա՝ Պոմպեոսի մոտ:

Այս պայմաններում Տիգրանը դիմեց խելացի քայլի, անձամբ ներկայացավ Պոմպեոսին և առաջարկեց կնքել դաշնագիր: Զցանկանալով ընդհարվել Տիգրանի հետ՝ Պոմպեոսը համաձայնեց: (66թ. Արտաշատում կնքված հայ-հռոմեական դաշնագրով Հայաստանը հրաժարվում էր գրավված բոլոր տարածքներից և դառնում Հռոմի դաշնակից: Տիգրան Կրտսերը ստանում է Ծոփքը, որի գանձարանից վճարվելու էր Հայաստանի ռազմատուգանքը: Դրանից դժգոհելով՝ նա ընդվզում է Պոմպեոսի դեմ, գրկվում գահից և աքսորվում Հռոմ: Արտաշատի դաշնագրով Տիգրանը ետ էր ստանում կորցրած «արքայից-արքայի» տիտղոսը, վճարում ռազմատուգանք: Ապա Պոմպեոսն անցնում է Հայաստանով 65թ. և գրավում Իբերիան /Վրաստան/: Տիգրանը կառավարում է ևս 10 տարի ու մահանում 55թ. Ք.ա.:)

11 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՈՄԻ ԴԵՄ ԱՐՏԱՎԱԶՂ II-Ի
ՕՐՈՔ: ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Տիգրան Մեծից հետո իշխեց նրա որդին Արտավազդ II-ը /55-31թթ.: Հայաստանը տոհմաված էր հրաժարվել արտաքին նվաճումների քաղաքականությունից: Նա պետք է պաշտպաներ իր անկախությունը և պահպաներ իր տարածքը միմյանց հետ մրցակցող երկու հզոր հարևանների՝ հռոմեացիների և պարթևների հարձակումներից: Այս պայմաններում Հայաստանի համար ամենացանկալի դիրքը չեզոքությունն էր: Սակայն երկու տերություններից և ոչ մեկին դա ձեռնադրել չէր: Նրանք հայերից պահանջում էին մասնակցել իրենց արշավանքներին կամ էլ Հայաստանը դարձնում էին իրենց պատերազմների ասպարեզ:

Մ.թ.ա. 60 թվականին Հռոմում կազմվել էր Կեսարի, Պոմպեոսի և Կրասոսի, այսպես կոչված, «առաջին եռապետությունը»: Նրանցից Մարկոս Կրասոսը, մի ազահ ու դաժան անձնավորություն, որ ժամանակին արյան մեջ ճնշել էր Սպարտակի ապստամբությունը, այժմ ցանկանում էր տիրել ողջ Արևելքին՝ սկսելով պարթևների երկրից: Մ.թ.ա. 54թ. նա ժամանեց Ասորիք /Սիրիա/:

Հայոց թագավոր Արտավազդ II-ը որպես «հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից», եկավ Կրասոսի մոտ 6000-անոց հեծյալ թիկնապահ զնդի ուղեկցությամբ և առաջարկեց ևս 10 հազարանոց հեծյալ զույգ ու 30 հազար հետևակ զորք, սակայն մի պայմանով, որ հռոմեացիները պիտի հարվածեն պարթևներին Հայաստանի հարավային լեռնոտ շրջանների վրայով: Արտավազդը այսպիսով, հույս ուներ հռոմեացիների օգնությամբ նաև փրկել իր երկիրը պարթևների ներխուժումից: Սակայն Կրասոսը մտադրվել էր արշավել կարճ ճանապարհով՝ տափաստանով և չլսեց նրան: Ուստի Արտավազդը վերադարձավ Հայաստան: Հայերին մնում էր միայն հաշտություն կնքել պարթևների հետ: Հաշտության դաշինքը կնքվեց Արտաշատում և ամրապնդվեց Արտավազդ արքայի քրոջ հետ պարթևական Օրոդես արքայի որդի Բակուրի ամուսնությամբ: Այսպես Հայաստանը դարձավ դաշնակից Պարթևստանին և հակառակորդ Հռոմին:

Սինչ այդ, Կրասոսն իր զորքերով շարժվելով տափաստանով, հասավ Սիջազետքի խառան քաղաքի շրջակայքը: Մ.թ.ա. 53թ. մայիսի 6-ին այստեղ տեղի ունեցավ մի ճակատամարտ, որի մասին սարսափով էին հիշում հռոմեացիների մի քանի սերունդներ: Պարթևները ու նրանց դաշնակից հայերը ձևացրին, թե փախչում են, և ծուղակի մեջ զցելով

թշնամուն՝ ջախջախեցին: Հռոմեացիների բանակը տվեց 20 հազար սպանված, որոնց թվում էին ինքը՝ Կրասոսն ու նրա որդին:

Ի նշան տարած հաղթության պարթևների զորավար Սուրենը Կրասոսի գլուխն ուղարկեց Օրոդես թագավորին, որն այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում՝ Արտավազդի մոտ: Գլուխը բերող սուրհանդակը Արտաշատ հասավ այն պահին, երբ երկու թագավորները և նրանց շրջապատը դիտում էին հռչակավոր հույն ողբերգակ էվրիպիդեսի ողբերգություններից մեկը:

Մ.թ.ա. 40թ. պարթև-հայկական զորքերը ներխուժեցին Ասորիք: Ասորիքի և Փյունիկիայի /Լիբանան/ քաղաքները ողջունում էին դաշնակիցներին: Նրանք դժգոհ էին հռոմեացիների դաժան տիրապետությունից: Եվ ահա, հայոց զինվորները նորից Պտղոմայիդ քաղաքում էին, որը ժամանակին նվաճել էր Տիգրան Մեծը: Այնուհետև զորքերը մտան Պաղեստին, որտեղից վերադարձի ժամանակ գերի վերցրին մեծ թվով հրեաների, որոնց մի մասը բերվեց ու բնակեցվեց Հայաստանի քաղաքներում:

Հռոմում մ.թ.ա. 43թ. ստեղծվեց երկրորդ եռապետությունը: Արևելյան նահանգները բաժին ընկան Մարկոս Անտոնիոսին: Վերջինս որոշեց նոր նվաճումներ կատարել Արևելքում: Նա դեսպան է ուղարկում Արտավազդի մոտ և սպառնալիքներով ստիպում է հայոց արքային օգնական զորք տրամադրել իրեն: Քանի որ Անտոնիոսի արշավանքը անցնելու էր Հայաստանի հողերով, ապա Արտավազդը չէր կարող խուսափել մասնակցությունից:

Արշավանքը սկսվեց մ.թ.ա. 36 թվականին: Հռոմեական 100 հազարանոց զորքը ուներ նաև քաղաքներ նվաճելու համար մեծ քանակությամբ պաշարողական տեխնիկա: Սակայն Անտոնիոսը շտապում էր, ուստի ընդամենը երկու լեզոն թողնելով դանդաղաշարժ տեխնիկան ուղեկցելու համար, ինքը առաջ անցավ: Պարթևները, օգտվելով հանգամանքից, հարձակվեցին այդ լեզոնների վրա և ոչնչացրին պաշարողական մեքենաները: Պարզ դարձավ, որ հռոմեացիների արշավանքը անհաջողության է մատնված: Ուստի Արտավազդը ետ է քաշում Անտոնիոսին տրամադրած փոքրաքանակ զորքերը:

Արշավանքի ժամանակ հռոմեացիները կորցրին մոտ 35 հազար զինվոր: Հռոմեացիների մնացած մասը փրկվեց միայն անցնելով Արաքսը և ոտք դնելով Հայաստանի հողը: Հայոց արքան ապահովեց նրանց պարենով և փրկեց վերջնական կորստից: Սակայն Անտոնիոսը իր պարտության մեղքը բարդեց Արտավազդի «դավաճանության» վրա և 34թ.

Մեր արշավանք կազմակերպեց: Հռոմեական լեգեոնները մոտեցան Արտաշատին:

Այս անգամ Անտոնիոսը դիմեց խաբեության. բանակցությունների պատրվակի տակ իր մոտ հրավիրեց Արտավազդին և գերեց նրան: Հայոց թագավորն ու նրա ընտանիքը տարվեցին Եգիպտոս:

Անտոնիոսն իր «հաղթանակի» կապակցությամբ, ըստ հռոմեական սովորության, հաղթահանդես է կազմակերպում Ալեքսանդրիայում: Նա հանդիսավոր կերպով իր սիրուհուն՝ Կլեոպատրա թագուհուն է հանձնում ոսկե շղթաներով շղթայված Արտավազդին և նրա ընտանիքը: Վերջիններս հրաժարվում են Կլեոպատրային թագուհիների թագուհի անվանել, որի համար 31թ. գլխատվում են:

Մ.թ.ա. 31թ. Ակցիոնի ծովային ճակատամարտում Օկտավիանոսից կրած ջախջախիչ պարտությունից հետո Անտոնիոսն ու Կլեոպատրան ինքնասպանություն գործեցին: Օգտվելով առիթից, պարթևների մոտ ապաստանած Արտաշեսը՝ Արտավազդի մյուս որդին, վերադառնում է Հայաստան, դուրս վտարում հռոմեացիներին և զահակալում որպես Արտաշես II /31-20թթ.մ. թ.ա./: Նա վերականգնում է «արքայից արքայի» տիտղոսը:

Մ.թ.ա. 20թ. Հայաստան ներխուժեց Օկտավիանոսը: Դավադրաբար սպանվեց Արտաշեսը և հռոմեացիները գահ բարձրացրին Հռոմում մեծացած նրա եղբորը՝ Տիգրան III-ին /20-8թթ./, որը փաստորեն կայսրության դրածոն էր:

Տիգրան III-ը իր մահվան պահին, Հռոմի մտադրություններին հակառակ, հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան IV-ին, որը և գահ բարձրացավ իր քույր ու կին Էրատոյի հետ միասին:

Տիգրան IV-ը /մ.թ.ա. 8-մ.թ. 1/ զոհվեց լեռնականների դեմ պատերազմում, իսկ Հռոմը, գրավելով Հայաստանը, այն վերածեց պրովինցիայի: Այսպես կործանվեց Արտաշեսյան դինաստիան: Հայաստանը մ.թ. 1թ. կորցրեց իր անկախությունը:

10. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի տնտեսության հիմքը կազմում էին երկրագործությունը և անասնապահությունը: Տնտեսության կարևոր ճյուղերից էին նաև արհեստն ու առևտուրը: Երկրի արգավանդ դաշտերում

և նախալեռնային շրջաններում մշակում էին ցորեն, գարի, թելատու և յուղատու բույսեր՝ կտավատ, քնջութ, կանեփ: Զգալի տարածություններ էին զբաղեցնում խաղողի և մրգատու այգիները:

Մ.թ.ա. 401թ. Հայաստան այցելած հույն պատմիչ Քսենոփոնը պատմում է, որ հայերի տները լի էին տարբեր տեսակի գյուղատնտեսական մթերքներով. «չկար մի տեղ, որտեղ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս՝ մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ, ընտիր գինիներ և գարեջուր, որոնք խմում էին գետնի մեջ թաղված կարասներից՝ եղեգնի փողի օգնությամբ»: Ըստ մ.թ.ա. 5-րդ դ. հույն պատմիչ Հերոդոտոսի, կաշվե ծալված նավերով բեռնավորված էշերի քարավանները Միջագետքից գնում էին Հայաստան: Այստեղ նավերը պրկում էին ուռենու ճյուղերի վրա, բեռնավորում գինու տակառներով և էշերով ու եփրատի հոսանքով իջնում մինչև Բաբելոն: Ապա կրկին վերադառնում էին Հայաստան:

Ցամաքային կլիմա ունեցող Հայաստանի երկրագործության զարգացման համար խոշոր նշանակություն ունեցան ջրանցքների և առուների անցկացումը, ջրամբարների կառուցումը: Ավելի էին կատարելագործվել գործիքները, որոնք պատրաստվում էին երկաթից՝ պողպատյա կտրիչ եզրերով:

Հայերը պահում էին խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ջորիներ: Տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում գյուղական համայնքը: Նրա անդամները կոչվում էին շինականներ, որոնք ընտրում էին գեղջավազ /գյուղի ավագ/: Հողը հաճախ բաժանվում էր շինականների միջև: Հարկերը վճարում էր ամբողջ համայնքը: Գյուղական համայնքների կողքին առաջացել էին մասնավոր տնտեսություններ, որոնք կոչվում էին դաստակերտ կամ ագարակ և պատկանում էին թագավորին: Դաստակերտներում աշխատում էին ստրուկները, որոնց ձեռք էին բերում պատերազմների ժամանակ և սնանկացած համայնականների շարքերից: Երկրի տնտեսական և մշակութային առաջադիմության համար խոշոր նշանակություն ունեին նաև քաղաքաշինությունը, արհեստագործության եվ առևտրի զարգացումը: Վան և Արմավիր հին քաղաքների կողքին դեռևս մ.թ.ա. III-II դդ. առաջացել էին երվանդակերտ, Արտաշատ, Զարեհավան, Նախճավան քաղաքները՝ Մեծ Հայքում, Արշամաշատը, Արկաթիոկերտը՝ Ծովքում և այլն:

Տիգրան II-ը երկրի հարավ-արևմտյան մասում հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Տիգրանակերտը, որը մեծ ու բարգավաճ քաղաք էր՝ ավելի քան 200 հազ. բնակչությամբ: Արհեստներից բարձր զարգացման էին

հասել մետաղագործությունը, շինարարական արհեստները, քարի և փայտի մշակումը, կավագործությունը, ջուլիհակությունը, ապակեգործությունը և այլն:

Հայաստանը Արտաշեսյանների օրոք տնտեսական և մշակութային լայն կապեր ուներ հին աշխարհի շատ երկրների հետ և աշխուժորեն մասնակցում էր միջազգային առևտրին: Արտաշատի, Արմավիրի, Գառնիի և այլ վայրերի պեղումների ժամանակ հաճախ էին հայտնաբերվում Միջագետքից, Ասորիքից, Իրանից, Եգիպտոսից, Փոքր Ասիայից, Հունաստանից և Հռոմից ներմուծված զանազան իրեր և այլ երկրներում կտրված դրամներ: Հայաստանից իր հերթին արտահանվում էր հացահատիկ, ձիեր, գինի, մետաղներ, ներկեր՝ նաև որդան կարմիր ներկը, կիսաթանկագին քարեր, սրաքարեր և այլն: Առևտրին զարկ տալու համար Շոփքի թագավորները՝ III դարում, իսկ Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորները՝ սկսած Տիգրան I թագավորից, կտրել են արծաթե և պղնձե դրամներ՝ իրենց պատկերներով: Պղնձե դրամներն օգտագործվում էին երկրի ներսում՝ նպաստելով ներքին առևտրին, իսկ արծաթե դրամները՝ նաև դրսում:

Հին Հայաստանի քաղաքների բնակչության մեծ մասն ազատ էր: Թագավորը հենվում էր քաղաքների վրա և նրանց բնակչությանը հատկացնում հողային տարածություններ քաղաքների շրջակայքում: Քաղաքների հողագործ և արհեստավոր բնակչությունը նույնպես հարկատու էր պետությանը:

Երկրի պետական իշխանությունը գտնվում էր իշխող դասակարգի՝ ռազմա- ստրկատիրական ավագանու ձեռքին: Պետության գլուխ կանգնած էր թագավորը, որն օժտված էր միապետի անսահմանափակ իշխանությամբ: Թագավորն էր օրենքներ հաստատում, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում: Նրան էր վերապահված քաղաքներ հիմնադրելու, դրամ կտրելու իրավունքը: Նա կրում էր «Մեծ Հայքի թագավոր», իսկ Տիգրան II-ից սկսած՝ «արքայից արքա» տիտղոսը: Կային նաև «Բարեպաշտ», «հելլենասեր», «աստված» պատվատիտղոսներ: Թագավորից հետո մեծ ազդեցություն և իրավունքներ ուներ քրմապետը: Նա երկրի կրոնական հոգևոր պետն էր, թագավորի գլխավոր խորհրդատուն: Արդեն հանդես էին գալիս հողատեր իշխանները, նախարարները: Երկիրը բաժանված էր մեծ և փոքր վարչական միավորների՝ նահանգների և գավառների, որոնց կառավարիչներին նշանակում էր թագավորը: Արտաշեսյաններն ունեին նաև գործակալություններ, որոնցով կառավարում էին երկիրը:

Պետության գլխավոր ուժը բանակն էր, որը բաղկացած էր շուրջ հարյուր հազար մարտիկներից, Տիգրան Մեծի օրոք՝ 300 հազ. մարդուց: Բանակի կորիզը կազմում էր արագաշարժ հեծելազորը: Մեծ մասը հետևակն էր: Կար նաև թագավորական հեծյալ թիկնապահ զունդ: Բանակը զինված էր նետ-աղեղներով, նիզակներով, տեգերով, սրերով, դաշույններով, պաշարողական և քարնետ մեքենաներով: Հայկական բանակը, ի տարբերություն մյուս երկրների բանակների, վարձկան չէր, այլ կազմված էր շինականներից և քաղաքի բնակչությունից:

11) ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՅԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ Մ. Թ. III ԴԱՐԸ

Հայ մշակույթը դարեր շարունակ զարգանում էր իբրև հայկական ցեղերի անջատ-անջատ բնույթի մշակույթ, սակայն հայ ժողովրդի կազմավորման հետ միասին, առաջացավ նաև ընդհանուր հայկական մշակույթը. հայկական ցեղերի ու ցեղախմբերի անջատ-անջատ մշակույթները մերձեցան՝ աստիճանաբար դառնալով ամբողջ հայ ժողովրդի միասնական մշակույթը:

Հայ ժողովրդի կազմավորման ավարտը, հայկական պետականության առաջացումն ու հզորացումը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ մշակույթի զարգացման համար:

5-րդ դ. հեղինակ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» նշանավոր գրքում գրի է առել հին հայկական մի քանի առասպելական և վիպական գրույցներ, որոնցում վառ արտահայտություն են գտել ազատության և հայրենասիրության գաղափարները: Նրա շնորհիվ մեզ են հասել «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտաշես և Արտավազդ», «Արտաշես և Սաթենիկ» և այլ առասպելներ:

Հայերը ունեցել են 2 պանթեոն՝ հին հայկական և նոր հայկական: Առաջին պանթեոնի աստվածներն էին Հայկը, Արա Գեղեցիկը, Տորք Անգեղը, Արտաշեսը, Սաթենիկը, Շովինարը և այլն: Հայերի շրջանում տարածված էր նաև Շամիրամի պաշտամունքը: Հայկը եղել է մեր նահապետը, հաղթել է Բելին: Նրա անունից է, ըստ ավանդության, մեր հայ անունը: Հայերը նրա անունով են կոչել Օրիոնի համաստեղությունը: Տորք Անգեղը իսկա ժայռեր է նետել թշնամիների վրա, եղունգներով փորագրել քարածայռերի վրա: Արա Գեղեցիկը բնության աստվածն է:

Նա պայքարել է ասորեստանյան թագուհի Շամիրամի դեմ և զոհվել: Արտաշեսի և Սաթենիկի մասին պահպանվել է ուշագրավ ավանդություն: Արտաշեսը գերել է ավանների արքայադստերը և ամուսնացել նրա հետ: Հետագայում նրանց փոխարինում են երկրորդ պանթոնի աստվածները՝ Արամազդը՝ աստվածների հայրը, երկնքի և երկրի տերը, մարդկանց բարօրություն և արիություն պարգևողը: Անահիտը համարվում էր Արամազդի դուստրը, լուսնի, մայրության և պտղաբերության աստվածուհին, Միհրը արևի աստվածն էր, իսկ Տիրը համարվում էր դարձյալի աստված, Վահագնը՝ կայծակի և դրոշի, քաջության և ռազմի աստվածը: Վահագնի ծնունդը, որ նկարագրում է խորենացին, հայ հին գրականության գոհարներից է: Աստղիկը սիրո և գեղեցկության աստվածուհին էր: Կային և այլ աստվածություններ: Բոլոր աստվածների համար տաճարներ էին կառուցված, որոնց մեջ դրված էին նրանց արձանները:

Մ.թ.ա. 334թ.-ից Ալեքսանդր Մակեդոնացու դեպի Արևելք կատարած արշավանքների ժամանակ և դրանից հետո Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրներում շատ քաղաքներ հիմնադրվեցին, որտեղ տեղական բնակչության հետ միասին հաստատվեցին մեծ թվով հույներ և տեղի ունեցավ տեղական ու հելլենական մշակույթների փոխադարձ սերտ շփումներ և երկուսի փոխազդեցության շնորհիվ առաջացավ մի մշակույթ, որին տրվել է հելլենիստական մշակույթ անունը: Երկրորդ պանթոնը այդ պատճառով կոչվում էր նաև հելլենիստական: Այսպես, Արամազդը նույնացվում էր հունական Ջեսի, Վահագնը՝ Հերակլեսի, Անահիտը՝ Աթենասի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը և Միհրը՝ Ապոլոնի հետ և այլն:

Հայ ժողովուրդը հաղորդակից դարձավ հունական գրականությանը, հելլենիստական մշակույթին և Հայաստանում ձևավորվեց հելլենիստական մշակույթն իր տեղական ինքնատիպ գծերով: Հայտնի է նաև, որ հայերը օգտագործել են Միջագետքում և Ասորիքում տարածված արամեական, մանավանդ՝ հունական գրերը:

Արտավազդ II թագավորը գրել է պատմական երկեր և ողբերգություններ հունարեն լեզվով: Եղել են հայոց պատմությանը նվիրված հունարեն աշխատություններ: Հայաստանի տարածքում գտնվել են հայ թագավորների թողած արձանագրություններ արամեերեն և հունարեն գրերով ու լեզուներով: Տիգրանակերտում եղել է թատրոնի շենք, որտեղ բեմադրվել են հույն ողբերգակների պիեսները, իսկ Արտաշատում 53թ. մ.թ.ա. ներկայացվել է հույն նշանավոր ողբերգակներից մեկի՝

Էվրիպիդեսի պիեսը՝ «Բաքսուսուհիները»՝ Յասոն դերասանի մասնակցությամբ: Մեզ են հասել պատմիչներ Մար Աբաս Կատինայի, Ողյունպի և Բարդածանի անունները, որոնցից օգտվել է խորենացին:

Հայերն ունեին սեփական տոմար: Տարին ուներ 13 ամիս՝ 12-ը՝ 30-ական օրով, 1-ը՝ Ավելյացը՝ 5 օրով: Առաջին ամիսը Նավասարդն էր, որը համընկնում է օգոստոսի 11-ին: Մյուս ամիսներն էին Հոռին, Սահմին, Տրեն, Քաղոցը, Մարերին, Մարգացը և այլն:

Արձավիրում, Արտաշատում, Տիգրանակերտում, Վաղարշապատում և այլուր եղել են պարզ քառանկյունի հատակագծով, հարթ ծածկով շենքեր: Դրանց կողքին կառուցվել են հունա-հռոմեական տիպի պալատներ, սյունազարդ, քանդակազարդ տաճարներ և այլ շինություններ: Դրա փայլուն օրինակն է Գառնիի հեթանոսական հույակապ տաճարը /մ.թ. 77թ./:

Արվեստի բարձարարժեք գործեր են հայ թագավորների կտրած դրամները: Հին հայ մշակույթի բազմաթիվ ու բազմազան նմուշներ հայտնաբերվել են Արտաշատի, Արձավիրի, Գառնիի և այլ վայրերի պեղումներից:

14 12 ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ /ՏՐԴԱՍ I/

Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո՝ 1թ. մինչև 52թ. Հայաստանում գահի շուրջ պայքար էին մղում Ատրպատականի և Իբերիայի մի շարք թագավորներ, որոնց պայքարում աջակցում էին Հռոմը և Պարթևստանը: Այդ շրջանում բացի Ջենոն-Արտաշեսից /մ.թ. 18-34թթ./ մյուս օտար դրածո գահակալները դավադրության զոհ դարձան: 52թ. պարթևաց Արշակունի Վաղարշ թագավորը հայոց գահին բազմեցրեց իր եղբորը՝ Տրդատին: Հայոց թագը զավթած Հռոմեացիները վրաց արքայորդին դիմում է փախուստի՝ անօգնական թողնելով իր հղի կնոջը, որին հայերը փրկում են և ազատություն շնորհում:

Տրդատի նշանակումը խիստ գայրացրեց Հռոմին, որն իր հերթին ձգտում էր իր ազդեցությանը ենթարկել Հայաստանը: Շուտով Տրդատը հայ-պարթևական միացյալ ուժերով Հայաստանից դուրս մղեց հռոմեացիներին: Հռոմը, չհաշտվելով Հայաստանի կորստյան հետ, 58թ. այնտեղ ուղարկեց Կորբուլոն գորավարին: Վերջինս, կտրելով հայերի համառ դիմադրությունը, ավերում է շատ զավառներ, հասնում Արտաշատ:

Շուտով գրավեց այն և այնտեղ Կորբուլոնն անցկացրեց 58-59թթ. ձմեռը: 59թ. գարնանը նա շարժվեց դեպի Տիգրանակերտ: Ինչպես նրա երթի, այնպես էլ Տիգրանակերտի պաշարման ժամանակ սկսվեց ուժեղ դիմադրություն: Համաժողովրդական զայրույթ և շարժում առաջացրեց այն, որ հեռանալուց առաջ Կորբուլոնը ավերեց Արտաշատի պարիսպները: Ուժեղ թալան սկսվեց օտարերկրացիների դավաճանության շնորհիվ ընկած Տիգրանակերտի գրավումից հետո: 59թ. ընթացքում ամբողջ Հայաստանում ծավալված համաժողովրդական պայքարը ստիպեց Կորբուլոնին հեռանալ Հայաստանից:

62թ. Հռոմը Հայաստան ուղարկեց զորավար Պետոսին, որը մի պարծենկոտ և ամբարտավան զորավար էր: Նա հայտարարեց, թե «ես ծնկի կբերեմ հայերին ու պարթևներին և նրանց հարկման կենթարկեմ»:

62թ. աշնանը հայ-պարթևական զորքերը, անցնելով Տավրոսի լեռնաշղթայով, մոտեցան Պետոսի զորքերին, որը ճամբար էր դրել Արածանիի ափին՝ Հռանդեա դաշտում: Հռոմեացիները նույնիսկ պահակներ չէին կարգել ճամբարի շուրջը, ուստի շուտով շրջապատման ենթարկվեցին: Օղակը սեղմվեց, և հռոմեացիները անձնատուր եղան:

Գոռոզ հռոմեացիներին նվաստացնելու նպատակով՝ հայերն ու պարթևները նիզակներով «լուծ» կազմեցին և ստիպեցին գերի ընկած հռոմեացիներին ծնկաչոք անցնելու նրա տակով: Ստանալով այս խայտառակ պարտության լուրը՝ Ներոն կայսրը նորից Հայաստան ուղարկեց Կորբուլոնին 64թ.: Բայց Ծոփքում Կորբուլոնը լուրջ անհաջողություն կրեց և խնդրեց հաշտություն: Նորից Հռոմին ստորացնելու համար Վաղարշը պահանջեց հաշտությունը կնքել Հռանդեայում: 64թ. կնքված հաշտությամբ Հռոմը ճանաչում էր Տրդատի գահակալությունը Հայաստանում՝ պայմանով, որ Տրդատը անձամբ ներկայանա Ներոնին և նրանից ստանա արքայական թագ: Դրա նպատակն այն էր, որ ցույց տրվեր, թե Հռոմը, մեծահոգաբար, կանոփին ճանաչում է Տրդատի գահակալությունը: 65թ. գարնանը Տրդատը իր ընտանիքով, 3 հազար ուղեկիցներով մեկնում է Հռոմ: Ուղևորությունը տևում է 9 ամիս՝ օրական ծախսը կազմելով 200000 դիմար, որը վճարում էր Հռոմը: Տրդատը մեծ շուքով ընդունվեց Հռոմում և Ներոնի կողմից ստացավ թագ ու հանդերձանք: Վերադառնալով Հայաստան՝ նա 66թ. հիմնադրեց հայ Արշակունյաց թագավորությունը:

Տրդատը զբաղվեց շինարարական աշխատանքով, օգտագործեց Ներոնից ստացված 40 միլիոն ոսկի ռուբլին, որը տրված էր ավերված Արտաշատը վերականգնելու համար: Տրդատի օրոք կառուցվեց հայ

հեթանոսական մշակույթի կոթողներից մեկը՝ Գառնիի հեթանոսական տաճարը /77թ./: Տաճարի կողքին կառուցվեցին Գառնիի բերդը՝ սյունազարդ դահլիճը, խճանկարով բաղնիքը և այլն: 72 և 75թթ. Հայաստանը ենթարկվեց հյուսիս-կովկասյան ցեղերի՝ ալանների /օսեր/ ներխուժմանը: Տրդատը կարողացավ ետ մղել նրանց հարձակումները՝ Նրա մահվան մասին կա երկու տեսակետ՝ մինչև 78թ. և 88թ.: Այդ ժամանակաշրջանը խաղաղության և շինարարության շրջան էր: Առաջին Արշակունիները ծագումով պարթևներ էին, բայց անընդհատ շփվելով հայ նախարարական տոհմերի հետ, հետզհետե հայացան: Նրանցից Վաղարշ I-ը /117- 140/ հիմնադրեց Վաղարշապատը, իսկ Վաղարշ II-ը /185-198/ օգտվելով պարթևա-հռոմեական հակամարտությունից՝ հայ Արշակունիների ժառանգական ճյուղը, այսինքն, եթե նախկինում պարթևաց թագավորը առաջարկում էր հայոց թագավոր, որը հաստատվելու էր Հռոմի կողմից, այժմ հայ Արշակունիները ժառանգաբար ստանում էին գահը: Վաղարշ II-ին փոխարինում է որդին՝ Խոսրով I-ը /198-215/: Նրան հռոմեացիները բանտ են նստեցնում, որտեղ և մահանում է: Հռոմը շուտով հարկադրված ճանաչում է Հայաստանի անկախությունը և Խոսրովի որդու՝ Տրդատ II-ի գահակալությունը /216-252թթ./: Հռոմի դեմ պայքարը շարունակվում է նաև Խոսրով II-ի օրոք /252- 287թթ./:

1513. ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեռևս մ.թ. I դարի սկզբներին Հրեաստանում /Պաղեստին/ աստիճանաբար ծնունդ առավ նոր գաղափարախոսություն: Նրա հիմնադիրն ու տարածողը Հիսուս Քրիստոսն էր: Նա ծնվել է 1թ. հունվարի 6-ին /ըստ հայկական տոմարի/: Քրիստոսը, ինչպես այդ մասին պատմվում է Աստվածաշնչի Նոր կտակարանում, երկրի վրա հայտնվել է այն բանից հետո, երբ մարդկությունը, չկատարելով Հայր աստծո՝ Արարչի պատգամները, խիստ բարոյագրկվել է: Աստված երկիր է ուղարկել իր միակ որդուն՝ Քրիստոսին, որն իր աշակերտների հետ սկսել է մարդկությանը քարոզել բարոյականություն՝ պատգամելով «մի սպանիր, մի գողացիր, մի շնանար»: 33թ. Պաղեստինի հռոմեացի կառավարիչ Պիղատոսը նրան երկու ավազակների հետ խաչել է, և Քրիստոսը, հարություն առնելով, բարձրացել է երկինք՝ հոր մոտ:

Քրիստոսի 12 առաքյալներից Թադեոսը և Բարդուղիմեոսը Կապադովկիայի վրայով ուղղվեցին Հայաստան՝ այնտեղ հիմնադրելով առաջին

քրիստոնեական համայնքները: Նրանք հալածվում և սպանվում են հայոց Սանատրուկ թագավորի /88-110/ կողմից: Քրիստոնյա համայնքների թիվը հետագայում աճեց: III դարի վերջին ուժեղացավ պարսկահռոմեական մրցակցությունը Հայաստանի համար: 287թ. գահ բարձրացավ Տրդատ III Մեծը: Նա դաշինք կնքեց հռոմեացիների հետ և 297թ. պարտության մատնեց պարսից խոսրով թագավորին: Վերջինս 298թ. Հռոմի հետ կնքած Մծբինի 40-ամյա հաշտությամբ ճանաչեց Տրդատի գահակալությունը Հայաստանում: Տրդատը իշխեց մինչև 330թ.:

Տրդատ Մեծի գահակալության առաջին շրջանում էլ ավելի աճեց քրիստոնյաների թիվը: Այդ գործում մեծ դեր կատարեցին Հռիփսիմյան ՅՅ քույրերը՝ Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը: Նրանցից Նուենե՝ վրացիների Նինոն, անցավ Վրաստան:

Տրդատ III-ը սկզբում խիստ հալածանքների է ենթարկում քրիստոնյաներին: Նա խոր-Վիրապի բանտում 13 տարի պահում է քրիստոնեության ջերմ քարոզիչ և տարածող Գրիգորին, դաժանորեն պատժում քրիստոնեություն դավանողներին: Գեղանի կույս Հռիփսիմեն, մերժելով ամուսնանալ Տրդատի հետ, իր գործունեության համար նահատակվում է ընկերուհիների՝ հռիփսիմյանների հետ: Իր այս արարքների համար, ինչպես վկայում է ավանդությունը, Տրդատը ստանում է խոզի կերպարանք: Սակայն շուտով քրիստոնյաների նկատմամբ նրա վերաբերմունքը փոխվում է: Տրդատը զղջում է իր կատարած դաժանությունների համար, բանտից ազատում Գրիգորին, որը բուժում է իրեն՝ նորից տալիս մարդու կերպարանք: Հայոց թագավորը ոչ միայն հրաժարվում է հեթանոսությունից, այլև այն արգելում Հայաստանի տարածքում: 301թ. քրիստոնեությունը հռչակվում է հայոց պետության պաշտոնական կրոն: Բազմամյա, Արածանի գետում Սուրբ Գրիգորը մկրտում է Տրդատին, արքունիքի անդամներին և բազմահազար հայերի: 303-304թթ. դրվում են էջմիածնի Մայր տաճարի հիմքերը: Այսպես Հայաստանը աշխարհում առաջինը պաշտոնապես ընդունում է քրիստոնեությունը: Ուշագրավ է, որ Հռոմի կայսր Կոստանդինոս Մեծը միայն 313թ. Միլանի հրովարտակով թույլ է տալիս դավանելու քրիստոնեությունը՝ հեթանոսության հետ միասին: 2001թ. լրանում է այդ կարևոր իրադարձության 1700-ամյակը, որ կտոնի ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ամբողջ քրիստոնյա աշխարհը:

Հայաստանում նոր կրոնի տարածման մասին մանրամասներ է պատմում պատմիչ Ազաթանգեղոսը: Արքունական զորքերը պայքար են սկսում հեթանոսության դեմ, քարուքանդ անում բազմաթիվ մեծաքանակ

Անահիտի, Արամազդի, Վահագնի, Տիրի և այլն: Հեթանոսների հոգևոր առաջնորդները՝ քրմերը և ժողովրդի մի մասը կատաղի դիմադրություն են ցույց տալիս: Բազմաթիվ զոհերի թվում ընկնում է նաև Արծան քրմապետը: Մեծաքանակ պատկանող հողերը բռնագրավվում են: Մեծաքանակ տաճարների տեղերում կառուցվում են քրիստոնեական եկեղեցիներ ու վանքեր: Նրանց են անցնում բռնագրավված տաճարային հողերը, որոնց վրա ապրող ու աշխատող կախյալ գյուղացիները անցնում են եկեղեցիների տրամադրության տակն՝ ճավոք, նոր կրոնը տարածվում է հրով ու սրով, որի պատճառով հիմնականում կործանվում է հին հայկական հեթանոսական հարուստ մշակույթը:

Հայ եկեղեցու գլուխ կանգնում է Գրիգորը, որն իր գործունեության համար ստանում է Լուսավորիչ անունը: Ըստ ավանդության նա Տրդատի հորը՝ խոսրովին սպանող Պարթև Անակի որդին էր: Այժմ Գրիգորը, որպես հայոց հոգևոր առաջնորդ՝ կաթողիկոս, ձեռնադրվում է Կեսարիա քաղաքում 303թ.: Վերադառնալով Վաղարշապատ՝ նա կազմակերպում է հայ եկեղեցու համակարգը:

Հայաստանի քրիստոնեացումը արագ տեղի չունեցավ: Դեռ երկար ժամանակ, հատկապես լեռնային և ծայրամասային գավառներում շատերը շարունակեցին դավանել հեթանոսությունը: Բազմաթիվ հեթանոսական ծեսեր ու ծիսակատարություններ, ինչպես մատաղը՝ զոհաբերությունը, վարդավառը՝ ջրի տոնը և այլն փոխանցվեցին հայ եկեղեցուն:

Նոր եկեղեցին իր գաղափարախոսությամբ միավորիչ դեր կատարեց Հայաստանի կյանքում: Այն դարձավ խոշոր հողատեր: Նրան տրվող հարկը կոչվում էր «տասանորդ»՝ ուժեղանալով տնտեսապես, հայ եկեղեցին հետագայում, որոշ ժամանակ նաև հակադրվեց պետությանը, սակայն պետականության կորստից հետո փաստորեն փոխարինեց պետությանը և հսկայական գործ կատարեց հայ քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման գործում:

14. ՖԵՈՂԱԼԻԶՄԸ /ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ/ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Համաշխարհային պատմության մեջ 3-4-րդ դարերը մեծ հասարակական տեղաշարժերի ժամանակաշրջան էին: Առաջավոր Ասիայի ու Միջերկրական ծովափնյա երկրները հին, ստրկատիրական

հասարակարգից անցում են կատարում դեպի նոր ֆեոդալական /ավատատիրական/ հասարակարգը: Հայաստանում այդ անցումն ավելի արագ է ընթանում, քան Արևմուտքի այն երկրներում, որտեղ շատ ավելի խոր արձատներ ձգած ստրկատիրությունը նահանջում էր մեծ դժվարությամբ:

Նոր դարաշրջանում առաջանում են «ազատների» և «անազատների» դասերը: Հին հասարակությունում գյուղական համայնականների շինականների կամ գեղջուկների պարտականությունն էր միայն հարկեր վճարել պետությանը և կատարել պարիակներ: Այժմ նրանք ընկնում են լրացուցիչ հարկերի տակ՝ սկսում են վճարել բերքի մի մասը իրենց հողերին տիրացած ֆեոդալներին և կատարել նրանց համար պարտադիր աշխատանքներ՝ հողի օգտագործման իրավունքի դիմաց: Մասնավոր տնտեսություններում՝ ագարակ-դաստակերտերում աշխատող մշակները ձեռք են բերում որոշ իրավունքներ և գնալով ավելի հավասարվում գեղջուկ-շինականներին: Դաստակերտ-ագարակներն էլ մասնավոր տնտեսություններից վերածվում են սովորական գյուղերի: Այսպես, շինականներից ու մշակներից կազմվում է «անազատների» դասը:

«Ազատների» դասը կազմում էին տոհմիկ ազնվականները, նախկին արքունական պաշտոնյաները, ինչպես գավառապետերը, իրենց ծառայության համար արքունիքից հողակտորներ ստացած զինվորականները, աստիճանավորները և ուրիշներ: Պաշտոնները դառնում էին ժառանգական՝ անցնելով հորից որդուն: Այնուհետև ժառանգություն էին մնում նաև նրանց հողակտորները: Այսպես ձևավորվեցին ֆեոդալները՝ ավատատերերը: Խոշոր ավատատերերը կոչվում էին իշխան կամ նախարար, նրանց տիրույթները՝ նախարարություններ:

Եկեղեցին և եկեղեցականները նույնպես ավատատերեր էին, ուստի նրանք ևս դասվում էին ազատների դասին և ազատ էին հարկեր վճարելուց:

Ժառանգաբար ստացված հողերը անվանվում էին «հայրենիք», «հայրենական երկիր»: «Պարգևական» էին կոչվում թագավորի նվիրած, իսկ «արծաթագին» կամ «գանձագին»՝ գնված հողերը:

Երկրում իշխանության ձևը միապետությունն էր, որի գլուխ կանգնած թագավորը կրում էր «Արքա Հայոց Մեծաց» /Մեծ Հայքի արքա/ կամ «Թագավոր հայոց» տիտղոսը: Թագավորը երկիրը կառավարում էր հողատեր նախարարների հետ միասին:

Արքունիքում առաջացել էին մի շարք պետական գործա-

Պարթև Արշակունիներին: Վերջիններս ապաստան գտան Հայաստանում: Այդ օրվանից կատաղի պայքար սկսվեց Սասանյանների և Հայաստանի միջև: Այդ պայքարը հատկապես սաստկացավ IV դ., երբ Հայաստանը իր հարևանին հակադրվեց նաև քրիստոնեական գաղափարախոսությամբ: Հայաստանի նկատմամբ հատկապես անհանդուրժողական դիրք բռնեց 310թ. գահ բարձրացած Շապուհ II Երկարակյացը /մինչև 379թ./: 338թ. Շապուհ II-ը հարձակվեց Հայաստանի վրա: Այդ ժամանակ մահացել էր Խոսրով Կոտակը և նոր գահ էր բարձրացել որդին՝ Տիրան I-ը /338-350՝ Դեռմի օգնությամբ: 339թ. Տիրանը կարողացավ հռոմեացիների օժանդակությամբ դուրս մղել Շապուհին: Շապուհը օգտվելով Տիրանի և կաթողիկոսների միջև ընթացող պայքարից՝ 350թ. ներխուժեց Հայաստան և, բռնելով Տիրանին, կուրացրեց: Տիրանը հրաժարվեց գահից հօգուտ իր որդու՝ Արշակ II-ի /350-368/: Արշակը Արշակունյաց ամենահայտնի թագավորներից էր: Նրա գահակալության շրջանը համընկնում է Սասանյանների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հետ:

Արշակը պատվիրակություն ուղարկեց Դեռմ և Կոստանդիանոս կայսրի հետ կնքեց դաշինք, որը ամրապնդեց ամուսնական կապով՝ կնության առնելով կայսեր ազգականուհի Օլիմպիային: Արշակը ամրապնդեց բանակը: Սպարապետ կարգվեց Վասակ Մամիկոնյանը, սենեկապետ՝ Ներսես կաթողիկոսը: Ներսեսը 354թ. Աշտիշատում հրավիրեց եկեղեցական ժողով՝ հայ եկեղեցու ծեսեր ու ծիսակատարություններ սահմանելու համար: Ժողովում ընդունվեցին մի շարք կանոններ հեթանոսական կրոնի ու կենցաղի դեմ: Արգելվեց մերձավոր հարազատների ամուսնությունը:

Արշակը ձեռնամուխ եղավ Արարատի հարավային լանջին, Կոզովիտ գավառում նոր մայրաքաղաքի՝ Արշակավանի կառուցմանը: Քաղաքի կառուցումն արագացնելու նպատակով արձակեց հրաման, որով իրավունք էր տրվում բոլոր հայ նախարարների մոտ ծառայության մեջ գտնվող գյուղացիներին լքելու իրենց տներին և տեղափոխվելու Արշակավան: Սկսվեց կախյալ գյուղացիների մի հզոր հոսք դեպի Արշակավան: Դա առաջացրեց հայ նախարարների բուռն դժգոհությունը: Նրանցից մի խումբ Ներսես Կամսարականի գլխավորությամբ հարձակվեց և ավերեց քաղաքը: Ոչնչացվեցին բազմաթիվ կախյալ գյուղացիներ: Արշակը շտապ վերադարձավ Կրաստանից և պատժեց նախարարներին: 358թ. սրի քաշվեց Կամսարականների տոհմը: Արշակը հայտնվում է կոնֆլիկտի մեջ Ներսես Մեծ կաթողիկոսի, իր եղբորորդիների՝ Գնելի ու Տիրիթի հետ: Հայր Մարդպետի միջոցով նա սահմանափակում է եկեղեցու

իրավունքները: Արշակը սպանել է տալիս Գնելին ու Տիրիթին: Թունավորվում է Օլիմպիա թագուհին: Արշակը ամուսնանում է Գնելի այրու՝ Փառանձենի հետ: Այս երկպառակությունները զգալիորեն թուլացրին երկիրը: Շապուհը կարողացավ օգտվել Արշակի դեմ ծագած դժգոհությունից և իր կողմը քաշել հայ նախարարներ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանին:

363թ. Հռոմի նոր կայսր Հովիանոսը դավաճանաբար Շապուհի հետ կնքեց Ամոթալի պայմանագիրը, որով հրաժարվեց Հայաստանին օգնելուց:

364թ. Շապուհը ներխուժեց Հայաստան վերոհիշյալ դավաճանների հետ: Քառամյա պատերազմի ընթացքում մինչև 368թ., Շապուհը գրավեց և ավերեց բազմաթիվ քաղաքներ՝ Վանը, Նախիջևանը, Արտաշատը, Վաղարշապատը, Ջարեհավանը:

368թ., երբ Շապուհը մեծ թվով հայ զբրիների բռնագաղթեցնում էր Պարսկաստան, Այրարատ աշխարհում հանկարծակի ենթարկվեց Վասակի 60 հազ. բանակի գրոհին և պարտություն կրեց: Պարտված Շապուհը դիմեց խորամանկ քայլի. հաշտություն կնքելու պատիրվակով կանչեց իր մոտ Արշակին ու Վասակին և նրանց նետեց Անիուշ բերդը: Տիգրանում Արշակին փորձելու համար Շապուհը հայկական հող է լցնել տալիս վրանի հատակին: Երբ Արշակը կանգնում է հայկական հողի վրա, հզորանում է, դառնում ըմբոստ, իսկ երբ Շապուհը նրան տանում է պարսկական հողի վրա, նա դառնում է հեզ և հնազանդ: Փավստոս Բուզանդ պատմիչի բերած այս պատմության մեջ արտացոլված է հայրենի հողի՝ հայրենիքի հզորության գաղափարը:

Պարսից արքունիքում իրեն խիստ արժանավայել պահեց Վասակ սպարապետը: Նրան Շապուհը անվանեց աղվես: Իսկ վերջինս պատասխանեց, թե երբ ես հաղթում էի պարսիկներին և հռոմեացիներին, քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ զբրության մեջ, աղվես եմ թվում: Վասակը մորթագերծ արվեց և դրվեց Արշակի դիմաց: Պայքարը շարունակեցին Արշակի այրին՝ Փառանձենը և որդին՝ Պապը:

16. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՊԻ ՕՐՈՔ: ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

368 թվականի վերջին Ջիկ և Կարեն զորավարների գլխավորությամբ պարսից զորքը ներխուժեց Հայաստան: Արշակի այրին՝ Փառանձենը ամրացավ Արտազերս ամրոցում և կազմակերպեց

երկարատև դիմադրություն: Հռոմեական նոր կայսր Վաղեսը Արշակի որդուն՝ Պապին օժեց թագավոր /370-374/ և ուղարկեց Հայաստան: Արտազերսի պաշարումը տևեց 13 ամիս: Թագուհին գերի ընկավ և տանջամահ արվեց: Պարսիկները Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի հետ գրավում ու ավերում են Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Ջարեհավանը, Վանը:

369թ. Շապուհը Հայաստանում կազմակերպեց 10 հազար ընտանիք հայերի գերեվարություն դեպի Պարսկաստան:

370թ. Պապը եկավ Հայաստան, Վասակի որդուն՝ Մուշեղին նշանակեց սպարապետ: 370թ. գարնանը Ատրպատականում Մուշեղը հարձակվում է Շապուհի վրա և գերում նրա տիկնանց տիկինին, ապա մեծահոգաբար ազատ արձակում: 371թ. Շապուհը հարավից նոր արշավանք է ձեռնարկում, Մուշեղը նրան դիմավորում է Նպատ լեռան ստորոտին՝ Չիրավի դաշտում:

Պարսիկները խուճապահար փախչում են: Գերի են ընկնում բազմաթիվ պարսիկներ: Գերիների թվում էր Մերուժան Արծրունին: Հայ զինվորները նրա գլխին հագցնում են երկաթե շիկացած թագ՝ ասելով թե թագ էիր ուզում, ահա քեզ թագ: Նույն ժամանակ որդու՝ Սամվելի ձեռքով սպանվում է Վահան Մամիկոնյանը: Չիրավի հաղթանակից հետո Պապը միավորում է երկիրը: Նա վարում է խիստ ինքնուրույն քաղաքականություն՝ խուսանավելով Հռոմի և Պարսկաստանի միջև, փորձում նաև սահմանափակել զգալիորեն ուժեղացած հայ եկեղեցու իրավունքները: Բռնագրավվում են վերջինիս պատկանող 7 կտոր հողերից 5-ը, վերցվում է նրան վճարվող եկեղեցական հարկը՝ տասանորդը: Եկեղեցու հետ ընդհարումը խիստ սրում է Պապի ու Ներսեսի հարաբերությունները: Պատահական չէ, որ հայ պատմիչները եկեղեցու նկատմամբ Պապի այդ քաղաքականության համար նրան ներկայացնում են բացասական գծերով: Իրականում Պապը եռանդուն, խիզախ և խելացի գործիչ էր, ինչպես նրան նկարագրում է հռոմեացի պատմիչ Ամմիանոսը: Պապի ինքնուրույն գործելակերպը դժգոհեցնում է հատկապես Հռոմին: Հռոմը վճռում է մեջտեղից վերացնել Պապին: Կայսրը հրավիրում է հայոց թագավորին Կիլիկիայի Տարսոն քաղաքը՝ իբր խորհրդակցելու: Այնտեղ նա արգելափակվում է: Սակայն Պապը 300 հոգով կարողանում է հնտորեն քաղաքից դուրս գալ և, շրջանցելով հռոմեական զորքը, հասնել Հայաստան: Առաջին մահափորձից հետո հռոմեացիները կազմակերպում են երկրորդը: Ջորավար Տրայանոսը 374թ. Պապին հրավիրում է խնջույքի, որի ժամանակ հայոց արքան սրախողխող է արվում:

Հոռմեական կայսր Վաղեսը, որը կազմակերպել էր Պապի սպանությունը, կեղծ ափսոսանք է հայտնում և հայոց թագավոր ճանաչում Պապի ազգական Վարազդատին (374-378):

Վարազդատը, որը հայտնի էր որպես օլիմպիական չեմպիոն, պետական գործերից հեռու կանգնած անձնավորություն էր և փաստորեն լիովին ծառայում էր հռոմեացիներին: Պատահական չէ, որ դավաճան նախարար Բատ Սահառունին կարողացավ ապակողմնորոշել Վարազդատին և սպանել տալ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին և դառնալ սպարապետ: Սպանությունից առաջ Մուշեղը արտասանել է ռետևյալ խոսքերը. «Դուք սպանում եք մի մարդու, որը ճակատից քրտինք սրբելու փոխարեն, նետի սլաքով արյուն է սրբել»:

378թ. Մամիկոնյան իշխան Մանվելի ջանքերով Վարազդատը վտարվում է Հայաստանից և գահը անցնում է պապի մանկահասակ որդուն՝ Արշակ III-ին /378-391/: Արշակը գահակալում է իր կրտսեր եղբոր՝ Վաղարշակի հետ՝ Մանվելի խնամակալությամբ: Արշակի մահից հետո Հայաստանը դառնում է կռվախնձոր Պարսկաստանի և Հռոմի միջև: 387թ. Շապուհ III-ը և Թեոդոսիոսը համաձայնության են գալիս և բաժանում են Հայաստանը միմյանց միջև: Արևմտյան մասը ընկնում է Հռոմի /395-ից՝ Բյուզանդիա/, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ: Հռոմին բաժին էին ընկնում հայոց Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, մասամբ Տարոն աշխարհները: Նրանցից արևելք, Հայաստանի մեծ մասը մնում էր Պարսկաստանին: Արշակ III-ը տեղափոխվում է Հայաստանի հռոմեական մասը: Արշակի մահից հետո Հռոմը վերացնում է հայ Արշակունիներին իր շրջանում, իսկ պարսկական մասում նրանք իշխում են մինչև 428թ.: Պարսիկները Արևելյան Հայաստանում գահ են բարձրացնում Խոսրով IV-ին /387-389/: Նա փորձում է միավորել երկրի երկու մասերը, որի համար գահընկեց է արվում: Վերջին պարսկահպատակ Արշակունիներից ամենանշանավորը Վռամշապուհն էր /389-414թթ./, որի օրոք ստեղծվեցին հայոց գրերը: 414-420թթ. գահակալում է պարսից արթայորդի Շապուհը: 422թ. գահ է բարձրացնում վերջին Արշակունի Առտաշես III-ը /422-428թթ./: Նա անուշադիր էր պետական գործերի նկատմամբ և հիմնականում զբաղված էր որսորդությամբ ու խնջույքներով: Նրանից դժգոհ հայ նախարարները դիմեցին պարսից Վռամ թագավորին՝ խնդրելով փոխել արքային: Վռամը օգտվեց առիթից և ընդհանրապես վերացրեց Արշակունյաց դինաստիան: Երկրի կառավարումը հանձնվեց պարսիկ մարզպանի: Պատմահայր Խորենացին, որ իր պատմությունը հասցնում է մինչև 428թ., ողբում է Արշակունյաց անկումը՝ եզրափակելով իր գիրքը «Ողբով», ասելով, թե

իմ հիվանդ գառը /այսինքն՝ հայոց թուլամորթ արքային/ ուրիշի առողջ գայլի /պարսից մարզպանի/ հետ չեմ փոխի: Հայաստանը վերածվեց սովորական պարսկական մարզպանության և կորցրեց իր պետական անկախությունը:

ՏԷ. 17. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 450-451ԹԹ. /ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՍ/

Հայաստանը գտնվում էր օտար նվաճողների տիրապետության ներքո: Արևմտյան նահանգներին տիրացել էր Արևելյան հռոմեական կայսրությունը /395թ. Բյուզանդիա/: Երկրի արևելյան մեծագույն մասը վերածվել էր Սասանյան Պարսկաստանի մի մարզի՝ պարսից արքայի նշանակած մարզպանի ղեկավարությամբ: Հայկական թագավորության վերացումից հետո պարսից արքան 10-15 տարի վարեց հայ նախարարներին սիրաշահելու քաղաքականություն, բայց իր տիրապետությունը Հայաստանի վրա ամրապնդելու համար, երկրի ամրոցներում, քաղաքների միջնաբերդերում հաստատեց պարսից կայազորներ: 441թ. Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն Բյուզանդիան չպետք է օգներ հայերին: Պարսից արքունիքն այժմ կարող էր ազատորեն գործել հայերի դեմ:

Առաջին հերթին վերացվեցին դեռևս պահպանվող հայկական գործակալությունները՝ Վահան Ամատունու ձեռքից խլվեց հազարապետությունը և հանձնվեց արքայի մերձավորներից մեկին, պարսիկների ձեռքն անցավ երկրի տնտեսական իշխանությունը և բնակչությունից հարկերի գանձումը: 447թ. Հայաստան ուղարկվեց Դենշապուհ անունով մի պարսիկ՝ հարկերը հավաքելու համար: Այդ նպատակով նա «աշխարհագիր» կատարեց՝ հաշվառման ենթարկեց երկրի հողն ու ջուրը, հարստությունները, բնակչությանը, նրա ունեցվածքը, եկամուտները և սահմանեց կրկնակի ծանր հարկեր: Հարկի տակ դրվեցին անգամ ամայի հողերը, անտառներն ու արոտները, հարկատու դարձավ նաև հոգևորականությունը: Պարսից արքան՝ Հազկերտ II-ը, այնուհետև խլեց Մեծ դատավարությունը հայոց կաթողիկոսից և հանձնեց պարսիկներին: Հայերի դիմադրական ուժը ջլատելու նպատակով հայկական գործերը, որոնք երկրից դուրս չպետք է հանվեին, ուղարկվեցին Միջին Ասիա՝ ընդդեմ պարսիկների թշնամիների՝

քուշանների: Պարսիկները պահանջեցին նաև, որ հայերը, վրացիներն ու աղվանները հավատափոխ լինեն՝ հրաժարվեն քրիստոնեությունից և ընդունեն զրադաշտական կրոնը՝ կրակապաշտությունը: Հագվերտի հրովարտակը քննարկելու նպատակով, 450թ. Արտաշատում հրավիրվեց ժողով, որին ներկա էին մարզպան Վասակ Սյունեցին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը, կաթողիկոս Յովսեփ Վաղոցորդցին: Ժողովում մերժվեց Հագվերտի այդ պահանջը: 450թ. ապրիլին հայ, վրաց, աղվանից իշխանավորներին հրավիրեցին Տիգրան և մահվան սպառնալիքով պահանջեցին հավատափոխ լինել: Իշխաններն առերես դավանափոխ եղան, որպեսզի կարողանան վերադառնալ իրենց երկրները և բարձրացնել ապստամբություն:

Իշխանների հետ միասին Հայաստան ուղարկվեցին զորքեր և 700 մոզ՝ երկիրը հնազանդեցնելու և զրադաշտությունը տարածելու համար: Բայց ժողովուրդն արդեն ոտքի էր ելել: Ամենուրեք կազմակերպվեցին աշխարհագորային զնդեր, որոնք հայկական զորաջոկատների հետ միասին հարձակվեցին երկրի ամրոցներում հաստատված պարսկական կայազորների վրա, ջախջախեցին և երկրից դուրս քշեցին: Բագրևանդի Անգղ ավանում հայ աշխարհագորայինները Ղևոնդ Երեցի գլխավորությամբ ջախջախեցին մոզերին, որոնք փորձում էին տեղի եկեղեցին վերածել ատրուշանի՝ կրակապաշտարանի:

Սկզբում Մամիկոնյան նախարար Վարդանը որոշեց իր տոհմակիցներով հեռանալ դեպի Բյուզանդիա: Սակայն Վասակ մարզպանը նրա հետևից մարդ ուղարկեց և կարողացավ վերադարձնել հայրենիք: Շուտով Վարդան Մամիկոնյանը գլխավորեց ապստամբությունը: Ապստամբները օգնություն խնդրեցին Բյուզանդիայից: Մի գորախումբ Ներշապուհ Արծրունու հրամանատարությամբ ուղարկվեց Ատրպատականի կողմերը, մյուս գորախումբը՝ մարզպան Վասակ Սյունեցու ղեկավարությամբ թողնվեց Այրարատում, երրորդը Վարդանը տարավ Աղվանք՝ այնտեղ գտնվող պարսից զորքը ջախջախելու և թիկունքից հարձակման վտանգը կանխելու համար:

Պարսիկները փորձեցին փակել Վարդանի ճանապարհը: Խաղխաղ /Ղազախ/ քաղաքի մոտ 450թ. տեղի ունեցավ ճակատամարտ: Պարսիկները պարտություն կրեցին: Հայերի հաղթանակը ոգևորեց լեռները բարձրացած բազմաթիվ աղվանների, որոնք միացան Վարդանի զորքին: Հայ-աղվանական զորքերը դուրս եկան Հյուսիսային Կովկասի լեռնանցքներից մեկը՝ ճորա պահակ և հասնելով հոներին, նրանց հետ

կնքեցին դաշինք: Պարսից արքան զգուշացավ և ապստամբների մեջ պառակտում մտցնելու համար, Վասակ Սյունեցին տվեց Հայաստանի վրա թագավորելու խոստումներ:

Վասակ Սյունեցին ճիշտ չէր համարում բացահայտ պայքարը հզոր Պարսկաստանի դեմ և առաջարկում էր զիջման գնալ և ընդունել զրպաշտությունը: Բացի այդ, նա վախեցավ, որ Հագվերտը հաշվեհարդար կտեսնի Տիգրանում պատանդության մեջ գտնվող իր 2 որդիների հետ: Այս ամենը Վասակին մղեցին պառակտման և նա, իր կողմը գրավելով մի քանի նախարարների, լքեց ապստամբներին ու ամրացավ Սյունիքում:

Վարդան Մամիկոնյանը, ստանալով Վասակի դիրքորոշման փոփոխության լուրը՝ շտապ վերադարձավ Արտաշատ, զորահավաք կատարեց, կարգավորեց բանակը և պատրաստվեց պատերազմի: Կազմվեց կառավարություն. ինքը՝ սպարապետ, Վահան Ամատունին՝ հազարապետ, Յովսեփ Վաղոցորդցին՝ մեծ դատավոր, Խորեն Խորխոռունին՝ մաղխազ: Հայերի վիճակը ծանրանում էր այն առումով, որ Բյուզանդիան և հոները հրաժարվեցին օգնել ապստամբներին:

451թ. մայիսին պարսկական 180 հազ. բանակը պատերազմի համար վարժեցված փղերով ներխուժեց Հայաստան և դիրքավորվեց Մասիսից հարավ գտնվող Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում, Վասպուրականի Արտազ գավառում: Այստեղ շարժվեց նաև հայկական 66 հազ. բանակը: Մայիսի 26-ին տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը: Մարտից առաջ ելույթ ունեցավ Վարդան Մամիկոնյանը: Աջ թևում Խորեն Խորխոռունին էր, ձախում՝ Վարդանը, կենտրոնում՝ Ներշապուհ Արծրունին, թիկունքում՝ Վարդանի եղբայր Համազասպ Մամիկոնյանը: Անցնելով Տղմուտ գետը՝ Վարդան Մամիկոնյանը իր զորագնդով հարձակվեց պարսից զորքի աջ թևի վրա, և մեծ կորուստներ պատճառելով, ետ մղեց թշնամուն: Պարսկական զորավար Մուշկան Նիսալավուրտը հրամայեց հայերի դեմ հանել իր ամենաընտիր Մատյան զունդը և գրոհի անցնել: Ճակատամարտը շարունակվեց մինչև ուշ երեկո: Կատաղի կռվում էր 6 հազարանոց աշխարհագորը՝ Ղևոնդ Երեցի գլխավորությամբ: Արյունահեղ կռվում երկու կողմերն էլ տվեցին մեծ կորուստներ: Ճակատամարտում զոհվեց նաև Վարդան Մամիկոնյանը: Պարսիկները եռապատիկ ավելի կորուստներ էին ունեցել /հայերի 1036-ի դիմաց, պարսիկները՝ 3544/, բայց նրանց թվական գերակշռությունը պահպանվում էր: Հայկական բանակը չէր կարող շարունակել ճակատամարտը, ուստի մարտի դաշտից հեռացավ, և ամրանալով լեռներում ու բերդերում, շարունակեց պայքարը մամր կռիվներով:

Արցախից եկած գուճուղ Վայքում ընկավ ծուղակի մեջ և ջախջախվեց: 14 հայ նախարարներ և կաթողիկոսը աքսորվեցին Պարսկաստան: Դեպքերի ականատես պատմիչ Եղիշեն հայ նախարարների գործը անմահացրել է «Մահ չիմացյալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» խոսքերով: Հազարավոր ընկածների արյան գնով հայ ժողովուրդը պահպանեց իր ինքնուրույն քրիստոնեական հավատը և հարաբերական ինքնուրույնությունը:

18. 481-484ԹԹ. ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ /ՎԱՀԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ/

450-451թթ. ապստամբությունից հետո Հայաստանում պարսիկներն առժամանակ մեղմ քաղաքականություն էին վարում: Սակայն այդ վիճակը երկար չտևեց: Հայկական նախարարությունները թուլացնելու, նրանց պառակտելու նպատակով պարսից արքա Պերոզը և նրա արքունիքը նախարարական տների կրտսեր անդամներին՝ սեպուհներին հողեր ժառանգելու իրավունք վերապահեցին, որով նախարարությունները բաժան-բաժան էին լինում, ոտնահարվում էին ավագ նախարարների իրավունքները: Զրադաշտականություն ընդունած նախարարները պարսիկների կողմից արժանանում էին պաշտոնների ու պարգևների: Կրոնական հալածանքների ի հայտ գալու հետ մեկտեղ բարձրացվեցին հարկերը: Ժողովրդի համբերության բաժակը լցվել էր և շուտով՝ 481թ. բռնկվեց նոր ապստամբություն, որը նրա ղեկավարի անունով հայտնի է Վահանանց պատերազմ անունով:

Ապստամբությունը սկսվեց Վրաստանում: Վախթանգ Գորգասալ թագավորը սպանեց ուրացյալ Վազգեն բղեշխին, որը ամուսնացած էր հայոց սպարապետ, Ավարայրի հերոս Վարդանի աղջկա՝ Շուշանիկի հետ /վերջինս հրաժարվել էր ընդունել զրադաշտականություն և հերոսաբար նահատակվել էր/ և երկրից վտարեց պարսիկներին: Հայաստանում ապստամբության գլուխ անցավ Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակի որդին՝ Վահան Մամիկոնյանը:

Ապստամբները Շիրակի Անի ամրոցի մոտ պարտության մատնեցին պարսիկ մարզպանի զորքերին և ստիպեցին հեռանալ Հայաստանից: Դվինում կազմվեց հայկական կառավարություն: Սահակ Բագրատունին դարձավ մարզպան՝ տանուտեր, Վահան Մամիկոնյանը՝ սպարապետ, Գյուտ կաթողիկոսը՝ Մեծ դատավոր: Ապստամբությունը

ճնշելու նպատակով Պարսկաստանից ուղարկված 7 հազարանոց պարսկական զորաջոկատը ջախջախվեց 400 հոգանոց հայկական զորախմբի կողմից Արարատի քարքարոտ լանջին՝ Ակոռի գյուղի մոտ: Սա երկրորդ կարևոր հաղթանակն էր:

482թ. պարսից արքունիքը Սալար զորավարի ղեկավարությամբ մեծաքանակ նոր զորքեր նետեց հայերի դեմ: Այս անգամ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Արարատից հարավ, Վասպուրականի Արտագ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ, Ավարայրի դաշտից ոչ հեռու: Մարտից առաջ ոգևորիչ ճառ կարդաց հայոց կաթողիկոսը: Վահանը կիրառեց կռվի խելացի և նախապես մշակված տակտիկա և հասավ հաջողության: Պարսիկները կրեցին ծանր պարտություն: Մարտում աչքի ընկան ձախ թևում կռվող Կամսարական եղբայրները և աջում մարտնչող Վահանի նախարարը: Ներսեհապատի հաղթանակից հետո Վահանը իր հոգնած բանակը տարավ Ծաղկոտն գավառը, որտեղ գտնվում էր հայոց բանակի հանգստավայրը:

Սակայն շուտով լուր ստացվեց, որ մի մեծ պարսկական բանակ ներխուժել է Վրաստան և Վախթանգ թագավորը հայերից խնդրում է օգնություն: Վահանը շտապեց վրացիներին օգնության: Հայկական բանակը հասավ Կուրի հովիտը, որին միացավ վրացական զորքը: Պարսկական բանակի հետ ճակատամարտը տեղի ունեցավ Կուրի ափին՝ ճարձանայի դաշտում: Թշնամին կարողացավ իր կողմը ներքաշել հայ և վրացի որոշ իշխանների, որից հետո անցավ հարձակման թվապես իրեն գիջող հայ-վրացական ուժերի դեմ: Վերջիններս ծանր կորուստներ տվեցին և նահանջեցին: Կռվում զոհվեցին տանուտեր Սահակ Բագրատունին, սպարապետի եղբայր Վասակը և ուրիշներ: Հայոց բանակի մնացորդներով Վահանը նահանջեց դեպի Հայաստան և հասավ Բասենի Դու գյուղը: Պարսիկները հետևեցին նրան, սակայն մարտի մեջ չմտան: Հայերն անցան պարտիզանական պայքարի:

483թ. ընթացքում պարսիկները ավեր ու կողոպուտ էին սփռում Հայաստանում ու Վրաստանում: Ապստամբները պատասխանում էին հանկարծակի հարձակումներով, որոնք ավելի ուժեղացան 484թ. ընթացքում: Պարսկական զորքը կրեց խոշոր կորուստներ: Պարսկաստանի դրությունը վատթարացավ նրանով, որ արևելքում հեփթաղներն անցան հարձակման: Մարտերից մեկի ժամանակ զոհվեց Պերոզ արքան: 484թ. վերջին պարսից նոր արքան՝ Վաղարշը հարկադրված փոխեց իր վերաբերմունքը հայերի նկատմամբ:

484թ. պարսից զորավար Նիխորը Հեր գավառի Նվարսակ

գյուղում հանդիպեց Վահան Մամիկոնյանին: Վահանը Նիխորին ներկայացրեց հայ նախարարների մշակած պայմանները: Պարսիկները համաձայնեցին և կնքվեց հաշտություն: Ըստ Նվարսակի հաշտության վերականգնվում էին հայ նախարարների ժառանգական արտոնությունները: Պետք է անխախտ պահպանվեին հայկական ավանդական կարգերը, վերացվելու էր կրոնական հալածանքը: Նախարարները պետք է ճանաչեին միայն պարսից արքայի իշխանությունը՝ առանց ուրիշ պաշտոնյաների միջամտության: Երկրի ռազմական ու վարչական իշխանությունը մնում էր հայերին: 485թ. պարսիկները գնացին նոր զիջման՝ Վահանին նշանակեցին հայոց տանուտեր: Նա կառավարեց մինչև 506թ.: Շնորհիվ երկու ապստամբությունների Հայաստանը պահպանեց իր կիսանկախությունը:

19. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 6-ՐԴ ԴԱՐՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ /591Թ./ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Պրությունը Արևմտյան Հայաստանում. 6-րդ դարում Հայաստանը շարունակում էր մնալ բաժանված /387թ.-ից/ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այդ ժամանակ ևս հայ ժողովուրդը չդադարեց պայքարը իր ազատագրության համար ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Բյուզանդական մասում երկիրը կառավարում էր բյուզանդական կառավարիչը, բայց հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական իրավունքների զգալի մասը. ունեին ընդարձակ կալվածքներ, որոնք ժառանգաբար անցնում էին հորից որդուն: Արևմտյան Հայաստանում մեծ ազդեցություն ունեին 5 հայ սատրապները, որոնք իրենց տարածքների փաստական տերերն էին: Այս վիճակը դուր չէր գալիս Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսին /527-565/: Հայ նախարարների ուժը թուլացնելու նպատակով 530-ական թթ. նա անցկացրեց մի շարք ռեֆորմներ:

Ըստ վարչական ռեֆորմի Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին 4 պրովինցիաներ՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք՝ բյուզանդական կառավարիչներով: Ժառանգության մասին նոր օրենքով հողեր ստանալու իրավունք ձեռք բերեցին նաև նախարարական տների իգական սեռի ներկայացուցիչները: Դա նույնպես նպատակ էր հետապնդում բաժան-բաժան անել նախարարական կալվածքները,

թուլացնել նրանց, վերացնել հին հայկական ավատատիրական բաժանումը: Հուստինիանոսն սկսեց բռնությամբ հայերին պարտադրել ուղղափառություն՝ քաղքեղոնականություն: Հայ նախարարները զրկվեցին գործ ունենալու իրավունքից:

Չհանդուրժելով այս բռնությունները՝ 539թ. Արևմտյան Հայաստանում հայերը բարձրացրին առաջին ապստամբությունը: Այն սկսվեց Առաջին Հայքում: Ապստամբությունը գլխավորեցին 428թ. Արշակունյաց անկումից հետո Բյուզանդիայում գործող Արշակունիները՝ Հովհաննես Արշակունին և նրա որդին՝ Արտավանը, որը ճանաչված գորավար էր: Հայերը սպանեցին բյուզանդական կառավարչին, որը ազգուրաց մի հայ ազնվական էր: Հուստինիանոսը գործ ուղարկեց Սիտասս գորավարի գլխավորությամբ: Ապստամբների ղեկավարներին կաշառելու Սիտասսի փորձերն անցան ապարդյուն: Ճակատամարտում բյուզանդական զորքը ջախջախվեց և վտարվեց Առաջին Հայքից: Արտավանի նիզակի հարվածից ընկավ Սիտասսը: Հայերի դեմ ուղարկվեց Բուզոս գորավարը: Նա կարողացավ խաբեությամբ խնջույքի հրավիրել Հովհաննես Արշակունուն և սպանել նրան: Կորցնելով ղեկավարին՝ ապստամբները դադարեցրին դիմադրությունը և անցան պարսից Խոսրով I թագավորի մոտ: Վերջինս, խախտելով 532թ. կնքված «հավիտենական» հաշտությունը Բյուզանդիայի հետ, նոր պատերազմ սկսեց: Նորից ոտնատակ գնաց Հայաստանը: Պարսկաբյուզանդական պատերազմի օրերին հայերը նորից ապստամբեցին Հուստինիանոսի դեմ: Այս անգամ այն սկսվեց 548թ. Արշակ Արշակունու գլխավորությամբ: Արշակին միացավ սպանված Հովհաննես Արշակունու որդին՝ արդեն ծանոթ Արտավանը: Կայսրին սպանելու նրանց մահափորձը բացահայտվեց մի հույն պալատականի մատնությամբ: Ձերբակալվում են դավադրության շատ անդամներ, այդ թվում՝ Արտավանը: Վերջինիս նկատմամբ Հուստինիանոսը մեղմ է վարվում՝ ենթարկում է միայն կալանքի, այն էլ իր պալատում: Այդ եղանակով նա կարողանում է փրկել Արտավանի կյանքը և նրան հետագայում օգտագործել իր բանակի համար: 548թ. ապստամբության մասնակիցների մի մասը փախչում է Արևելյան Հայաստան: Պարսկաբյուզանդական պատերազմը շարունակվում է և ավարտվում 562թ.:

571-572թթ. ապստամբությունը Արևելյան Հայաստանում. 5-րդ դարի ազատագրական պատերազմներից հետո Արևելյան Հայաստանում հաստատվեց խաղաղ ժամանակաշրջան, հատկապես Վահան Մամիկոնյանի /485-506/ և նրա եղբոր՝ Վարդ Պատրիկի /506-509/

մարզպանության շրջանում: Վարդի մահից հետո պարսից արքունիխքը մարզպանի պաշտոնը հանձնում է պարսիկների: Արևելյան Հայաստանի վիճակը հատկապես վատթարանում է, երբ 564թ. մարզպան է նշանակվում պարսիկ Սուրեն Վշնասպը: Նա աշխարհագիր անցկացրեց, հաշվառեց հողը, ջուրը, մտցրեց գլխահարկ, վերսկսվեցին կրոնական հալածանքները, կառուցվեցին ատրուշաններ: Սուրենը սպանեց հայ իշխան Մանուելին:

Այս ամենը հանգեցրեց նոր ապստամբության պարսից տիրապետության դեմ: Ապստամբությունը գլխավորեց սպանված Մանուելի եղբայրը՝ Վարդան Մամիկոնյանը, որին որոշ ուսումնասիրողներ անվանում են Վարդան Կրտսեր: Վարդանին միացավ հայոց կաթողիկոս Հովհաննես Գաբեղենեցին: Այս անգամ էլ արևելահայերին պաշտպանելու փորձ արեց Բյուզանդիան՝ խոստանալով անհաջողության դեպքում օթևան տալ ապստամբներին Արևմտյան Հայաստանում: Շուտով ապստամբությունը տարածվեց Վրաստանում և Աղվանքում: Հայերի զորքը 10 հազ. էր:

Վարդանն ու կաթողիկոսը պարսիկներից պահանջում են վերջ տալ ատրուշանների կառուցմանը: Սուրենը գնում է Տիզբոն և վերադառնում զորքով: 572թ. սկզբին հայոց բանակի թիվը կրկնապատկվում է և դառնում 20 հազ.: 572թ. փետրվարի 2-ին ապստամբները ազատագրում են Դվինը: Մարտում զոհվում է Սուրեն Վշնասպը:

572թ. գարնանը պարսիկները նոր զորքով, Միհրան զորավարի գլխավորությամբ ներխուժում են Հայաստան: Խաղամախյա կոչվող վայրում տեղի ունեցած ճակատամարտում պարսիկները կրում են խայտառակ պարտություն: Առիթից օգտվելով՝ Բյուզանդիան մտնում է պատերազմի մեջ Պարսկաստանի դեմ: Հայ նախարարների մեծ մասն անցնում է Բյուզանդիա: Պարսկաբյուզանդական նոր պատերազմը տևում է մոտ 20 տարի և ավարտվում 591թ., երբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվում է Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Պարզ է դառնում, որ երկու տերություններն էլ ամեն մի ապստամբության ժամանակ, օգնելով հակառակորդ երկրի հպատակ հայերին, հետապնդում էին իրենց շահը և մտահոգված չէին նրանց ճակատագրով:

591թ. բաժանմամբ Բյուզանդիան ստանում է նոր հողեր Պարսկաստանին պատկանող մասից՝ Տարոնը, Այրարատ աշխարհի մեծ մասը՝ մինչև Ազատ գետը, Կոզովիտ գավառը և Վան քաղաքը: Կիսելով Հայաստանը, երկու երկրների տիրակալները՝ բյուզանդական կայսր Մորիկը և պարսից արքա Խոսրովը հայերի դեմ սկսեցին գործել

միասնաբար: Մորիկը Խոսրովին առաջարկում էր այսպիսի հայատյաց ծրագիր. «Ես իմ հպատակ հայերին կտանեմ Թրակիա, իսկ դու՝ Արևելք, քուշանների դեմ: Եթե սպանեն՝ կսպանեն մեր թշնամիներին, եթե սպանվեն՝ կսպանվեն մեր թշնամիները»: Ահա այսպիսի ժանր պայմաններում էր գտնվում հայ ժողովուրդը, երբ պատմության թատերաբեմ իջան արաբները:

20. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎԱՏՈՒՄԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

591թ. Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Պարսկաբյուզանդական մրցակցությունը Հայաստանի համար շարունակվեց նաև 7-րդ դարի սկզբներին, մինչդեռ նույն ժամանակ հզորանում է մի նոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը պետք է վերջ տար այդ մրցակցությանը՝ գրավելով Մերձավոր Արևելքը, այդ թվում՝ Հայաստանը՝ դուրս մղելով և բյուզանդացիներին և պարսիկներին: 7

622թ. Արաբական թերակղզու Մեքքա քաղաքում ոմն Մուհամեդ իրեն հայտարարեց աստծո մարգարե և սկսեց տարածել իր ուսմունքը՝ մահմեդականությունը /իսլամ/: Այն սկզբում թշնամաբար ընդունվեց արաբների կողմից, իսկ Մուհամեդը ծեծի ենթարկվեց և Մեքքայից վտարվեց Մեդինա: Քա 622թ. էր, որը մահմեդականների համար համարվում է հիջրայի թվական և իրենց տոմարի սկիզբը: Շուտով մահմեդականությունը լայն տարածում գտավ ռազմատենչ արաբական քոչվոր ցեղերի շրջանում և նրանց միավորեց: Մուհամեդը հռչակվեց առաջին խալիֆ: Այսպես հիմնավորվեց արաբական խալիֆայությունը, որը 630-ական թթ. սկսեց իր աշխարհակալ նվաճումները: Արաբները 636թ. Յարմուքի ճակատամարտում ջախջախիչ պարտության մատնեցին բյուզանդացիներին, իսկ 637թ. Քադիսիայի և 642թ. Նեհավենդի ճակատամարտերում՝ պարսիկներին և ներխուժեցին Փոքր Ասիա: 7

640թ. արաբներն առաջին անգամ ներխուժեցին Հայաստան: Սրընթաց հարվածով նրանք դուրս եկան մինչև Դվին և հոկտեմբերի 6-ին գրավեցին այն: Արաբները կոտորեցին 12 հազ. դվինցիների, 33 հազարի՝ գերեվարեցին: Արաբների հայտնվելն այնքան անսպասելի էր, որ հայ իշխաններից և ոչ մեկը չկարողացավ կազմակերպել դիմադրություն: Չեռք բերելով հարուստ ավար՝ նրանք թողեցին

Հայաստանը: Կոգովիտ գավառում հայոց իշխանաց իշխան Թեոդորոս Ռշտունին փորձեց վրեժխնդիր լինել, սակայն պարտություն կրեց և նահանջեց: 642- 643թթ. արաբները ձեռնարկեցին երկրորդ արշավանքը: Այս անգամ Թեոդորոս Ռշտունին խնամքով նախապատրաստվել էր դիմադրության: Նույն Կոգովիտի Եղբարք Սարակ վայրում նա ծուղակ էր պատրաստել արաբների համար: / Շեշտակի հարվածով հայերը պարտության մատնեցին արաբներին: Երկրորդ հարվածը թշնամուն հասցվեց Երևանի բերդի մոտ:

Կատաղած արաբները փորձեցին կրած պարտությունների վրեժը լուծել Կոգովիտի Արծափ գյուղի բնակչությունից: Սակայն գյուղացիներին օգնության հասած Ռշտունին այստեղ ևս տարավ հաղթանակ և ստիպեց արաբներին հեռանալու Հայաստանից: /650թ. արաբները երրորդ անգամ ներխուժեցին հայոց երկիրը: Թև այս անգամ ևս նրանք չմնացին Հայաստանում, սակայն չհրաժարվեցին այն գրավելու և հպատակեցնելու մտադրությունից: / Այս հանգամանքը լավ գիտակցում էին հայ նախարարները, ուստի փորձում էին ստեղծված իրավիճակում գտնել ելք: Մի մասը Ներսես Տայեցի կաթողիկոսի գլխավորությամբ գտնում էր, որ պետք է պայքարել խալիֆայության դեմ՝ դաշնակցելով Բյուզանդիայի հետ: Մյուս խումբը, որի ղեկավարը Թ.Ռշտունին էր, պնդում էր, որ Բյուզանդիան այլևս լուրջ ռազմաքաղաքական ուժ չի ներկայացնում և նրա հետ դաշինքը ոչինչ չի տալու, բացի արաբներին Հայաստանի դեմ զրգոելուց, ուստի ճիշտ կլինի դաշնակցել արաբների հետ: Հաղթանակեց այս վերջին ուղղությունը:

Արաբները, որ զբաղված էին Բյուզանդիայի դեմ պատերազմներով և նվաճումներով Հյուսիսային Աֆրիկայում, ընդունեցին Թ.Ռշտունու առաջարկությունը հայ-արաբական դաշինք կնքելու մասին: 652թ. Ռշտունին կնքեց հաշտություն Ասորիքի կառավարիչ Մուավիայի հետ, որով Հայաստանը ընդունում էր արաբների գերիշխանությունը, սակայն 3 տարով ազատվում էր հարկերից, որից հետո հարկի չափը որոշելու էին իրենք: հայերը: Հայաստանին թույլատրվում էր պահել 15 հազ. բանակ՝ խալիֆայության ծախսերով: Արաբները պարտավորվում էին պաշտպանել Հայաստանի սահմանները օտարների հարձակումներից: Պահպանվում էին հայ նախարարների իրավունքները: Փաստորեն Հայաստանը դառնում է կիսանկախ:

Հայ-արաբական դաշինքը անհանգստացրեց բյուզանդացիներին, և շուտով նրանք անցան հարձակման Հայաստանի դեմ: Թեոդորոս Ռշտունին արաբների օգնությամբ կարողացավ դուրս մղել նրանց երկրի

սահմաններից: Ցավոք, քիչ անց արաբները, դրժեցին 652թ. դաշնագիրը և նույնպես ներխուժեցին Հայաստան: Հազարավոր գերիներ տարվեցին Արաբիա: Գերիների քարավանին միացավ նաև Ռշտունին, որը հետագայում մահացավ գերության մեջ: Երբ Մուավիան դարձավ արաբական խալիֆ, նորից վերականգնեց հայ-արաբական դաշնագիրը: Այս անգամ այն ավելի երկար գործեց և մեծ դեր խաղաց Հայաստանի անվտանգության պահպանման համար:

670-680-ական թվականներին, օգտվելով արաբների որոշ թուլացումից և սաստկացած արաբաբյուզանդական հակամարտությունից, հայերը ձեռք բերեցին փաստական անկախություն: Սակայն այդ վիճակը երկար չտևեց: /698թ. Մուհամեդ իբն Մովսանը մեծ բանակով ներխուժեց Հայաստան: Նա ուժեղ դիմադրության հանդիպեց Սևանա կղզում: Մինչև 700թ. տևած արշավանքների ընթացքում ավերակների վերածեց երկիրը: 700թ. Մուհամեդը Աբդուլային Հայաստանում նշանակեց կառավարիչ: Այդ նշանակման տարին ընդունված է համարել արաբների կողմից Հայաստանի վերջնական նվաճման տարեթիվ: Նվաճված երկիրը վերածվեց նոր վարչամիավորի՝ Արմինիա կամ Էրմենիստան անունով: :

21. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍ 8-ՐԴ ԴԱՐՈՒՄ

700թ. Հայաստանի վերջնական նվաճումից հետո դեռ արաբական տիրապետությունը որոշ ժամանակ մնաց անվանական: Շուտով արաբները երկիրը ենթարկեցին հարկային ծանր լծի: Հայաստանը կողոպտվում էր, տնտեսապես քայքայվում: Ամբողջ արաբական տիրապետության ժամանակաշրջանում, որը տևեց մոտ երկու հարյուր տարի, երկրում ոչ մի շինարարական աշխատանք չկատարվեց: /

Երկիրը կառավարելու համար արաբները նշանակում էին հատուկ պաշտոնյա, որին հայերն անվանում էին «ոստիկան»: Նրա նստավայրը Դվինն էր: Ոստիկանի կողքին կարևոր դիրք ունեին նաև գլխավոր հարկահանն ու փոստային ծառայության պետը: Վերջինս հետևում էր ոստիկանի գործողություններին և այդ մասին զեկուցում խալիֆին:

Հայաստանի ներքին կյանքում ազդեցիկ դիրք ունեին Հայոց իշխանը, որը հայ նախարարների ղեկավարն էր ու պատասխանատու էր խալիֆի առջև և սպարապետը: Երբեմն Բագրատունի նախարարները

համատեղում էին այդ երկու պաշտոնները: Ազդեցիկ դիրք ունեւր նաև հայոց կաթողիկոսը:

Այս վիճակը դուր չէր գալիս արաբներին, և նրանք նվաճված երկրում իրենց իշխանությունը ամրապնդելու համար որոշեցին թուլացնել հայ նախարարների դիրքերը: Գերվեցին և Արաբիա տարվեցին Յայոց իշխան և սպարապետ Սմբատ Բագրատունին և կաթողիկոս Սահակ Չորափորեցին:

703թ. արաբները հայերի դժգոհությունը մեղմելու համար Սմբատ Բագրատունուն ազատ արձակեցին: Վերադառնալով հայրենիք՝ վերջինս գլխավորեց երկրում հասունացող ապստամբությունը: Նա իր մի քանի համախոհ իշխանների հետ խորհրդակցություն հրավիրեց, որտեղ որոշվեց իրենց ուժերով հեռանալ Բյուզանդիա: *Պա անկատ չի մնում արաբների կողմից: Նրանք սկսում են հետապնդել հայերին: Յայկական ուժերը, իմանալով այդ մասին, բանակ են դնում Արարատից ոչ հեռու գտնվող Վարդանակերտ գյուղում: Սմբատ Բագրատունու 2 հազարանոց ջոկատի ղեմ արաբները հանում են 5 հազարանոց պատժիչ զունդ: Խիստ ձմռան պայմաններում՝ 703թ. հունվարին, գիշերելով բաց երկնքի տակ, արաբական բանակը կորցրել էր իր մարտունակությունը: Առավոտյան հայկական ուժերը շեշտակի գրոհով անակնկալի բերեցին ուժասպառ եղած արաբներին՝ թշնամին խուճապահար նահանջեց և սկսեց անցնել Արաքսը: Գետի սառույցը չդիմացավ, կտորվեց մարդկանց և ձիերի ծանրության տակ: Բազմաթիվ արաբներ իրենց վախճանը գտան գետի ջրերում: Քրկվեց միայն 300 մարդ, որոնց օթևան տվեց ու խնամեց Շուշան անունով մի հայ իշխանուհի: /

Վարդանակերտի հաղթանակը ոտքի հանեց տարբեր գավառների բնակիչների: Սպանվեց ատելի ոստիկան Աբդուլլան: Սմբատ Բագրատունին նոր հաջողության հասավ արաբների նկատմամբ Վասպուրականի Ռշտունիք գավառում, իսկ Կամսարական իշխանները՝ Վանանդում: Այնուամենայնիվ, ուժերն անհավասար էին և հայ իշխանները փորձեցին համերաշխության եզրեր գտնել արաբների հետ, սակայն ապարդյուն: Սմբատը քաշվեց Տայք աշխարհը, իսկ Յայաստան մտած մեծաքանակ արաբական նոր զորաբանակը ճնշեց ապստամբությունը: Բայց արաբները ստիպված վերականգնեցին հայ իշխանների տիրույթներ ժառանգելու իրավունքը:

Վարդանակերտի պարտության վրեժը խալիֆայությունը փորձեց լուծել շատ ստոր ճանապարհով: Խալիֆի կարգադրությամբ Նախճավանի արաբ կառավարիչը իր մոտ կանչեց բազմաթիվ հայ

նախարարների՝ հայոց զորքին հաշվառելու և ռոճիկ տալու պատրվակով: Խաբեությանը ձերբակալելով վերջիններին՝ արաբները ստացան մեծ փրկագին: Դրանից հետո էլ նրանց փակեցին Նախճավանի ու մոտակա Խրամ ավանի եկեղեցիներում և կենդանի-կենդանի հրկիզեցին: Իրենք՝ արաբները այդ արյունալի 705թ. անվանեցին «Կրակի տարի»:

Այս ապստամբությունից հետո արաբներն ավելի խստացրին իրենց տիրապետությունը Յայաստանում: 725թ Յերթ ոստիկանի օրոք անցկացվեց «աշխարհագիր», որից հետո բարձրացվեցին հարկերը, նախկինում տրվող ծխահարկից /նաև երդուհարկ/ բացի այժմ հայերը պետք է վճարեին նաև հողահարկ և գլխահարկ՝ ջիզե: Վերջինս նշանակում էր, որ այժմ հարկը պետք է վճարվեր ոչ թե ըստ բազմանդամ զերդաստանի, այլ ըստ յուրաքանչյուր արական շնչի: Ամենուր երկրի լավագույն հողերից դուրս էր մղվում հայ բնակչությունը, որի տեղը զբաղեցնում էին եկվոր արաբական ցեղերը: Քոչվոր արաբները, զբաղվելով գերազանցապես անասնապահությամբ, ոչնչացնում էին այգիները, բերրի ցանքատարածություններն ու քաղաքները: Յետզետե հիմնադրվեցին արաբական պետական կազմավորումներ Արճեշում, Բերկրիում, Կարինում և այլուր:

8-րդ դարի կեսերին խալիֆայությունում սկսվեցին գահակալական կռիվներ, որից օգտվելով, հայերը 748թ. նորից ապստամբեցին: Մյն գլխավորեց Գրիգոր Մամիկոնյանը, որի շուրջը համախմբված հայ իշխանները հարկադրում են իրենց միանալ նաև Յայոց իշխան և սպարապետ Աշոտ Բագրատունուն: Ապստամբները հավատարմության երդում են տալիս և որոշում են շարժվել Տայք՝ Բյուզանդիայի հետ կապ հաստատելու համար: Ասկայն ի տարբերություն Մամիկոնյանների, որոնք գլխավոր փրկությունը տեսնում էին բյուզանդացիների հետ դաշինքի մեջ, Բագրատունիները, համոզված լինելով, որ ճիշտը արաբներին սիրաշահելն է և անիմաստ է Բյուզանդիայի վրա հույս դնելը, լքեցին ապստամբների շարքերը: Գրիգոր Մամիկոնյանը Բագրևանդում հասավ Աշոտ Բագրատունուն, գերեց ու կուրացրեց նրան: Գրիգորի վաղաժամ մահից հետո ապստամբությունը մինչև 750թ. շարունակեց նրա եղբայրը՝ Մուշեղը: 750թ. գահակալական կռիվներում Օմայաններին հաղթած Աբասյանները ճնշեցին ապստամբությունը: Երկիր ներխուժած արաբ հարկահանները սարսափելի հարկեր դրեցին բնակչության վրա՝ հարկեր պահանջելով անգամ մահացածներից:

762թ. նոր ապստամբություն է բռնկվում Վասպուրականում՝ Արծրունիների գլխավորությամբ: Արաբների դաժան տիրապետությունը

774թ. նոր և ամենամեծ ապստամբության պատճառ հանդիսացավ: Նրա ազդանշանը տվեց Արտավազդ Մամիկոնյանը: Նա հմտորեն մոլորեցրեց արաբներին, նրանց թշնամիների դեմ պայքարելու պատրվակով ոստիկանից գեներ ստացավ և Կուժայրի /այժմ Գյումրի/ գյուղում անսպասելի հարձակվեց արաբ հարկահանների վրա, խլեց հավաքած հարկը և անվտանգ անցավ բյուզանդական կայսրության սահմանները:

Շուտով ապստամբների ճանաչված առաջնորդ դարձավ Մուշեղ Մամիկոնյանը: Նա իր Տարոնի տոհմական տիրույթներում ջարդ տվեց արաբներին և ամրացավ անառիկ Արտագերս ամրոցում: Ապստամբներին միացավ Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին: 5 հազարանոց հայկական զորագունդը պաշարեց Կարին քաղաքը և 774-775թթ. ձմեռը քարանետ մեքենաներով մեծ վնասներ պատճառեց պաշարված արաբներին:

^ 775թ. գարնանը 30 հազ. արաբական զորքը հարավից մտավ Հայաստան: Այդ ժամանակ հայ նախարարների մի մասը որոշեց գրավել արաբների մյուս հենակետը Հայաստանում Արճեշը /առաջինը Կարինն էր, որը այդպես էլ չհաջողվեց գրավել/: Արաբական զորքը դարան մտավ և 775թ. ապրիլի 15-ին Արճեշի մոտակայքում անսպասելի հարձակումով ծանր պարտության մատնեց քաղաքը գրավել ցանկացող հայերին: Վերջիններիս մի մասը խեղդվեց Վանա լճում:

Արճեշի աղետը ստիպեց ապստամբների մյուս ուժերին թողնել Կարինի պաշարումը և ընդառաջ գնալ հզոր թշնամուն՝ գերադասելով պատվավոր մահը: Ճակատամարտը տեղի ունեցավ Արածանիի ափին ապրիլի 25-ին Արճնի գյուղի մոտ: Սկզբում հաջողությունը հայերի կողմն էր, բայց բազմաքանակ և լավ մարզված արաբական բանակի առավելությունը ակնհայտ էր: Ապստամբներից շատերը զոհվեցին հերոսի մահով: Նրանց թվում էին Մուշեղ Մամիկոնյանն ու Սմբատ Բագրատունին և 3 հազ. հայ ռազմիկներ: Հատկապես մեծ էին Մամիկոնյանների զոհերը, որոնք Արճնիից հետո դադարեցին հայոց պատմության մեջ խաղալ իրենց նախկին պատմական մեծ դերը և վերջնականապես հեռացան պատմության բառերաբեմից:

1774-775թթ. ապստամբությունը հայոց պատմության ամենավաղ էջերից է: Նրա ընթացքում հայ ժողովրդի մեջ նորից առաջացավ ու ամրապնդվեց կորցրած հայոց պետականության վերականգնման ձգտումը: ✓

22. 850-855ԹԹ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

✓
17-րդ դարի իշխանական տներին հալածելու և թուլացնելու խալիֆայության քաղաքականությունը, որ տարվում էր ամբողջ 8-րդ դարի ընթացքում, ի վերջո արդյունք չտվեց: 9-րդ դարի առաջին կեսին ուժեղացան մի շարք հինավուրց հայ նախարարական տներ: Բագրատունիները, դուրս մղելով Մամիկոնյաններին ու Կամսարականներին, տեղ դարձան Սպերին, Մոկքին, Շիրակին, Տարոնին: Սյունյաց իշխաններն իրենց դիրքերն ամրապնդեցին Սյունիքում, Արծրունիները՝ Վասպուրականում: Արցախում հզորացան Առանշահիկները: /

Բագրատունիների կալվածքներն ընդարձակվեցին հատկապես 804 թվականից հետո, երբ արաբների կողմից Հայոց իշխան ճանաչվեց Աշոտ Բագրատունին, որին նոր հողեր գրավելու համար կոչում էին Աշոտ Մսակեր: Նա նստավայր դարձրեց Ախուրյանի ափին ընկած Բագարան բերդաքաղաքը: Աշոտի եղբայր Շապուհը ստացավ Հայոց սպարապետի պաշտոնը: Բագրատունիների ազդեցությունը նկատելի էր ամբողջ երկրում: Նրանց մի մասը հաստատվել էր Վրաստանում, որտեղ հետագայում տիրեց վրաց զահին:

1826թ. մահացավ Աշոտ Մսակերը և նրա որդիները ստացան ամենա-ազդեցիկ պաշտոնները՝ Հայոց իշխանի և սպարապետի: Հայոց իշխան դարձած Բագարատ Բագրատունին արժանացավ նաև «իշխանաց իշխանի» կոչմանը: Հարկերի հավաքման իրավունքը լիովին անցավ հայ իշխանների ձեռքը, որոնք բավարարվում էին միայն նրա մի մասը արաբներին ուղարկելով: Հայաստանը կրկին ձեռք էր բերել ներքին ինքնուրույնություն: /

Այս ամենին զուգընթաց շարունակվում էր արաբական խալիֆայության քայքայումը: Վերջինիս արագացմանը նպաստեց հատկապես 816թ. Անդրկովկասում տեղի ունեցած Բաբելի ապստամբությունը: Հայաստանում կիսանկախ հայկական իշխանների կողքին 9-րդ դարում ավելի անկախ դարձան արաբական ամիրայությունները, հատկապես Արճեշում, Կարինում, Բերկրիում և այլուր:

Հայաստանի ինքնավար վիճակը անհանգստացնում էր ինչպես արաբական ամիրայություններին, այնպես էլ խալիֆայությանը: Որոշվեց վիճակը փոխելու նպատակով Հայաստան ուղարկել Աբուսեբ ոստիկանին:

Հայաստանի հարավային սահմանի մոտ Աբուսեթին դիմավորեցին Բագարատ Բագրատունու պատվիրակները և արաբներին հանձնեցին հավաքված հարկերը: Հայերը փաստորեն արգելեցին Աբուսեթին մտնել երկիր և հարկեր հավաքել: Աբուսեթը ստիպված էր վերադառնալ: Սակայն մինչ այդ նա երկու արաբ ամիրաների զորք տրամադրեց և պատվիրեց ասպատակել Հայաստանը: Ամիրաները ներխուժեցին Տարոն և Վասպուրական, բռնությամբ սկսեցին հավաքել հարկեր: Սակայն Վասպուրականի տիրակալ, Հայոց գահերեց իշխան Աշոտ Արծրունին և իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին ջախջախեցին արաբներին և վտարեցին երկրից:

851թ. հսկայական զորքով Հայաստան եկավ Աբուսեթը: Բայց նա ճանապարհին հանկարծամահ եղավ և նրան փոխարինեց որդին՝ Յուսուֆը: Վերջինս մտավ Վասպուրական, Խլաթ կանչեց Բագարատ Բագրատունուն՝ նրան խոստանալով Արմինիայի՝ Էրմենիստանի կառավարչի պաշտոնը: Խլաթ ներկայացած Բագարատը ձերբակալվեց և շղթայակապ ուղարկվեց խալիֆի մոտ: Արաբները Վասպուրականից անցան Տարոն և որոշեցին 851-852թթ. ձմեռը անցկացնել Մուշ քաղաքում: Մինդեռ, Մուշում և նրան հարակից լեռնային Սասունում Բագարատի որդիների՝ Դավիթի, Աշոտի և Խուրթ գյուղի առաջնորդ Խուրթեցի Հովնանի գլխավորությամբ հայերը նախապատրաստվում են հակահարված տալ Յուսուֆին: Նրանք հանկարծակի ներխուժեցին Մուշ և կոտորեցին արաբներին: Յուսուֆը փորձեց թաքնվել Մուշի եկեղեցու գմբեթում: Սակայն սասուցիները նրան գտան և սպանեցին:

Այս իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել հետագայում «Սասնա ծռեր» ժողովրդական դյուցազնավեպում: Հակաարաբական ապստամբությունն ընդգրկեց Արմինիայի մյուս երկրները:

Չայրացած Մութաֆաքիլ խալիֆը 852թ. գարնանը Հայաստան ուղարկեց ազգությամբ թուրք զորավար Բուղային, որն աչքի էր ընկնում առանձնակի դաժանությամբ: Ապստամբներին պատժելու դեպքում խալիֆը նրան խոստացել էր հայ խռովարար իշխանների տիրույթները հանձնել իրեն: Բուղան ներխուժեց Սասուն և ձերբակալեց շատ ղեկավարների, այդ թվում՝ Խուրթեցի Հովնանին, ուղարկեց խալիֆի մոտ: Ապա Բուղան Հայաստանում հաստատված արաբական ցեղերի օգնությամբ գրավեց Վասպուրականի բերդերը, գերեց շատ Արծրունի նախարարների և ուղարկեց խալիֆայության կենտրոն: Բայց Վասպուրականցիները զենքը վայր չդրեցին և շարունակեցին պայքարը:

Արյան լիճ վայրում Գուրգեն Արծրունու զորքերը պարտության մատնեցին արաբներին և ստիպեցին թողնել Վասպուրականը:

853թ. գարնանը Բուղան ասպատակեց Սյունիքը, այնուհետև անցավ Վրաստան: Այստեղ նա հանդիպեց ուժեղ դիմադրության: Բուղան հաջողություն չունեցավ նաև Արցախում: Արաբները ներխուժեցին Արցախի հարավային շրջանները: Տեղի բնակչությունը Եսայի իշխանի ղեկավարությամբ դուրս եկավ արաբների դեմ: Բուղան առաջարկեց հայ իշխանին անձնատուր լինել: Բայց վերջինս ոչ միայն չհամաձայնվեց, այլև անցավ հարձակման, ջախջախեց արաբներին և պատսպարվեց Քթիշ ամրոցում /այժմ Ղարաբաղի Հադրութի շրջանում/: Ամրոցի պաշարումը տևեց մոտ մեկ տարի: Քաջարի արցախցիները ետ մղեցին Բուղայի 28 հարձակումները: Ժամանակակից պատմիչի վկայությամբ կրած հերթական պարտությունից հետո Բուղան այնքան էր հուսալքվել, որ 10 օր դուրս չէր գալիս իր վրանից: Չհասնելով ռազմական հաջողության՝ թուրք զորավարը դիմեց խաբեության: Նա իր մոտ կանչեց Եսայուն և ստորաբար ձերբակալեց ազնիվ իշխանին, ու մյուսների օրինակով, ուղարկեց խալիֆի մոտ:

Նույն ժամանակ Վասպուրականում նորից բորբոքվում է պայքարը Արծրունիների գլխավորությամբ: Բուղան ստիպված է լինում այնտեղ ճանաչելու Արծրունիների իրավունքները: Չհասնելով հաջողության՝ խալիֆը Բուղային 855թ. հարկադրված ետ է կանչում Հայաստանից և այնտեղ կառավարիչ նշանակում Աշոտ Բագրատունուն: Այս ապստամբությունից հետո Հայաստանը ստացավ ինքնուրույնություն և բռնեց անկախության վերականգնման ուղին:

23. ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ: ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Հայ մշակույթի ամենախոշոր և ամնոռաց նվաճումը հայ գրերի գյուտն էր: Այն բացի գուտ մշակութային նշանակությունից ունեցավ կարևոր քաղաքական նշանակություն: Հայ գրերի հայտնագործման ժամանակաշրջանը՝ 5-րդ դարի սկիզբը բնորոշվում է հայ ժողովրդի պատմության մեջ քաղաքական ծանր անցուղարձերով. 387թ. Հայաստանը բաժանվել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Բյուզանդական մասում վերացվել էր հայոց պետականությունը, իսկ պարսկական հատվածում թեև շարունակում էին դեռ գահակալել Արշակունիները, սակայն երկիրը գտնվում էր օտարի լծի տակ: Այս ամենին

գումարվում էր նաև հոգևոր կախյալ վիճակը, հայերը նախկինի պես գրում էին օտար լեզուներով՝ արամեերենով, հունարենով և պարսկերենով: Քաղաքական և մշակութային այս անբարենպաստ վիճակը խիստ վտանգում էր հայ ժողովրդի հետագա գոյատևումը: Ինքնուրույն գրեր ունենալու խնդիրը հուզում էր ժամանակի խոշոր մտածողներին, որոնցից էր Տարոն գավառի Հացեկաց գյուղի բնակիչ, Վարդանի որդի Մեսրոպ Մաշտոցը՝ հայ ժողովրդի հանճարեղ զավակը: Նա ծնվել է 361թ.: Երիտասարդ հասակում սովորում է հունարեն և ասորերեն լեզուները, ապա անցնում ծառայության հայոց արքունիքում՝ Վաղարշապատում: Մաշտոցը ծանոթանում է նաև զինվորական գործին, այնուհետև դառնում հոգևորական: Շուտով նա իր աշակերտների հետ գնում է հայոց Գողթան գավառը՝ այնտեղ քրիստոնեություն քարոզելու նպատակով: Այստեղ ժողովրդի մեջ բավական ամուր պահպանվում էին հեթանոսական ծեսերն ու ծիսակատարությունները, ժողովրդի մի մասը շարունակում էր դավանել բազմաստվածությունը: Տեսնելով ժողովրդի հոգևոր աղքատությունը Մաշտոցը համոզվեց, որ քրիստոնեությունը չի կարելի մարդկանց մեջ արմատավորել միայն քարոզների միջոցով, ուստի ժողովրդին պետք է կրթել սեփական գրերով և մայրենի լեզվով: Այսպիսի խորը համոզումով նա գալիս է Վաղարշապատ և իր մտադրության մասին հայտնում Սահակ Պարթև կաթողիկոսին: Վերջինս ողջունում է Մաշտոցի այս նախաձեռնությունը և առաջարկում այդ մասին հայտնել հայոց արքա Վռամշապուհին: Թագավորը հայտնում է, որ ինքը Ասորիքում Դանիել Ասորու մոտ տեսել է գրեր, որոնք կարող են օգտագործվել հայոց այբուբենի համար: Վռամշապուհը Վահրիճ անունով մեկին ուղարկում է Ասորիք և բերել է տալիս Դանիելյան գրերը: Սակայն պարզվում է, որ այդ գրերը շատ պարզունակ են և չեն կարող համապատասխանել հայոց լեզվի նախնադաստ հնչյունային համակարգին, ուստի գործածական չեն: Հայոց գրեր ստեղծելու նպատակով արքունիքի հանձնարարությամբ Մեսրոպ Մաշտոցն ուղարկվում է Ամիդ, ապա՝ Եդեսիա, շրջում Ասորիքի այլ մշակութային կենտրոններում, խորհրդակցում գիտնականների հետ: Լուրջ ուսումնասիրություններից հետո 405թ. Եդեսիայում Մաշտոցը մեծ հանճարեղությամբ ստեղծում է հայոց այբուբենի 36 տառերը: Մաշտոցի կենսագիր Կորյունը, հայոց այբուբենի կատարյալ լինելը ընդգծելու նպատակով պատմում է, թե իբր այդ տառերը Մաշտոցին հուշել է աստված /վերջինս միայն գրի է առել/, այսինքն՝ նրանք ունեն աստվածային ծագում: Եդեսիայից Մաշտոցն անցնում է Սամոսատ, որտեղ հույն հռչակավոր գեղագիր Հռոփանոսը ձևավորում է հայոց տառերը: Իր աշակերտների

Եկեղացու և Պաղնացու օգնությամբ Մաշտոցը կատարում է առաջին թարգմանությունները Սողոմոնի առակներից Աստվածաշնչից: Առաջին մեսրոպատառ նախադասությունը իր մեջ գովերգում է ուսումը և հանճարի խոսքը. «Ճանաչել զինաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

406թ. Մաշտոցը հայերենի նորաստեղծ նշանագրերով վերադառնում է հայրենիք: Նրան մեծ շուքով դիմավորում են Վռամշապուհը, Սահակ Պարթևը և ժողովուրդը: Հայաստանում հիմնադրվում են առաջին հայկական դպրոցները: Նրանցից մեկն էլ բացվում է Արցախում՝ Ամարասի հայտնի վանքում: Վաղարշապատում հիմնադրվում է առաջին վարդապետարանը՝ բարձրագույն դպրոցը: Այստեղ պատրաստված ուսուցիչներն ուղարկվում են գավառներ ժողովրդին կրթելու համար: Արևելյան Հայաստանում իր գործունեությունը ծավալելուց հետո հայոց լեզվի առաջին ուսուցիչ Մաշտոցը մտահոգվում է նաև Արևմտյան Հայաստանի բնակչության կրթության խնդրով: Նա անձամբ ներկայանում է բյուզանդական կայսր Թեոդոս II-ին և ստանում թույլտվություն Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու մասին: 419- 422թթ. Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց աշակերտների հետ հաջողությամբ իրականացնում են այդ դժվարին գործը նաև բյուզանդական մասում դրանով իսկ գոնե հոգևոր առումով միավորում հայ ժողովրդին:

Ինչպես վկայում է Կորյունը, Մաշտոցին գրեր ստեղծելու խնդրանքով դիմում են վրացիներն ու աղվանները: Հանճարեղ Մեսրոպը գրեր է հորինում նաև հարևան այդ երկու ժողովուրդների համար: Վրաց գրերը նա ստեղծում է Ջաղա անունով մի վրացի գործչի օգնությամբ: Ցավոք, վրացիները չեն ընդունում այդ փաստը:

Հայ գրերի գյուտը զարկ է տալիս թարգմանական գրականությանը: Հունարենից և ասորերենից թարգմանվում են ժամանակի բազմաթիվ մտածողների գործեր: Շնորհիվ այդ թարգմանությունների հին աշխարհի շատ մեծերի աշխատություններ պահպանվում են և հասնում մեզ: Նրանց մի մասի բնագրերը հետագայում կորչում են:

Մեծ երախտավորը մահանում է 440թ. և իր աշակերտ Վահան Ամատունու առաջարկով թաղվում Օշականում: Նույն տարում վախճանվում է նաև նրա մեծ հովանավոր Սահակ Պարթև կաթողիկոսը:

Հայ գրերը մեր ժողովրդի համար դառնում են ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական հզոր զենք հետագա դարերի գոյատևման պայքարի համար:

24. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ /5-8- ԲՂ ԴԱՐԵՐ/

Հայ գրերի գյուտը հսկայական նշանակություն ունեցավ հայ մշակույթի արագ զարգացման համար: 5-րդ դարում, որը հայտնի է «Ոսկե դար» անունով, ստեղծվեց հայատառ ինքնուրույն գրականությունը: Նրա սկզբնավորողներն էին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Կորյունի վկայությամբ Մաշտոցը գրել է հոգևոր ճառեր: Սահակ Պարթևը բազմաթիվ եկեղեցական կանոնների, թղթերի, հոգևոր երգերի հեղինակ է: Վերջիններիս և նրանց աշակերտների ջանքերով 5-րդ դարում հիմք դրվեց հայ պատմագրությանը:

Հայ պատմագրության հիմնաքարը դրել է Մաշտոցի ապագա աշակերտ Կորյունը «Վարք Մաշտոցի» երկով, որում պատմիչը մեծ խանդավառությամբ պատմում է իր հանճարեղ ուսուցչի կյանքի ու գործունեության մասը:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ սերկայացվում են 3-րդ դարի /224թ-ից/ և 4-րդ դարի սկզբի Հայաստանի պատմության հարցերը, մասնավորապես երկրում քրիստոնեության տարածման, ավատատիրության անցման խնդիրները: Նրան շարունակել է պատմիչ Փավստոս Բուզանդը, որի «Հայոց պատմությունը» ընդգրկում է 301-ից մինչև 387թ. դեպքերը: Հատկապես մանրամասն Բուզանդը նկարագրում է Արշակ II-ի և Պապի գահակալության շրջանը, որն համընկնում է հայ ժողովրդի մղած հակասասանյան պայքարի տարիներին:

387թ. Հայաստանի առաջին բաժանումով Բուզանդը ավարտում է իր պատմությունը: Նրան շարունակում է 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին, որը դեպքերի նկարագրությունն իր «Հայոց պատմությունում» հասցնում է մինչև 485թ.: Վահան Մամիկոնյանի նշանակումը հայոց տանուտեր: Փարպեցին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 5-րդ դարի ազատագրական ապստամբությունների, մասնավորապես Վահանանց պատերազմի մասին: Նա գտնում է, որ պատմությունը շարադրելիս «պետք է պատկառանքով ստույգը գրել, չեղածը չավելացնել, չպակասեցնել եղածները»:

Եղիշե պատմիչը ականատեսի լավատեղյակությամբ իր «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկում, գեղարվեստական մեծ վարպետությամբ նկարագրում է 450-451թթ. ապստամբությունը, Ավարայրի ճակատամարտը: Մարտի դաշտում հայրենիքի համար գիտակցված մահով ընկածների հիշատակին է նվիրված «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն» թևավոր խոսքը: Եղիշեն

իր հարուստ լեզվի համար հայտնի է «Ոսկեբերան» անունով:

5-րդ դարի և նույնիսկ հաջորդ բազմաթիվ դարերի պատմագրության թագն ու պսակը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է: Ի տարբերություն այլ հեղինակների, Խորենացին, որին իրավամբ անվանում են հայ պատմագրության հիմնադիր՝ «Պատմահայր», գրել է ամբողջական պատմություն հնագույն ժամանակներից՝ Հայկի և Բելի շրջանից մինչև իր ապրած ժամանակահատվածը՝ 5-րդ դարը: Նրա պատմությունը, որը գրվել է տանուտեր Սահակ Բագրատունու պատվերով, ավարտվում է 428 թվականով՝ Արշակունյաց անկումով, իրադարձություն, որը Խորենացին համարում է մեծ ողբերգություն, ուստի գրքի վերջին բաժինը վերնագրում է «Ողբ»: Պատմահայրը մյուս պատմիչներից տարբերվում է նաև նրանով, որ ոչ միայն գրի է առել դեպքերը, այլև նրանց նկատմամբ հանդես բերել ինքնուրույն քննական մոտեցում: Խորենացին օգտագործել է բազմաթիվ հեղինակների՝ Մար Աբաս Կատինայի, Ույունայի, Բարդաճանի և այլոց աշխատություններ, մեհենական մատյաններ: Նրա գիրքը բաղկացած է երեք մասից, առաջինն ընդգրկում է հայերի նախնիների՝ Հայկի, Արամի, Պարույրի, Երվանդի և այլոց ժամանակները, ուստի կոչվում է «Ծննդաբանություն Հայոց Մեծաց»: Երկրորդ մասը՝ «Միջին պատմությունը» տևում է Ալեքսանդր Մակեդոնացուց մինչև Հայաստանի քրիստոնեացումը: Երրորդ մասը՝ «Մեր հայրենիքի պատմության ավարտը» 4-րդ դարի պատմությունն է և 5-րդ դարի սկիզբը՝ մինչև 428թ.: Խորենացին տարբերվում է նաև ճշգրիտ տարեթվերով՝ ժամանակագրությամբ գրած պատմությամբ: «Զկա հավաստի պատմություն առանց ժամանակագրության» - ասում է պատմահայրը: Խորենացին չի բավարարվել հայոց պատմությամբ և զուգահեռ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել հարևան ժողովուրդների՝ վրացիների, աղվանների, պարսիկների մասին: Պատմահական չէ, որ երկար դարեր նրա գիրքը հանդիսացել է հայոց պատմության անփոխարինելի դասագիրք սերունդների համար:

6-րդ դարից մեզ պատմագրական երկեր չեն հասել: 7-րդ դարի հայտնի պատմիչ էր Սեբեոսը: Նրա «Պատմությունը» արժեքավոր նյութ է պարունակում հատկապես 571- 572թթ. ապստամբության և առաջին արաբական արշավանքների մասին: 7-րդ դարի պատմիչներ են նաև Դովհան Մամիկոնյանը (գրել է «Պատմություն Տարոնի») և Մովսես Կաղանկատվացին: Վերջինս գրել է Արցախի և Ուտիքի մասին «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում:

8-րդ դարի պատմիչ է Ղևոնդը, որը գրել է «Պատմություն» աշխա-

տութիւնը՝ շարունակելով Սեբեոսի գիրքը: Ղևոնդի երկը կարևոր աշխատութիւն է 7-8-րդ դարերում արաբական տիրապետության և արաբների դեմ 8-րդ դարում հայերի մղած ապստամբութիւնների մասին:

Գրերի գյուտը նպաստեց նաև հայ փիլիսոփայական մտքի աննախադեպ զարգացմանը: 4-րդ դարում արդեն հայտնի էր փիլիսոփա Պարույր Չայկազը, որը ծառայել է հռոմեական կայսրերի մոտ: 5-րդ դարում պարսկական զրադաշտական կրոնի քննադատությամբ իր «Եղծ աղանդոց» աշխատությամբ հանդես է գալիս փիլիսոփա Եգնիկ Կողբացին: 6-րդ դարում գործել է հայ փիլիսոփաներից աշխարհահռչակ Դավիթ Անհաղթը: Նա այդ անունը ստացել է Աթենքի փիլիսոփաների բանավեճերում անպարտելի մնալու համար: Նրա գրչին է պատկանում «Սահմանք իմաստասիրության» նշանավոր աշխատութիւնը:

7-րդ դարի խոշորագույն տիեզերագետ և մաթեմատիկոս է Անանիա Շիրակացին: Նա պաշտպանել է երկրի գնդաձևության գաղափարը, գրել է մաթեմատիկայի առաջին դասագիրքը: Շիրակացուն է վերագրվում Չայաստանի և հարևան երկրների աշխարհագրությանը նվիրված մեծարժեք մի այնպիսի աշխատութիւն, ինչպիսին է «Աշխարհացոյցը»:

5-8-րդ դարերում նոր բարձրության հասավ հայ ճարտարապետութիւնը: 618թ. Կոնստանդնուպոլսի նախաձեռնությամբ կառուցվեց վաղմիջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցը՝ Գեփիսիմեի տաճարը՝ Վաղարշապատում: 7-րդ դարի կեսերին է կառուցվել Ջվարթնոցի հրաշագեղ տաճարը Ներսես Տայեցի կաթողիկոսի ջանքերով: Վերջինս ունեցել է 50մ բարձրութիւն: Այդ ժամանակաշրջանում կառուցված եկեղեցիներից էին Գայանեի, Ավանի, Աշտարակի, Ամարասի և այլ տաճարներ: Վաղ միջնադարում տարածված ճարտարապետական ոճը «բազիլիկն» էր՝ ձգված ուղղանկյուն հատակագծով և երկթև տանիքով կառույցը:

Նյութական մշակույթի զարգացման բնագավառում մեծ առաջընթաց ապրեցին քանդակագործութիւնը, նկարչութիւնը, իսկ հոգևոր ոլորտում՝ թատրոնը և երաժշտութիւնը: Հայ իրավունքի զարգացման գործում մեծ նշանակութիւն ունեցավ Գովհան Օձնեցու ջանքերով կազմված օրենքների ժողովածուն՝ «Կանոնագիրք Հայոցը»:

5-8-րդ դարերը հայ մշակույթի աննախադեպ թռիչքի ժամանակաշրջան է, որի հիմքի վրա հետագայում այն հասավ նոր բարձրության, հատկապես 10-13-րդ դարերում:

25. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավատատիրական հարաբերութիւնների արմատավորման հետ մեկտեղ ուժեղանում էր չունկոր սոցիալական խավերի դժգոհութիւնը: Այս ամենին ավելանում էր օտարերկրյա ծանր տիրապետութիւնը՝ ավելի վատթարացնելով ժողովրդի վիճակը: Այս դժգոհութիւնն արտահայտվում էր սոցիալական և ազատագրական շարժումներով: Սոցիալական շարժումներն հիմնականում կրում էին հակաեկեղեցական բնույթ: Քրիստոնեական կրոնից ամեն մի շեղում դատապարտվում էր եկեղեցու կողմից և համարվում էր աղանդավորութիւն: Աղանդավորները հայտնում էին իրենց անհամաձայնութիւնը պաշտոնական եկեղեցական քարոզներին և առաջարկում իրենց գաղափարախոսութիւնը, որը լայն արձագանք էր գտնում չքավոր գյուղացիության և քաղաքային արհեստավորության շրջանում:

Արդեն 4-5-րդ դդ. Հայաստանում հայտնի էին առաջին աղանդավորական շարժումները՝ անապատականներ, բորբոքիտներ և մծղեականներ անուններով: 7-րդ դարի կեսերին Հայաստանում սոցիալական շարժումներն ուժեղացան արաբական արշավանքների շրջանում և փաստորեն ընդունեցին նաև ազատագրական շարժման բնույթ: Այդ ժամանակ բյուզանդական տիրապետության տակ ծնունդ առած շարժումը հավանաբար Պավելի՝ Պողոս Առաքյալի անունից ստացավ պավիկյան անունը: Այն սկզբնավորվել է Արևմտյան Հայաստանի Բարձր Հայք աշխարհի Մանանդ գավառում: Նրա առաջին ղեկավարներից էր Կոնստանդին Սիլվանը: Նա շուտով տեղափոխվեց Փոքր Հայք և այնտեղ հիմնադրեց պավիկյան առաջին համայնքը: Օրեցօր պավիկյանների ազդեցութիւնն աճեց, որն առաջացրեց բյուզանդական կայսրության, հատկապես նրա քաղքեղոնիկ եկեղեցու անհանգստութիւնը: Կոնստանդինին հաջողվեց սպանել, իսկ նրա հավատակիցներից ոմանք ողջակիզվեցին խարույկի վրա: Կոնստանդինին շուտով փոխարինեցին այլ առաջնորդներ՝ Գովսեփը, Վահանը, Ջաքարիան և ուրիշներ:

Պավիկյանները գտնում էին, որ աշխարհը բաժանված է չարի և բարու: Բարի են երկնային, այսինքն՝ աստվածային ուժերը, իսկ երկրի վրա իշխում է չարը՝ սատանան: Չարի տակ նրանք հասկանում էին եկեղեցուն, հոգևորականությանը, ունկոր խավի ներկայացուցիչներին և օտարերկրյա նվաճողներին: Չարին հակադրվելու համար նրանք իրենց ստեղծած համայնքներում հաստատում էին սոցիալական

հավասարություն՝ գտնելով, որ աստծո առաջ բոլոր մարդիկ հավասար են: Պավլիկյանները չէին ընդունում Աստվածաշնչի Յին կտակարանը, իսկ Նոր կտակարանից ճիշտ համարում միայն առանձին հատվածներ: Նրանք ճանաչում էին Քրիստոսին, բայց մերժում նրա մարդկային բնույթը, այսինքն, որ նա ծնվել է նաև մարդուց՝ Մարիամից:

Պավլիկյաններն ուժեղացան 8-րդ դարում: Նրանք տարածվեցին նաև Արևելյան Հայաստանում: 719թ. Դվինում Հովհան Օձնեցի կաթողիկոսը նրանց դեմ պայքարելու նպատակով հրավիրեց հատուկ եկեղեցական ժողով, որտեղ պավլիկյաններին անվանեցին հերետիկոսներ՝ եկեղեցու թշնամիներ: Արգելվեց նրանց հետ շփվելը, որի համար նախատեսվում էր մահապատիժ: Օձնեցին գրեց «Ընդդեմ Պավլիկյանց» աշխատությունը՝ փորձելով հիմնավորել պավլիկյան ուսմունքի սխալները:

Պավլիկյան շարժման մասնակիցների մեջ բացի հայերից կային նաև մեծ թվով հույներ և ասորիներ: 9-րդ դարում մեծ ճանաչում ձեռք բերեցին նոր առաջնորդներ Սարգիսը /Սերգիոս/, Կարբեասը /Կարպետ/ և Խրիստիսը: Սարգիսը ինչպես ռազմական գործիչ էր, այնպես էլ հմուտ գաղափարախոս: Նրա օրոք պավլիկյանները տեղափոխվեցին արաբական տիրապետության շրջանը՝ Մելիտինե /հին Մելիդը, այժմ Մալաթիա/ և այնտեղից արաբների հետ ավերիչ հարվածներ հասցրին կայսրության սահմաններին: 835թ. բյուզանդացիները սպանում են Սարգսին: Շարժման մասնակիցների դեմ իր դաժանությամբ այդ ժամանակ աչքի է ընկնում թեոդորա կայսրուհին:

855թ. Կարբեասի գլխավորությամբ պավլիկյանները հիմնադրում են Տևրիկ ամրոցը, որը դարձնում են իրենց գլխավոր հենակետը: 859թ. Կարբեասի դեմ դուրս եկավ կայսր Միքայել III-ը, սակայն խայտառակ պարտություն կրեց և հազիվ փրկվեց գերի ընկնելուց: 863թ. Կարբեասի 40 հազ. զորքը արաբների հետ հասավ մինչև Սև ծովի ափերը հետապնդելով բյուզանդացիներին: Սակայն նույն 853թ. սեպտեմբերի 3-ին Պոսոնի ճակատամարտում պավլիկյանները ծանր պարտություն կրեցին: Ձուկվեց Կարբեասը: Նրան շուտով փոխարինեց նրա փեսան Խրիստիսը: Վերջինս 869 և 871թթ. պարտության մատնեց նոր կայսր, հայկական Մակեդոնական դինաստիայի հիմնադիր Բարսեղ /Վասիլ/ I կայսեր զորքերին և ետ մղեց բյուզանդացիներին:

871 և 872թթ. Բարսեղ I-ը փորձեց գրավել Տևրիկ ամրոցը, սակայն հաջողություն չունեցավ: 873թ., համալրելով իր ուժերը, Խրիստիսը անցավ հակահարձակման և թշնամուն հետապնդեց մինչև Անգորա /Ան-

կարա/ և գրավեց այն: Սակայն ետդարձի ճանապարհին, Ագրանե վայրում բյուզանդացիներն անակնկալ հարձակումով ջախջախեցին պավլիկյաններին: Շատերի հետ ընկավ նաև Խրիստիսը: Բարսեղը այնուհետև գրավեց ու ավերեց Տևրիկը և շատ պավլիկյանների փոխադրեց Բալկաններ, որտեղ նրանք սկզբնավորեցին նոր՝ Բոզոմիլների շարժումը:

Ը 26. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ: ԱՇՈՏ I ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

§ Ամբողջ 8-րդ դարի ընթացքում և 9-րդ դարի առաջին կեսին հայ ժողովրդի մղած հակաարաբական ազատագրական պայքարը տվեց իր արդյունքը: 855թ. Մուքաֆաքիլ խալիֆը, համոզվելով, որ անհնարին է ծնկի բերել հայերին, Բուղային հետ կանչեց Հայաստանից և այնտեղ կառավարիչ նշանակեց Աշոտ Բագրատունուն: Միաժամանակ արաբները լուծարքի ենթարկեցին Հայաստանի իրենց գորակայանները և, բացի Դվինից, մյուս քաղաքներից դուրս բերեցին զորքերը: Այդ քայլին նրանք գնացին հարկադրաբար՝ հայերին Բյուզանդիայից հետ պահելու նպատակով: 862թ. խալիֆը գնաց նոր զիջման՝ Աշոտ Բագրատունուն տվեց իշխանաց իշխանի և հարկեր հավաքելու պաշտոնները: 3 անգամ կրճատվեցին հարկերը: §

Աշոտ Բագրատունին կարողացավ իր ազդեցությունը տարածել ոչ միայն Արծրունյաց, Սյունյաց, Արցախի և այլ նախարարների, այլև վրաց ու աղվանից իշխանների վրա: Պատահական չէ, որ նա համարվում էր նաև Վրաց և Աղվանից իշխանաց իշխան: Աշոտը վերակազմեց բանակը, նրա թիվը հասցրեց 40 հազարի, իր եղբորը՝ Աբասին նշանակեց սպարապետ: Աշոտի հետ սկսեցին հաշվի նստել արաբական ամիրաները: Փաստորեն Բագրատունիների ձեռքն անցավ երկրի ամբողջ վարչական, տնտեսական և ռազմական իշխանությունը: Արաբական տիրապետությունը միայն անվանական էր: Աշոտը թեև չէր կրում արքայական թագ, բայց փաստորեն ինքնավար թագավորության տերն էր՝ Արմինիա փոխարքայության կազմում:

{ 9-րդ դարի 2-րդ կեսին հայկական պետականության վերականգնման գործում մեծ հետաքրքրություն հանդես բերեց և ջանքեր գործադրեց հայ եկեղեցին: 869թ. /ուրիշ տվյալներով 875թ./ հայոց կաթողիկոս Գևորգ Գառնեցու նախաձեռնությամբ հրավիրվեց հայ

իշխանների հատուկ ժողով, որտեղ որոշվեց Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր, և Հայաստանը թագավորություն ճանաչելու նպատակով, դիմել խալիֆայությանը՝ Սակայն այդ ժամանակ այդ խնդիրը չիրականացավ: Խալիֆը դեռ շարունակեց ձգձգել կատարված փաստի Հայաստանի անկախության ճանաչումը:

Բյուզանդիան, իր թշնամի պետությանը՝ խալիֆայությանը թուլացնելու համար, ամեն կերպ խրախուսում էր Հայաստանի անջատողական քայլերը: Բյուզանդական կայսր Բարսեղ I-ը /Վասիլ/, որը հայկական Մակեդոնական դինաստիայի հիմնադիրն էր, որոշեց դաշինք կնքել Հայաստանի հետ: 876թ. նա հատուկ պատվիրակություն ուղարկեց Աշոտ Բագրատունու մոտ: Հայերին սիրաշահելու նպատակով Բարսեղը հայտնում էր, որ ինքը ծագում է հայ Արշակունիների տոհմից, որոնց թագադրում էին Բագրատունիները՝ որպես թագադիր ասպետներ, և ուստի այժմ նրանից ինքը թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության, Աշոտը թագ է ուղարկում Բարսեղին: Այս սիմվոլիկ գործողությամբ ավելի է աճում Բագրատունիների հեղինակությունը:

Արաբական խալիֆայությունը չէր հաշտվում ստեղծված իրավիճակի հետ և փորձում էր վերականգնել իր դիրքերը Հայաստանում: Հատուկ հանձնարարությամբ խալիֆը Հայաստան ուղարկեց նոր ոստիկան Ահմադին: Նա արաբ ամիրաների հետ որոշում է բարեկամություն հաստատելու պատրվակով հայ իշխաններին հրավիրել Դվին և ոչնչացնել նրանց: Աշոտ Բագրատունին հանդես է բերում մեծ զգուշություն և հետևում է Ահմադի բոլոր գործողություններին: Նրա ուղարկած մարդիկ ձերբակալում են ոստիկանի սուրհանդակներին, որոնց մոտ հայտնաբերվում է Ահմադի նամակը՝ ուղղված Քանձակի էմիր Մահմադին, որում բերվում էր հայ իշխաններին ծուղակի մեջ գցելու ծրագիրը: Աշոտի խորհրդով Դվին են ներկայանում ոչ թե իշխանները, այլ հայոց զորքը: Սպարապետ Աբասը մտնում է Ահմադի վրանը, և ցույց տալով հայտնաբերված նամակը, ձերբակալում է նրան: Ապա հայերը նրան ձիու փոխարեն ջրի են նստեցնում, հասցնում են Հայաստանի հարավային սահմանը և վտարում երկրից: Այսպիսի անփառունակ վախճան է ունենում արաբական վերջին ոստիկանի իշխանությունը Հայաստանում:

Հանձնվելով, որ բռնի ուժով հնարավոր չէ ընկճել հայերին, խալիֆը ստիպված փոխում է իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և 885թ. թագ ուղարկում Աշոտ Բագրատունուն և նրան ճանաչում հայոց թագավոր: Աշոտին շտապեց թագ և արքայական հանդերձանը ուղարկել նաև Բարսեղ

I-ը: 885թ. օգոստոսի 26-ին աթոռանիստ Բագարանում /Շիրակ/ Աշոտ Բագրատունին օծվում է Հայաստանի թագավոր Աշոտ I անունով /885-890թթ./: Օծումը մեծ հանդիսավորությամբ, օտարերկրյա հյուրերի և հայ իշխանների մասնակցությամբ իրականացրեց կաթողիկոս Գևորգ Գառնեցին: Այսպիսով, դեռևս 855թ. ձեռք բերված փաստական անկախությունը միջազգային ասպարեզում ճանաչվեց միայն 885թ.: Ավելի քան 450 տարի անց Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանը վերականգնեց իր պետական անկախությունը:

Աշոտ I-ը խելացի և հմուտ քաղաքական գործիչ էր: Նա մեծ աշխատանք կատարեց երկիրը միավորելու և նրա անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: Նա ճնշեց Վանանդի իշխանների ապստամբությունը եվ նրանց գավառը Կարս կենտրոնով միացրեց իր պետությանը: Կարսը վերականգնվեց և դարձավ հայոց սպարապետների նստավայրը: Խաղաղ ճանապարհով Աշոտը կարողացավ իր ազդեցությունը տարածել նաև ուժեղ Սյունյաց և Արծրունյաց իշխանների վրա: Աշոտի գերիշխանությունն ընդունեցին նաև արաբական ամիրայությունները Մանազկերտում, Արձեշում, Բերկիրում և այլուր: Մի քանի հաջող արշավանքներից հետո հաջողվեց սանձահարել Վրաստանը և Աղվանքը ասպատակող հյուսիսկովկասյան լեռնականներին: Շնորհիվ այդ հանգամանքի ամրապնդվեց Աշոտի բարեկամական կապը վրացիների ու աղվանների հետ:

Հասկանալով, որ հայ իշխանական տները կարող են նպաստել երկրի հզորացմանը, Աշոտ I-ը նոր կալվածքներ տվեց թուլացած իշխաններին: Երկրում սկսվեց խաղաղ շինարարական ժամանակաշրջան:

27. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՄԲԱՏ I-Ի ԵՎ ԱՇՈՏ II ԵՐԿԱԹԻ ՕՐՈՔ

Աշոտ I-ը մահացավ 890թ. և իր հաջորդ Սմբատ I-ին /890-914/ թողեց բավական ամուր և միավորված երկիր: Նա իր հոր նման խելացի քաղաքական գործիչ էր և՛ շարունակում էր ներքին ու արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը՝ ճկուն դիվանագիտությամբ խուսանավելով Բյուզանդիայի ու խալիֆայության միջև: 892թ. Սմբատը գրավեց Հայաստանում արաբների վերջին հենակետը՝ Դվինը, ձերբակալեց արաբ էմիրներին և շղթայակապ ուղարկեց Կոնստանդնուպոլիս: Նրան իր ենթակայությունն հայտնեց նաև

Մանազկերտի էմիրը: Սմբատն ավարտեց հայկական հողերի միավորման գործը, միացրեց բոլոր ծայրամասային աշխարհները՝ Տայքը, Տարոնը, Աղձնիքը և Բարձր Յայքը: Ըստ պատմիչ Յովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու Սմբատի օրոք Յայաստանի սահմաններն արևելքում հասան Ատրպատական, արևմուտքում՝ Եփրատ, հյուսիսում՝ Վրաստան, հարավում՝ Տավրոսի լեռները: 892թ. Սմբատ I-ը օգնեց վրացիներին և Վրաստանից դուրս վտարեց արաբներին: Նրա օժանդակությամբ վրաց Բագրատունիներից Ատրճերսեհը դարձավ Վրաստանի թագավոր:

893թ. Սմբատ I-ը բարեկամության և առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ: Նույն թվականին Դվինում տեղի ունեցավ սարսափելի երկրաշարժ, որից զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Այս աղետին գումարվեց Յայաստանի քաղաքական վիճակի շեշտակի վատթարացումը: Յայ-բյուզանդական պայմանագիրը խիստ անհանգստացրեց Ատրպատականի արաբական էմիր, Սաջյան տոհմի առաջնորդ Ավշինին, և նա ներխուժեց Յայաստան: 894թ. Ավշինը գրավեց Նախճավանը, ապա՝ ավերված Դվինը: Արագածոտն գավառի Դողս գյուղում Սմբատի զորքերը 894թ. տանում են փայլուն հաղթանակ Սաջյան ամիրայի նկատմամբ: 898թ., երբ Սմբատը թագադրեց Ատրճերսեհին՝ վերականգնելով նաև վրաց պետականությունը, Ավշինը նորից ներխուժեց Յայաստան և Վրաստան: Սակայն արաբական զորքում սկսված համաճարակից առաջացած բազմաթիվ զոհերի հետ, մահացավ նաև Ավշինը և Յայաստանն առժամանակ զերծ մնաց արշավանքներից:

Ավշինի հաջորդ Յուսուֆը, հաջողության չհասնելով ռազմական ճանապարհով, փորձեց օգտագործել հայ իշխանների միջև ծագած վիճելի հարցերը: 10-րդ դ. սկզբին Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի նախարարական տների միջև վեճ ծագեց Նախճավան գավառի պատկանելության շուրջ: Սմբատն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունյաց նախարարների: Օգտվելով առիթից՝ Ատրպատականի էմիր Յուսուֆը թագ ուղարկեց դժգոհ Գագիկ Արծրունուն և Վասպուրականը ճանաչեց թագավորություն: Շուտով Յուսուֆը Գագիկի հետ ներխուժեց Յայաստանի կենտրոնական գավառներ: 910թ. Նիզ գավառի Չկնավաճառ վայրում Նայժմ Ապարանի շրջանում/ տեղի ունեցած ճակատամարտում Սմբատի բանակը պարտություն կրեց Սևորդյաց գնդի դավաճանության պատճառով: Յայոց թագավորը ստիպված փակվեց Կապույտ բերդում: Յամառ պաշտպանությունից հետո Սմբատը դադարեցրեց դիմադրությունը՝ հավատարիվ անձի անվտանգության մասին Յուսուֆի

խոստումներին: Սակայն վերջինս ձերբակալեց Սմբատին և նրան խաչեց Դվինի դարպասներին 914թ.:

Կապույտ բերդի անկումից հետո արաբները սկսեցին ավերել երկիրը: Նորից դրվեց Յայաստանի պետական անկախության վերացման հարցը, որին ամեն կերպ ձգտում էին Սաջյանները: Յայ ժողովուրդը կրկին ոտքի կանգնեց թշնամու դեմ: Այդ պայքարի գլուխ կանգնեց Սմբատի որդին՝ Աշոտ II-ը, որին իր քաջության համար ժողովուրդը կոչում էր Երկաթ /914-928/: Ատրպատականի ամիրայության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը տևեց մեկ տասնամյակից ավելի: Աշոտի շուրջ համախմբվեցին բազմաթիվ հայ իշխաններ: Վերակազմվեց բանակը: Յայերի շրջանում պառակտում առաջացնելու նպատակով արաբներն ի հակադրություն Աշոտ Երկաթի, հայոց թագավոր ճանաչեցին սպարապետ Աշոտին, որը նրա հորեղբոր որդին էր: Սակայն Աշոտ Երկաթին հաջողվեց սաստել սպարապետին և նրան հարող իշխաններին: 921թ. թագավորը, խուսափելով թշնամուց, ամրացավ Սևանա կղզում, որը հայտնի էր արաբների դեմ ցույց տված համառ դիմադրությամբ դեռևս 698թ.: Արաբ զորավար Բեշիրը շրջապատեց կղզին և նախապատրաստվեց գրոհի: Աշոտը, ցույց տալով թե անձնատուր է լինում, նավակներով մոտեցավ ափին: Արաբները գրեթե անզեն դիմավորեցին հայերին: Դեռ ափ չհասած, Աշոտի զինվորները հանեցին իրենց թաքցրած նետ ու աղեղները և նետահարեցին հանկարծակիի եկած արաբներին: Սևանի հաղթանակը, որը հավանաբար վերաբերվում է 922 կամ 923թթ., մեծ ոգևորություն առաջացրեց երկրում: Սևանից նահանջող արաբները նոր պարտություն կրեցին զորավար Գևորգ Մարզպետունու փոքրաթիվ ջոկատից Գառնիի մոտ: Երկու ծանր պարտությունից հետո արաբները մինչև 925թ. իրենց զորքերն ամբողջությամբ դուրս բերեցին Յայաստանից: Աշոտ II Երկաթը, թև իր գահակալության մեծ մասն անցկացրեց պատերազմներում, այնուհանդերձ կարողացավ զբաղվել նաև որոշ շինարարական աշխատանքով: Նա քանի որ թագադրվել էր Երազգավորսում, այն ընդարձակեց և դարձրեց մայրաքաղաք: Այս ժամանակաշրջանի դեպքերն իրենց զեղարվեստական արտացոլումն են գտել հայտնի վիպասան Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում:

Կենտրոնական Յայաստանի տարածքն արաբներից մաքրելուց հետո Աշոտն ու նրա եղբայր Աբասը իրենց զորքով մտան Վրաստան և հաղթանակ տարան Թիֆլիսի էմիրի նկատմամբ: Այս գործողությամբ ավելի ամրապնդվեց հայ և վրաց Բագրատունիների քաղաքական դաշինքը: 922թ. Բաղդադի խալիֆը ոչ միայն թագ ուղարկեց Աշոտին, այլև նրան

ճանաչեց «Շահնշահ» /արքայից արքա/ Հայոց, Վրաց և Աղվանից»: Դա նշանակում էր, որ հայոց թագավորը գերապատվություն էր ստանում ինչպես հարևան երկրների, այնպես էլ Վասպուրականի թագավորների և արաբական ամիրայությունների նկատմամբ: Աշոտի գահակալության վերջում երկրում սկսվեց խաղաղ ու շինարարական ժամանակաշրջան:

28. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼԸՆ 10-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 11-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՁԲԻՆ

Աշոտ Երկաթի օրոք արաբների դեմ տարած հաղթանակներն ամրապնդեցին Հայաստանի անկախությունը: Վերացավ արտաքին հարձակումների վտանգը և երկիրը թևակոխեց երկարատև խաղաղության ու շինարարության մի ժամանակաշրջան: Աշոտին փոխարինեց եղբայրը՝ Աբասը /928-953/, որը մինչ այդ Կարսի կառավարիչն էր: Նա երկրի մայրաքաղաքը Երազավորսից տեղափոխեց իր նստավայրը՝ Կարս, որը կարճ ժամանակում կառուցապատվեց, ընդարձակվեց և դարձավ Հայաստանի կարևոր քաղաքներից: Աբասը հայ եկեղեցու կենտրոնածիգ ուժը օգտագործելու համար կաթողիկոսական աթոռը 948թ. Անանիա Մոկացի կաթողիկոսի օրոք Աղթամարից տեղափոխեց Կարս:

Աբասին փոխարինեց որդին՝ Աշոտ III-ը /953- 977/, որը հայտնի է Աշոտ Ողորմած անունով: Աշոտը ավելի ամրապնդեց բանակը, այն դարձրեց մշտական և վերջ տվեց հյուսիսկովկասյան լեռնականների ասպատակություններին: Երկրում տարվեց մեծ ծավալի շինարարական աշխատանք: 961թ. Աշոտը որոշեց մայրաքաղաքը Կարսից տեղափոխել Շիրակի Անի քաղաքը: Այնտեղ էլ նա օտարերկրյա հյուրերի և հայ իշխանների ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ թագադրվեց Անանիա Մոկացու ձեռքով: Նոր մայրաքաղաքը գտնվում էր աշխարհագրական նպաստավոր տարածքում: Ախուրյան գետը համարյա երեք կողմից շրջափակում էր քաղաքը, դարձնում այն անառիկ: Առևտրական ճանապարհների վրա գտնվելու հանգամանքը նպաստեց քաղաքի արագ բարձրացմանը: 961 թվականից մինչև Բագրատունյաց անկումը՝ 1045թ. ընդունված է անվանել Անիական շրջան:

Խոսքով անուշ թագուհու նախածեռնությամբ հիմնադրվեցին միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն ճարտարապետական կոթողներից Սանահինի և Հաղպատի վանքերը, որոնք թագավորից ստացան ընդարձակ կալվածքներ:

Երկրում շինարարական աշխատանքն ավելի մեծ չափեր ընդունեց Սմբատ II թագավորի օրոք /977-990/: Աշոտ Ողորմածը կառուցել էր Անիի աշտարակներով պարիսպների առաջին գիծը, որի ներսում արդեն քաղաքն ընդարձակվելու հնարավորություն չուներ, և Սմբատ Երկրորդը կառուցեց Անիի պարիսպների երկրորդ գիծը, որի շինարարությունն ավարտվեց 989թ.: Սմբատի թագավորության շրջանում հանկարծակի Շիրակի վրա հարձակվեց Դվինի էմիրը, որը վաղուց հայոց թագավորի վասալն էր և թվում էր այլևս ոչ մի վտանգ չի ներկայացնում: Սմբատը ոչ միայն կարողացավ կասեցնել նրա հարձակումը, այլև 987թ. վերջ տալ այդ ամիրայության գոյությանը: Սմբատ թագավորը Անդրկովկասում այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ 988թ. դարձավ հաշտարար-միջնորդ վրաց-աբխազական հարաբերություններում:

Բագրատունյաց Հայաստանն իր քաղաքական ու տնտեսական վերելքի գագաթնակետը թևակոխեց Գագիկ I-ի օրոք /990-1020/: Մինչև Գագիկի գահակալումը Հայաստանի տարբեր շրջաններում ստեղծվել էին ինքնուրույն հայկական թագավորություններ: Վերջինս կարողացավ նրանց ստիպել ընդունելու իր գերիշխանությունը: Գագիկը կրում էր «Շահնշահ Հայոց» պատվատիտղոսը: Դա նշանակում էր, որ հայկական բոլոր թագավորների նկատմամբ Գագիկն ուներ գերադասելի դիրք: Առանց շահնշահի՝ արքայից արքայի մյուս թագավորներն իրավունք չուներին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու ուրիշ երկրների հետ: Նույնիսկ կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր Բագրատունյաց թագավորի կարգադրությամբ:

1001թ. Տաշիր-Չորագետի /Լոռի/ թագավոր Դավիթը ապստամբեց Գագիկ I-ի դեմ և հրաժարվեց ճանաչել Անիի Բագրատունիների գերիշխանությունը: Գագիկը հարձակվեց այդ թագավորության վրա և կարճ ժամանակում գրավեց այն: Դավիթը դիմեց փախուստի: Զանի որ վերջինս հողագրկվեց, պատմիչները նրան հիշատակում են Դավիթ Անհողին անունով: Շուտով Դավիթը զոջաց իր արարքի համար և ներում խնդրեց Գագիկից: Շահնշահը ներեց նրան և վերադարձրեց իր տիրույթները:

Գագիկի օրոք կարճ ժամանակով խախտվեց երկրի խաղաղությունը: 998թ. Հայաստան ներխուժեց Ատրպատականի էմիր Մամլանը: Գագիկը հայոց սպարապետ, նշանավոր զորավար Վահրամ Պահլավունու հետ Ապահունիք գավառում կանգնեցրեց թշնամուն: Հայկական զորքին միացան նաև վրացիները: ճակատամարտը տեղի ունեցավ Ապահունիքի Ծմբո գյուղի մոտ: Հայ-վրացական զորքերը

տարան հաղթանակ, որից հետո արաբները մեկընդմիջտ հրաժարվեցին իրենց ունեցություններից Գայաստանի ու Վրաստանի նկատմամբ:

Գագիկը շարունակեց իր նախորդների շինարարական լայն գործունեությունը: Նրա ժամանակ Անին հասավ նոր ծաղկման: 1001թ. ավարտվեց Անիի Մայր տաճարի՝ Կաթողիկեի կառուցումը, որի նախածեռնողը հայոց թագուհի Կատրանիդեն /նաև Կատարամիտե/ էր: Սյունյաց Վասակ թագավորի դուստրը: Այս հոյակերտ տաճարի հեղինակը հռչակված ճարտարապետ Տրդատն էր: Գագիկի ժամանակ իրենց շինարարական գործունեությամբ աչքի ընկան Պահլավունիները: Վահրամ Պահլավունու ջանքերով կառուցվեցին Բջնիի նշանավոր ամրոցն ու եկեղեցին, Ամբերդը, Մարմաշենը և այլն:

29. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ 1 ՏՐՈՂՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Ավատատիրական հարաբերությունների խորացման հետ մեկտեղ ուժեղանում էին խոշոր իշխանների անջատողական ձգտումները: Իրենց կալվածքներում հայ իշխաններն հաճախ այնքան էին հզորանում, որ հաշվի չէին նստում հայոց թագավորների հետ: Նրանց անջատողական քայլերը խրախուսվում էին հարևան թշնամական պետությունների կողմից: Խալիֆայությունը չէր հրաժարվում Գայաստանը վերանվաճելու իր մտադրությունից, իսկ Բյուզանդիան, իրեն ներկայացնելով հայերի շահերի պաշտպան, ձգտում էր յուրացնել հայկական տարածքները: Այս ամենի հետևանքով 10-րդ դարի սկզբից ի հայտ եկան Բագրատունյաց թագավորության մասնատման երևույթներ:

1. Գայակական պետության առաջին տրոհողները դարձան Վասպուրականի Արծրունիները: Դժգոհ մնալով Սմբատ I-ից Նախճավանը Սյունյաց իշխաններին տալու համար՝ Գագիկ Արծրունին 908թ. թագ ստացավ Ատրպատականի էմիր Յուսուֆից և Վասպուրականը հռչակեց թագավորություն: Այն հետագայում առաջացած բոլոր թագավորություններից ու իշխանություններից դարձավ ուժեղագույնը: Նրա տարածքն ընկած էր Վանա և Ուրմիա լճերի շրջանում՝ քարավանային ճանապարհների վրա: Գագիկ I Արծրունու օրոք /908-943/ Վասպուրականը հասավ տնտեսական ու քաղաքական նոր աստիճանի: Այդ ժամանակ կառուցվեց Աղթամարի վանքի Ս. Խաչ նշանավոր եկեղեցին Մանուել ճարտարապետի ձեռքով: Այստեղի վերջին թագավոր

Սենեքերիմի գահակալության շրջանում /968-1021/ Վասպուրականում կար 8 քաղաք, 4 հազ. գյուղ, 72 ամրոց, 115 վանք: Նրա բնակչության թիվը հասնում էր 1 միլիոնի: Առևտրական հայտնի կենտրոններ էին Վանը, Արճեշը, Բերկրին, Մանազկերտը և այլ քաղաքներ: Վախենալով սելջուկներից՝ Սենեքերիմը 1021թ. Վասպուրականը կտակեց Բյուզանդիային, ինքը տեղափոխվեց Սեբաստիա:

2. Անին մայրաքաղաք դարձնելուց հետո Կարսը մնաց Աշոտ III-ի եղբոր՝ սպարապետ Մուշեղի տրամադրության տակ: 962թ. Մուշեղը հրաժարվեց ենթարկվել թագավորին և 963թ. Կարսը հռչակեց ինքնուրույն թագավորություն: Այն, որ հայտնի է Կարսի կամ Վանանդի թագավորություն անունով, գոյատևեց մոտ 100 տարի՝ 963-1065թթ.: Այս թագավորությունը զգալի վերելք ապրեց հատկապես Մուշեղի հաջորդ Աբասի օրոք /984-1029/:

3. Շուտով Մուշեղի օրինակին դիմեցին Սյունյաց իշխանները: Գահերեց իշխան Սմբատը 970թ. /այլ տվյալներով՝ 987թ./ Սյունիքը հռչակում է թագավորություն: Վերջինս ունեցավ ամենաերկար կյանքը՝ գոյատևելով մինչև 1170թ.: Սկզբում նրա մայրաքաղաքը Սյունի /այժմ՝ Սիսիան/ ավանն էր, ապա տեղափոխվեց Կապան, ուստի թագավորությունը հայտնի էր նաև Կապանի կամ Բաղաց անուններով: Սյունիքը մեծ վերելք ապրեց Վասակ թագավորի օրոք /998-1040/: 12-րդ դարում Սյունիքում հաշվվում էր 43 ամրոց, 40 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան:

4. Բացի Կարսից Բագրատունիների մի ճյուղը հաստատվեց Տաշիր-Չորագետում: 972թ. Տաշիրի կառավարիչ նշանակվեց Աշոտ III թագավորի որդի Գուրգենը: 978թ. Սմբատ II-ը հատուկ հրովարտակով Գուրգենին շնորհեց թագավորի տիտղոս: Այսպես հիմնադրվեց Լոռու, Տաշիր-Չորագետի թագավորությունը, որի ստեղծմամբ Բագրատունիները նպատակ ունեին երկրի հյուսիսը պաշտպանել Թիֆլիսի և Գանձակի ամիրայությունների հարձակումներից: Յետագայում Գուրգենի անունից այս թագավորությունը հայտնի է նաև Կյուրիկյան անունով /Կյուրիկե էին անվանում Լոռիում Գուրգենին/: Այս թագավորությունը գոյություն ունեցավ մինչև 1113թ.: Կյուրիկյանները հզորացան Դավիթ Անհողինի օրոք /989-1048/: Նա այնքան ուժեղացավ, որ նույնիսկ հրաժարվեց ենթարկվել Անիի Բագրատունիներին, բայց 1001թ. պարտություն կրեց Գագիկ I-ից և հպատակվեց նրան: Դավիթը հետագայում պարտության մատնեց վերոհիշյալ ամիրայություններին և գրավեց նրանց հողերի մեծ մասը: Տաշիր-Չորագետի կենտրոնը Լոռի

ամրոցն էր՝ այժմյան Ստեփանավանի մերձակայքում:

5. Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Տայքում 930-ական թթ. առաջացել էր մի փոքրիկ իշխանություն, որը Բյուզանդիայի կողմից ճանաչվեց իբրև ինքնուրույն պետություն, իսկ նրա կառավարիչ Դավիթը ստացավ կյուրապաղատի կոչում: Դավիթ Կյուրապաղատը /966-1000/ քանի որ չուներ արու զավակ, 1000թ. դավաճանաբար իր իշխանությունը կտակեց Բյուզանդիային:

6. 10-րդ դ. 2-րդ կեսին Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Ուտիք և Արցախ աշխարհներում կազմավորվեց ևս մի թագավորություն՝ Փառխոսի կամ Խաչենի թագավորությունը, որտեղ իշխում էին Առանշահիկները: Այն պահվեց մինչև 1044թ. և նվաճվեց Գանձակի ամիրայության կողմից:

Վերոհիշյալ բոլոր թագավորություններն ընդունում էին իրենց կախվածությունը Բագրատունյաց թագավորությունից և համարվում էին նրա վասալները: Մյուս թագավորություններից տարբերելու համար Բագրատունյաց կենտրոնական պետությունը հաճախ կոչում էին Անիի կամ Շիրակի թագավորություն: Վերջինիս մասն էր կազմում Տարոնի իշխանությունը:

Դժբախտաբար, երկրի մասնատման ձգտումն այնքան ուժեղ էր, որ Գագիկ I-ի մահից հետո ընդգրկեց նաև Անիի թագավորությունը: Գահի շուրջ պայքար սկսվեց Գագիկի որդիների՝ Դովհաննես-Սմբատի և Աշոտի միջև: Վահրամ Պահլավունու և կաթողիկոս Պետրոս Գետադարձի միջնորդությամբ կնքվեց հաշտություն, ըստ որի Դովհաննես-Սմբատը ավագության իրավունքով ստանալու էր Անի ամրոցն ու Շիրակը, իսկ եռանդուն զորավար Աշոտը՝ շրջակա գավառները: Ավագ եղբոր մահից հետո Աշոտը ստանալու էր նաև Անին ու Շիրակը: 1022թ. Տրապիզոնում վրաց-բյուզանդական բանակցությունների ժամանակ բյուզանդական կայսր Բարսեղ II-ը հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձից պահանջեց Անիի թագավորությունը հանձնել իրեն: Բյուզանդասեր կաթողիկոսի ճնշման տակ Դովհաննես-Սմբատը /1020-1041/ համաձայնվեց Անին կտակել Բյուզանդիային: Պետրոս Գետադարձը այդ կտակը դավաճանաբար ուղարկեց կայսր Բարսեղին: 1040թ. մահացավ Աշոտ IV-ը, իսկ 1041թ.՝ Դովհաննես-Սմբատը: Լսելով վերջիններիս մահվան մասին՝ կայսր Միքայել IV-ը զորք ուղարկեց Անին գրավելու համար: Սակայն 30 հազ.անեցիներ Վահրամ Պահլավունու ղեկավարությամբ ջարդեցին բյուզանդացիներին և վտարեցին երկրից: Պահլավունու ջանքերով գահ բարձրացվեց Աշոտ IV-ի 16-ամյա որդին՝ Գագիկ II-ը /1042-1045/: Կայսրը նոր զորքեր ուղարկեց Անին գրավելու համար: Կայսերական զորքերի 2-

րդ և 3-րդ արշավանքները ևս արդյունք չտվեցին: 1044թ. Գագիկը բյուզանդասեր կաթողիկոսի և Վեստ Սարգիս իշխանի հորդորներով մեկնեց Կ.Պոլիս՝ Կոնստանդին Մոնոմախ կայսեր մոտ: Սակայն Գագիկին արգելվեց վերադառնալ հայրենիք, և նա աքսորվեց Կիլիկիայի սահմանագլուխ՝ Պիզու քաղաքը: Դավաճան իշխաններն ապա թշնամու առջև բաց արեցին Անիի դարպասները: Այսպես 1045թ. կործանվեց հայոց պետականությունը:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԱՐԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՌՑԻԱԼ-ՏԵՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 9-11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

9-11-րդ դարերում Հայաստանը միջնադարյան տիպի միապետություն էր: Պետության գլուխ կանգնած էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ: Երկրի համար վճռական նշանակություն ունեցող բոլոր հարցերում թագավորը խորհրդակցում էր արքունիքի հետ: Անիում նստող Բագրատունիներին ենթակա էին հայկական բոլոր թագավորներն ու իշխանները, ինչպես նաև արաբ ամիրաները:

Թագավորը պետությունը կառավարում էր բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների և գործակալությունների միջոցով: Բարձրաստիճան պաշտոնները տրվում էին արքունիքին մոտ կանգնած իշխաններին ու արքայական տան անդամներին:

Իշխանաց իշխանի գործակալությունը իրականացնում էր կապը թագավորի և իշխանների միջև, հսկում թագավորական կալվածքները, պետական զանձարանը, կազմակերպում հարկերի սահմանումն ու զանձումը: Իշխանաց իշխանի նշանակած «բերդապահները» հսկում էին պետական կարևորագույն բերդերն ու ամրոցները: Այս պատասխանատու պաշտոնը սովորաբար վարում էին թագավորի եղբայրները կամ արքայորդիները: 10-րդ դ. կեսերից այն անցավ Պահլավունիների ձեռքը:

Հայոց սպարապետը երկրի բոլոր ռազմական ուժերի հրամանատարն էր: Արշավանքների ժամանակ ենթակա թագավորների զորքերը ևս անցնում էին սպարապետի տրամադրության տակ:

Բագրատունյաց պետության մեջ հատուկ դեր ունեւ բանակը, որի թիվը հասնում էր 80-100 հազ.: Բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից: Մարզպանական գունդը կազմվում էր իշխանների զորքերից: Խաղաղ ժամանակ պահվում էր փոքրաթիվ

բանակ: Բանակը բաղկացած էր հեծելազորից և հետևակից:

Գլխավոր դատավորի պաշտոնը նախկինի նման զբաղեցնում էր հայոց կաթողիկոսը: Նվազ նշանակության գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու սովորույթի իրավունքով:

Ֆեոդալական հասարակությունը բաժանվում էր ազատների և անազատների կամ հարկատուների դասերի: Ազատներ էին իշխաններն ու բարձրաստիճան հոգևորականությունը: Հողի գերագույն սեփականատիրության իրավունքը պատկանում էր թագավորին: Հարկատու դասի մեջ մտնում էին շինականները և քաղաքի արհեստավորներն ու առևտրականները: Բագրատունյաց շրջանում ավելի խորացավ սոցիալական անհավասարությունը: Աղքատացող շինականների մի մասը սկսեց անցնել վարձու աշխատանքի իբրև ծառաներ ու աղախսիներ իշխանների և ունևոր գյուղացիների մոտ:

Բագրատունիների օրոք նոր վերելք ապրեց գյուղատնտեսությունը: Երկրագործության բնագավառում լայն տարածում ստացավ հողի մշակման եռադաշտային համակարգը: Հողը բաժանվում էր երեք մասի. մի մասը վարվում էր և թողնվում ցել, երկրորդում կատարվում էր աշնանացան, իսկ երրորդում՝ գարնանացան: Հողագործության բարձր մակարդակով աչքի էին ընկնում Արարատյան, Տարոնի, Բագրևանդի, Բասենի, Վանանդի և Շիրակի դաշտերը:

Երկրագործության զարգացմանը մեծապես նպաստում էր ջրանցքների ու առուների անցկացումը: Ոռոգելի հողերի տարածքն օրեցօր աճում էր: Մշակելի հողերի ընդարձակումը խոպան հողերի հաշվին լայն տարածում ստացավ: Այդ հողերը կոչվում էին «Նորք»: Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից էին բանջարաբուծությունն ու այգեգործությունը:

Անասնապահությամբ զբաղվում էին ավելի շատ նախալեռնային ու լեռնային հարուստ արոտավայրեր ունեցող շրջաններում՝ Արագածի, Բյուրակնյան լեռների ստորոտներում, Սյունիքում, Տարոնում, Տաշիրում, Վասպուրականում և այլուր: Ժամանակակից պատմիչի վկայությամբ Աշոտ I-ը հայոց կաթողիկոսին նվիրում էր ձիերի երամակներ, տավարի նախիրներ և ոչխարի հոտեր: Վերջինս այդ նվիրատվությունների հաշվին դարձել էր խոշոր հողատեր: Միայն Տաթևի վանքը 10-րդ դ. սկզբին ուներ իրեն ենթակա 22 գյուղ:

Արհեստների հետագա զարգացումը հանգեցրեց նոր մասնագիտությունների հանդես գալուն: Դարբնությունից անջատվեցին

պայտառությունը, զինագործությունը: Արհեստավորները քաղաքներում զբաղեցնում էին առանձին թաղամասեր: Անին հայտնի էր իր «Դարբնափողոց», «Նալբեղոնց», «Կոշկակարանոց» թաղամասերով: Միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին եղբայրությունների կամ համաքարությունների մեջ՝ իրենց շահերը պաշտպանելու նպատակով: Պղնձի մշակությամբ մասնագիտացել էին Սյունիքը և Տաշիրը /Պղնձահանք, այժմ Ախթալա/ և Մանից գոմը /Ալավերդի/: Հայաստանը ճանաչված էր նաև կաշեգործությամբ, մանածագործությամբ, կավագործությամբ, զինեգործությամբ:

Առևտուրը Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից էր: Երկիրը առևտրական կապերով կապված էր Արաբական խալիֆայության, Պարսկաստանի, Հինաստանի, Հնդկաստանի, Ռուսիայի և այլ պետությունների հետ: Հայաստանն արտահանում էր գործվածքներ, մետաղներ, ներկեր, գորգեր, Վանա տառեխ ձուկ, զինի: Հայտնի էին մանրավաճառ առևտրականները՝ փերեզակները, որոնք զամբյուղներով շրջում էին քաղաքներում և իրացնում իրենց ապրանքները:

Քաղաքներ: 10-րդ դ. Հայաստանում հաշվվում էր 40 մեծ և փոքր քաղաք: Քաղաքների աճը հետևանք էր արհեստների ու առևտրի շեշտակի վերելքի: Հայաստանով անցնում էին երկու միջազգային առևտրական ճանապարհներ: Հյուսիսայինը անցնում էր Նախիջևան, Դվին, Անի, Կարին, Արծն, Երզնկա քաղաքներով, իսկ Հարավայինը՝ Բերկրիով, Վանով, Մանազկերտով, Խլաթով և Բաղեշով:

Քաղաքների կենտրոնում սովորաբար միջնաբերդն էր, որն ուներ առանձին պարիսպ: Նրա շուրջը շահաստանն էր՝ իր պարիսպներով: Վերջինիս շուրջը արվարձանն էր: Միջնաբերդում ապրում էին իշխանները, շահաստանում մեծահարուստների խանութներն ու առևտրական շենքերն էին: Արվարձաններում արհեստավորներն ու առևտրականներն էին:

Դվինի, Արտաշատի կողքին այժմ հանդես եկան նոր խոշոր քաղաքներ: Անին ավելի քան 100 հազ. բնակչություն ունեցող խոշոր կենտրոն էր: Այն հռչակված էր իր եկեղեցիներով /Մայր տաճար՝ Կաթողիկե, Հովվի, Գակկաշեն և այլն/: Խոշոր քաղաքների թվում էին նաև Կարսը, Արծնը և Կարինը: Նրանք ունեին 20-ից մինչև 100 հազ.բնակիչ: Նշանավոր քաղաքական ու մշակութային կենտրոն էր նաև Վանը՝ Վասպուրականի թագավորության մայրաքաղաքը:

**31. ԹՈՆՂՐԱԿՅԱՆ ԱՂԱՆՂԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9-11-ՐԴ ԴՂ.**

Դեռ չէին մարել Պավլիկյան շարժման կրակները, երբ 9-րդ դարի երկրորդ կեսին բռնկվեց աղանդավորական մի նոր շարժում, որն իր գլխավոր կենտրոնի՝ Ապահունիք գավառի Թոնդրակ գյուղի անունից կոչվեց Թոնդրակյան:

Արաբական տիրապետության տապալումով օտարի ծանր լուծը վերացավ, սակայն գյուղացիությունը սոցիալական ազատություն չստացավ: Հարկերի ու տուրքերի վճարումը շարունակվեց հայ ավատատերերին ու հոգևորականությանը: Վերջիններիս դեմ պայքարը հանդես էր գալիս աղանդավորական, հակաեկեղեցական բնույթով, այսինքն՝ գյուղացիների դժգոհությունը ընդհանրապես ֆեոդալների դեմ ուղղվում էր հայ եկեղեցու դեմ:

Թոնդրակյան շարժման առաջնորդը Ծաղկոտն գավառի Ջարեհավան ավանի բնակիչ Սմբատ Ջարեհավանցին է: Նա նաև շարժման հայտնի գաղափարախոսներից էր, շատ ճանապարհորդած, կրթված և աղանդավորական ուսմունքներին լավատեղյակ մարդ: Ջարեհավանցին եղել էր պավլիկյանների Տևրիկ ամրոցում, քաջ ծանոթ էր նրանց գործունեությանը: Նա շրջում էր ժողովրդի մեջ, քարոզում իր ուսմունքը: Սմբատ Ջարեհավանցու և նրա կողմնակիցների կարծիքով մարդկանց և աստծո միջև միջնորդներ պետք չեն: Մարդիկ պետք է կարողանան աստծո հետ հաղորդակցվել ուղղակիորեն: Ըստ թոնդրակյանների եկեղեցին, հոգևորականությունը, նրա արարողությունները, սուրբ գրքերը՝ Աստվածաշունչն ու ավետարանները, խաչը ավելորդ են և ստեղծված են մարդկանց խաբելու, մոլորեցնելու համար: Նրանք հանդես էին գալիս հարստության և ընչաքաղցության դեմ: «Մենք նյութապաշտ չենք, այլ աստվածապաշտ ենք», - ասում էին թոնդրակյանները: Բոլոր մարդիկ՝ հարուստ թե աղքատ, կին թե տղամարդ հավասար են ծնվել և պիտի հավասար լինեն:

Թոնդրակյանները ասում էին, որ Քրիստոսն էլ էր մարդ և մահացավ: Հոգին անմահ չէ և մեռնում է մարդու հետ: Նշանակում է հանդերձյալ կյանքի մասին հոգևորականության քարոզները սուտ են: Մարդ պետք է երջանիկ ապրի երկրի վրա, քանի որ մահից հետո դրախտ չկա, որ ապրի այնտեղ: Քանի որ կյանքը մեկն է՝ երկրի վրա մարդկանց համար թոնդրակյան համայնքներում հարկավոր է ստեղծել հավասար պայմաններ: Այդպիսի կենտրոնական համայնք նրանք ստեղծեցին

Թոնդրակ գյուղում: Օրեցօր շարժման կողմնակիցների թիվը ավելացավ:

Թաքնվելով տեղական կառավարիչներից և եկեղեցուց՝ թոնդրակեցի աղանդավորները գործում էին գաղտնիության պայմաններում: Բացահայտված աղանդավորներին սպասում էր դաժան հաշվեհարդար: Նրանց բանտարկում էին, խոշտանգում, շրջապատից տարբերելու համար դեմքերին շիկացած երկաթով դնում աղվեսագիր:

Գյուղացիության վիճակը խիստ վատթարացավ հատկապես 10-րդ դարի սկզբին, երբ երկիրը ենթարկվեց Սաջյան ամիրաների ասպատակություններին: Այրարատ աշխարհում և հարակից շրջաններում սկսվեցին ժողովրդական հուզումներ: 910-918թթ. շինականներն ու քաղաքի ռամիկները դիմեցին բռնությունների հարուստների նկատմամբ: Բռնագրավվեցին ազնվականներից շատերի հողատարածություններն ու ունեցվածքը: Հարձակման ենթարկվեցին որոշ վանքեր:

906թ. ավարտվեց Տաթևի վանքի մայր տաճարի տնտեսական և այլ շենքերի կառուցումը: Այդ կապակցությամբ Սյունիքի իշխանները վանքին նվիրեցին շրջակա հողերը, այդ թվում Ցուրաբերդ, Տամալեկք, Բերդ և Ավելադաշտ գյուղերը: Մինչ այդ այս գյուղերի բնակիչները ազատ էին, իսկ այժմ ընկնում էին կախվածության մեջ վանքից:

915թ. գյուղացիներն ապստամբեցին և գիշերով հարձակվեցին վանքի վրա, խլեցին պահեստներում ու գործատներում կուտակված ունեցվածքը: Հոգևորականներից ոմանք սպանվեցին, իսկ մյուսները հեռացան վանքից: Վանականները դիմեցին Սյունյաց գահերեց իշխանին: Իշխանի ջոկատները վանքից արտաքսեցին գյուղացիներին, ավերեցին ապստամբության կենտրոն Ցուրաբերդը: Սակայն դեռ երկար ժամանակ Սյունիքում հուզումները շարունակվեցին:

Այրարատի և Սյունիքի գյուղացիների հուզումները աղանդավորական բնույթ էին կրում, սակայն նրանց շարժառիթները ունեին տնտեսական բնույթ:

10-րդ դարի երկրորդ կեսից թոնդրակյանները ուժեղացան Հայաստանի հարավային ու հարավ-արևմտյան գավառներում: Դեռ պավլիկյանների ժամանակ հռչակված Մանանդի գավառում նրանց համայնքների բազմացումից անհանգստացած՝ տեղի հայ հոգևոր առաջնորդը օգնության խնդրանքով դիմեց բյուզանդական իշխանություններին: Վերջիններիս հաջողվեց ուժով առժամանակ Մանանդում ընկճել թոնդրակյաններին:

Ուշագրավ է, որ շարժմանը հարել են նաև ազնվականներ, նույնիսկ հոգևորականներ: Հայտնի է թոնդրակեցիների առաջնորդներից Հակոբ

եպիսկոպոսը, որին կաթողիկոսի ցուցումով ձերբակալել են և նետել բանտ:

10-րդ դ. վերջին և 11-րդ դ. սկզբին շարժումն ընդգրկեց նոր գավառներ: Համայնքներ ստեղծվեցին նաև քաղաքներում՝ Խլաթում, Խնուսում, հավանաբար նաև Անիում: Բագրատունիների օրոք միասնական պետության բացակայությունը թույլ չէր տալիս կործանելու շարժումը: Երբ Հայաստանն ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ 1045թ., թոնդրակեցիների հարցերով սկսեց զբաղվել բյուզանդական կայսրը: Շարժման ճնշումը հանձնարարվեց բյուզանդական հայ կառավարիչներից, ազդեցիկ իշխան և փիլիսոփա Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն: Վերջինս կանոնավոր զորքեր ուղարկեց Խնուս և ջախջախեց նրանց համայնքները: Հատկապես դաժան դատաստանի ենթարկվեցին Թոնդրակ գյուղի բնակիչները: Այստեղի բնակիչների մեծ մասը Մագիստրոսի հրամանով ոչնչացվեց, տները հրկիզվեցին:

Թեև 11-րդ դ. երկրորդ կեսին շարժման գլխավոր օջախները ջախջախվեցին, սակայն դեռ տեղ-տեղ թոնդրակեցիների ելույթները շարունակվեցին նաև հաջորդ դարերում:

32. ՍԵԼՁՈՒՎ- ԹՈՒՐԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ

1045թ. Անիի թագավորության գրավումից հետո Բյուզանդիան ձգտում էր էլ ավելի թուլացնել Հայաստանը: Հայ իշխաններին երկրից հեռացնելու նպատակով բյուզանդացիները նրանց շնորհում էին ընդարձակ կալվածքներ կայսրության զանազան շրջաններում: Հայկական զորքերը ցիրուցան արվեցին, մի մասն էլ տարվեց կայսրության խորքերը: Այսպեց բնակչության զանգվածային արտագաղթ Փոքր Ասիա, Վրաստան և այլ շրջաններ: Բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: Պայքարի սլաքը բյուզանդացիները ուղղեցին նաև եկեղեցու դեմ: Նույնիսկ Անիի անկման հարցում իրենց օժանդակած կաթողիկոս Պետրոս Գետադարձին կանչելով Կ. Պոլիս, արգելեցին վերադառնալ հայրենիք: Հարկեր սահմանվեցին նաև եկեղեցու վրա: Քաղթեղոնական դավանանքի տարածման համար ստեղծվեց լուրջ վտանգ: Բյուզանդիայի ծայրաստիճան անհեռատես այս քաղաքականությունը ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար: Շուտով բյուզանդացիները բախվեցին հզոր թշնամու՝ սելջուկ-թուրքերի հետ:

Սելջուկ-թուրքերի նախնիները քոչվոր անասնապահներ էին և զբաղեցնում էին Ալթայից Միջին Ասիա ընկած տարածքը: Նրանք առաջին անգամ Հայաստանում և Փոքր Ասիայում հայտնվել էին դեռևս 8-րդ դարում՝ իբրև վարձկաններ արաբական բանակում: 10-րդ դարի երկրորդ կեսին թուրքական ցեղերի մի մասը միավորվեց իրենց առաջնորդ Սելջուկի շուրջը, գրավեց Պարսկաստանը և մոտեցավ Հայաստանի սահմաններին:

Արդեն 1047թ. Բագրատունյաց թագավորության անկումից 2 տարի անց, սելջուկների 20 հազ. բանակն առաջին անգամ ներխուժեց Հայաստան: Վասպուրականի վրայով այն գրեթե անարգել, բյուզանդացիների թողտվությամբ հասավ մինչև Բասեն՝ ճանապարհին ավերելով բազմաթիվ բնակավայրեր: 1048թ. հետևեց 100 հազ. սելջուկյան բանակի նոր արշավանքը: Ջորավարներ Գթմուշի և Իբրահիմի զորքերը մահ ու ավեր սփռեցին ամենուր: Մանանաղի Սմբատավան լեռան մոտ նրանք կազմակերպեցին բնակչության սուսկալի կոտորած: Թուրքերը գրավեցին Կարինի մոտ գտնվող Արծն վաճառաշահ ու հարուստ քաղաքը, ավերեցին այն, բնակչությանը կոտորեցին կամ գերեվարեցին: Սելջուկներին ուշացումով փորձեցին կանգնեցնել բյուզանդական զորքն ու նրանց օգնության հասած հայկական ու վրացական ջոկատները, սակայն Բասենի ճակատամարտում պարտություն կրեցին: Հարուստ ավարով սելջուկները վերադարձան Ատրպատական: Նոր սթափված բյուզանդացիները հայերին սիրաշահելու քայլեր կատարեցին: Սակայն դիմադրության կարողությունից զրկված Հայաստանն այլևս չէր կարող դառնալ Բյուզանդիային սելջուկներից պաշտպանող երկիր:

1054թ. սելջուկների երրորդ արշավանքն արդեն գլխավորում էր նրանց առաջնորդ Տուղրիլը: Այս անգամ թշնամին համառ դիմադրության հանդիպեց Կարս քաղաքի մոտ: Մարտում Կարսի պաշտպաններից Թաթուլ անունով մի երիտասարդ ծանր վիրավորել էր Տուղրիլի մերձավորներից մեկին: Բեկը գերի ընկած Թաթուլին ասում է, որ եթե իր մերձավորն ապրի, ինքը ազատ կարծակի նրան: Քաջ Թաթուլը համարձակորեն պատասխանում է, որ հարվածն իրենն է և թուրք զինվորն անպայման կմեռնի: Սելջուկներն այս հետախուզական արշավանքից հետո էլ հարուստ ավարով հեռացան Հայաստանից:

Իրադրությունը փոխվեց, երբ սելջուկյան պետության գլուխ կանգնեց սուլթան Ալփ-Ասլանը: 1064թ. նա ներխուժեց Հայաստան՝ այն վերջնականապես գրավելու մտադրությամբ: Ասպատակելով ու հպատակեցնելով Լոռին՝ սելջուկները պաշարեցին Անին: Քաղաքի բյուզանդական կայազորը քաշվեց միջնաբերդ և բնակչությանը թողեց

անպաշտպան: Ծաղկուն քաղաքը վերածվեց ավերակների: Աճիի անկումից հետո սելջուկներին շտապեցին իրենց հպատակությունը հայտնել Տաշիր-Չորագետի, Կարսի ու Սյունիքի թագավորները և փրկվեցին ասպատակությունից: 1071թ. բյուզանդացիները փորձեցին կասեցնել սելջուկների առաջխաղացումը և մեծ բանակով շարժվեցին արևելք: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մանազկերտի մոտ և ողբերգական վախճան ունեցավ կայսրության համար: Բյուզանդացիները ծանր պարտություն կրեցին: Բազմաթիվ զերիների հետ թուրքերի ձեռքն ընկավ նաև կայսր Դիոգենեսը: Շուտով կնքվեց հաշտություն, որով բյուզանդացիները ճանաչեցին սելջուկների տիրապետությունը Հայաստանի ու Փոքր Ասիայի վրա: 1074թ. հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում: Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլաթի և այլ սելջուկյան իշխանություններ: Նորից, ինչպես արաբական տիրապետության շրջանում, երկիրը հայտնվեց ծանր վիճակում: Օտար քոչվոր անասնապահական կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը: Կրկին մեծ չափեր ընդունեց բնակչության գանգվածային արտագաղթը:

33. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԶԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐՈՒՄ 12-13-ՐԴ ԴԴ.

11-րդ դարի վերջին սելջուկյան պետությունն սկսեց աստիճանաբար թուլանալ: Ձուգահեռաբար նկատվեց Հայաստանի հյուսիսային հարևանի՝ Վրաստանի հզորացման գործընթացը: 1065թ. Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը, վախենալով թուրքերից, իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային և ինքը հեռացավ Փոքր Ասիա: Միայն Սյունիքի ու Տաշիր-Չորագետի թագավորությունները շարունակեցին պահպանել իրենց գոյությունը և, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնել իրենց տիրույթները: Հայաստանի հարավում Սասունում պահպանվում էր թոռնիկյանների իշխանությունը:

Սելջուկյան պետության մասնատման հետևանքով Հայաստանում առաջացան մահմեդական իշխանություններ: 1064թ. գրավված Անին հանձնվեց Շաղդադյաններին: Շաղդադյաններից բացի ստեղծվեց նաև Շահ-Արմենների ամիրայությունը հարավում՝ Խլաթ կենտրոնով: Պատմական Ուտիքում ձևավորվեց Գանձակի աթաբեկությունը:

Այս մահմեդական իշխանությունների դեմ 11-րդ դարի վերջից համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները: Հայ-վրացական հարաբերությունները ջերմացան հատկապես վրաց Դավիթ Շինարար /1089-1125/ թագավորի օրոք: Վերջինս Հայաստանից Վրաստան արտագաղթող հայերի համար կառուցել տվեց Գորի քաղաքը: Դավիթի շուրջը համախմբվեցին բազմաթիվ հայ իշխաններ՝ իրենց զինական ուժերով/նրանցից ամենանշանավորը հետագայում Սարգիս Ջաքարյանն էր, որին տրվեց վրաց արքունիքի ամենապատվավոր և ազդեցիկ պաշտոններից մեկը՝ ամիրսպասալարությունը, այսինքն՝ զորքերի գլխավոր հրամանատարությունը/: Հայ զորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի էր բարձրացնում Վրաստանի՝ որպես քրիստոնյա բախտակից հարևանի հեղինակությունը սելջուկների լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդի աչքում: Այսպիսի պայմաններում հայերը հաճախ ապստամբում էին և օգնության խնդրանքով դիմում վրաց թագավորներին: 1113թ. հայ-վրացական ուժերը թշնամուց մաքրեցին Լոռին: Դրանով տեղի Տաշիր-Չորագետի թագավորությունը վերացվեց և մտցվեց վրաց պետության կազմի մեջ:

1124թ. Անիի ապստամբած բնակչությունը պատվիրակություն ուղարկեց Դավիթ Շինարարի մոտ՝ նրան հայտնելով քաղաքը վրաց թագավորին հանձնելու իրենց մտադրության մասին: Դավիթը զորքով մտավ Անի և այնտեղից դուրս քշեց Շաղդադյաններին: Վերջիններս նոր գործ հավաքեցին և կրկին պաշարեցին Անին: Քաղաքի պաշտպանների մեջ աչքի ընկավ հերոսուհի Այծեմնիկը, որը, արհամարհելով նետերից ստացված բազմաթիվ վերքերը, շարունակում էր պարիսպներից քարեր նետել թշնամու վրա: Միայն երկու տարի անց, երբ քաղաքում սկսվեց սով, անեցիները հանձնվեցին Շաղդադյաններին:

Պայքարը Անիի և Հյուսիսային Հայաստանի մյուս շրջանների համար նոր թափ ստացավ վրաց Գեորգի III-ի օրոք /1156-1184/: 1161թ. Անին նորից գրավվեց հայ-վրացական ուժերի կողմից: Թշնամին կրկին այն ետ վերադարձրեց: 1174թ. Անին որոշ ժամանակով երրորդ անգամ անցավ վրացիների ձեռքը:

Հայ-վրացական զինակցությունն իր գագաթնակետին հասավ Թամար թագուհու իշխած տարիներին /1184-1213/: Հենց նրա ժամանակ էլ Սարգիս Ջաքարյանը՝ 1185թ. ստացավ ամիրսպասալարի պաշտոնը: Նրա մահից հետո այդ պաշտոնն անցավ Սարգսի ավագ որդուն՝ Ջաքարե Ջաքարյանին: Ջաքարեի կրտսեր եղբայր Իվանեն դարձավ աթաբեկ՝ թագածառանգի խնամակալ: Վերջիններիս հրամանատարությամբ 12-րդ

դարի վերջին հայ-վրացական գորքերը թշնամուց ազատագրեցին Յուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջաններ: 1196թ. գրավվեց Ամբերդ հայտնի բերդը, իսկ 1199թ.՝ չորրորդ անգամ նաև՝ Անին: Թշնամուց մաքրվեցին Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը: 1203թ. ազատագրվեց Դվինը, իսկ 1206թ.՝ Կարսը, ապա նաև՝ Բասենն ու Բագրևանդը: Շարունակելով հարձակումը՝ հայ-վրացական ուժերը հասան Մանազկերտ ու Արձեշ: 1209թ. պաշարվեց Վանա լճի ափին ընկած Խլաթը: Շահ-Արմենների նստավայրը: Սակայն մի պատահական դիպված /Իվանեն պատահաբար ընկավ որսափոսը և գերվեց թշնամու կողմից/ խանգարեց Խլաթի գրավումը: Ջաքարեն ստիպված եղավ եղբորը ստանալու դիմաց դադարեցնել քաղաքի պաշարումը և նահանջել:

Յուսիսային ու կենտրոնական Հայաստանում սելջուկների լծի թոթափումից հետո ազատագրված հայկական հողերը վրաց արքունիքի կողմից հիմնականում տրվեցին Ջաքարյաններին, որոնք վրաց պետության հովանավորության տակ, ունենալով ներքին լայն ինքնուրույնություն, ստեղծեցին իրենց իշխանապետությունը, որն իր մեջ ընդգրկեց Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Աևանի շրջակայքը:

Ջաքարյաններն այնքան մեծ իշխանություն ունեին իրենց տիրույթներում, որ նույնիսկ իրենց հերթին պահում էին վասալ կախյալ իշխանապետություններ: Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշում, Գարդմանում և Փառիսոսում Ջաքարյաններից կախյալ ստեղծվել էր Վահրամյանների իշխանությունը, որի կենտրոնը Գագ ամրոցն էր: Նրա հիմնադիրը Սարգիս Ջաքարյանի եղբայր Վահրամն էր:

Ջաքարյանների ենթակա իշխանություններ կազմավորվեցին Վայոց Ձորում Պռոշյանների, իսկ Արագածոտնում՝ Վաչուտյանների կողմից: Վաչուտյանների նստավայրը Ամբերդն էր: Սյունիքում ազդեցիկ դիրք ձեռք բերեցին Օրբեյանները, Արցախում /Խաչենում/ Հասան-Ջալալյանները: Հայկական այս բոլոր իշխանապետությունները սերտորեն գործակցում էին վրաց պետության հետ, սակայն ներքին քաղաքական ու տնտեսական բնագավառներում միանգամայն ինքնուրույն էին: Ջաքարյանների օրոք երկիրը ապրում էր քաղաքական ու տնտեսական վերելքի ժամանակաշրջան:

34. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Բյուզանդիայի վարած անհեռատես հակահայկական քաղաքականության հետևանքով Հայաստանից արտագաղթն ընդունեց խոշոր չափեր: Հայ բնակչությունն արտագաղթում էր Վրաստան և հատկապես Փոքր Ասիա: Արտագաղթը նոր ծավալներ ընդունեց, երբ սկսվեցին սելջուկ-թուրքերի արշավանքները: Բյուզանդական տիրապետության տակ գտնվող տարածքներից հայերը գերազանցապես հաստատվում էին Կիլիկիայում:

Կիլիկիայում հայերի զանգվածային վերաբնակեցման մասին թերևս առաջին անգամ կարելի է նշել Տիգրան Մեծի ժամանակաշրջանից: Կիլիկիան, որը գտնվում էր Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին, իրեն էր ձգում գոյություն ունեցող բարեբեր դաշտերով: Կիլիկիան բաղկացած էր երկու մասից՝ Լեռնային և դաշտային: Վերջինում տարեկան երկու անգամ հարուստ բերք էր ստացվում: Լեռնային Կիլիկիան աչքի էր ընկնում հիմնականում անասնապահությամբ:

Արդեն 4-5-րդ դարերում Կիլիկիայում այնքան էր ստվարացել հայերի թիվը, որ այնտեղի հայտնի Ալեքսանդրեոսի ծովածոցը կրում էր Հայկական ծովածոց անունը: Կիլիկիայում հայերը աչքի են ընկել արաբների դեմ մղած պայքարում:

11-րդ դարում Կիլիկիա տեղափոխվեցին բազմաթիվ հայեր հատկապես Վասպուրականից, Սյունիքից, Արցախից, Արարատյան դաշտից և այլ շրջաններից: Հաստատվելով այստեղ՝ հայերը սկսեցին պայքար մղել ինքնուրույն պետություն ստեղծելու համար: 11-րդ դարում Կիլիկիայում ստեղծվեցին հայկական առաջին իշխանապետությունները: Դրանցից հայտնի էին Գող Վասիլի և Փիլարտոսի իշխանությունները:

Կիլիկիայում էր հաստատվել նաև Բագրատունյաց Գագիկ II թագավորի մերձավորներից մեկը՝ Ռուբեն իշխանը: Իր շուրջ համախմբելով հայերին՝ նա պայքար սկսեց բյուզանդական տիրապետության դեմ, որին ենթակա էր Կիլիկիան: Ռուբենը գրավեց Լեռնային Կիլիկիայի մեծ մասը և այնտեղ 1080թ. հիմնեց հայկական իշխանություն, որը պատմության մեջ հայտնի է Ռուբինյան անունով: Այսպես հիմնադրվեց Կիլիկիայի հայկական պետությունը, որը գոյատևեց մոտ 300 տարի՝ մինչև 1198թ. իբրև իշխանություն, իսկ 1375թ.՝ թագավորություն: Ռուբեն I-ը /1080- 1095/ իր իշխած տարիներին համառ պայքար մղեց բյուզանդացիների դեմ և կարողացավ իր հսկողության տակ

վերցնել Լեռնային Կիլիկիայի զգալի մասը: Իշխանության ընդարձակումը տեղի ունեցավ Ռուբենի հաջորդների օրոք: Ռուբենի որդի Կոնստանդին I-ը /1095-1100/ կարողացավ օգտագործել միջազգային բարենպաստ իրադրությունը և ընդարձակել իր տիրույթները: Սկսվեցին խաչակրաց առաջին արշավանքները /1096- 1099/: Խաչակիրները քրիստոնյա եվրոպացի զինվորներ էին և արևելք էին արշավում մահմեդականներից Քրիստոսի գերեզմանը Երուսաղեմում փրկելու նպատակով: Նրանք հագուստի վրա կրում էին խաչեր, որի համար նրանց կոչում էին խաչակիրներ: Կոնստանդինը կարողացավ ստանալ նրանց աջակցությունը և բյուզանդացիներից մաքրել Լեռնային Կիլիկիայի շատ շրջաններ: 1098թ. նա գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Վահկա ամրոցը և այն դարձրեց իր նստավայրը:

Կոնստանդինի հաջորդ Թորոս I-ի /1100-1129/ իշխանության տարիներին հայերը ներխուժեցին Դաշտային Կիլիկիա և գրավեցին Սիսու Անարզաբա քաղաքները: 1107թ. Թորոսն ու Գող Վասիլը համատեղ ուժերով Կիլիկիայից դուրս քշեցին այնտեղ ներխուժած սելջուկ-թուրքերին: 1111թ. Թորոսը գերեց բյուզանդացի Մանդալե եղբայրներին: Վերջիններս պահանջեցին իրենց ազատ արձակել՝ զարմանալով հայերի այդ հանդուգն քայլի համար: Թորոսը պատասխանեց, որ ինքը վրեժ է լուծում հայոց Գագիկ II թագավորի սպանության համար և չի երկնչում բյուզանդացիներից: Լևոն I-ը /1129-1137/ իր իշխանությունը տարածեց նաև Դաշտային Կիլիկիայի մյուս նշանավոր քաղաքների՝ Մամեստիայի, Ադանայի և Տարսուսի վրա: Վերջիններս հայտնի ծովամերձ քաղաքներ էին:

Լևոն I-ի հաջողությունները լուրջ անհանգստություն առաջացրին Բյուզանդիայում: 1137թ. կայսրը անձամբ գլխավորեց Կիլիկիայի դեմ կազմակերպված արշավանքը: Բյուզանդացիները գրավեցին Դաշտային Կիլիկիայի քաղաքները և շարժվեցին դեպի Լեռնային Կիլիկիա: Թշնամին համառ դիմադրության հանդիպեց Անարզաբա քաղաքում և Վահկա ամրոցում: Սակայն ի վերջո Կիլիկիան գրավվեց, իսկ Լևոնն ու նրա երկու որդիները գերեզմանավորապես Բյուզանդիան կարողացավ վերականգնել իր տիրապետությունը Կիլիկիայում:

1137թ. Լևոն I-ը Կ.Պոլսում մահացավ գերության մեջ, իսկ նրա որդիներից Թորոսը կարողացավ փախչել և վերականգնել հայկական իշխանությունը: Նա կառավարեց 1145-1169թթ.՝ լիովին վերականգնելով Կիլիկիայի նախկին տարածքները: 12-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայի հայկական իշխանությունը դարձավ Արևելքի ուժեղ պետություններից

մեկը: Ի տարբերություն իր նախորդների, իշխան Մլեհը /1169- 1175/ փորձեց բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան մահմեդական պետությունների, հատկապես հզոր Իկոնիայի սուլթանության հետ: Բայց հայ հոգևորականությունը ճիշտ չըմբռնեց այդ խելացի քաղաքական քայլը և 1175թ. կազմակերպեց Մլեհի սպանությունը: Մլեհի ժամանակ ընդարձակվեց, բարեկարգվեց Սիս քաղաքը, որը վերածվեց իշխանության նոր մայրաքաղաքի: Թորոսի II-ի և Մլեհի օրոք Կիլիկիան ունեցավ լուրջ հաջողություններ խաչակրաց պետությունների՝ հատկապես Անտիոքի դքսության դեմ պայքարում և նվաճեց նոր հողեր Միջերկրականի ծովափին: Ռուբեն II-ի օրոք /1175-1187/ երկրից վտարվեց վերջին բյուզանդական պաշտոնյան՝ Կիռ Սահակը:

35. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ: ԼԵՎՈՆ II:

1187թ. Ռուբեն II-ին փոխարինեց եղբայրը՝ Լևոն II-ը /1187-1219/, որը Ռուբենյան դինաստիայի ամենանշանավոր ներկայացուցիչն էր: Լինելով խելացի քաղաքական գործիչ՝ նա կարողացավ ճիշտ կողմնորոշվել այդ ժամանակ ստեղծված բարդ միջազգային իրադրությունում, օգտագործել շրջակա պետությունների հակասությունները և ամրապնդել իր պետությունը: 1187թ. Կիլիկիա ներխուժեց Իկոնիայի սուլթանությունը: Սակայն Ռավին վայրում Լևոնը թշնամուն ջախջախիչ պարտության մատնեց: Մարտում զոհվեց իկոնիացիների զորավար Ռոստոմը: 1188թ. հայկական զորքերը նույնիսկ ներխուժեցին Իկոնիայի տարածքը և գրավեցին նրանից մի քանի բերդեր: 1190-ական թթ. սկզբին Կիլիկիայի սահմանները հյուսիս-արևելքում հասան Մարաշ, հարավ-արևելքում՝ Ալեքսանդրետ, արևմուտքում՝ Ատալիա, հյուսիսում՝ Կապադոկիա: Այդ տարիներին սկսվեց խաչակրաց երրորդ արշավանքը: Դաշնակցելով նրանց հետ՝ Լևոնը երկիրը գերծ պահեց Եգիպտոսի հարձակումներից, փորձեց եվրոպական երկրներից, հատկապես գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսից, ստանալ թագ և Կիլիկիան վերածել թագավորության: Ֆրիդրիխը խոստացավ Լևոնին թագ ուղարկել՝ Կիլիկիայից իր հերթին խնդրելով պարեն գերմանական գործի համար: Սակայն կայսրը շուտով խեղդվեց Սելևկիա գետում: Լևոնը կապեր հաստատեց նաև խաչակիրների մյուս առաջնորդի՝ անգլիական թագավոր Ռիչարդ Առյուծասրտի հետ և նրան օգնեց 1191թ.

Բյուզանդիայից գրավելու Կիպրոս կղզին, ուր սկսեցին իշխել ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյանները: Միաժամանակ լուրջ քայլեր արվեցին Անտիոքի դքսությանը թուլացնելու և այն Կիլիկիայից կախվածության մեջ ձգելու ուղղությամբ: 1193թ. Լևոն II-ը Կաստիմ բերդում ճարպկորեն գերեց Անտիոքի դուքս Բոհեմունդին՝ նրանից պահանջելով իրեն վերադարձնել նախկինում Կիլիկիայից խլված հողերը: Բոհեմունդը ստիպված համաձայնվում է և Լևոնի հետ կնքում հաշտություն, որով հրաժարվում է Կիլիկիայի նկատմամբ ավագության իրավունքից և զրաված տարածքներից: Բոհեմունդի որդին՝ Ռայմունդը ամուսնանում է Լևոնի եղբոր աղջկա՝ Ալիծի հետ, պայմանով, որ նրանցից ծնված զավակը պետք է դառնար թագավոր: Այդպես Լևոնը նպատակ ուներ միավորել Կիլիկիան և Անտիոքը: Ուստի այդ ամուսնությունից ծնված Ռուբեն-Ռայմունդը որդեգրվեց Լևոն II-ի կողմից՝ իբրև երկու պետությունների գահաժառանգ:

Լևոնը շարունակեց բանակցություններ վարել Բյուզանդիայի և եվրոպական երկրների գահակալների, ինչպես և Դոմինիկյան քաղաքային կախարհի հետ՝ արքայական թագ ստանալու համար: 1196թ. բյուզանդական կայսր Ալեքսեյը, ապա նաև Դոմինիկյան ողջունեցին այդ քայլը: Վերջիններս դրանով փորձում էին իրենց ազդեցությանը ենթարկել հայոց եկեղեցուն: Լևոնը, լավ հասկանալով այդ մտադրությունները, առերես համաձայնեց՝ թագ ստանալու նպատակով: Համանման համաձայնությունը՝ թագ ուղարկելու մասին ձեռք բերվեց նաև գերմանական նոր կայսր Հենրիխ I-ի հետ:

+ 1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում, հանդիսավոր պայմաններում Լևոն II-ը հռչակվեց Կիլիկիայի թագավոր: Ժամանակակից պատմիչները շատ բարձր են գնահատում այս իրադարձությունը՝ նրա մեջ տեսնելով հայոց պետականության վերականգնման իրողություն:

Լևոն II-ը 1202թ. սանձահարեց Լամբրոն ամրոցի տերերին՝ Հեթում-յաններին և ստիպեց ենթարկվել իրեն: Երկրի սահմանները ամրապնդելու նպատակով ամրապնդվեց բանակը, կարևորագույն լեռնանցքներն ու ճանապարհները վերցվեցին հսկողության տակ: Լևոնը կարգի բերեց պետական ապարատը, դատարանը, ստեղծեց գործակալություններ՝ սպարապետություն (գունդստաբլություն), սպասալարի (հեծելազորի հրամանատար), մարաջախտի (բանակի պարենի մատակարար), մաքսապետի (ֆինանսական գործերի տնօրեն), ջանցլերի (արքունի քարտուղար) և այլ պաշտոններ: Կիլիկիան կնքեց առևտրական պայմանագրեր հռչակված ծովային վաճառաշահ Ջենովայի ու Վենետիկի

հետ: Լևոնը կտրեց ոսկե դրամներ «Հայոց թագավոր» մակագրությամբ: Պատահական չէ, որ նա պատմության մեջ մնաց «Մեծագործ» անունով: Կյանքի վերջին շրջանում Լևոն II-ը կրկին ջանքեր գործադրեց Անտիոքի դքսությունը Կիլիկիային ենթարկելու ուղղությամբ: Ռայմունդի մահից հետո Անտիոքում գահն անցավ Լևոնի որդեգիր Ռուբեն-Ռայմունդին: Սակայն վերջինիս հորեղբայր Բոհեմունդ Միակնանին կարողանում է զավթել գահը: Կիլիկիայի թագավորը պաշտպանության տակ է առնում իր որդեգրին և Անտիոքից դուրս վտարում Բոհեմունդ Միակնանուն: Բայց շուտով նույն Ռուբեն-Ռայմունդը քշեմանում է իր հովանավորի՝ Լևոն II-ի հետ, որի պատճառով 1217թ. զրկվում է միացյալ գահաժառանգի իրավունքից: Նոր կտակով Կիլիկիայի գահն անցնելու էր Լևոնի երկրորդ ամուսնությունից ծնված դստերը՝ Ջաբելին: Լևոն Մեծագործը մահանում է 1219թ. մայիսի 2-ին՝ իր հաջորդին թողնելով ուժեղ թագավորություն:

36. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Լևոն II-ի մահից հետո Կիլիկիայի գահի նկատմամբ աշխուժացան տարբեր հավակնորդների ոտնձգությունները: Լևոնը արու զավակ չուներ և ըստ կտակի գահը պետք է անցներ դուստր Ջաբելին: Վերջինս մանկահասակ էր, ուստի երկիրը որոշ ժամանակով կառավարում էին Լևոնի նշանակած խնամակալները՝ պայլերը: Գահը զավթելու Ռուբեն-Ռայմունդի՝ Անտիոքի դքսի ժառանգի և Լևոնի ազգականի փորձերը ձախողվեցին սպարապետ /գունդստաբլ/ Կոնստանդինի ջանքերով: Ռուբեն-Ռայմունդը ձերբակալվեց և բանտում մահացավ: Կոնստանդին Գունդստաբլը և հայ իշխանները թագավորական գահն ամրապնդելու նպատակով կազմակերպեցին Ջաբելի և Անտիոքի դքսի ժառանգ Ֆիլիպի ամուսնությունը: Սակայն Ֆիլիպը, որից սպասվում էին երկու երկրների միավորման լուրջ քայլեր, ընդհակառակը փորձեց Կիլիկիան դարձնել Անտիոքի կցորդը, արքունիքը լցրեց օտար իշխաններով, խաչակիրներով ու կաթոլիկ հոգևորականներով: Այդ ժամանակ հայ ավագանին գահընկեց արեց Ֆիլիպին: Ջաբելը կառավարեց միայնակ մինչև 1226թ.:

1226թ. մեծ իշխանությունից օգտվող Կոնստանդին Գունդստաբլը, հայ իշխանների համաձայնությամբ Ջաբելին ամուսնացրեց իր որդու՝ Հեթումի հետ: Այսպես գահն անցավ նոր դինաստիայի՝ Հեթումյանների ձեռքը: Այս ամուսնությամբ վերջ տրվեց երկու հզոր տոհմերի՝

Ռուբինյանների ու Չեթունյանների հակամարտությանը: Կոնստանդին Գունդստաբլը դարձավ թագավորահայր և ավագ պարոն, իսկ որդիներից Չեթունը՝ թագավոր, Սմբատը՝ գունդստաբլ /սպարապետ/:

Չեթուն I-ի գահակալումը /1226-1270/ համընկավ մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանին: Բաչուի գլխավորությամբ մոնղոլները ներխուժեցին Փոքր Ասիա, ջախջախեցին Իկոնիայի սուլթանությանը: Կիլիկիան, մոնղոլների հետ չբախվելու համար, հրաժարվեց օգնել սելջուկներին: Չեթունը շուտով դիմեց Բաչուին դաշինք կնքելու համար: Մոնղոլները չմտան Կիլիկիա և երկիրը փրկվեց ավերածությունից: Մոնղոլների հետ դաշինքի կնքումը նախապատրաստելու նպատակով Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորում ուղարկվեց Սմբատ Գունդստաբլը 1246թ.: Չայերի հետ դաշինք կնքելու մեջ շահագրգռված էին նաև մոնղոլները: Նրանց անհրաժեշտ էր դաշնակից Ասորիքը և Եգիպտոսը գրավելու համար: Շուտով բուն Չայաստանի վրայով Մոնղոլիա մեկնեց Չեթունը և 1254թ. Մանգու մեծ խանի հետ կնքեց հայ-մոնղոլական դաշինքը: Ըստ այդ պայմանագրի Կիլիկիան մոնղոլներին պետք է վճարեր քիչ քանակությամբ հարկ և օգներ նրանց արշավանքներում: Մոնղոլներն էլ իրենց հերթին պարտավորվում էին պաշտպանել Կիլիկիայի սահմանները օտար հարձակումներից: Մոնղոլներն իրավունք չունեին միջամտելու հայերի ներքին գործերին: Շուտով մոնղոլները սկսեցին իրենց արշավանքները Ասորիք և Չեթունը պայմանագրի համաձայն նրանց տրամադրեց սահմանափակ քանակությամբ զորք: Սակայն Եգիպտոսում հաստատված թուրք զինվորականության՝ մամլուքների առաջնորդ Բեյբարսը 1260թ. պարտության մատնեց մոնղոլներին: Շատ չանցած՝ 1266-ին Բեյբարսի զորքերը ներխուժեցին Կիլիկիա: Մարտում սպանվեց Չեթունի որդին՝ Թորոսը, իսկ մյուս որդին՝ Լևոնը, շատերի հետ գերի ընկավ: 1266թ. Սառի վայրում հայերի կրած պարտությունից հետո երկիրը մնաց անպաշտպան, և թշնամին ներխուժեց Սիս և այլ քաղաքներ: Երկու տարի անց հայերին հաջողվեց մամլուքներին դուրս վտարել երկրից և նրանց հետ կնքել հաշտություն: Չեթունը զիջեց սահմանամերձ որոշ շրջաններ, իսկ մամլուքները գերությունից ազատեցին արքայազն Լևոնին:

Մամլուքների դեմ պայքարը շարունակվեց Լևոն III-ի օրոք /1270-1289/: 1285թ. մամլուքները նոր արշավանք կատարեցին Կիլիկիայի վրա: Նրանց հաջողվեց գրավել և կողպատել Այաս հարուստ նավահանգստային քաղաքը: Լևոնը հարկադրված էր հաշտություն կնքել՝ պարտավորվելով Եգիպտոսին տարեկան վճարել 200 հազ.ռուբ. գումար և 10 հազ. ձող

երկաթ:

1299թ. մոնղոլները Ասորիքը գրավելու մի նոր ճիգ գործադրեցին: Մոնղոլական Ղազան խանին օգնում էին Վրաստանի, Չայաստանի, ինչպես և Կիլիկիայի զորքերը: Սկզբում մոնղոլներն ունեցան որոշ հաջողություններ, սակայն Ղամասկոսի ճակատամարտում ծանր կորուստներ կրեցին և նահանջեցին: Չայ-մոնղոլական դաշինքը արդեն իրեն սպառեց և վտանգավոր դարձավ Կիլիկիան Չայաստանի համար: Մամլուքների դեմ պայքարելու համար ուժեղացավ քրիստոնյա Եվրոպայից և հատկապես Չռոմի պապից օգնություն ստանալու հայ իշխող դասի ձգտումը: 14-րդ դարի սկզբին Կիլիկիան ի հայտ բերեց թուլացման նշաններ:

Երկրի իշխանները խորացնում էին ճգնաժամը իրենց երկպառակտչական գործողություններով: Մոնղոլները թուլացել էին և չէին կատարում իրենց դաշնակցային պարտավորությունները: Այս պայմաններում շատերը փրկությունը տեսնում էին Չռոմի պապից ստացվելիք օգնության մեջ և առաջարկում էին նրա հետ կնքել ունիա՝ միություն, այսինքն ընդունել կաթոլիկություն: Այս ուղղության ներկայացուցիչները ստացան ունիթորներ կամ լատինասերներ անունը: Ունիային դեմ հայ իշխաններն ու հոգևորականները՝ հակաունիթորները դիմադրում էին և ձգտում պահպանել հայ եկեղեցու ինքնուրույնությունը, հրաժարվում կաթոլիկությունից: Ունիթորների ու հակաունիթորների միջև պայքարը ավելի խորացրեց ճգնաժամը:

1307թ. Սիսում, 1309 և 1316 թվականներին Ադանայում գումարված ժողովները լատինասերների ճնշման տակ ընդունեցին Չռոմի պապի առաջարկը օգնություն ստանալու դիմաց կաթոլիկություն ընդունելու մասին: Դրանից հետո սպասված օգնությունը չստացվեց: Արևմուտքին ուղղված դիմումները միայն գրգռեցին հարևան մահմեդական պետություններին Կիլիկիայի դեմ: 1320թ. մամլուքները նորից մտան Կիլիկիա: Թշնամին գրավեց Այաս նավահանգիստը: 1335թ. արշավանքի ժամանակ ավերվեցին նաև Մամեստիան, Ադանան, Տարսոնը: 1337թ. կնքված հաշտությամբ Եգիպտոսին անցան բազմաթիվ բերդեր և Այաս քաղաքը, որը Կիլիկիայի ծովային դարպասն էր: Ցավոք, այս քանից հետո էլ լատինասեր թագավորները չիրաժարվեցին Արևմուտքին դիմելու իրենց սխալ քաղաքականությունից:

1343թ. լատինասերները սպանեցին Լևոն V-ին և գահը հանձնեցին ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին, որոնք միայն մայրական գծով էին Չեթունյաններ: Լուսինյաններից Կոնստանդին IV-ը /1345-1363/

փորձեց կայունացնել երկրի վիճակը, սակայն հաջողություն չունեցավ: Այժմ ծամուլուքներից բացի Կիլիկիայի վրա սկսեցին Փոքր Ասիայից հարձակումներ գործել թուրքմենական ցեղերը:

1350-60-ական թթ. Կիլիկիան կորցրեց Դաշտային մասը՝ իր նավահանգիստներով: 1370թ. մամլուքյան 60 հազ. բանակը ներխուժեց երկրի խորքը: Մամլուքներին օգնում էին թուրքմեններն ու Հալեպի էմիրության զորքերը: Հայերը տաղանդավոր զորավար Լիպարիտի գլխավորությամբ համառ դիմադրություն կազմակերպեցին Սիս մայրաքաղաքում: Պաշարները սպառվում էին, վիրավորվել էր կիլիկյան վերջին թագավոր Լևոն VI-ը, թշնամու կողմն էին անցել ֆրանսիական զորքերը: Անհավասար կռվում ընկավ Լիպարիտ զորավարը: Քաղաքի պաշտպանները ստիպված անձնատուր եղան: Լևոն VI-ը գերվեց և տարվեց Կահիրե: Այսպես 1375թ. ապրիլին՝ Սիս մայրաքաղաքի անկումով կործանվեց Կիլիկիայի հայկական պետությունը: Դեռ երկար ժամանակ հայ իշխանները շարունակեցին առանձին շրջաններում պահպանել իրենց ինքնուրույնությունը: Սակայն օտարի ծանր լուծը շատերին ստիպեց թողնել երկիրը և հեռանալ տարբեր երկրներ:

37. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆՂՈՒԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՍԱՆԱԿԱՇԻՋԱՆՈՒՄ

1206թ. Սիբիրի և Չինաստանի միջև ընկած քոչվոր մոնղոլական ցեղերի ժողովը՝ մեծ խուրալը Օնոն գետի ավազանի ցեղապետերից Տիմուչինին ընտրեց խան Չինգիզ խան անունով: Վերջինս շուտով սկսեց իր աշխարհակալ նվաճումները: 1210-ական թթ. մոնղոլները ներխուժեցին Չինաստան և Սիբիրի հարավային շրջաններ: 1219թ. Չինգիզ խանը մտավ Միջին Ասիա և պարտության մատնեց հորեզմի շահ Մուհամեդին, որի որդին՝ Ջալալեդդինը, նահանջելով, պայքարը շարունակեց Իրանում և Անդրկովկասում՝ իր հերթին, կողոպտելով ու ջարդելով տեղի բնակչությանը: 1220թ. մոնղոլները ներխուժեցին Անդրկովկաս, որոնց դեմ դուրս եկան վրաց թագավոր Գեորգի Լաշան և Իվանե Ջաքարյանը՝ հայ-վրացական միացյալ ուժերով: Ճակատամարտը տեղի ունեցավ Կոտմանի դաշտում: Մոնղոլները կիրառեցին պայքարի նոր ձև. կազմակերպեցին կեղծ նահանջ, իսկ երբ հայ-վրացական ուժերն անցան հակազորի, հարվածեցին թիկունքից՝ թաքստոցում գտնվող ուժերով: Անակնկալի՝ վաճ Գեորգիի զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին: Այնուհետև,

շրջանցելով Ջաքարյանների տիրույթներն ու Վրաստանը, մոնղոլներն անցան Հյուսիսային Կովկաս և Ռուսիա: Սակայն քոչվորներին շուտով փոխարինեց Ջալալեդդինը: Նա մոտ մեկ տասնամյակ ավերածություններ կատարեց Անդրկովկասում:

Վերոհիշյալ հետախուզական արշավանքից հետո մոնղոլները նորից հայտնվեցին 1231թ., երբ հետապնդելով Ջալալեդդինին, կարողացան նրան ջախջախիչ պարտության մատնել: Ապա մոնղոլներն անցան Վասպուրական, ավերեցին շատ բնակավայրեր: 1232թ. նրանք նորից վերադարձան Միջին Ասիա՝ ետդարձի ճանապարհին ավերելով Գանձակ քաղաքը:

1236թ. մոնղոլական 30 հազ. բանակը, բազմաթիվ քոչվոր ցեղերի ուղեկցությամբ, Չարմաղանի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան: Այդ ժամանակ Վրաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը, իսկ Աղվանքն ու Ջաքարյան Հայաստանը խիստ մասնատված էին և բռնկված ներիշխանական երկպառակություններով: Պատահական չէ, որ թշնամին լուրջ ու կազմակերպված դիմադրության չհանդիպեց: Քաջ ծանոթ լինելով Անդրկովկասի իրավիճակին՝ մոնղոլները բաժանեցին գործը ջոկատների, որոնք իրենց հրամանատարների՝ նոյնների գլխավորությամբ սկսեցին հպատակեցնել երկրամասը: Հայ իշխաններից շատերը հեռացան Վրաստան, իսկ մյուսները հայտնեցին իրենց հպատակությունը: Լոռե և Շամքոր քաղաքները գրավելուց հետո մոնղոլները պաշարեցին Անին: Թշնամին պատվիրակներ ուղարկեց քաղաքի բնակիչների մոտ պահանջելով անձնատուր լինել: Վրդոված անեցիները հարձակվեցին մոնղոլ պատվիրակների վրա և սպանեցին նրանց: Գազազած թշնամին գործի դրեց պաշարողական մեքենաները և, քանդելով քաղաքի պարիսպները, ներխուժեց անպաշտպան թաղամասերը: Բնակչության մի մասը կարողացավ փախչել, իսկ մյուս մասը հիմնականում սրի քաշվեց կամ ստրկության վաճառվեց: Շուտով նույն բախտին արժանացան նաև Կարսը, Դվինը և այլ քաղաքներ: Մոնղոլական բանակին կրնկակոխ ուղեկցող քոչվոր ցեղերը շտապեցին զավթել երկրի լավագույն հողերը:

1242-1243թթ. մոնղոլական զորքերը շարժվեցին դեպի երկրի արևմտյան շրջանները, որոնք այդ ժամանակ գտնվում էին Իկոնիայի սուլթանության հսկողության տակ: Ճանապարհին պաշարվեց Կարինը, որտեղ կենտրոնացել էր շրջակա խաղաղ բնակչության մի ստվար հատված: Մոնղոլներն այս արշավանքին հարկադրաբար մասնակից էին դարձրել նաև վրացական ու հայկական ջոկատներ: Վերջիններս, տեղակայված լինելով նրանց բանակի առաջին գծում, ստիպված կռվում

էին իրենց հայրենակիցների դեմ և տալիս մեծ կորուստներ: Կարինը դիմադրեց շուրջ երկու ամիս և ընկավ թշնամու ձեռքը: Բնակչության զանգվածային կոտորածները կրկնվեցին նաև այստեղ: 1243թ. մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և գրավեցին Երզնկան, Տևրիկը, Կեսարիան և Սեբաստիան: Հասնելով Կիլիկիայի սահմաններին՝ մոնղոլները կանգ առան և 1254թ. դաշնակցային պայմանագիր կնքեցին կիլիկյան հայերի հետ: 1244թ. մոնղոլներն իրենց ենթարկեցին նաև Հայաստանի հարավային շրջանները՝ Տարոնը, Վասպուրականը և Աղձնիքը:

Մոնղոլական լուծը աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Լինելով քոչվոր անասնապահներ՝ նրանք բերրի դաշտավայրերն ու հատկապես քաղաքներն սկսեցին վերածել արոտավայրերի: Կարճ ժամանակում հսկայական ծաղկուն քաղաքներ, այգիներ, բանջարանոցներ վերածվեցին արոտավայրերի: Նորից վերսկսվեց բնակչության զանգվածային արտագաղթը:

Նվաճված երկրների բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: 16-ից մինչև 50 տարեկան տղամարդիկ դրվեցին հարկերի տակ: Բնակչությունը պարտավոր էր նաև զանազան պարիակներ կատարել: Հպատակ ժողովուրդները պարտավոր էին նաև կազմելու զինական ջոկատներ, որոնց ուղարկում էին ամենավտանգավոր ճակատները:

Նվաճումների սկզբնական շրջանում հայ եկեղեցու նկատմամբ նվաճողները մեղմ քաղաքականություն էին վարում: Սակայն, երբ 13-րդ դարի վերջին մոնղոլներն ընդունեցին իսլամը, սկսվեցին նաև կրոնական հալածանքները: Երբեմնի վաճառաշահ Անի, Դվին, Արճեշ և այլ քաղաքներ վերածվեցին ավանների:

Անտանելի օտար լուծը զայրույթի ալիք առաջացրեց հպատակ ժողովուրդների շրջանում: 1249թ. հայ և վրաց իշխանները վրաց Դավիթ VI թագավորի գլխավորությամբ սկսեցին նախապատրաստվել ապստամբության: Քավառներ ուղարկվեցին ջոկատներ: Լոռիում հատկապես ակտիվ էին Ջաքարյանները: Սակայն մոնղոլները կարողացան բացահայտել ապստամբությունը և ճնշել այն:

1259թ. վրաց Դավիթ VI-ի ղեկավարությամբ բռնկվեց նոր ապստամբություն, որի պատճառը հարկերի բարձրացումն էր և հայ-վրացական ջոկատները Եգիպտոս՝ մամլուքների դեմ ուղարկելու մոնղոլների որոշումը: Հուզումներն ընդգրկել էին Արևելյան Վրաստանը, Շիրակը, Արցախը, Լոռին: Հուլիսից խանը դաժանորեն ճնշեց ապստամբությունը: Հայ ղեկավարներից խաչենի տիրակալ Հասան-

Ջալալը և Ջաքարե Ջաքարյանը /ամիրսպասալար Ջաքարեի թուղ/ մահապատժի ենթարկվեցին:

Մոնղոլները Հայաստանը մտցրեցին էլղանություն վարչամիավորի մեջ: Շարունակվեցին հայ իշխանական տների թուլացման քայլերը, նրանց միմյանց դեմ օգտագործելու փորձերը: Խիստ թուլացան Վաչուտյաններն ու Պռոշյանները: Համեմատաբար իրենց դիրքերը պահպանեցին Օրբելյանները Սյունիքում, Դոփյանները՝ Վերին Խաչենում /այժմ Մարտակերտի և Քելբաջարի շրջաններ/, Ագիզբեկյանները՝ Արայի լեռան շրջանում, Հասան-Ջալալյանները՝ Ներքին Խաչենում: Ջաքարյանների շառավիղները 1266թ. Գուգարքի Ջավախք գավառում, Ախալցխայի շրջակայքում, Տայքի գգալի մասում ստեղծեցին հայ-վրացական մի իշխանություն՝ Սամցխե-Ջավախք անունով, որը պահպանեց իր անկախությունը մոնղոլական պետությունից և գոյատևեց մինչև 16-րդ դարի վերջը:

38. ՀԱՅԱՍՏԱՆԸ 14- 15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

14-րդ դարի առաջին տասնամյակներին մոնղոլական տիրապետությունն ի հայտ բերեց մասնատման առաջին նշանները: 1344թ. էլղանությունը քայքայվեց և նրա հիմքի վրա ստեղծվեցին բազմաթիվ իշխանապետություններ: Նորից ակտիվություն հանդես բերեցին հայ իշխանական տները, Օրբելյանները՝ Սյունիքում, Վաչուտյանները՝ Արագածոտնում, Պռոշյանները՝ Վայոց Ձորում, Դոփյանները՝ Խաչենում:

Դեռևս մոնղոլական նվաճումների ժամանակաշրջանում Հայաստանում հաստատվել էին թուրքական ծագում ունեցող բազմաթիվ նոր ցեղեր: Մոնղոլական տիրապետության թուլացման շրջանում հատկապես ուժեղացավ սելջուկ-թուրքերին ազգակից թուրքմենական ցեղերի ներհոսքը Հայաստան: Նրանցից ակ-կոյունլու /ակ-թուրքերեն նշանակում է սպիտակ: Ակ-կոյունլու անունը ստացել էին սպիտակ գույնի ոչխարներ պահելու համար/ ցեղերը հաստատվեցին Հայաստանի հարավում՝ Մոկս և Աղձնիք աշխարհներում, իսկ կարա-կոյունլուները /կարա՝ սև/ բնակվեցին Վասպուրականում և Տարոնում: 1378թ. կարա-կոյունլուների առաջնորդ Կարա-Մահմադը և որդին՝ Կարա-Յուսուֆը հիմնադրեցին իրենց իշխանապետությունը: Ակ-կոյունլուների առաջնորդ Օսմանը դարձավ մեկ այլ իշխանապետության հիմնադիրը՝ Դիարբեքի

քաղաքի շրջակայքում: Թուրքմենական այս ցեղերը գտնվում էին մշտական հակամարտությունների մեջ, որից խիստ տուժում էր տեղի հայ բնակչությունը: Այս ամենին 14-րդ դարի վերջին տասնամյակներին գումարվեցին Լենկթեմուրի ավերիչ ասպատակությունները:

Միջինասիական զորապետ Լենկթեմուրը / կաղ Թեմուր / 14-րդ դարի վերջին Միջին Ասիայում ստեղծել էր մի ընդարձակ պետություն՝ Մամարղանո կենտրոնով: Պարսկաստանի մեծ մասը գրավելուց հետո նա 1386թ. ներխուժեց Չայաստան: Սյունիքի վրայով թշնամին մտավ Առարատյան դաշտ: Կողբ գյուղի բնակիչները Մարտիրոս տանուտերի գլխավորությամբ Լենկթեմուրի հրոսակախմբերին պարտության մատնեցին: 1387թ. արշավանքները դեպի Սյունիք կրկնվեցին: Այդ տարում թեմուրականները շարժվեցին հարավ և պաշարեցին Վան քաղաքը, որը 25 օր հերոսաբար դիմադրեց: Գազազած թշնամին գրավեց քաղաքը և դաժան հաշվեհարդար տեսավ պաշտպանների նկատմամբ: Գերի ընկած կանանց ու երեխաներին Լենկթեմուրի հրամանով վաճառքի հանեցին, իսկ մնացած բնակիչներին ցած գլորեցին բերդի պարիսպներից: Չայ պատմիչի վկայությամբ վայր նետվածների թիվն այնքան մեծ էր, որ վերջին ընկածներն արդեն չէին մեռնում: Լենկթեմուրի արշավանքները կրկնվեցին 1394-96թթ. և 1400-1402թթ.: 1402թ. նրա դեմ դուրս եկավ Օսմանյան սուլթան Բայազիդ I-ը: Անգորայի ճակատամարտում թեմուրականները հաղթանակ տարան: Գերի ընկավ նաև Բայազիդը՝ բազմաթիվ թուրք զինվորների հետ: Շուտով մահացավ Լենկթեմուրը և բազմաթիվ ժողովուրդներ ազատվեցին այդ բռնակալի տիրապետությունից:

Լենկթեմուրի մահից հետո Չայաստանում նորից գլուխ բարձրացրին ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերը: Նրանք պայքար ծավալեցին Լենկթեմուրի հաջորդների՝ թեմուրականների դեմ: Կարա-կոյունլուների առաջնորդ Կարա-Յուսուֆը իր կողմն է գրավում թեմուրականների տիրապետությունից դժգոհ մի խումբ կառավարիչների և, 1408թ. հաղթելով Լենկթեմուրի որդուն՝ Միրանշահին, իր տիրապետությունն է հաստատում Չայաստանի ու Ատրպատականի վրա: Թովմա Մեծփեցի պատմիչի վկայությամբ Կարա-Յուսուֆի ժամանակ երկիրը շունչ քաշեց և սկսվեց համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան: Սակայն այս վիճակը երկար չի պահպանվում և 1420թ. կատաղի պայքար է սկսվում կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների միջև: Փոփոխական հաջողություններով այս արյունալի հակամարտությունը շարունակվում է երկար ժամանակ:

Կարա-կոյունլուները զգալիորեն ուժեղանում են Ջհանշեի օրոք: Վերջինս, հենվելով Չայաստանում տեղի հայ բնակչության վրա, կարողացավ սանձահարել անհնազանդ ցեղերին և վերահաստատել խաղաղությունը: Ջհանշեն Չայաստանում պահպանված իշխանական տների շառավիղներին տիրույթներ տվեց և նրանցում կառավարելու իրավունք շնորհեց: Պատահական չէ, որ շուտով Սևանա լճի ավազանում, Վայոց Ձորում, Արցախում, Սյունիքում, Գուգարքում հանդես եկան հայ մելիքների իշխանություններ: Առևտրին զարկ տալու նպատակով առևտրական մայրուղիների վրա ընկած Ջուղա, Ագուլիս քաղաքներին տրվեցին լայն հնարավորություններ: Ջհանշեի օրոք տեղի ունեցավ նաև մի կարևոր իրադարձություն: Այրարատ աշխարհի տարածքում կազմավորվեց վարչական մի միավոր, որի կենտրոն դարձավ Երևանը: Վերջինս հետզհետե սկսեց վերածվել Արևելյան Չայաստանի քաղաքական, վարչական ու տնտեսական կենտրոնի:

1468թ. ակ-կոյունլուները պարտության են մատնում կարա-կոյունլուներին և զավթում Չայաստանի զգալի մասը: Ակ- կոյունլուների առաջնորդ Ռուզուն Չասանը շուտով բախվեց օրեցօր ուժեղացող օսմանյան թուրքերի հետ, որոնց դեմ պայքարելու համար նույնիսկ փորձեց ստանալ Եվրոպայի աջակցությունը: Իտալիա ուղարկված պատվիրակությունը, որի կազմում էր նաև հայ վաճառական Միրաքը, չի կարողանում օսմանցիների դեմ դաշինք կնքել որևէ երկրի հետ: Գահի շուրջ մղվող պայքարն ու օսմանցիների հարվածները 1502թ. կործանում են ակ- կոյունլուների տիրապետությունը:

15-րդ դարում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից էր կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սիսից Էջմիածին: Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո այլևս հոգևոր աթոռն այնտեղ թողնելն ավելորդ էր: Անհրաժեշտ էր մայր հայրենիքում, որը գտնվում էր օտար լծի տակ, ստեղծել պետականությանը փոխարինող մի հաստատություն, որպիսին կարող էր լինել հայ առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոնը: Այս հանգամանքը լավ գիտակցելով 1440թ. Թովմա Մեծփեցին և Յովհաննես Յերմոնեցին դիմեցին Կիլիկիո կաթողիկոս Գրիգորին՝ աթոռը հայրենիք տեղափոխելու համար: Սակայն ստացվեց մերժում, և 1441թ. Էջմիածնում գումարված ժողովը 300 հայ հոգևորականների մասնակցությամբ որոշում կայացրեց կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերականգնելու մասին. Կիրակոս Վիրապեցին դարձավ կաթողիկոս: Այսպես Կիլիկայում մնաց ևս մեկ կաթողիկոս: 1446թ. Կարապետ Եվրոկացին հիմնեց Կիլիկիո

կաթողիկոսությունը: Հայ եկեղեցին իր ճյուղերն ուներ երուսաղեճում,
Կ.Պոլսում, Ադթամարում, Գանձասարում:

39. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 9-14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Երկրի տնտեսական վերելքը, քաղաքների և քաղաքային կյանքի առաջադիմությունը 9-13-րդ դ. /մինչև մոնղոլական տիրապետությունը/ նպաստավոր պայմաններ էին ստեղծել հայկական մշակույթի տարբեր բնագավառների զարգացման համար: Բուն Հայաստանում և Կիլիկիայում վանքերին կից բացվել էին նախնական և բարձր տիպի դպրոցներ: Զաղաքներում, մանավանդ Կիլիկիայում, կային նաև աշխարհիկ դպրոցներ: Երբեմն էլ երեխաներին գրել, կարդալ էին սովորեցնում տներում:

Տարրական դպրոցներում սովորեցնում էին լեզու, գրել, կարդալ, թվաբանություն, երաժշտություն: Բարձր տիպի դպրոցները կոչվում էին վարդապետարան, որտեղ ուսուցումը տևում էր 10-12 տարի: Վարդապետարաններում դասավանդում էին զանազան գիտություններ: Հայտնի էին Հաղպատի, Սանահինի, Անիի, Տաթևի, Կեչառիսի, Գեղարդի, Գռչավանքի, Հաղարծնի, Նարեկավանքի և այլ վայրերի վարդապետարանները:

1280թ. վայոց ձորում հիմնադրվեց Գլաձորի համալսարանը, որը դարձավ գիտության և մշակույթի խոշոր կենտրոն: Նրա ղեկավարն էր խոշոր գիտնական, փիլիսոփա և քերական Եսայի Նչեցին: Գլաձորի համալսարանի փակվելուց հետո, 1373թ. Հոփհան Ռոտմեցի է հիմնադրեց Տաթևի համալսարանը, որը գործեց մինչև 1412թ.:

Միջին դարերում զարգանում էին պատմագիտությունը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը, տիեզերագիտությունը, բժշկագիտությունը և այլն:

Հայ պատմիչներն իրենց երկերում շարադրում էին ինչպես հայ, այնպես էլ հարևան ժողովուրդների պատմությունը: 10-րդ դարի խոշոր պատմիչներն էին Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին /Պատմություն հայոց/, Թովմա Արծրունին /Պատմություն տանն Արծրունյաց/, Ստեփանոս Տարոնեցին /Պատմություն տիեզերական/, իսկ 11-րդ դ.՝ Արիստակես Լաստիվերտցին /Պատմություն/: 12-13-րդ դդ. պատմիչներից հայտնի են Մատթեոս Ուռեայեցին /Ժամանակագրություն/, Կիրակոս Գանձակեցին /Պատմություն/, Ստեփանոս Օրբելյանը /Պատմություն նահանգին Սիսական/, որոնց

աշխատություններն աչքի են ընկնում փաստական նյութի հարստությամբ: Կիլիկիայում հայտնի էին Սմբատ Գունդստաբլ և Հեթում պատմիչները:

Զարգացման բարձր մակարդակի հասավ հայ փիլիսոփայական միտքը: Խոշոր փիլիսոփաներ էին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Իմաստասերը: Վերջինս նաև մաթեմատիկոս էր, բնագետ և տոմարագետ: Կիլիկիայի անվանի փիլիսոփաներից էր Վահրամ Բաբունին: Տաթևի համալսարանի հիմնադիր, փիլիսոփա Հովհան Ռոտմեցու մահից հետո համալսարանը գլխավորեց Գրիգոր Տաթևացին, որը իր ժամանակի աչքի ընկնող մտածողներից էր, արժեքավոր աշխատությունների հեղինակ:

Միջնադարյան Հայաստանի խոշորագույն օրենսգետը Մխիթար Գոշն էր: 12-րդ դ. վերջերին նա ստեղծեց իր նշանավոր «Ղատաստանագիրքը», որի օրինակով Սմբատ Գունդստաբլը կազմեց իր Ղատաստանագիրքը, որը գործածվում էր Կիլիկիայում: Մեծ գիտելիքների տեր, հայտնի բժիշկ էր Մխիթար Հերացին՝ «Զերմանց մխիթարություն» կոչվող մեծարժեք աշխատության հեղինակը: Ժողովրդական բանահյուսության ամենանշանավոր ստեղծագործությունը «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսն էր, որը ձևավորվեց 9-10-րդ դարերում: Նրանում արտացոլված է հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական և առհասարակ օտար նվաճողների դեմ:

10-14-րդ դդ. բուռն զարգացում ապրեց նաև գեղարվեստական գրականությունը: Գրիգոր Նարեկացին ստեղծեց «Մատյան ողբերգության» հանճարեղ պոեմը: Նա այն միտքն է հայտնում, որ մարդը պիտի ազատվի իր երկրային մեղքերից, այնքան մաքրվի, բարձրանա, որ մերձենա աստծուն: Այդ պոեմը, ինչպես և Նարեկացու սքանչելի տաղերն իրենց բարձր արվեստով եղան միջնադարյան հայ բանաստեղծության անգերազանցելի գլուխգործոցները: Ներսես Շնորհալին գրել է «Ողբ Եղեսիո» պատմական բովանդակություն ունեցող պոեմը և մեծ թվով բանաստեղծություններ ու հանելուկներ՝ ինչպես մեծերի, այնպես էլ փոքրերի համար: Խոշոր բանաստեղծ Ֆրիկը բողոքում, ըմբոստանում էր աշխարհում տիրող անհավասարության, անարդարության, աշխատավորների ճնշման ու շահագործման դեմ, խարազանում էր օտար նվաճողների բռնություններն ու կեղեքումները:

12-13-րդ դ. հայ գեղարվեստական գրականության մեջ առաջացավ մի նոր բնագավառ՝ առակագրությունը, որի խոշորագույն ներկայացուցիչներն էին Մխիթար Գոշն և Վարդան Այգեկցին: Գոշն իորինել է առակներ, իսկ Վարդան Այգեկցին առավելապես գրի է առել

ժողովրդական առակները, որոնք ունեն սոցիալական սուր բնույթ:

Հայ ժողովրդի ստեղծագործական տաղանդը փայլուն դրսևորում է գտել նաև ճարտարապետության բնագավառում, որն իր վերելքն ու ծաղկումն ապրեց 9-11-րդ և ապա 13-րդ դարերում: ճարտարապետական արվեստի զարգացման գլխավոր կենտրոնը Բագրատունիների մայրաքաղաք Անին էր, որտեղ մեծատաղանդ Տրդատ ճարտարապետը կառուցեց Անիի հռչակավոր Կաթողիկե մայր տաճարը, Ջվարթնոցի տիպի եկեղեցին և այլ շենքեր: Անին շրջապատված էր քարակերտ պարիսպներով: Միջնաբերդում կառուցվեց Բագրատունիների հսկա պալատը, քաղաքը զարդարվեց հասարակական և այլ շենքերով, որոնք աչքի էին ընկնում Անիին բնորոշ շքեղությամբ և նրբագեղությամբ: Փոքրիկ, բայց չքնաղ կոթողներ էին Հոփվի և Փրկչի եկեղեցիները: Անիի ճարտարապետական ոճը մեծ ազդեցություն գործեց նաև այդ ժամանակներում հիմնադրված Հաղպատի, Սանահինի, Տաթևի, Մարմաշենի, Կեչառիսի և այլ վանքերի ճարտարապետության վրա: Հոյակապ շենքեր կառուցվեցին Կարսում /Առաքելոց վանք- Միջին/ և մյուս քաղաքներում: Հայաստանի հարավում ճարտարապետական արվեստը մեծ հաջողություններ ունեցավ հատկապես Վասպուրականում: Այստեղ գործում էր մեծատաղանդ ճարտարապետ Մանվելը, որը կառուցել է նորատիպ ու շքեղ պալատներ: Հայ արվեստի հրաշալիք էր նրա կառուցած Սբ. Խաչ եկեղեցին Վանա լճի Աղթամար կղզու վրա: Սելջուկների տիրապետության ժամանակ ընդհատված շինարարական աշխատանքները նոր թափ ստացան Ջաքարյանների օրոք:

Հայկական արվեստի ամենահարուստ բնագավառներից մեկը մանրանկարչությունն էր՝ ձեռագիր գրքերի նկարազարդումը: Մեր նախնիները թողել են մեզ հազարավոր ձեռագրեր՝ անգնահատելի մի ժառանգություն: Հայկական մանրանկարչական արվեստն առանձնակի բարձր զարգացման հասավ Կիլիկիայում, որտեղ իրենց մեծ վարպետությամբ աչքի ընկան Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը և ուրիշներ: Խաչքարերի հայտնի վարպետ էր Մոմիկը, որը նաև մանրանկարիչ էր:

Միջնադարյան Հայաստանում զգալի զարգացում ունեցավ երաժշտական արվեստը: Հատուկ նշաններով խազերով զրանցվել են մեծ թվով հոգևոր երգեր, մեղեդիներ: Այսպիսով, 9-13-րդ դարերում հայ մշակույթը հասավ մի նոր բարձրության՝ հարստացնելով համաշխարհային մշակույթն ու քաղաքակրթությունը: Փաստորեն համաշխարհային վերածնունդը՝ մշակույթի ռենեսանսը Հայաստանում

ավելի վաղ էր սկսվել, քան եվրոպայում: Պարզապես այդ գործընթացն ընդհատվեց մոնղոլական արշավանքների ու թուրքմենական ցեղերի տիրապետության հետևանքով:

**~ 40. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԸ- ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ /16-17-րդ դարեր/:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

Միջին Ասիայից ներթափանցած թուրքական քոչվոր ցեղերից մեկի՝ օղուզների առաջնորդ Օսմանը 1299թ. Փոքր Ասիայում հիմնադրեց Օսմանյան պետությունը և իրեն հռչակեց սուլթան: Թուլացած Բյուզանդիան չկարողացավ դիմադրել օսմանցիներին և շուտով տանուլ տվեց իր տիրույթները ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Բալկանների զգալի մասում: 1453թ. նվաճելով մայրաքաղաք Կ.Պոլիսը՝ թուրքերը կործանեցին Բյուզանդական կայսրությունը:

1502թ. Իրանում /Պարսկաստան/ հաստատվեց Սեֆյան դինաստիան Արդաբիլ քաղաքի շրջակայքով: Սեֆյանները Իրանում կործանեցին ակ-կոյունլուների տիրապետությունը և շուտով ստեղծեցին Արևելքի ուժեղագույն պետություններից մեկը: Սեֆյան զինվորները կրում էին 12 շերտ կարմիր գույնի գլխարկներ, որի համար հայտնի էին կզլբաշներ /կարմրագլուխներ/ անունով: Սեֆյանների առաջնորդ Շահ Իսմայիլը, թուրքմենական ցեղերին ջախջախելուց հետո նախապատրաստվեց պատերազմի օսմանցիների դեմ: Պարսիկները ներխուժեցին Հայաստան: Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը 1512թ. մեծ զորքով դուրս եկավ պարսիկների դեմ, նրանց ծանր պարտության մատնեց Հալդրանի ճակատամարտում 1514թ. և գրավեց Թավրիզը: Որոշ ժամանակ անց Շահ Իսմայիլը կարողացավ օսմանցիներին դուրս քշել Իրանից: Այսպես սկսված թուրք-իրանական պատերազմները տևեցին ավելի քան մեկ դար, որից առաջին հերթին մեծապես տուժեցին հայերը: Այս շրջանը հայոց պատմության ամենածանր ժամանակաշրջաններից է:

Շահ Իսմայիլի մահից հետո Իրանում գահն անցավ նրա որդուն՝ Թահմասպին: 1550թ. նա մեծ բանակով հարձակվեց Թուրքիայի վրա: Մարտերն ընթանում էին Հայաստանի տարածքում: Թահմասպի բանակը ավերակների վերածեց Վանից մինչև Երզնկա և Կարին ընկած բնակավայրերը: 1554թ. օսմանցիները մտան Անդրկովկաս, ասպատակեցին Արարատյան դաշտը, Սյունիքը և Արևելյան Հայաստանի այլ շրջաններ:

1555թ. մայիսի 29-ին Ամասիայում կնքվեց թուրք-պարսկական հաշտության պայմանագիր, որով Չայաստանն առաջին անգամ բաժանվեց Օսմանյան թուրքիայի և Իրանի միջև: Թուրքիային անցան Արևմտյան Չայաստանի գավառները, իսկ Իրանին՝ Արևելյան Չայաստանն ու Վրաստանի մեծ մասը, ինչպես և Անդրկովկասի արևելյան շրջանները /այժմյան Ադրբեջանի տարածքը/:

1555թ. հաշտությունը երկար չգործեց: Օգտվելով Թահմասպի մահից հետո սկսված գահակալական կռիվներից՝ թուրքերը 1578թ. վերսկսեցին պատերազմը: Նրանք գրավեցին բազմաթիվ քաղաքներ Անդրկովկասում, Արևելյան Չայաստանից գերեվարեցին 60 հազ. մարդ: Գահ բարձրացած Շահ Աբասը որոշեց 1590թ. հաշտություն կնքել, որով թուրքերին զիջեց ամբողջ Անդրկովկասը:

Ձեռք բերված խաղաղությունը Շահ Աբասն օգտագործեց երկրի տնտեսությունը վերականգնելու ու զարգացնելու և բանակն ամրապնդելու համար: Վերջին հարցում նա ստացավ անգամ Անգլիայի աջակցությունը, որը շահագրգռված էր թուրքիայի դեմ նոր պատերազմի սանձազերծման մեջ: Պարսիկները կարողացան նույնիսկ իրենց բանակի համար ձուլել թնդանոթներ: Այս նախապատրաստությունից հետո Շահ Աբասը 1603թ. վերսկսեց պատերազմը և ներխուժեց Անդրկովկաս: Պարսիկները գրավեցին Թավրիզը, ապա՝ Ջուղան և պաշարեցին Երևանի բերդը: Երևանի գրավման ժամանակ օգտագործվեցին մեծ թվով հայեր, որոնք տվեցին խոշոր զոհեր: 9 ամիս դիմադրելուց հետո, թուրքերը հանձնեցին Երևանը: Մինչև 1604թ. պարսիկներն ավերեցին ոչ միայն Արևելյան Չայաստանի, այլև Արևմտյան Չայաստանի՝ Վասպուրականի, Տարոնի և Բարձր Չայքի բնակավայրերը: 1604թ. թուրքերը մեծ բանակ հանեցին Շահ Աբասի դեմ: Վերջինս որոշեց դիմադրություն ցույց չտալ և նահանջել՝ ճանապարհին ամայացնելով հակառակորդին մնացող բնակավայրերը՝ Արևմտյան Չայաստանից մինչև Անդրկովկաս: /Այդ նպատակով ամայացվեցին բազմաթիվ բնակավայրեր Կարինից մինչև Երևան, իսկ նրանց 350 հազ. բնակիչներ Ամիրզունա խանի անմիջական ղեկավարությամբ բռնագաղթեցվեցին Իրան: Այդ քայլով Շահ Աբասը նպատակ ուներ հանձինս գործունյա հայերի Պարսկաստանում զարկ տալ տնտեսությանը: Պատահական չէ, որ Արաքսի ափին ընկած Ջուղա վաճառաչաի քաղաքը հիմնովին բռնագաղթեցվեց: Ջուղացիների մեծ մասը բնակեցվեց Իրանի մայրաքաղաք Սպահանի մոտ, որտեղ հիմնադրվեց Նոր Ջուղա քաղաքը: Չայ տարագիրները հատկապես մեծ կորուստներ կրեցին Արաքսն անցնելու ժամանակ, երբ առջևում ջուրն

էր, իսկ հետևում՝ պարսկական սուրը: Այս դեպքերի մասին հետագայում գրել է մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը «Թագավորն ու չարչին» բալլադում: Իրենց դաժանությամբ պարսիկներին չզիջեցին թուրքերը: Նրանք շուրջ 100 հազ. հայերի գերի տարան և վաճառեցին ստրկության: Նույն ժամանակ Չայաստան էր ներխուժել նաև թուրքերին ենթակա Ղրիմի Գիբեյ խանը, որն էլ իր հերթին հայ գերիներ տարավ Ղրիմ: Այս բռնագաղթերից և կոտորածներից գերծ մնացին միայն Սյունիքն ու Արցախը: Չայաստանի տասնյակ գավառներ կորցրեցին իրենց բնակչության զգալի մասը:

Թուրք-իրանական պատերազմները կարճատև ընդհատումներով շարունակվեցին մինչև 1638թ., երբ թուրքերին հաջողվեց գրավել Բաղդադը և ստիպել պարսիկներին հաշտություն կնքել: 1639թ. Կասրե-Շիրինում կնքվեց թուրք-իրանական նոր հաշտություն, որով Չայաստանը երկրորդ անգամ բաժանվեց աշխարհակալ երկու տերությունների միջև: Այս անգամ Չայաստանում թուրք-իրանական սահմանագիծն անցնում էր Ախուրյան գետով, ապա՝ Արաքսով մինչև Չայկական Պար, Փոքր Մասիսից թեքվում հարավ և Վասպուրականի արևելակողմյան լեռներով ձգվում մինչև Միջագետք: Այս բաժանումը պահպանվեց մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակը:

Չայաստանում թուրքերն ու պարսիկները ստեղծեցին իրենց վարչական կարգերը: Արևմտյան Չայաստանում 16-րդ դարից կազմավորվեցին Էրզրումի /Կարինի/, Վանի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Դիարբեքի /ավելի ուշ նաև՝ Խարբեքի, Բիթլիսի /Բաղեշ/, Տրապիզոնի/ էյալեթները, որոնք հետագայում վերանվանվեցին վիլայեթների: Չայկական աղբյուրներում նրանք հաճախ հիշատակվում են իբրև նահանգներ: Էյալեթների կառավարիչները նշանակվում էին սուլթանի կողմից և լինում էին փաշաներ, որի համար այդ վարչամիավորները հաճախ անվանվում էին նաև փաշայություններ: Փաշաները տեղերում օգտվում էին լայն իրավունքներից՝ հարկեր սահմանում, իրականացնում նրանց հավաքումն ու բաշխումը, պահում որոշակի քանակությամբ զորք: Փաստորեն նրանց իրավունք էր վերապահվում ազատորեն ու կամայականորեն վարվելու տեղի հպատակ ժողովրդի հետ: Էյալեթները տրոհվում էին սանջակների /գավառների/ բեյերի կամ բեկերի գլխավորությամբ: Սանջակներն էլ բաժանվում էին կազաների /գավառակ/, իսկ վերջիններս էլ՝ նահիեների /գյուղախմբեր/: Օսմանյան թուրքիայում հողերը բաժանվում էին երեք մասի՝ պետական, մասնավոր և եկեղեցական /վակուֆային/: Չայ գյուղացիությունը վճարում էր

բազմաթիվ հարկեր, որոնցից առավել ծանր էին ջիզեն՝ գլխահակը և մանկահավաքները: Վերջինիս շնորհիվ ձևավորվում էին ենթադրական գնդերը, որոնք հաճախ դաժանաբար էին վարվում իրենց իսկ ազգակիցների նկատմամբ:

Արևելյան Հայաստանում պարսիկները կազմավորեցին խանություններ կամ բեկլարբեկություններ: Նրանցից էր երևանի խանությունը: Երևանի խան էր նշանակվել Շահ Աբասի մերձավորներից Ամիրզունա խանը: Նա ժամանակին հայաթափել էր Արարատյան դաշտը, իսկ 1624թ. ստիպված կազմակերպել արշավանք Թուրքիայի տարածքը և այնտեղից մեծ թվով հայերի բնակեցրել իր խանությունում: Մյուս խանություններից էին՝ Նախիջևանը, Մակուն, ավելի ուշ՝ Գանձակը և Ղարաբաղը: Այստեղ ևս հայերը ծանր ազգային ու կրոնական ճնշման պայմաններում էին:

Հայկական իշխանություններից՝ մելիքություններից էին Սյունիքը, Խաչենը, Զաշաթաղը /այժմ՝ Լաչին/, Ծարը /Զելբաջար/, Սողքը /Վարդենիս/: Արևմտյան Հայաստանում մանր իշխանություններ էին՝ Սասունը, Մոկսը, Կիլիկիայում՝ Զեյթունը:

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 15-17-ՐԴ ԴԴ.

1045թ. Մայր հայրենիքում և 1375թ. Կիլիկիայում հայոց պետականության վերացումից հետո հայ ժողովրդի մեջ ազատության ու անկախության վերականգնման ձգտումը չմարեց: Միջազգային իրադրության յուրաքանչյուր պատեհ առիթ հայ գործիչներին մղում էր պետականությունը վերականգնելու քայլերի: Այդպիսի մի քայլ արվեց արդեն 15-րդ դարի 60-ական թվականներին: Վասպուրականում այդ ժամանակ մեծ ազդեցություն էր ձեռք բերել Աղթամարի կաթողիկոսությունը, որը ժառանգաբար գտնվում էր Սեֆեդինյան տոհմի ձեռքում: Ունենալով զինական ուժեր՝ նրանց հաջողվում էր օտար նվաճողներից պաշտպանել ոչ միայն կաթողիկոսական աթոռը, այլև Վասպուրականը: Սակայն Սեֆեդինյաններն ունեին ավելի հեռու գնացող նպատակներ: Աղթամարի կաթողիկոս Զաքարիան կարողացավ իր ազդեցությունը տարածել նաև Էջմիածնի կաթողիկոսության վրա և իր եղբորորդուն՝ Սմբատին 1465թ. օծել «հայոց թագավոր»: Սմբատի իշխանությունը, որը տարածվում էր Աղթամար կղզու վրա, կրելով անվանական բնույթ, մի քանի տարի անց տապալվեց:

Այն, որ հայոց պետականության գաղափարը դեռ թարմ էր, երևում է ժամանակակից բանաստեղծ Սիմեոն Ապարանցու խոսքերից. «մեզ նոր գարուն կգա, չպետք է կտրել հույսի թելը»:

1453թ. Կ.Պոլսի գրավումից հետո թուրքերի դեմ ընդհանուր ճակատ կազմելու գործում որոշակի դեր են ունեցել նաև հայերը: 15-րդ դարի երկրորդ կեսին հիշատակվում են այդպիսի հայ գործիչներ՝ Փոքր Հայքի տիրակալ Բերդի բեկը, Խուսի և Սասունի իշխանները: Վերջին երկուսի ներկայացուցիչները եղան Եվրոպայում՝ Կ. Պոլիսը թուրքերից ետ գրավելու նպատակով միասնական ճակատ ստեղծելու համար:

1469թ. ակ-կոյունլու Ուզուն Հասանի կողմից Վենետիկ և Հռոմ օգնության խնդրանքով մեկնած պատվիրակը հայազգի Խոջա Սիրաքն էր: Քրիստոնյա Եվրոպայի, Հռոմի պապի աջակցությամբ թուրքերի դեմ դաշինք կնքելու փորձերը շարունակվեցին հաջորդ դարերում:

1547թ. Էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի գլխավորությամբ գումարվում է գաղտնի ժողով, որտեղ որոշվում է օգնության խնդրանքով պատվիրակություն ուղարկել Եվրոպա: Սա մեզ հայտնի առաջին ազատագրական գաղտնի ժողովն էր: Երկու տարի անց պատվիրակությունը կաթողիկոսի գլխավորությամբ ճանապարհորդում է Եվրոպական երկրներում և անարդյունք վերադառնում:

Սալմաստեցուն հաջորդած Միքայել Սեբաստացի կաթողիկոսը համանման գաղտնի ժողով է հրավիրում 1562թ. Սեբաստիայում: Այս անգամ պատվիրակությունը գլխավորում է Աբգար դպիր Թոխատեցին: Պատվիրակության նշանակությունն ընդգծելու նպատակով Աբգար Թոխատեցին ու նրա որդին՝ Սուլթանշահը ներկայանում էին իբրև հայ թագավորական դինաստիաներից սերվածներ: Վենետիկ ներկայացած այս պատվիրակությունը ևս հաջողության չհասավ:

1575թ. նույն առաքելությամբ Լեհաստան և Իտալիա է մեկնում մեկ այլ կաթողիկոս՝ Թադեոսը, որը նույնպես չի կարողանում ձեռք բերել Եվրոպական երկրներից թուրքերի դեմ համատեղ պայքարելու համաձայնություն: Ուշագրավ է, որ քրիստոնյա Եվրոպայից օգնություն ստանալու համանման քայլեր են կատարել նաև վրացիները, ինչպես Սիմեոն թագավորը 1578թ.: 1631թ. Իրանի դեմ պայքարում փորձել են համատեղ քայլեր կատարել վրաց թագավոր Թեյմուրազը և Գանձասարի հայոց կաթողիկոսը:

17-րդ դարի 40-60-ական թթ. Կրետե կղզու համար պատերազմ է ընթանում Վենետիկի հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև: Քրիստոնյա վենետիկցիների հաղթանակից պտուղներ քաղելու հույսեր

են արթնանում թուրքահպատակ հույների, ասորիների ու հայերի շրջանում: 1666թ. Բաղիշեցի Մահտեսի Մուրադը մեկնում է Փարիզ և օգնության խնդրանքով դիմում Լյուդովիկոս XIV-ին: Ֆրանսիայի օժանդակության դեպքում նա երաշխավորում է հույների, հայերի ու ասորիների ապստամբությունների բարձրացում: Նույն ժամանակ եթովպիա է այցելում Հովհաննես Թուրունջին՝ եթովպիացիներին խոստանում թուրքահպատակ ժողովուրդների ապստամբություն՝ թուրքերի դեմ օգնություն ստանալու դեպքում: Սակայն ոչ օգնություն է ստացվում, ոչ էլ բարձրացվում է համատեղ ապստամբություն:

42. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 17-ՐԴ դԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՌՈՐԴԻՆ ԵՎ 18-ՐԴ դԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

17-րդ դարի 70-ական թթ. ազատագրական պայքարի ղեկավարներից է դառնում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը: Գերմանական կայսրին գրած մի նամակում նա հայտնում էր, որ հայերն իրենց ազատագրության հույսերը կապում են Գերմանիայի ու Հռոմի պապի հետ: Ռուսական ցարին հասցեագրած նամակում Ջուղայեցին խնդրում էր ռուսներից դիվանագիտական ուղիներով ներագրել պարսիկների վրա հայերի անօրինակ ճնշումներին վերջ տալու համար: 1677 կամ 1678թ. էջմիածնում 6 հոգևոր և 6 աշխարհիկ գործիչների մասնակցությամբ Հակոբ Ջուղայեցին հրավիրում է նոր գաղտնի ժողով: Հրավիրվածների մեջ կային Արցախի ու Սյունիքի մելիքների ներկայացուցիչներ: Այս անգամ ևս որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ օգնություն խնդրելու: Պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ ժամանում է Կ. Պոլիս, որտեղից կաթողիկոսը օգնության խնդրագիր է գրում Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկոյին: 1680թ. Կ. Պոլսում մահանում է Ջուղայեցին, իսկ պատվիրակությունը, չհասնելով որևէ արդյունքի, ցրվում է: Եվրոպա է անցնում պատվիրակության անդամներից միայն Իսրայել Օրին) որը հետագայում դառնում է հայ ազատագրական շարժման խոշորագույն ղեկավարներից մեկը: Նա այցելում է Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, ջանքեր գործադրում ստանալու Տոսկանայի դուքս Կոզմաս III-ի /Իտալիա/, ավստրիական կայսր Լեոպոլդ I-ի, Գերմանիայի Պֆալց երկրամասի կուրֆյուրստ /մեծ իշխան/ Հովհան Վիլհելմի աջակցությունը: Միայն Վիլհելմն է հավանություն տալիս Օրու ծրագրին և հուսադրական նամակներով

ուղղված հայ իշխաններին, ուղարկում Հայաստան: Օրին, որ Վիլհելմի նամակներից մեկը պետք է հասցնեք նաև վրաց թագավորին, ուղևորվում է դեպի Հայաստան:

1699թ. Օրին Սյունիքի Անգեղակոթ ավանում հայ մելիքների /մելիք Սաֆրազ և ուրիշներ/ մասնակցությամբ հրավիրում է գաղտնի ժողով: Որոշվում է ազատագրության խնդրանքով դիմել Եվրոպական պետություններին, ինչպես և Ռուսաստանին: Մելիքներն իրենց ստորագրություններով ու կնիքներով օգնության խնդրագրեր են հանձնում Օրուն ուղղված մեծ տերությունների կառավարիչներին: Նրանք Իսրայել Օրուն միաժամանակ լիազորում են տեղում, անհրաժեշտության դեպքում դատարկ թղթերը լրացնելու և մելիքների անունից, նրանց ստորագրություններով հանձնելու քրիստոնյա ցանկացած երկրի կառավարողներին: Օրին Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ մեկնում է Եվրոպա: Մշակվում է 36 կետից բաղկացած ազատագրական ծրագիր /Պֆալցյան ծրագիր/, որտեղ մանրամասն ներկայացվում էր Հովհան Վիլհելմի գլխավորությամբ գերմանական զորքերով, Ռուսաստանի վրայով մահմեդականների լծից Հայաստանի ազատագրության նախագիծը: Սակայն ոչ Վիլհելմը, ոչ էլ ավստրիական կայսրը հավանություն չեն տալիս այդ ծրագրին՝ հասկացնելով, որ ոչ մի երկիր չահագրողված չէ հայերի համար պատերազմելու հզոր Իրանի ու Թուրքիայի դեմ: Ռուսախաբվելով Եվրոպայի գահակալների մոտ երկուհարյուրամյա դատարկ խոստումներից՝ Իսրայել Օրին կողմնորոշվեց դեպի Ռուսաստան՝ դրանով իսկ շրջադարձ կատարելով հայ ազատագրական պայքարի մեջ Եվրոպայից դեպի Ռուսաստան: Տե՛ր (1701թ. Օրին Մինաս Տիգրանյանի հետ ժամանեց Մոսկվա, սկզբում բանակցություններ վարեց իշխան Գոլովինի հետ, ապա Պյոտր I-ի հետ և նրանց ներկայացրեց Հայաստանի ազատագրության իր ծրագիրը: Օրին հանդգլած էր, որ ստանալով Ռուսաստանի ազգական ու դիվանագիտական աջակցությունը, Անդրկովկասի ժողովուրդները դուրս կգան ազատագրական պայքարի և ձեռք կբերեն ազատություն՝ ռուսական տերության հովանավորությամբ: Ռուսական արքունիքում Օրու ծրագիրը հավանության արժանացավ և, Պյոտրը խոստացավ օգնել Շվեդիայի դեմ Հյուսիսիսիային պատերազմի ավարտից հետո: Անդրկովկասի վրա արշավանքը նախապատրաստելու, բնակչության տրամադրությունները կողմնորոշումը ճշտելու նպատակով Պյոտրը Օրուն շնորհում է գնդապետի կոչում և որպես պատվիրակության ղեկավար ուղարկում Անդրկովկաս և Իրան:)

ճյուղերում և անհատներում ընդհանուր առմամբ ընդունվելու և իրականացվելու համար անհրաժեշտ է:

Վերջինս նաև պահանջում է արագորեն լուծարվել և փոխարինվել նոր մարմիններով: Այս պահանջը հիմնված է նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

ԵՍ ԴՈՒՍՈՒՄՆԵՐ
ՈՒՍՏՈՒՄԻ ՆԱԿԱՆՈՒՄԻ ԴՈՒՍՏՈՒՄԻ
ՆԱԿԱՆՈՒՄԻ ԴՈՒՍՏՈՒՄԻ

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, իրականացված չէ և չի կարող լինել իրականացված: Այս պահանջը հիմնված է նաև նրանի վրա, որ իրականացված չէ և չի կարող լինել իրականացված:

ղեկավարներն էին Տեր- Ավետիսը, Մելիք- Փարսադանը, Թորոսը և ուրիշներ:

1723թ. թուրքական զորքերը ներխուժում են Անդրկովկաս նպատակ ունենալով գրավել այն և փակել ռուսական բանակի առաջխաղացման ուղիները: 1723թ. ամռանը նրանք գրավեցին Թիֆլիսը և ավերեցին այն: Կախնթի թագավոր Կոնստանդինը ամրացավ Գանձակում և կազմակերպեց դիմադրություն: Թշնամին Գանձակի պատերի տակ թողեց հազարավոր դիակներ և դիմեց փախուստի: Այդ հաղթանակը մեկ տարով հետաձգեց թուրքերի արշավանքը Երևանի վրա:

1724թ. հունիսին թուրքական զորքերը Գյումրիի վրայով ներխուժեցին Արարատյան դաշտ և շարժվեցին դեպի Երևան: Թուրքական զորքերը, շրջանցելով Երևանը, գրավեցին Նախիջևանը, Օրդուբադը և ապա ուղղվեցին դեպի Երևան: 1724թ. հունիսի 7-ից սկսված պաշտպանական մարտերը տևեցին ավելի քան երեք ամիս: Հայերը հերոսաբար ետ էին մղում թուրքերի կատաղի հարձակումները՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Իրենց քաջությամբ հատկապես աչքի են ընկնում Հովհաննես Հունդիբեկյանը, Դավիթ Միրզաջանյանը, Պողոս Քեչիբեկյանը և շատ ուրիշներ:

Քաղաքում ստեղծված պարենային դժվարությունները ծանր կացություն էին ստեղծել, որի պատճառով էլ Երևանի Մեհրալի խանը քաղաքը հանձնելու բանակցություններ սկսեց: Թշնամին մոտ 20 հազար զոհերի գնով սեպտեմբերի 26-ին ներխուժեց քաղաք և սկսեց այն ավերել, կանանց ու երեխաներին գերի վերցնել:

1725թ. գարնանը թուրքերին հաջողվեց գրավել Թավրիզը և ապա բոլոր ուժերը շարժել դեպի հայկական սղնախները: Սարու Մուսատաֆա փաշայի զորքերը 1725թ. օգոստոսին գրավեցին Լոռու բերդը, ապա շարժվեցին դեպի Ղազախ, Շամշադին և հոկտեմբերին տիրեցին Գանձակին:

1725թ. փետրվարին Ղարաբաղի Վարանդայի շրջանի հայերը որոշեցին առերես հպատակվել և թուրքական 6 հազարանոց զորամասը բաժանելով 33 գյուղերում, գիշերը, ընդհանուր ահազանգով ոչնչացրին շուրջ 5 հազարին, սպանեցին հրամանատար փաշաներից երկուսին, երրորդին՝ գերի վերցրին:

1726թ. Ղարաբաղի Շուշի ամրոցի վրա հարձակվող 40 հազ. թշնամու բանակը, ութ օրվա համառ մարտերից հետո երկու զորապետ և 800 մարդ կորցնելով, ետ մղվեց ու վերադարձավ Գանձակ: Ավան Յուզբաշին մեծ հաղթանակ տարավ: Դրանից հետո այլևս թուրքական

զավթիչները չհամարձակվեցին ուրջ դնել Ղարաբաղ: Ավան Յուզբաշին, Թարխան Յուզբաշու հետ միասին պայքարը շարունակեց Դիզակի շրջանում ամրանալով Տողի բերդում:

Ռուսաստանից աջակցություն ստանալու հույսով Ավան Յուզբաշին և սղնախների մյուս ղեկավարներն իրենց ջոկատներով 1727թ. սկզբին անցան Կասպից ծովի ափը և միացան ռուսական զորքերին՝ հույս ունենալով նորից վերադառնալ և ռուսների օգնությամբ ազատել հայրենի երկիրը: Ղարաբաղում և Սյունիքում ժողովրդական վրիժառուները, համախմբված աշխարհագորային ջոկատներում, շարունակում էին պայքարը: Նրանք իրենց ուժերը կենտրոնացրել էին Գյուլիստանի և Ջրաբերդի սղնախներում, որտեղից հարվածներ էին հասցնում Գանձակում գտնվող թուրքական բանակին:

Միայն 1728թ. թշնամին հաջողությունների է հասնում Արցախում: Դժբախտաբար, նույն տարում մահանում է Եսայի Հասան-Ջալալյանը: 1729թ. Ավան Յուզբաշին նորից փորձում է համոզել Կասպից ծովի ափին հաստատված ռուսներին վերսկսելու արշավանքը դեպի Անդրկովկաս, սակայն հաջողություն չի ունենում:

1729-1731թթ. Գյուլիստանի սղնախում թուրքերի դեմ պայքարը շարունակում է Աբրահամ սպարապետը:

44. ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՄՅՈՒՆԻՔՈՒՄ: ԴԱՎԻԹ ԲԵԿ

Ղափանի /Կապան/ 50 տանուտերերի ու մելիքների անունից Ստեփանոս Շահումյանը օգնության խնդրանքով դիմում է վրաց թագավոր Վախթանգին: Վերջինս, 1722թ. վերջերին, Դավիթ Բեկին իր 30 կտրիճներով ուղարկում է Ղափան՝ ազատագրական շարժումը գլխավորելու համար: Ուղարկած կտրիճների թվում էին Մխիթարը, Ավթանդիլը, Բայանդուրը, Մեծ և Փոքր Գոգաները և ուրիշներ:

Դավիթ Բեկը Սյունիքում ամենից առաջ լուրջ միջոցներ ձեռնարկեց վերացնելու տեղում ֆեոդալական ներհակությունները, զսպելու թուրք-ադրբեջանական ու քրդական Ջևանշիր ցեղի ցեղապետերի սանձարձակությունները: Նա ամրացավ Շինուհայր ավանում և իր շուրջը համախմբեց Տաթևի ու շրջակա զինական ուժերին: Թշնամու դեմ մղած մարտերում առաջին իսկ պահից իր հերոսությամբ հատկապես աչքի ընկավ Դավիթ Բեկի զորականներից Մխիթարը: Ապստամբները

հաղթանակ տարան մահմեդականություն ընդունած հայ մելիք Բաղրի նկատմամբ:

Սյունիքի գործող բոլոր խմբերը մտան Դավիթ Բեկի գորավարության տակ: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց ռազմական խորհուրդ: Մխիթարը նշանակվեց գործերի սպարապետ, իսկ գորաջուկատների հրամանատարներ՝ Տեր-Ավետիսը, Փարսադանը, Թորոսը, Պապինը, Բայանդուրը և ուրիշներ: Գրավելով ու ամրանալով Որոտան և Ջևա բերդերում՝ Դավիթ Բեկի գործերը թշնամու հրոսակներից մաքրեցին Սյունիքը: 1724թ. ամռանը կատաղի մարտեր տեղի ունեցան Բարզուշատի և Լևազի շրջաններում, ուր իր քաջությամբ աչքի ընկավ Չավնդուրի Մելիք Թորոսը:

Դավիթ Բեկը կարողացավ հերոսական ջանքերի գնով Սյունիքում ստեղծել հայկական իշխանություն: Պարսկական շահը ճանաչեց Դավիթ Բեկի իշխանությունը և նրա հետ ընդդեմ թուրքերի կնքեց դաշինք: Այնպես որ շուտով պայքարը ընթացավ Սյունիք ներխուժած Ֆուրքերի դեմ:

Պաշտպանության համար կառուցվեցին և ամրացվեցին Որոտանի, Ջևայի, Շինուհայրի, Տաթևի, Մեղրիի, Խնձորեսկի բերդերը: Հատկապես աչքի էր ընկնում նստավայր դարձած Հալիծորի ամառիկ բերդը: Այդ ամրություններում ստեղծվեցին բերդապահ կայազորներ, որոնք հսկում էին նաև շրջակա գյուղերի անվտանգությունը:

1725թ. թուրքերի դեմ ուժեղ մարտեր տեղի ունեցան Գողթնում: Դավիթ Բեկը թշնամուն մեծ ջարդ տալուց հետո վերադառնում է Հալիծոր: Սակայն թշնամին, օգնություն ստանալով, նորից է հարձակվում և գրավում Մեղրու փոքր թաղը: Մեղրեցիները համառ դիմադրություն են ցույց տալիս, մինչև որ Բայանդուր գորավարի գործերը օգնության են հասնում և փախուստի մատնում թշնամուն ու հետապնդում մինչև Օրդուբադի սահմանը: Թշնամին մեծ կորուստներ է տալիս: Կռիվները շարունակվում էին Բարզուշատում ու Սիսիանի լեռներում, որտեղ աչքի են ընկնում Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը:

1726թ. թուրքական մեծաքանակ գործերը հարձակվում են Դավանի /Կապան/ վրա, գրավում շրջանի մեծ մասը: Դավիթ Բեկն իրեն հավատարիմ գորամասերով ամրանում է Հալիծորի բերդում: Թուրքերը պաշարում են բերդը, բայց գրավել չեն կարողանում: 1727թ. գարնանը, կատաղի մարտերից մեկի ժամանակ, Մխիթար սպարապետը իր մի խումբ կտրիճներով անակնկալ կերպով բերդից դուրս է գալիս, սրընթաց հարվածում թշնամուն և փախուստի մատնում: Համառ մարտերով առաջ շարժվելով՝ Դավիթ Բեկի հերոսները թուրքական գործերից մաքրում են

Դավանը և շարժվում դեպի Մեղրի: Նրանց հաջողվում է թուրքերին դուրս քշել ևս Մեղրիից: Մեղրի է ժամանում նաև Դավիթ Բեկը: Նա իր գործերին միացնում է Մեղրու և Չավնդուրի ջուկատները, Կարճանով առաջ անցնելով, գրավում Օրդուբադը: Հալիծորի և Մեղրու հաղթանակները մեծ ոգևորություն են պատճառում:

1728թ. հայ ազատագրական պայքարը մեծ կորուստ կրեց. մահացավ Դավիթ Բեկը: Նրա մահից հետո ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Մխիթար սպարապետը: Թուրքերը նոր ուժեր հավաքելով՝ ընդհանուր հարձակում սկսեցին: Ապստամբ գյուղացիությունը ամբողջովին համախմբվել էր Մխիթար սպարապետի շուրջը. ամենուր ընթանում էին պարտիզանական կռիվներ: Սակայն Հալիծորի անկումից հետո օրեցօր դրությունը ծանրանում էր: Մխիթարի և նրա զինակիցների միջև սրվում էին հակասությունները: Զկար այլևս ուժեղ ռազմական կենտրոն: Դավադրության զոհ է դառնում Մխիթար սպարապետը, երբ 1730թ. հաղթանակած վերադառնում էր Օրդուբադից:

Դրանից հետո էլ ժողովուրդը զենքը վայր չէր դնում: Դիմադրական պայքարը ցանցոցիվ ուժերով շարունակվում էր: Պարսիկները Նադիրի գլխավորությամբ, վերագրավելով Թավրիզն ու Արդաբիլը, անցան Շիրվան, պաշարեցին Գանձակը:

Հայկական ջուկատները, գոտեպնդված, նույնպես գրոհի անցան թուրքերի դեմ: 1729-1731թթ. հատկապես իր համառ պայքարով աչքի ընկավ Գյուլխտանի սղնախը՝ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ:

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը միասնական ընթացք չստացավ: Թշնամուն հաջողվեց ճնշել նրանց անջատ-անջատ ելույթները:

45. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ: ՀՈՎԱՏԹ ԷՄԻՆ

Թուրքական նվաճումը ծանր հարված հասցրեց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարին, բայց չկարողացավ այն ընկճել: 1730-ական թթ. Իրանի նոր գահակալ Նադիր շահը թուրքական գործերին դուրս քշեց Անդրկովկասից: Օգտագործելով նաև տեղական հակաթուրքական ուժերը՝ 1735թ. հունիսին նա եղվարդի ճակատամարտում ծանր պարտության մատնեց թուրքերին: Նադիր շահը սիրաշահելու քաղաքականություն էր վարում հայ մելիքների ու

բարձրաստիճան հոգևորականության նկատմամբ. ժամանում է էջմիածին պատարագի, վանքին նվիրում 15 կգ.-ոց ոսկե ջահ և այլ իրեր: Նրա օրոք Ղարաբաղում հիմնվում են «Խամսայի» /հինգ/ մեկիքությունները՝ Ջրաբերդ, Դիզակ, Խաչեն, Վարանդա, Գյուլիստան, որոնց կառավարիչ է նշանակվում Դիզակի մեկիք Եզանը, որին փոխարինեց որդին՝ Արամը:

Նադիր շահի սպանությունից հետո /1747թ./ Իրանի և Անդրկովկասի քաղաքական վիճակը նորից դարձավ անկայուն : Միջֆեոդալական կռիվները և ավազակային արշավանքները պատուհաս էին դարձել աշխատավոր ժողովրդի համար: Ծանր կացության մեջ էին Ղարաբաղի մեկիքությունները: Դրան հակառակ, հզորանում էր հարևան Վրաստանը, որը եղբայրական սերտ կապերի ու համագործակցության մեջ էր հայ ժողովրդի հետ:

Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացումը 18-րդ դ. կեսերին նոր մղում է տալիս Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարին: 1760թ. վրաց թեյմուրազ II թագավորը մեկնում է Ռուսաստան օգնության խնդրանքով: Նույն թվականին հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին հատուկ կոնդակով դիմում է Ելիզավետա կայսրուհուն, խնդրում հաշվի առնել Հայաստանի և Վրաստանի ծանր կացությունը, ընդառաջել թեյմուրազին և օգնության ձեռք մեկնել: Նրա հաջորդը՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը ծավալեց ավելի եռանդուն գործունեություն:

✳ Այդ ուղղությամբ ակտիվ դեր ստանձնեցին ինչպես ռուսահայ, այնպես էլ հնդկահայ գաղթավայրերը: 18-րդ դ. Հնդկաստանի մի շարք քաղաքներում, ինչպես Մադրասում, Կալկաթայում, Բոմբեյում, Հայդարաբադում, Դելիում և այլ տեղերում կային բավականին ազդեցիկ հայկական գաղթավայրեր: 1688թ. անգլիական «Արևելա-հնդկական ընկերությունը» պայմանագիր կնքեց հայ վաճառականների հետ՝ հեշտացնելով հայերի մուտքը Հնդկաստան: Չդիմանալով անգլիացիների մրցակցությանը՝ հայ առևտրականները սկսում են որոնել ազատ շուկաներ: Եվ ահա նրանց հայացքն ուղղվում է դեպի հայրենի երկիրը՝ հեռավոր Հայաստանը: Հայրենիքում նրանք ակնկալում էին ստեղծել սեփական պետականություն, առևտրական կապիտալի և ընդհանրապես տնտեսական զարգացման համար գտնել ազատ ասպարեզ: Դրա համար, սակայն, պետք էր առաջին հերթին այն ազատել օտար բռնակալների լծից, վերականգնել հայկական պետականությունը, ստեղծել ազգային շուկա: Նրանց մտահոգում էր նաև հայրենիքի ողբալի վիճակը, հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման ահավոր վտանգը: Նման

պայմաններում 18-րդ դ. 60-70-ական թվականներին հայ ազատագրական շարժումները նորից վերելք են ապրում:

Հնդկահայ նշանավոր գործիչ Հովսեփ Էմինն իր կյանքի նպատակն էր դարձրել Հայաստանի ազատագրումը: Նրա նախնիները Շահ-Աբասի կողմից Հայաստանից գաղթեցվել էին Պարսկաստանի Համադան քաղաքը, որտեղ 1726թ. ծնվել էր Էմինը: Հակառակ հոր կամքին՝ դառնալ առևտրական, նա մի նավով 1751թ. անցնում է Անգլիա, ռազմական գիտելիքներ ձեռք բերելու համար սովորում է Լոնդոնի Վուլվիչի արքայական զինվորական ակադեմիայում և նվիրվում հայրենիքի ազատագրության գաղափարին: 1757 թվին ուսումն ավարտելուց հետո մեկնում է Գերմանիա: 1759թ. Էմինը այցելում է Հայաստան-Ժամնոթանում հայ ժողովրդի ծանր կացությանը, կապ հաստատում էրզրումի, Երևանի, Էջմիածնի և այլ վայրերի հայ գործիչների հետ, համոզվում, որ հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր կլինի միայն Ռուսաստանի օգնությամբ: 1761թ. նա վերադառնում է Լոնդոն և ռուսական դեսպան իշխան Գոլիցինի հանձնարարականով աշնանը այցելում է Պետերբուրգ, հանդիպում ռուսական կանցլեր կոմս Մ.Ի. Վորոնցովի հետ և նրան ներկայացնում հայ ժողովրդի ազատագրման իր ծրագիրը: Կանցլերի հավանությունը ստանալով և նրա հանձնարարական նամակով Էմինը ներկայանում է վրաց Հերակլ II թագավորին: Մոսկվայում նրան է միանում նաև Մովսես Բաղրամյանը: Էմինը Հերակլին ներկայացնում է հայ և վրաց ժողովուրդների ազատագրման ու միացյալ պետություն ստեղծելու իր ծրագիրը: Հերակլը սկզբում հաճույքով ընդունում է Էմինին և համաձայնում օժանդակել նրան, բայց հետո հրաժարվում է՝ պահանջելով հեռանալ Վրաստանից պարսիկների ու թուրքերի դժգոհությունը չառաջացնելու համար:

Էմինի հորդորանքով Մշո սուրբ Կարապետ վանքի վանահայր Հովհանն աշխատանք էր տանում ռազմական ջոկատներ կազմակերպելու, ապագա ապստամբությանը մասնակցելու ուղղությամբ: Էմինի հռչակը տարածվել էր Աստրախանում և Հյուսիսային Կովկասի շատ վայրերում: Ամենուր նրան ընդունում էին որպես Հայաստանի ազատարարի:

1764թ. Էմինը գնում է Ղարաբաղ՝ մեկիքների պայքարը կազմակերպելու համար, Գետաշենում հանդիպում Գյուլիստանի մեկիք Հովսեփին, ապա՝ Եռուշիմ՝ Ղարաբաղի Իբրահիմ խանին: Հաջողության չհասնելով նա վերադառնում է Վրաստան և այստեղից էլ 1768 կամ 1770թ. հուսախաբ մեկնում Հնդկաստան:

46. ՄԱՂՐԱՍԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

18-րդ դ. 70-80-ական թվականներին Հնդկաստանի հայ գործիչները և հատկապես Մաղրասի հայրենասերների խմբակը լայն աշխատանք ծավալեցին Հայաստանի ազատագրման և անկախ պետություն ստեղծելու համար: Այդ խմբակի անդամներից Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Գրիգոր Խոջաջյանը և ուրիշներ հայ ժողովրդի ազատագրման խնդիրը կապում էին նրա ապստամբական պայքարի հետ, որի հաջող ելքի համար նրանք անհրաժեշտ էին համարում զինված օգնությունը Ռուսաստանից և Վրաստանից: Թուրք-պարսկական տիրակալությունից ազատագրվելով՝ հայերը պետք է ստեղծեին անկախ պետություն: Այդ նպատակին հասնելու համար նրանք խնդիր էին դնում առաջին հերթին տարածել լուսավորություն, երիտասարդությանը տեղյակ դարձնել հայրենի երկրի պատմությանն ու աշխարհագրությանը, բացատրել ազատության ու անկախության նշանակությունը, դաստիարակել հայրենասիրական գաղափարներով: Պրա համար Շահամիր Շահամիրյանը 1771թ. Մաղրասում իր հիմնադրած տպարանում հրատարակում և Հայաստան ու հայաբնակ վայրեր է առաքում հայրենասիրական գրականություն: Նա նամակագրական կապ է հաստատում Ղարաբաղի մելիքների, Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների ու վրաց Հերակլ II-ի և Գեորգի XII-ի հետ: Մաղրասի խմբակի աշխատանքը ավելի է աշխուժանում, երբ Մաղրաս է հասնում Հովսեփ Էմինը, որի ազատագրական գաղափարները ավելի են ոգևորում հնդկահայերին: 1772թ. Շահամիրյանի տպարանում տպագրվում է ազատագրական պայքարի գործիչ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» աշխատությունը: Այն հայ իրականության մեջ առաջին քաղաքական-հրապարակախոսական գիրքն էր, որ խոշոր նշանակություն ունեցավ հայ հասարակական մտքի զարգացման գործում: «Նոր տետրակ»-ում Մ. Բաղրամյանը նկարագրում է հայ ժողովրդի հերոսական անցյալը, ցույց տալիս թուրք-պարսկական դաժան լծի տակ նրա ծանր վիճակը և կոչ անում պայքարի ելնել հանուն ազատության, քանի որ լավ է մեռնել քաջաբար, քան ապրել թշվառության մեջ: Նա քննադատում է միապետությունը՝ որպես հայ պետականության անկման պատճառ և առաջարկում սահմանադրական կարգեր: Մաղրասյանները «Նոր տետրակ»-ի օրինակները ուղարկում են Էջմիածին, Ղարաբաղ,

Աստրախան, Պետերբուրգ և հայաշատ այլ վայրեր: Նրանք ջերմորեն պաշտպանում էին Ղարաբաղի մելիքների և Հերակլ II-ի միասնությունը, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը: Միմեռն երևանցի կաթողիկոսը թշնամաբար ընդունեց «Նոր տետրակ»-ը և կարգադրեց այրել նրա օրինակները:

1786թ. «Նոր տետրակ»-ը Պետերբուրգում հրատարակվեց նաև ռուսերեն: 2 հազար տպաքանակով, Շահամիր Շահամիրյանի որդու՝ Եղիազարի ջանքերով, որ Պետերբուրգ էր եկել 1785թ. ռուսական կառավարությանը ներկայացնելու հայ ժողովրդի ազատագրման հնդկահայերի ծրագիրը: Այդ հրատարակությունն արժանացավ ռուս մտավորականությանը ուշադրությանը: Նրա բաժանորդներից էին նաև Մովսիսյանն ու Կոտուզովը: Հայ հասարակական և քաղաքական մտքի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև 1773թ. տպագրված Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը: Այն քաղաքական-հրապարակախոսական երկրորդ գիրքն էր, որտեղ առաջ էր քաշվում բուրժուական հանրապետության գաղափարը, մերժվում ազնվականության և եկեղեցականների դասային արտոնությունները, ավատատիրական կարգերը: Ապագա հայոց պետության բարձր մարմինը՝ «Հայոց տունը» /պառլամենտ/ պետք է ընտրվեր առանց զենքի, բոլորի կողմից, երկաստիճան ընտրական կարգով: «Որոգայթ փառաց»-ում կարևոր տեղ էր տրվում նաև մշակույթի զարգացման հարցերին: Եկեղեցին պետք է անջատվեր պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց: Այս գիրքը փաստորեն օրենքների ժողովածու էր, որը պետք է ծառայեր օտարի լծից ազատագրված նոր պետության կազմավորմանը:

Մաղրասյանների քայլերից ոգեշնչված՝ տեղի հայերը որոշում են Հովսեփ Էմինի տրամադրության տակ դնել տարեկան 12 հազար ռուբլի՝ բանակ ստեղծելու համար: Գ. Խոջաջյանը հայտնում է, որ Հայաստանի ազատագրության համար պատրաստ է տալ իր ունեցվածքի 1/3-ը, եթե այդ ծրագրին հավանություն տա Սիեմոն կաթողիկոսը: Շ. Շահամիրյանը Հերակլ II-ին է ուղարկում թանկարժեք նվերներ, պատրաստվում անգամ տեղափոխվելու Վրաստան՝ համատեղ օտար լծի դեմ պայքար սկսելու համար: Վրաց թագավորը փոխադարձաբար Շահամիրյանին է նվիրաբերում Լոռու գավառը՝ նրան տալով վրաց իշխանի տիտղոս: Անգամ Հերակլը 1790թ. հատուկ ուղերձով Վրաստան՝ բնակության է հրավիրում պարսկահայ գաղթականներին:

Ազատագրության ռուսահայ կենտրոնը, Հայ ազատագրական շարժումները ուժեղ ընթացք ստացան 1768-1774թթ. ռուս-թուրքական

պատերազմի ժամանակ: Անդրկովկասի ժողովուրդները սպասում էին, որ ռուսական զորքերը օգնության կհասնեն իրենց: Ռուսաստանում բնակվող հայերն էլ լայն գործունեություն ծավալեցին Հայաստանն ազատագրելու և անկախ պետություն ստեղծելու համար: Ռուսաստանը դարձավ Հայաստանի ազատագրության խոշոր կենտրոն: Դրա արտահայտությունն էր Աստրախանի բնակիչ Մովսես Սարաֆյանի 1769թ. Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացրած Հայաստանի ազատագրման ծրագիրը: Այնտեղ խնդիր էր դրվում ռուսական և վրաց զորքերի, հայ կամավորական խմբերի և Ղարաբաղի մելիքների օգնությամբ ապահովել Հայաստանի ազատագրումը: Ծրագիրը կարևոր էր համարում առաջին հերթին գրավել Երևանը, որի շուրջը տարբեր վայրերից մեծ քանակությամբ հայեր կհամախմբվեին և կստեղծվեր Ռուսաստանի հովանավորությամբ ինքնուրույն հայկական պետություն: Ըստ Սարաֆյանի, Երևանը պարսիկներից գրավելուց հետո պետք է սկսվեր ռազմական արշավանք Թուրքիայի դեմ՝ Թիֆլիս-Ախալցխա-Կարս և Երևան-Քայազետ-Վան ուղղություններով: Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավորը: Հայաստանը լինելու էր Ռուսաստանի հովանավորության տակ:

Ռուսաստանի համար հրատապ հարց դարձավ ամրապնդվել Կասպից ծովի ավազանում: Նոր արշավանքի իրագործումը հանձնարարվեց ռուս մեծ զորավար Ա.Վ.Սուվորովին, որը 1780թ. նախքան Աստարախան մեկնելը, Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ արքեպիսկոպոս, ռուսահայերի հոգևոր առաջնորդ Զովսեպի Արղությանի և Զովհաննես Լազարյանի հետ: Այդ հանդիպումների ժամանակ Սուվորովը մանրամասն տեղեկություններ հավաքեց Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի մասին: Նա հայ գործիչներին հուսադրում էր, որ հայկական պետականության վերականգնումը մոտակա խնդիր է, առավել ևս, որ 1783թ. ռուս-վրացական Գեորգիևյան դաշնագրով վրաստանը մտնում էր Ռուսաստանի հովանավորության տակ:

18-րդ դարի 80-ական թթ. հայ ազատագրական պայքարի ղեկավարները մշակեցին Հայաստանի ազատագրության երկու ծրագիր, որոնք հայտնի են Զյուսիսային և Հարավային անուններով:

1. 1783թ. Հ.Արղությանը 18 կետից /Զյուսիսային/ բաղկացած դաշնագրի նախագիծ է ներկայացնում ռուսական արքունիքին, որում խնդիր էր դրվում վերականգնել հայկական թագավորությունը, կնքել հայ-ռուսական հավիտենական դաշինք, հարթել հայ-ռուս կրոնական հարաձայնությունները: Եկատերինա II-ը հայկական թագավոր պետք է

ընտրեր հայերից կամ ռուսներից, որը պետք է օժվեր էջմիածնում: Հայաստանում պետք է պահվեր ռուսական զորք: Պատերազմի ժամանակ կողմերը պարտավոր էին միմյանց օգնել: Հայոց մայրաքաղաքը պետք է լիներ Վաղարշապատը կամ Անին: Հայկական թագավորությունը պիտի ունենար իր դրոշմ ու զինանշանը, դրամ կտրելու իրավունք: Առաջարկվում էր կնքել նաև հայ-ռուսական առևտրական պայմանագիր, Կասպից ծովում Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

II. 20 հոդվածներից բաղկացած հայ-ռուսական/Հարավային/ պայմանագրի մի ուրիշ նախագիծ է կազմում Շ.Շահամիրյանը, որի համաձայն դարձյալ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ իր պառլամենտով: Հայոց կառավարությունը ղեկավարելու էր ազգությամբ հայ նախարարը: Հայաստանը իր մշտական դեսպանը պետք է ունենար Պետերբուրգում: Ռուսական թագապետը պետք է մնար Հայաստանում՝ նրա ապահովության համար, և միայն Հայաստանը Ռուսաստանի տրամադրության տակ կզներ թագապետը թագապետ, անհրաժեշտության դեպքում նրան կվճարեր հարկ: Երկու երկրների միջև սահմանվելու էր ազատ երթևեկություն:

Այսպիսով, եթե Հ.Արղությանի ծրագիրը միապետական կարգեր ստեղծելու պահանջ էր դնում, ապա Շ.Շահամիրյանը առաջարկում էր ստեղծել հանրապետություն, որտեղ բուրժուական հարաբերությունների զարգացման համար կբացվեր լայն ասպարեզ:

Ցավոք, հայ-ռուսական դաշնագրի երկու նախագծերն էլ չդրվեցին քննարկման ռուսական իշխանությունների կողմից:

Ն
47. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 15- 17-ՐԴ ԴԴ.

15-17-րդ դդ. Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր վիճակը ավերիչ հետևանք ունեցավ հայ մշակույթի համար:

Այդուհանդերձ, այդ ժամանակում հայ մշակույթը որոշակի զարգացում ապրեց: 15-րդ դարում շարունակում են գործել Տաթևի հայտնի համալսարանը՝ Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ: Տաթևի համալսարանի փակումից հետո հայ բարձրագույն դպրոցը անկում ապրեց: 15-րդ դարի դպրոցներից թերևս կարելի է հիշատակել միայն Մեծոփի դպրոցը՝ Զովհաննես և Թովմա Մեծոփեցիների

զլխավորությամբ և Զերմոնի դպրոցը՝ Զովհաննես Զերմոնեցու ղեկավարությամբ: Որոշ դեր ունեին նաև Եղվարդի, Այրիվանքի, Ղրիմի Անտոնի վանքի և այլ դպրոցներ: 1620-ական թթ. հիմնադրվում է Զովհանավանքի դպրոցը, որը հետո տեղափոխվում է Եջմիածին: Այստեղ դասավանդում էին հայտնի մանկավարժ գիտնականներ Սիմեոն Զուղայեցին, Ոսկան Երևանցին և ուրիշներ: Այդ ժամանակ կարևոր ուսումնամշակութային կենտրոն էր նաև Բաղեշի վանքի դպրոցը: 1630-ական թթ. հիմնվում է Նոր Զուղայի դպրոցը հայտնի ուսուցիչ Կոստանդ Զուղայեցու ղեկավարությամբ:

17-րդ դարի սկզբից Սյունիքում հայտնի էր Սյունյաց Մեծ կամ Զարանց անապատի դպրոցը: Ներսես Մոկացու ջանքերով Լիմ կղզում ևս հիմնադրվում է դպրոց: Դպրոցներում անցնում էին փիլիսոփայություն, թվաբանություն, աստվածաբանություն, պատմություն և այլն:

16-րդ դ. հայ մշակույթի ամենախոշոր նվաճումը հայկական տպագրության հիմնադրումն էր: Գերմանացի Զովհան Գուտենբերգից կես դար անց՝ 1512թ. Վենետիկում Զակոբ Մեղապարտը հիմնադրում է հայ առաջին տպարանը, որտեղ մինչև 1513թ. տպագրում են «Պարզատունար», «Տաղարան», «Ուրբաթագիրք», «Պատարագատետր» և «Աղթարք» գրքերը:

Երկրորդ տպագրիչը Աբգար Թոխատեցին էր, որը իր որդու՝ Սուլթան-շահի հետ Մ.Սեբաստացու ծրագրով եկել էր Եվրոպա: 1565թ. նա տպագրում է «Տոմարացույց» և «Սաղմոսարան» գրքերը: Շուտով Թոխատեցու տպարանը տեղափոխվում է Կ. Պոլիս, որտեղ լույս է տեսնում Դեոմի Գրիգոր 13-րդ պապի կազմած տոմարի հայերեն թարգմանությունը: 17-րդ դարում հայկական տպարաններ են հիմնվում Նոր Զուղայում, Ամստերդամում, Լվովում և այլուր: Ամստերդամում լույս են տեսնում «Այբբենարան», «Քերականություն», «Աստվածաշունչ» և այլ գրքեր: 1584թ. Սուլթանշահը հրատարակում է «Տոնացույց» և «Տաղարան» գրքերը:

Դայ գրականությունը 15-17-րդ դդ. հարստանում է նոր անուններով: 15-րդ դարի աչքի ընկնող բանաստեղծ էր Մկրտիչ Նաղաշը, որը գրել է բնության, սիրո, գեղեցկության, պանդխտության մասին: Նա նաև եղել է լավ նկարիչ՝ նաղաշ, որից էլ ծագում է նրա անունը:

15-16-րդ դդ. նշանավոր բանաստեղծներ էին Առաքել Սյունեցին, Առաքել Բաղիշեցին, Զովհաննես Թլկուրանցին և ուրիշներ: Առաքել Բաղիշեցին գրել է ողբերգություն 1453թ. Բյուզանդիայի կործանման մասին, որտեղ հույս էր հայտնում, որ Կ. Պոլիսը և Վաղարշապատը մի օր

կազատագրվեն օտարի լծից:

16-րդ դարի խոշորագույն բանաստեղծ էր Նահապետ Քուչակը: Նա գովերգել է սերը, մարդասիրությունը, զբաղվել երաժշտությամբ:

Այս ժամանակում մեծ տարածում են գտնում երգերի ժողովածուները՝ «Տաղարանները» և առակների ժողովածուները՝ «Աղվեսագրքերը»:

Արվեստի ճանաչված բնագավառներ էին մնում մանրանկարչությունը, գորգագործությունը /վիշապագորգեր/, ոսկերչությունը և այլն: Դայտնի արհեստավորներ էին նոր ջուղացիները, որոնք ռուսաց Վլենքսեյ Միխայելովիչ ցարին նվիրեցին ալմաստե գահ: Նոր ջուղացիներից Աստվածատուր /Բոզդան/ Մալբանովը հայտնի զինագործ էր ռուսական արքունիքում, որտեղ նա հայտնվել էր 1666թ.: Նոր ջուղացիները նաև խաչքարերի մեծ վարպետներ էին: Նրանք Զուղայում կանգնեցրել էին մոտ 10 հազար խաչքար:

Թեև դանդաղ, սակայն հաստատուն քայլերով զարգանում էր գիտությունը: Դայտնի տոմարագետ և բնագետ, Մեծփի դպրոցի դասախոս Զակոբ Ղրիմեցու, «Մեկնություն տոմարի» և «Բնության մասին» աշխատությունները երկար ժամանակ ուսումնական ձեռնարկներ էին հայկական դպրոցներում:

15-րդ դարի հայտնի բժիշկ էր Ամիրդովլաթ Ամասիացին: Նա եղել է թուրքական սուլթանի անձնական բժիշկը և գրել «Ուսումն բժշկության» և «Անգիտաց անպետ» գրքերը: Վերջինս այբբենական կարգով գրված դեղանյութերի և բույսերի մի հանրագիտարան է: Ժամանակի բժիշկներից էին նաև Բունիաթ և Զովասափ Սեբաստացիները: 16-17-րդ դդ. զարգանում է նաև թարգմանական գրականությունը: 1621թ. Զովհաննես Անկյուրացին թարգմանեց «Կոսմոգրաֆիա» աշխատությունը:

Որոշակի զարգացում ապրեց պատմագրությունը:

Թովմա Մեծփեցի պատմիչը իր գրքում նկարագրել է 14-րդ դարի վերջի և 15-րդ դարի սկզբի արշավանքները Լեոկսեմուրի և թուրքմենական /կյուրուլու/ ցեղերի պատերազմի շրջանում: Նույն ժամանակի դեպքերի հեղինակ է Գրիգոր Խլաթեցին: 17-րդ դարի առաջին կեսի հեղինակ Գրիգոր Դարանաղցու, «Ժամանակագրությունն» ընդգրկում է 1018-1539թթ. դեպքերը:

Առաքել Դավրիժեցու պատմությունը, որը լույս է տեսել 1669թ. Ամստերդամում, կարևոր նյութ է պարունակում 17-րդ դարի դեպքերի մասին: 17-րդ դարի հայտնի պատմագիր է նաև Զաքարիա Քանաքեռցին, որի պատմությունը նվիրված է Արշակունիներից մինչև իր ապրած օրերի

դեպքերին: Հիշատակության արժանի է պատմիչ Երեմիա Քեոմուրճյանը, որը գրել է աշխատություններ օսմանյան կայսրության և աշխարհագրության մասին: 17-րդ դարի հեղինակ է Հակոբ Կարնեցին, որը գրել է Կարնո նահանգի 16-17-րդ դարերի պատմությունը:

**48. ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՎ ԱՆԳՐՎՈՎԿԱՍՈՒՄ 19-ՐԴ Դ. ՍԿՁԲԻՆ**

19-րդ դարի սկզբին Հայաստանը շարունակում էր մնալ բաժանված Օսմանյան կայսրության և Իրանի /Պարսկաստան/ միջև: Արևելյան Հայաստանը գտնվում էր Իրանի տիրապետության տակ և հիմնականում ընդգրկում էր Երևանի, Նախիջևանի, Մակուի, Գանձակի և 18-րդ դարում կազմավորված Ղարաբաղի խանությունների տարածքը: Արևելյան Հայաստանի հյուսիսային մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը գտնվում էին Վրաց թագավորության կազմում:

Երևանի խանությունը, որի մեջ հիմնականում Արարատյան դաշտն ու նրա հարակից շրջաններն էին, բաժանված էր 15 գավառների՝ մահալների: Ղարաբաղի խանությունն ընդգրկում էր պատմական Արցախի տարածքը /խամսայի մելիքություններ/ և Ջանգեզուրի զգալի մասը: Մահալների կառավարումը երբեմն իրականացնում էին հայ մելիքները: Որոշ ժամանակ Երևան քաղաքի հայ բնակչության կառավարումը եղել է Մելիք-Աղամալյանների ձեռքում: Ջգալի էր մելիքների ազդեցությունը Ղարաբաղում և Ջանգեզուրում: Երևանի խանության կառավարիչը սարդարն էր, որն օգտվում էր լայն իրավունքներից:

Արևելյան Հայաստանում հողերը պետական, մասնավոր և եկեղեցական էին: Գյուղացիները, որ շարունակում էին ապրել գյուղական համայնքներով, բազմաթիվ հարկեր էին մուծում պետությանը, կալվածատերերին և մահմեդական ու հայ հոգևորականությանը: Նրանք պարտավոր էին կատարել նաև զանազան պարիակներ: Հայ բնակչությունը ենթարկվում էր ազգային, կրոնական ու սոցիալական դաժան շահագործման:

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերն էին բամբակագործությունը, հացահատիկի ու բրնձի մշակությունը, այգեգործությունը, խաղողագործությունը, անասնապահությունը: Արհեստագործության և առևտրի կենտրոններ էին Երևանը, Նախիջևանը, Շուշին: Միևնույն մասնագիտությամբ

արհեստավորները միավորվում էին համքարություններում:

Թուրքահպատակ Արևմտյան Հայաստանը տրոհվում էր երգրումի /Կարինի/, Վանի, Կարսի, Ախալցխայի, Դիարբեքիի, Սեբաստիայի էյալեթների: Կիլիկիայի տարածքն ընդգրկված էր Ադանայի ու Մարաշի նահանգներում: Նահանգապետ-փաշաներից ամենաազդեցիկը երգրումի փաշան էր, որ կրում էր սերասկյար անունը և միաժամանակ կայսրության արևելյան շրջաններում տեղակայված զորքերի հրամանատարն էր: Հայ իշխանական տների շառավիղներն իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին Սասունում, Մուշում, Մոկսում, Ջեթունում:

19-րդ դարի սկզբին Անդրկովկասի քաղաքական իրադրությունը հիմնովին փոխվեց՝ Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացման պատճառով: 1801թ. Արևելյան Վրաստանը կցվեց Ռուսաստանին: Վրաց թագավորության հետ Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Իջևանը:

Դարասկզբին էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջ պայքար սկսեցին միաժամանակ կաթողիկոս հռչակված Դավիթն ու Դանիելը: Քանի որ Դավիթին պաշտպանում էր պարսից շահը, Ռուսաստանը նախընտրեց Դանիելին: Վրաստանում ռուսական զորքերի հրամանատար Ցիցիանովը, պարսիկներից մերժում ստանալով Դանիելի գահակալումը ճանաչելու մասին, առիթը բաց չթողեց Իրանի դեմ պատերազմ սկսելու համար: Ռուս-պարսկական պատերազմը ընթացավ 1804-1813թթ.: 1804թ. մայիսին ռուսները, արագորեն գրավելով Գանձակի /Գյանջա/ խանության տարածքը, շարժվեցին Արևելյան Հայաստանի ամենաուժեղ ամրոցի՝ Երևանի բերդի վրա: Սակայն հանդիպելով համառ դիմադրության՝ Ցիցիանովը ստիպված վերադարձավ Վրաստան:

1804թ. օգոստոսին պարսկական մեծաթիվ զորքերը Համամլուի /Սպիտակ/ մոտ շրջապատում են Լոռի-Փամբակը պաշտպանող մայոր Մոնտրեզորի 114 հոգանոց ջոկատը: Ռուսները հրաժարվում են հանձնվել և կռվում ու զոհվում են մինչև վերջին մարդը: Շուտով ռուսական զորքերն անցնում են հարձակման և գրավում Շիրակը: Այնտեղի Բուդաղ սուլթանը 1805թ. գավառը հանձնում է ռուսներին: Շիրակը այսպես միացվում է Ռուսաստանին: Չկարողանալով դիմադրել նույն 1805թ. մայիսի 14-ին Քյուրակչայ գետի ափին Ղարաբաղի Իբրահիմ խանը Ցիցիանովի հետ կնքած պայմանագրով իր խանությունը հանձնում է Ռուսաստանին:

Ռուս-պարսկական պատերազմը շարունակվում էր, երբ Ֆրանսիայի դրոմամբ 1806թ. դեկտեմբերին Թուրքիան պատերազմ է

սկսում Ռուսաստանի դեմ /1806-1812/: Թուրքերը հարձակումներ են գործում Ախալքալաքի և Ախալցխայի ուղղություններից: 1807թ. մայիսի 9-ին գեներալ Գուրդովիչը փորձում է գրավել Ախալքալաքի բերդը, սակայն տալով խոշոր կորուստներ, նահանջում է:

Ապա թուրքական 20 հազ. բանակը Յուսուֆ փաշայի հրամանատարությամբ հարձակվում է Գյումրիի վրա: Գուրդովիչը 7 հազ. զորքով օգնության է գալիս գյումրեցիներին: 1807թ. հունիսի 18-ին Ախուրյանի մոտ՝ Փոքր Ղարաքիլիսա գյուղի շրջակայքում տեղի ունեցած ճակատամարտում ռուսները հաղթանակ են տանում: Թուրքերը տալիս են 1000 սպանված, գերությունից մազապուրծ ազատվում է Յուսուֆ փաշան: Թուրքերին օգնության շտապող պարսիկները, առանց մարտի մեջ մտնելու, հեռանում են:

1808թ. սեպտեմբերին Գուրդովիչի զորքերը երկրորդ անգամ արշավում են Երևանի վրա: Այս անգամ էլ պարսիկներին հաջողվում է անառիկ պահել Երևանը: 1810թ. ռուսները լուրջ հաջողություն են ունենում թուրքերի դեմ Սև ծովի ափին, իսկ 1811թ. գրավում Ջավախք գավառի կենտրոն Ախալքալաքը: Դանուբի շրջանում ռուսների հաջողությունները ստիպում են Թուրքիային 1812թ. մայիսին հայազգի դիվանագետ Մանուկ բեյի աջակցությամբ, Բուխարեստում կնքելու հաշտություն, որով Ախալքալաքն ու Անդրկովկասում ռուսների գրաված մյուս քաղաքները ետ են վերադարձվում թուրքերին, իսկ Դանուբի շրջանում Բեսարաբիան անցնում է Ռուսաստանին:

1812թ. հունիսին Նապոլեոնը ներխուժում է Ռուսաստան: Օգտվելով դրանից՝ պարսիկները ակտիվացնում են իրենց գործողություններն Անդրկովկասում: Նապոլեոնին ջախջախելուց հետո ռուսներն անցնում են հարձակման նաև պարսիկների դեմ: Գահաժառանգ Աբաս-Միրզան Ղարաբաղում, Լենքորանում, Ասլանդուզում և Սեղրիում ծանր պարտություն է կրում, և Ֆաթի-Ալի Շահը հարկադրված 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում /Ղարաբաղ/ կնքում է հաշտություն: Այս պայմանագրով Իրանը մեկընդմիջտ հրաժարվում է Արևելյան Վրաստանից, Գանձակի, Ղարաբաղի խանություններից, Արևելյան Անդրկովկասից /Ադրբեջան/, Շիրակից, Ջանգեզուրից, Լոռուց, Շամշադինից, Դաղստանից:

Այսպիսով Արևելյան Հայաստանից Ռուսաստանին են անցնում Շիրակը, Ղարաբաղը, Լոռին, Ղազախը, Շամշադինը, Ջանգեզուրը: Սակայն Երևանի և Նախիջևանի խանությունները շարունակում են մնալ Պարսկաստանի տիրապետության տակ:

49. 1826-1828թթ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

1826թ. հուլիսին պարսկական գահաժառանգ Աբաս Միրզայի 60 հազ. բանակը, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժում է Ղարաբաղ: Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, որի հրահրողն Անգլիան էր:

Հուլիսի 26-ին պարսկական զորքերը պաշարում են Շուշիի բերդը: Բերդի ռուսական կայազորը /1700 հոգի/ տեղի և շրջակա գյուղերից հավաքված հայերի օգնությամբ, դիմում է ինքնապաշտպանության: Շուշիի պաշտպանությունը տևում է 47 օր, որը կարևոր նշանակություն է ունենում պատերազմի հետագա ընթացքի համար: (Պաշտպանությունը ղեկավարեց գեդապետ Ռեուտը: Շուշու մարտերի մասնակից Լազարյանը հետագայում հպարտությամբ հիշում էր Թարխանյան եղբայրների և մյուս հայ պաշտպանների մասին:

1826թ. հուլիսին Երևանի խանի զորքերը ներխուժում են Շիրակ և ավերելով ու ասպատակելով, շարժվում դեպի Գյումրի: Խըլի-Ղարաքիլիսի գյուղացիները, ռուս սահմանապահ զինվորների հետ բարիկաղներ են կառուցում ու դիմում ինքնապաշտպանության:

1826թ. սեպտեմբերի 3-ին Շամխորի մոտ հայ նշանավոր գեներալ Մադաթովի երկու հազ. ջոկատը ջարդում է պարսկական տասը հազարանոց զորամասը: Մարտի դաշտում թողնելով մեծ ավար՝ հակառակորդը փախչում է: Սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլի մոտ տեղի է ունենում ավելի մեծ ու վճռական ճակատամարտ: Ռուսական զորքերը /8 հազ./ գեներալ Ի. Պասկևիչի գլխավորությամբ ջախջախիչ հարված են հասցնում Աբաս Միրզայի 35 հազ. բանակին և դուրս շարտում գրավված շրջաններից: Սեպտեմբերի 21-ին Արագածի ստորոտում գտնվող Միրաք գյուղի մոտ ռուսական զորամասը Դենիս Դավիդովի ղեկավարությամբ, փայլուն հաղթանակ է տանում Երևանի խանի զորքերի դեմ:

1826թ. վերջերին և 1827թ. սկզբներին ռուսական զորքերը պատրաստվում են արշավելու Երևանի վրա: Ռուսների հաջողությունները ոգեշնչում են հայ բնակչությանը: Ներսես Աշտարակեցու և Հարություն Ալամդարյանի հայրենասիրական կոչերը լայն արձագանք են գտնում ժողովրդի մեջ: Հայրենիքի ազատության գաղափարով տոգորված՝ բազմաթիվ երիտասարդներ ցանկություն են հայտնում զենք վերցնելու և ռուսական զորքի հետ մասնակցելու Երևանյան արշավանքին: 1827թ.

գարնանը Թիֆլիսում, Ղարաբաղում և այլ վայրերում կազմակերպվում են կամավորական զույմարտակներ իրենց ազգային դրոշմերով, հայ հրամանատարներով: Լոռի- Փամբակում արդեն ճանաչում էին ձեռք բերել Մարտիրոս Վեքիլյանի, Շամշադինում՝ Գրիգոր Մանուչարյանի ջոկատները: 1827թ. մարտին Թիֆլիսում կազմավորվում է հայ կամավորական առաջին ջոկատը՝ բաղկացած 117 մարդուց:

1827թ. գարնանը վերսկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Ռուսական զորքերը զեներալ Ի. Պասկևիչի հրամանատարությամբ արշավում են Երևանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Երևանի և Նախիջևանի խանությունները: Յուրիսի կեսերից պատերազմական գործողությունները ծավալվում են Երևանի և Նախիջևանի խանությունների սահմաններում: Ն.Աշտարակեցու խոսքերով՝ մոտենում էր Արարատյան աշխարհի և հայ ժողովրդի ազատագրության ժամը:

Պասկևիչը հանձնարարում է զեներալ Կրասովսկու դիվիզիային պաշարված պահել Երևանի բերդը, իսկ ինքը, կռիվներ մղելով Աբաս Միրզայի զորքերի դեմ, գրավում է Կոտայքը, Գառնին, Արտաշատը, Վեդին և Նախիջևանը: 1827թ. հուլիսի 5-ին, Արաքսի ափին, Ջևանբուլաղում կատաղի ճակատամարտ է տեղի ունենում: Ռուսական զորքերը ջախջախիչ հարվածներ են հասցնում պարսիկներին և 2 օր հետո գրավում Աբասաբաղի բերդը: Աբաս Միրզան հարկադրված զինադադար է խնդրում:

Բանակցությունները տևում են մի քանի օր, Գրիբոյեդովը Աբաս Միրզային ներկայացնում է իր մշակած հաշտության պայմանները, որոնք հետագայում ընկան Թուրքմենչայի պայմանագրի հիմքում: Միրզան մերժում է Գրիբոյեդովի պահանջները:

Աբաս Միրզան ընդհատեց բանակցությունները և շատ չանցած, գաղտագողի հարձակվեց Էջմիածնի կայազորի վրա: Ներսես Աշտարակեցին կազմակերպեց Էջմիածնի պաշտպանությունը և օգնություն խնդրեց Արագածի ճամբարում գտնվող զեներալ Կրասովսկուց: 1827թ. օգոստոսի 17-ին Օջականի և Էջմիածնի միջև հակառակորդները հանդիպում են միմյանց: Արյունահեղ ճակատամարտում պարսկական 30 հազ. բանակը պարտություն է կրում:

Այս ճակատամարտի ժամանակ էր, որ պարսկական բանակում ծառայող թնդանոթածիզ Յակոբ Յարրությունյանը, չկարողանալով տանել պարսիկների բարբարոսությունները, իր հրանոթի փողն ուղղում է դեպի պարսկական զորքերը, կրակում նրանց վրա և խուճապ առաջացնում՝ փրկելով բազմաթիվ ռուսների ու հայերի կյանքը: Նա դիմում է փախուստի,

բայց պարսիկները բռնում են: Խոշտանգված հերոսը հրաշքով կենդանի է մնում: Կառավարությունը նրան պարգևատրում է միանվագ 100 ոսկով և ցմահ նշանակում տարեկան 100 ռուբլի թոշակ: Օջականի ճակատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնելու համար 1834թ. Էջմիածնի միջոցներով, ռուս ճարտարապետ Կամպանեյսկու նախագծով, հուշարձան է կառուցվում, որը մինչև օրս էլ կանգուն է:

1827թ. սեպտեմբերին ռուսական զորքերը գրավում են Մարդարաբաղը, նորից պաշարում Երևանի բերդը: Պասկևիչն առաջարկում է Յասան խանին առանց կռիվի հանձնվել, բայց մերժում է ստանում: Երևանի բերդը Արևելյան Յայաստանի ամենախոշոր ամրությունն էր: Յրազդան գետի կողմից այն պաշտպանված էր անմատչելի ժայռերով, մյուս կողմերից՝ բարձր ու հաստ կրկնակի պարիսպներով: Բերդն ամրացված էր անգլիական և ֆրանսիական հրանոթներով:

Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 հրանոթ մինչև լույս անընդհատ ռմբակոծում են բերդը, ավելի քան հազար ռումբ է նետվում քաղաքի վրա: Քանդվում են հարավային բուրգերն ու պարիսպները, բերդը կորչում է ծխի ու փոշու մեջ:

1827թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերը, նրանց թվում շատ դեկաբրիստներ և հայ կամավորներ, սրընթաց գրոհներով մտնում են բերդը: Ընկնում է պարսկական բռնակալության հենակետը Յայաստանում: Գերի է վերցվում ավելի քան 3000 հոգի, այդ թվում Յասան խանը: Գրավվում է 100 մետր թնդանոթ, մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք: Բերդի գրավման ժամանակ զոհվում է Խ. Աբովյանի «Վերջ Յայաստանի» վեպի հերոս, կամավորական Աղասին:

Երևանի գրավումը ռազմական, տնտեսական ու քաղաքական խոշոր նշանակություն ուներ: Դա ռուսական զորքերի ամենամեծ հաղթանակն էր 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմում: Այն մեծ ցնծությամբ ընդունվեց ողջ հայության կողմից:

Յոկտեմբերի 13-ին ռուսական զորամասերը մտնում են Թավրիզ: Տեղի հայերը աղ ու հացով են դիմավորում նրանց: 1827թ. վերջերին և 1828թ. սկզբներին ռուսական զորքերը գրավում են Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Մարաղան, Արդաբիլը և շարժվում դեպի Թեհրան: Շահը ստիպված հաշտություն է խնդրում:

1828թ. փետրվարի 10 /22/-ին Թուրքմենչայ գյուղում հաշտության պայմանագիր է կնքվում: Այդ պայմանագրով Արևելյան Յայաստանի մնացած մասը՝ Երևանի և Նախիջևանի խանությունները

անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ, կատարվում է ռազմագերիների փոխանակում: Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք է տրվում իրենց շարժական գույքով, մեկ տարվա ընթացքում գաղթել և բնակություն հաստատել ռուսական տիրապետության սահմաններում:

Ռուս-պարսկական սահմանը մի հատվածով ձգվում է Արաքս գետով: Պարսկաստանը պարտավորվում է վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք /կոնտրիբուցիա/: Ռուսաստանի և Պարսկաստանի միջև վերականգնվում են դիվանագիտական և առևտրական հարաբերությունները:

1828թ. գարնանը սկսվում է պարսկահայերի զանգվածային ներգաղթը: Շուրջ 40-42 հազար հայեր թավրիզի, Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Արդաբիլի և այլ շրջաններից գաղթում և մեծ դժվարություններ կրելուց հետո բնակություն են հաստատում Երևանի ու Նախիջևանի գավառներում, Վայոց Ձորում, Ջանգեզուրում, Ղարաբաղում և այլ վայրերում: Ներգաղթողները 6 տարով ազատվում էին հարկերից, տուրքերից: Աղքատներին դրամական օգնություն էր տրվում բնակարաններ կառուցելու համար:

Հայերի առաջին զանգվածային ներգաղթը և կենտրոնացումը Արևելյան Հայաստանում ունեցավ մեծ նշանակություն: Ազատագրվելով պարսկական խաների դաժան լծից, ձեռք բերելով անձի և գույքի ապահովություն, գաղթականները ձեռնամուխ եղան խաղաղ, ստեղծագործ աշխատանքի: Նրանց շնորհիվ Արևելյան Հայաստանում շեշտակի աճեց հայ բնակչության թիվը: Սա ներգաղթի ամենամեծ նշանակությունն էր:

50. 1828-1829 ԹԹ. ՌՌԻՍ- ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ

1828թ. ապրիլին պատերազմ է սկսվում Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Պատերազմական գործողությունները մղվում էին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում:

1828թ. հունիսին ռուսական բանակը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ անցնում է Ախուրյան գետը և շարժվում դեպի Կարս: Կարսի մատույցներում տեղի ունեցած հաղթական կռիվներից հետո, ռուսական զորքերը, դրանց թվում մի քանի հազար հայ

կամավորներ, պաշարում են Կարսի բերդը: Թուրքական կայազորը ուժեղ դիմադրություն է ցույց տալիս: Երեք օր շարունակ համառ մարտեր են փղվում բերդի պարիսպների տակ: Բայց, ինչպես միշտ, թուրքերը չեն դիմանում ռուսների հուժկու հարվածներին: Հունիսի 23-ին ռուսական զորքերը գրոհով վերցնում են Կարսի բերդը: Նրա ազատագրմանը ակտիվ մասնակցություն են ունենում տեղի հայերը:

Կարսի ազատագրումը չունեի ռազմավարական խոշոր նշանակություն: Դրանից հետո ռուսական զորքերը հուլիսի 24-ին գրավում են Ախալքալաքը, օգոստոսի 15-ին՝ Ախալցխան և օգոստոսի 28-ին՝ Արդահանը: Ախալցխայում թուրքերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս:

Ռուսական զորքերի հաղթանակները ոտքի են հանում նաև Բայազետի փաշայության հայերին, որոնք կազմում էին տեղի բնակչության 80 տոկոսը: 1828թ. օգոստոսին ռուսական զորքերի Երևանյան ջոկատը գեներալ մայոր Ա.Ճավճավաձեի հրամանատարությամբ մտնում են Բայազետի ու Ալաշկերտի գավառները:

1829թ. փետրվար-մարտ ամիսներին թուրքական զորքերը վերսկսում են պատերազմական գործողությունները: Նրանց հրահրում ու օգնում էր Անգլիան, որն ամեն կերպ աշխատում էր կանգնեցնել ռուսական զորքերի առաջխաղացումը:

Մեծ ուժեր կենտրոնացնելով Կարինում /երգրում/ թուրքերը հարձակման են անցնում Կարսի և Ախալցխայի ուղղությամբ: Նրանց հաջողվում է հանկարծակի ներխուժել Ախալցխա և մեծ կորուստներ պատճառել տեղի բնակիչներին ու կայազորին: Գեներալ Վ. Բեհբուբովի զորամասը և Բորժոմի կիրճով նրան օգնության հասած Բուրցովի զորքերը հերոսաբար մարտնչում են թշնամու գերակշիռ ուժերի դեմ և փախուստի նախնում նրանց: Կարսի ուղղությամբ ևս ռուսական զորքերը ետ են մղում թուրքերի հարձակումները և սրընթաց շարժվում դեպի Կարին: Նրանց հետ էր նաև ռուս բանաստեղծ Ալ.Պուշկինը:

1829թ. հունիսի 27-ին ռուսական զորքերը գրավում են Կարինը, որն Արևմտյան Հայաստանի ամենախոշոր քաղաքն էր, թուրքական վարչական ու ռազմական նշանավոր կենտրոնը: Ա.Պուշկինը իր «Ճանապարհորդություն դեպի Արգրում» երկուն նկարագրում է հայերի ոգևորությունը: Այնուհետև ռուսական զորքերը մեկը մյուսի ետևից գրավում են Խնուսը, Դերջանը, Քղին, Մուշը, Բայբուրդը /Բաբերդ/, Օլթին և այլ վայրեր: Մարտերին մասնակցում են շատ դեկաբրիստ սպաներ: Նրանցից գեներալ Բուրցովը հերոսաբար զոհվում է Բաբերդի

տակ:

Ինչպես ռուս-պարսկական, այնպես էլ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերը, կարծելով, թե ռուսները իրենց պետք է ազատագրեն մահմեդականների լծից, նյութական և ռազմական մեծ օգնություն են ցույց տալիս ռուսական զորքերին: Հայերից շատերը մտնում էին կամավորական ջոկատների շարքերը և զենքը ձեռքին մարտնչում թուրքական զավթիչների դեմ: Պուշկինը հիացմունքով պատմում էր Ղարաբաղի կամավորների քաջությունները: Բայազետում կազմավորվում է Մելիք-Մարտիրոսյանի 500 հոգանոց կամավորական ջոկատը:

1829թ. հունիսին, երբ ռուսական զորքերը շարժվում էին դեպի Կարին, Վանի փաշան 15 հազ. զորամասով ներխուժում է Ալաշկերտ: Ավերելով ու կողպատելով հայկական գյուղերը՝ թուրքական զորքերը պաշարում են Բայազետի բերդը:

Բայազետի ռուսական կայազորը /1800 հոգի/ և հազար հայ կամավորներ դիմում են ինքնապաշտպանության: Կայազորի դրությունը չափազանց ծանր էր: Թուրքական զորքերը մեծ բազմությամբ, աղմուկ-աղաղակով, քանիցս հարձակվում են կայազորի վրա և ամեն անգամ ծանր կորուստներ տալով՝ նահանջում: Սակայն, Բայազետի պաշտպանները փոքրաթիվ ուժերով անցնում են հակահարձակման ու թշնամուն դուրս շարտում քաղաքից: Բայազետի պաշտպանությունը ղեկավարում էին հրամանատարներ Պոպովը և Պանյուտինը: Քաջի մահով ընկնում է երիտասարդ հրետանավոր Սելիվանովը: Պոպովի վկայությամբ հայերը մեռնում էին որպես հերոսներ:

Ռուս-թուրքական պատերազմը ինչպես Բալկանյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատում ավարտվում է Ռուսաստանի հաղթանակով: 1829թ. սեպտեմբերի 2/14/-ին Ադրիանապոլսում կնքվում է հաշտության պայմանագիր:

Այդ պայմանագրով Սև ծովի Կովկասյան ափերը՝ Կուբանից մինչև Փոթի ներառյալ, Ախալցխան ու Ախալքալաքը անցնում են Ռուսաստանին: Թուրքիայի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք է տրվում գաղթել և բնակություն հաստատել Ռուսաստանին անցած տարածքներում: Վերականգնվում են դիվանագիտական և առևտրական կապերը և այլն:

Ադրիանապոլսի պայմանագիրն ամրապնդում էր Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերը Սև ծովի ու նեղուցների վրա, Բալկաններում և Անդրկովկասում: Թուրքական լծի տակ գտնվող

ժողովուրդների համար, ընդհանուր առմամբ, դա նպաստավոր պայմանագիր էր: Բայց այն չարդարացրեց արևմտահայերի հույսերը, որոնք ձգտում էին, արևելահայերի նման, միանալ Ռուսաստանին: Սակայն, արևմտաեվրոպական մեծ տերությունների ճնշման տակ, Ռուսաստանը հարկադրված Թուրքիային է վերադարձնում Կարսը, Արդահանը, Կարինը, Մուշը, Բայազետը, Ալաշկերտը և գրաված մյուս շրջանները:

Ադրիանապոլսի պայմանագիրն արևմտահայերի համար ծանր կացություն էր ստեղծում: Պասկևիչը նույնպես դժգոհ էր պայմանագրից: Նա առաջարկում էր զոհն Կարսն ու Բայազետը, որպես ռազմավարական կենտրոններ, չվերադարձնել Թուրքիային: Բայց դա էլ չի հաջողվում:

1829-1830թթ. Կարինի, Կարսի, Բայազետի շրջաններից գաղթում և Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում շուրջ 80 հազ. հայեր: Կարինի հատվածը /7300 ընտանիք/ բնակվում է հիմնականում Ախալցխայում և Ախալքալաքում, Կարսինը/ 2500 ընտանիք/ Շիրակի և Թալիշի շրջաններում, Բայազետինը /4215 ընտանիք/ Սևանա լճի ավազանում: Կարինի հայերի հետ գաղթում էին նաև հույներ, որոնք բնակվում են Ծալկայի շրջանում:

Ներգաղթողները վեց տարով ազատվում էին հարկերից ու տուրքերից, կարիքավորներին տրվում էր դրամական օգնություն: Գաղթականները կառուցեցին բնակարաններ, հողը մշակեցին, այգիներ տնկեցին, ջրանցքներ ու ճանապարհներ շինեցին, կենդանություն ու շունչ տվեցին բազմաթիվ հին ու նոր բնակավայրերի: Ցարիզմի ցույց տված օգնությունը չնչին էր, ուստի երկար ժամանակ հայ գաղթականները մեծ զրկանքներ կրեցին և նույնիսկ նրանց մի մասը նորից վերադարձավ Արևմտյան Հայաստան:

Ընդհանուր առմամբ, ինչպես պարսկահայերի, այնպես էլ արևմտահայերի գաղթը դեպի Անդրկովկաս ունեցավ մեծ նշանակություն. Արևելյան Հայաստանում հայության թիվը զգալիորեն աճեց և այն կրկին վերածվեց հայահավաք օջախի:

**51. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ
19-ՐԴ ԴԱՐԻ 30-60-ԱՎԱՆ ԹԹ.**

Արևելյան Հայաստանում խանական կարգերի տապալումից հետո անհրաժեշտ էր ստեղծել նոր իշխանություն: 1827թ. վերջերին մի

խումբ հայ հայրենասերները /Լազարև, Խուդաբաշյան, Կ. Արղուբյան/ նախագիծ են կազմում Ռուսաստանի հովանու տակ ինքնավար իշխանություն ստեղծելու վերաբերյալ: Այդ նախագծի համաձայն, Արևելյան Հայաստանը պետք է ունենար ինքնավարություն, իր օրենքները, զինանշանը և ազգային դրոշը: Պետական պաշտոնյաները պետք է լինեին հայեր: Երկրի պաշտպանության համար պետք է ստեղծվեր հայկական զվարդիա և այլն:

Ցարական կառավարությունը, բնականաբար, չի ընդունում Հայաստանի ինքնավարության նախագիծը: 1828թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի հրամանագրով, Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմվում է Հայկական մարզ, որը որպես առանձին վարչական միավոր մտնում էր կայսրության կազմի մեջ և պետք է ունենար իր դրոշը և զինանշանը:

Հայկական մարզը կառավարում էր մարզային վարչությունը, որի պետը 1828-1830թթ. գեներալ Ալ.ճավճավաձեն էր, իսկ 1830-1838թթ.՝ գեներալ Վ.Բեհբուլոբը: Հին խանական հետամնաց օրենքներն ու վարչաձևերը ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում աստիճանաբար փոխարինվում էին ռուսական օրենքներով ու վարչաձևերով: Հայկական մարզը բաժանվում է 4 գավառի:

1830-1840-ական թվականներին Անդրկովկասում կատարվում են մի շարք վարչական փոփոխություններ: 1840թ. վերացվում է Հայկական մարզը: Ստեղծվում է 2 վարչամիավոր՝ Վրացա-իմերեթական նահանգ և Կասպիական մարզ: 1844թ. հիմնվում է Կովկասի փոխարքայությունը: Առաջին փոխարքա է դառնում փորձված գործիչ Ս.Վորոնցովը: 1846թ. Անդրկովկասը բաժանվում է նահանգների: 1849թ. հիմնվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում են Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները:

1836թ. մարտի 11-ին հրապարակվում է եկեղեցական կանոնադրություն, որով սահմանվում էին հայ եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և կառավարության փոխհարաբերությունները: Հայ եկեղեցին չէր խառնվելու պետական գործերին, այլ զբաղվելու էր դպրոցի, ծեսերի և այլ հարցերով: Դրանով ցարիզմը փորձում էր սահմանափակել հայ առաքելական եկեղեցու իրավունքները: Ըստ կանոնադրության՝ Ռուսաստանում ստեղծվում էր հայկական հոգևոր 6 թեմ: Հետամնաց ֆեոդալական Պարսկաստանի ու Թուրքիայի լծի տակ Հայաստանը դարձրելով շարունակ մնացել էր զարգացման ցածր մակարդակի վրա: Զգալիորեն նվազել էր հայ բնակ-

չությունը: Պարսկահայերի ու արևմտահայերի զանգվածային ներգաղթի շնորհիվ հայերը կազմեցին երկրի բնակչության կեսից ավելին:

Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքը կանգնեց զարգացման նոր ուղու վրա: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ: Հողը մշակվում էր եռադաշտային եղանակով, նահապետական գործիքներով: Բավական ցածր էր աշխատանքի արտադրողականությունը: Բնակչության մի մասը զբաղվում էր արհեստներով ու առևտրով: Տարածված արհեստներից էին ջուլհակությունը, դարբնությունը, հյուսնությունը, բրուտագործությունը, քարտաշությունը, կոշկակարությունը, ներկարարությունը, պղնձագործությունը, ոսկերչությունը: Հայ արհեստավորության աչքի ընկնող կենտրոններ էին Երևանը, Ալեքսանդրապոլը, Նախիջևանը, Թիֆլիսը, Ախալցխան, Շուշին, Ելիզավետպոլը: Արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունները, որոնք կոչվում էին համքարություններ:

Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում սկսում են զարգանալ առևտուրն ու համքարայնաբերությունը: Աճում ու ընդլայնվում են Ալավերդու և Ղափանի պղնձի, Կողբի ու Նախիջևանի աղի արդյունահանումն ու արտադրությունը:

Աճում է նաև քաղաքների բնակչությունը: 1850թ. Երևանն ուներ 12.600, իսկ Ալեքսանդրապոլը՝ 11.300 բնակիչ:

19-րդ դարի առաջին կեսին Հայաստանում արդյունաբերական խոշոր կենտրոններ չստեղծվեցին: Հայ առևտրա-արդյունաբերողներն /Միրզոյան, Իզմիրյան, Թամամշյան և ուրիշներ/ իրենց կապիտալը ներդնում էին Անդրկովկասի վարչական կենտրոն Թիֆլիսում, Սև և Կասպից ծովերի առափնյա վայրերում: Հայերը մեծ թիվ էին կազմում Թիֆլիսում, Բաքվում, Ախալցխայում, Ելիզավետպոլում, Շամախիում, Ախալքալաքում:

Ցարական կառավարության վարած մեծապետական քաղաքակա- նությունն Անդրկովկասում 19-րդ դ. 30-40-ական թվականներին ավելի որոշակի է դառնում: Ֆինանսերի մինիստր Կանկրինը Անդրկովկասն անվանում էր Ռուսաստանի գաղութ: 1840թ. ցարին ներկայացված մի պաշտոնական զեկուցագրում ասված է, թե Անդրկովկասի ժողովուրդներին հարկավոր չեն համալսարաններ, ֆաբրիկագործարաններ:

1840-ական թվականներին Անդրկովկասում անցկացվում են մի շարք վարչական ու տնտեսական բարեփոխումներ: 1846թ. դեկտեմբերի

6-ի ցարական հրովարտակով Անդրկովկասի խաները, բեկերն ու մելիքները ճանաչվում են հողի ժառանգական սեփականատերեր: Ցարական կառավարության այդօրինակ քաղաքականությունը մեծ դժգոհություն է առաջ բերում հատկապես գյուղացիության մեջ:

Չկարողանալով տանել այդ ճնշումները՝ գյուղացիները հաճախ պայքարի էին ելնում իրենց ճնշողների դեմ: Սկզբնական շրջանում գյուղացիների պայքարը հիմնականում ուղղված էր կալվածատերերի դեմ: Նրանք նույնիսկ պաշտպանություն էին սպասում ցարից: 1837թ. հոկտեմբերին, երբ Նիկոլայ 1-ը այցելում է Ռուսաստան, Արարատյան դաշտի գյուղացիները ճանապարհին, տների կտուրների վրա կրակ են վառում, կամենալով ցարին հասկացնել, թե իրենք էլ այդպես վառվում են կալվածատերերի ու պաշտոնյաների ձեռքին: Գյուղացիական շարժումները հետագայում ավելի լայն չափեր են ստանում Շիրակում /Ռոռոմ գյուղ/, Նոր Բայազետում, Կոտայքում, Դարալագյազում և այլուր:

52. ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԼԾԻ ՏԱԿ 19-ՐԴ ԴԱՐԻ 30-60-ԱՎԱՆ ԹԹ.

Ռուս-թուրքական պատերազմները Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում էական փոփոխություններ չմտցրին: Հետամնաց ֆեոդալական թուրքիայի լծի տակ մնացած արևմտահայերի տնտեսական և քաղաքական դրությունն ավելի վատացավ, մինչդեռ Ռուսաստանի տիրապետության տակ անցած արևելահայերը հայտնվեցին կյանքի ավելի բարվոք վիճակում:

Սուլթանական կառավարությունը, թուրք փաշաներն ու քուրդ բեկերը շարունակում էին իրենց բռնություններն ու կամայականությունները հայերի նկատմամբ: Թուրքիայում հայերը համարվում էին ռայա, այսինքն՝ իրավագուրկ, հպատակ, չունեին կյանքի ու գույքի ապահովություն: Առանձնապես ծանր էր բնակչության 90 տոկոսից ավելին կազմող գյուղացիության դրությունը: Գյուղացիները մշակում էին պետությանը և կալվածատերերին պատկանող հողերը, ամբողջ տարին չարքաշ աշխատում, իսկ արդյունքի մեծ մասը հափշտակում էին պետությունը, թուրք փաշաներն ու քուրդ բեկերը:

Սուլթանական կառավարությունը բազմաթիվ ու բազմապիսի հարկեր ու տուրքեր էր գանձում ժողովրդից: Հարկային բեռն ընկած էր գերազանցապես գյուղացիների վրա: Գլխավոր հարկը աշարն էր, որը

օրենքով կազմում էր բերքի 1/10 մասը, բայց իրականում հասնում էր կրկնակի, եռակի չափերի: Աշարից բացի գանձում էին նաև գլխահարկ, անասնահարկ, ճանապարհների, արոտների, զբաղմունքի և բազմաթիվ այլ հարկեր ու տուրքեր:

Արևմտյան Հայաստանում բավականաչափ զարգացած էին արհեստներն ու առևտուրը, որոնք թուրքիայում կենտրոնացված էին հայերի և հույների ձեռքում: Առևտրի ու արհեստի, տնտեսական ու մշակութային կյանքի անխտիր բոլոր բնագավառներում հայերն առաջատար դեր էին կատարում:

Արհեստավորները կենտրոնացած էին քաղաքներում: Արևմտյան Հայաստանի մշակութային քաղաքներից էին՝ Կարինը, Վանը, Երզնկան, Խարբերդը, Բիթլիսը: Մեծ թվով հայ արհեստավորներ կային նաև Կոստանդնուպոլսում և Ջնյունիայում: Արհեստավորների մեծ մասն ընդգրկված էր համքարական կազմակերպությունների մեջ, որոնք կոչվում էին էսնաֆություն կամ եղբայրություն: Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ բաժանված Վանի, Էրզրումի, Դիարբեքի, Սեբաստիայի, 60-ական թթ.՝ Բիթլիսի և Խարբերդի վիլայեթների: Կարսի վիլայեթը միացվել էր Էրզրումին:

Երկրի ընդհանուր ճգնաժամը կանխելու նպատակով սուլթանական կառավարությունը 1839 և 1856թթ. իրապարակեց մանիֆեստներ՝ ազդարարելով ազգերի իրավահավասարություն, հարկերի, դատական գործի բարելավում և այլն: Սակայն այդ բարենորոգումները մնացին թղթի վրա:

Կ. Պոլիսը հայկական հնագույն այն գաղթավայրերից էր, որն աստիճանաբար դարձավ արևմտահայերի հասարակական-քաղաքական և մշակութային ամենախոշոր կենտրոնը: Այնտեղ ապրում էր սոցիալական տարբեր խավերի պատկանող ավելի քան 200 հազ. հայ: Պոլսում էր գտնվում արևմտահայ հոգևոր կենտրոնը՝ պատրիարքարանը:

Հայ մտավորականությունը աչքի ընկնող դեր էր կատարում թուրքիայի մշակութային կյանքում: Նրանցից Արապյանը ստեղծեց թուրքական գրեր /Արապյան գրեր/:

1853թ. աշնանը սկսվում է Ղրիմի կամ Արևելյան պատերազմը Ռուսաստանի և թուրքիայի միջև: 1854թ. թուրքիային են միանում Անգլիան, Ֆրանսիան և Սարդինական թագավորությունը: Ռուսաստանի դեմ ուժեղ կռալիցիա է ստեղծվում: Ռուսաստանը ձգտում էր գրավել Արևմտյան Հայաստանը, հատկապես Բոսֆորի և Դարդաանեղի նեղուցները, Բալկանները, իսկ թուրքիան՝ Կովկասը:

Պատերազմական գործողությունները ծավալվում են Դանուբի, Դրիմի և Կովկասի ռազմաճակատներում: Թուրքական զորքերը ներխուժելով Հայաստանի ու Վրաստանի սահմանամերձ շրջանները կոտորում ու կողոպտում են խաղաղ բնակիչներին: Շուտով ռուսական զորքերը հակահարձակման են անցնում և տանում խոշոր հաղթանակներ:

1853թ. նոյեմբերին Բաշկադըկլար գյուղի մոտ ռուսական 10 հազ. զորամասը, հայ նշանավոր զեներալ Վ.Բեհբուբովի հրամանատարությամբ, պարտության է մատնում թուրքական 36 հազ. կորպուսին և ետ չարտում դեպի Կարս:

1854թ. հուլիսին, Զյուրուկդարայի ճակատամարտում, զեներալ Վ.Բեհբուբովի 18 հազ. զորամասը ջախջախում է թուրքական 60 հազ. զորաբանակը և ցիրուցան անում: 1855թ. նոյեմբերին ռուսական զորքերը, զեներալ Սուրավյովի հրամանատարությամբ, գրավում են Հայաստանի նշանավոր կենտրոն Կարսը: Սակայն Դրիմում ռուսները միաժամանակ անհաջողություններ էին կրում:

Ինչպես նախորդ ռուս-թուրքական այնպես էլ Դրիմի պատերազմը ազատագրության հույսեր էր արթնացրել արևմտահայերի մեջ: Հայերը ամեն կերպ օգնում էին ռուսական բանակին:

Սակայն այս անգամ էլ հայերի ծգտումները չիրականացան: 1856թ. մարտին Փարիզում կնքված հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանում գրավված բոլոր շրջանները վերադարձվեցին Թուրքիային: Փոխադարձաբար Ռուսաստանը վերադարձրեց Դրիմում կորցրած հողերը:

Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: 1857թ. Պոլսի Ռևսումնական խորհրդի անդամներ՝ Ն.Ռուսինյանը, Գ.Օտյանը, Ա.Վիչենյանը /Մերվիչեն/, Ն.Պայանը և ուրիշներ մշակում են արևմտահայ ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն, որը կոչում են «Ազգային սահմանադրություն» և ներկայացնում Ազգային ժողովի հաստատմանը: 1859թ. դեկտեմբերին սահմանադրական հանձնաժողովը ներկայացնում է բարեփոխված կանոնադրություն, որը մերժվում է:

Ամիրաներն ու հոգևորականները, բոլոր հետադիմական ուժերը, կատաղի պայքար են սկսում սահմանադրության դեմ: Հ.Սվաճյանի «Մեղու»-ն և մյուս առաջադիմական թերթերը պաշտպանում են սահմանադրությունը և պայքարում հակասահմանադրական, հետադիմական տարրերի դեմ: Սահմանադրության կողմնակիցները հաղթում են:

1860թ. մայիսի 24-ին Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը

հաստատում է սահմանադրությունը: Երեք տարի քաջքշելուց և մի շարք կարևոր կետեր դուրս գցելուց հետո /150-ից մնում է 99 կետ/, 1863թ. մարտի 17-ին թուրքական կառավարությունը վավերացնում է Ազգային սահմանադրությունը, որը հաճախակի ընդհատումներով գործադրվում է:

Ազգային սահմանադրության համաձայն, կազմվում է Ազգային ժողով, Ազգային կենտրոնական վարչություն, ուսումնական, տնտեսական և դատաստանական խորհուրդներ: Սահմանվում են արևմտահայերի ներքին գործերի, ազգային ու կրոնական մարմինների և առանձին անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Այսպիսով, համառու տևական պայքարից հետո արևմտահայ ժողովրդավարական խավերին հաջողվում է ամիրաներին զրկել ազգային գործերը տնօրինելու մենաշնորհի իրավունքից, ինչպես Մ. Նալբանդյանն է ասում՝ «ազատելով ազգը մի քանի բռնակալ թշվառականների լծից»:

Ազգային սահմանադրությամբ կյանքի կոչված վերոհիշյալ մարմինները, իհարկե, ժողովրդավարական իշխանության լիարժեք մարմիններ չէին: Սուլթանական բռնապետական կարգերում նման բան չէր էլ կարող լինել: Բայց, չնայած դրան, իր ժամանակին Ազգային սահմանադրությունն ունեցավ առաջադիմական նշանակություն և դրական դեր կատարեց արևմտահայ կյանքում:

53. ՁԵՅԹՈՒՆԻ 1862Թ. ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆ

Ձեյթունը կամ Ռւլնիան գտնվում էր Կիլիկիայում, Մարաշից հյուսիս, Տավրոսի լեռներում: Ձեյթուն կենտրոնում և շրջակա գյուղերում, բնատնտեսության պայմաններում ապրում էին շուրջ 35-40 հազ. հայեր: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով:

Ձեյթունցիները վաղուց ի վեր գտնվում էին կիսանկախ վիճակում և միայն տարեկան որոշ քանակությամբ հարկ էին վճարում սուլթանական կառավարությանը: Մարաշի փաշաները շատ փորձեր էին արել զեյթունցիներին զրկելու իրենց կիսանկախ վիճակից, բայց այդ նրանց չէր հաջողվել: 1860 թ. անհաջող էր նաև Խուրշիդ փաշայի փորձը՝ Ձեյթունը հպատակեցնելու ուղղությամբ:

1862թ. Մարաշի Ազիզ փաշան զեյթունցիներից պահանջում է վճարել մի քանի տարվա հարկ: Ձեյթունցիները մերժում են փաշայի

ապօրինի պահանջը: Օգտագործելով այդ առիթը՝ 1862թ. հուլիսին Ազիզ փաշան 10 հազ. գործով հարձակվում է Ձեյթունի վրա: Ավերելով, կողոպտելով ու այրելով մի քանի հայկական գյուղեր՝ օգոստոսին թուրքերը պաշարում են Ձեյթունը: Անվեհեր զեյթունցիք դիմում են ինքնապաշտպանության: Ապստամբությունը գլխավորում են 4 տանուտերերը՝ Շավրոյանը, Սուրենյանը, Յաղուբյանը և Ենի-Տունյանը:

Օգոստոսի 2/14/-ի առավոտյան Ազիզ փաշայի զորքերը մի քանի ուղղությամբ գրոհում են Ձեյթունի վրա: Ձեյթունցիները, այդ թվում կանայք և ծերեր, միահամուռ ուժերով հերոսական դիմադրություն են ցույց տալիս թշնամուն: Ձեյթունի մատույցներում ամբողջ օրը կատաղի մարտեր են տեղի ունենում: Ետ են մղվում թուրքերի բոլոր գրոհները:

Ձեյթունցիներից շատերն այդ մարտերում քաջության օրինակներ են տալիս: Երիտասարդ Մարկոս Թաշճյանը, տեսնելով, որ հակառակորդի մի հրանոթ շատ է վնասում իրենց, որոշում է անցնել թշնամու դիրքերը և շարքից հանել հրանոթածոցին: Նա կարողանում է սեփական կյանքի գնով կատարել այդ դժվարին խնդիրը: Գրող Մկրտիչ Պեշիկաշյանը բանաստեղծությունների մի շարք է նվիրում հերոսին: Աչքի է ընկնում իր հերոսությամբ նաև Մահտեսի Գրիգորը:

Ձեյթունցիներն, օգտագործելով բնական պայմանները, անմատչելի լեռներն ու կիրճերը, հաճախ թակարդ են սարքում և մեծ կորուստներ պատճառում հակառակորդին: Մի անգամ նրանցից 500 հոգի կռվի են բռնվում թուրքերի հետ և ապա փախուստի դիմում: Թուրքական զորքերը ոգևորված իրենց հաղթանակով՝ հետապնդում են նրանց և երբ մտնում են Ձեյթունի ձորը, ձորի երկու կողմերում դիրքավորված զեյթունցիները սկսում են կրակ տեղալ և քարեր գլորել: Ծուղակն ընկած թշնամին, կորցնելով ավելի քան 750 հոգի, խուճապահար փախուստի է դիմում: Ձեյթունցիները այդ ձորը անվանում են «Կոտորածի ձոր»:

Ձեյթունը զրավելու բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն: Թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած երկու հրանոթները, փախուստի են դիմում:

Սուլթանական կառավարությունը որոշում է նոր արշավանք կազմակերպել Ձեյթունի վրա՝ Ազիզ փաշային փոխարինած, իր դաժանությամբ հայտնի Աշիր փաշայի ջանքերով: Բայց այն տեղի չի ունենում: Գործին միջամտում են Պոլսի հայ պատրիարքը և ֆրանսիական ղեսպանը: Ձեյթունի վերնախավի ներկայացուցիչները համաձայնում են ֆրանսիայի օգնության ղեպքում կաթոլիկություն ընդունել: Թուրքական կառավարությունը և հայ պատրիարքը, վախենալով զեյթունցիների

կաթոլիկություն ընդունելու և ֆրանսիայի ազդեցության տակ ընկնելու վտանգից, դիմում են փոխզիջման՝ կոմպրոմիսի: Քննիչ հանձնաժողով է ուղարկվում Ձեյթուն: Կնքվում է հաշտություն՝ փոխադարձ զիջումներով:

1865 թվից Ձեյթունում նշանակվում է թուրք կառավարիչ՝ կայմակամ: Ձեյթունցիները կորցնում են իրենց առաջվա կիսանկախ վիճակը և պարտավորվում հարկ վճարել: Նրանց նաև իրավունք է տրվում համայնքի ներքին գործերում պահպանել ինքնուրույնություն:

Ձեյթունի 1862թ. ինքնապաշտպանությունը խոշոր ազդեցություն ունեցավ հայ ազատագրական շարժման հետագա ընթացքի վրա: Մ.Նալբանդյանը, Գ.Սվաճյանը, Ծերենցը և ուրիշներ կապեր են ունեցել ազատասեր զեյթունցիների հետ, օգնություն ցույց տվել նրանց: Հայ նշանավոր բանաստեղծ Ս.Շահագիզը ապստամբությունը համարել է «Հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

54. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Այս ժամանակաշրջանի հայ մշակույթի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ մայր հայրենիքում ստեղծված քաղաքական ծանր կացության պատճառով, մշակութային կյանքը հիմնականում զարգացման հասավ օրեցօր ստվարացող հայկական գաղթօջախներում՝ Հնդկաստանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում, Վենետիկում, Նոր Ջուղայում, Նոր Նախիջևանում և այլուր:

Դպրոց. Հայ դպրոցը մնում էր մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը: 18-րդ դարում բացված հայտնի դպրոցներ էին Վենետիկի Սուրբ Ղազար կղզու վանական և Պոլսի Սկյուտար թաղամասի դպրոցները: Երկուսն էլ երկար կյանք ունեցան և մեծ դեր խաղացին հայ կրթական կյանքում: Լուսավորության բնագավառում խիստ կարևոր էր 1763թ. էջմիածնում Սիմեոն Երևանցու ջանքերով բացված դպրոցի հիմնադրումը:

Հայ կրթական կյանքը վերելք ապրեց միայն 19-րդ դարից, երբ բացվեցին բազմաթիվ բարձրագույն դպրոցներ: 1810թ. Աստրախանում հիմնվեց Աղաբաբյան դպրոցը: Ռուսաստանում հաստատված հայտնի Լազարյան տոնի նշանավոր գործիչ Հովհաննես Լազարյանի կտակի համաձայն, 1815թ. Մոսկվայում բացվեց համբավավոր Լազարյան ճեմարանը /այժմ ՀՀ ղեսպանատուն/: 1824թ. Ներսես Աշտարակեցու

ջանքերով թիֆլիսում հիմնվեց Ներսիսյան դպրոցը: Այս երկու կրթօջախներում իրենց ուսումն են առել բազմաթիվ հայ մտավորականներ:

1837թ. Երևանում և 1838թ. Շուշիում բացվեցին հայտնի թեմական դպրոցները: 19-րդ դարի առաջին կեսին բացվեցին Վենետիկի Սուրադ-Ռաֆայելյան, Ջմյուռնիայի Մեսրոպյան, Կալկաթայի, Վանի, Էրզրումի, Փարիզի և այլ դպրոցներ:

Պատմագրությունը: 18-րդ դարի 20-ական թթ. ազատագրական շարժումների պատմության մասին կարևորագույն աղբյուրներ են Եսայի Դասան-Ջալալյանի «Պատմութիւն Աղուանից» և Ստեփանոս Շահումյանի «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեկին» աշխատությունները: Աբրահամ Երևանցին գրել է թուրք-իրանական 17-18-րդ դարերի պատերազմների և Երևանի 1724թ. ինքնապաշտպանության մասին:

Միքայել Չամչյանը գրեց իր եռահատոր «Հայոց պատմությունը», որը խորենացու աշխատությունից հետո երկրորդ գիրքն էր հայոց ամբողջական պատմության մասին՝ հարստացված բազմալեզու սկզբնաղբյուրներով: Մխիթարյաններից ճանաչված էր նաև Ղուկաս Ինճիճյանը, որը բազմաթիվ պատմա-աշխարհագրական աշխատությունների հեղինակ էր: Վիեննայում լույս տեսած «Տիեզերական պատմության» երկհատորյակը մեծ ճանաչում բերեց պատմաբան Հ. Գաթրոջյանին: Հայոց պատմությամբ սկսեցին զբաղվել նաև օտարները, ինչպես ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան, որը գրեց «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը: 1836-37թթ. Մխիթարյանները հրատարակեցին 50 տարվա կոլեկտիվ ջանքերի արդյունք հանդիսացող «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի» բառարանը: Բնական գիտությունների բնագավառում որոշակի արժեք են ներկայացնում Ս. Աղամալյանցի «Թվաբանության» դասագիրքը, Ս. Պրոնյանի «Երկրաչափություն» աշխատությունը /1794/:

Նշանավոր բժիշկ էր Պետրոս Զալանթարյանը, որը 1798թ. հրատարակում է «Բժշկարան» ուսումնասիրությունը: Հայտնի բժիշկ էր, բուսաբան Ստեփանոս Շահիրյանը:

Գրականություն. 18-րդ դ. բանաստեղծներ էին Պաղտասար Դպիրը և Պետրոս Ղափանցին, որոնք գրել են հայրենիքի կարոտի մասին: 18-րդ դ. խոշորագույն բանաստեղծը Սայաթ-Նովան է /Հարություն Սայադյան, 1717-1794թթ./: Ծնվել է 1717թ. Լոռու Սանահին գյուղում: Նա երգել է սերը, հայրենիքը: Աշուղական երգերից ճանաչված են նրա «Քյամանչա», «Աշխարքս մե փանջարա է» և այլ ստեղծագործություններ:

Հ.Թումանյանի նախածեղծությամբ 1914 թվից նշվում է Սայաթ-Նովայի տոնը Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցում: ;

19-րդ դարի առաջին կեսի հայտնի գրողներ էին Հարություն Ալամդարյանը /1796-1834/ և Մեսրոպ Թաղիադյանը /1803-1858/: Ալամդարյանը, որ լիրիկ բանաստեղծ էր, սովորել և աշխատել է Աղաբախյան և Ներսիսյան, Լազարյան դպրոցներում: Թաղիադյանը «Ազգասեր» և այլ թերթերի խմբագիրն էր, ջերմ հայրենասեր, մանկավարժ, առաջին իզական դպրոց բացողը:

Բոլոր հայ գրողները շարունակում էին գրել միայն դասական լեզվով /գրաբար/, մինչդեռ ժողովրդի մեծ մասը այդ լեզուն չգիտեր և խոսում էր աշխարհաբարով: Առաջին հեղինակը, որը գրեց աշխարհաբարով և դարձավ հայ նոր գրականության հիմնադիր, Խաչատուր Աբովյանն էր /1809-1848/: Ծնվել է Քանաքեռում, սովորել էջմիածնում: 1829թ. Դորպատի /Տարտու՝ Էստոնիա/ համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտի հետ բարձրացել է Արարատի գագաթը: 1830թ. սովորել է Դորպատում Պարրոտի մոտ: Տիրապետել է մի քանի լեզուների: Ձբաղվել է մանկավարժությամբ՝ Թիֆլիսում, Երևանում: Գրել է նշանավոր «Վերք Հայաստանի» վեպը, որի հերոս Աղասին մարմնավորել է 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի հայ կամավորների կերպարը: Աբովյանին են պատկանում «Շունչ տուր, կյանքդ տուր, բայց հայրենիքդ ուրիշին մի տուր» խոսքերը: Աբովյանը նաև մեծ ռուսասեր էր և ողջունեց ռուսների մուտքը Անդրկովկաս:

Մամուլ. 18-րդ դարի վերջին հայ մշակույթի ամենախոշոր նվաճումը հայ մամուլի ստեղծումն էր: 1794թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ առաջին հայկական ամսագիրը՝ «Ազդարարը» Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ: Այն ուներ քաղաքական, տնտեսական լուրերի բաժիններ: 19-րդ դարի առաջին կեսին հրատարակվեցին 30-ից 40 անուն թերթեր և ամսագրեր՝ բոլորն էլ Հայաստանից դուրս, ինչպես «Բազմավեպը» /Վենետիկ/, «Ազգասերը» /Կալկաթա/, «Լրո գիրը» /Կ. Պոլիս/, «Կովկասը», «Արարատը» /Թիֆլիս/ և այլն:

Տպագրության գյուտից շատ անց, միայն 1771թ. Հայաստանում /Էջմիածնում/ հիմնվեց առաջին տպարանը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից: 1776-ին կառուցվեց նաև Էջմիածնի թղթի գործարանը: Ուշագրավ է, որ նույն 1779 թ. հիմնվեց Մադրասի Շահամիրյանների տպարանը: 1781թ. Պետերբուրգում հիմնվեց Խաղարյան տպարանը:

Գիտությունը. 1717թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթար

Սեբաստացու կողմից հիմնվեց հայտնի Մխիթարյան միաբանությունը, որին կից բացվեցին դպրոց, մատենադարան, տպարան և այլն: Շուտով միաբանությունը դարձավ հայ գիտության խոշորագույն կենտրոններից մեկը: Միայն 18-րդ դարում Մխիթարյանները հրատարակեցին 100 անուն գիրք: Առ այսօր միաբանությունը շարունակում է իր հայրենանվեր գործը:

Արվեստ. 18-րդ դարից հայտնի դարձան գեղանկարչության վարպետներ Հովնաթանյանները: Մկրտիչ Նաղաշի որդիներն էին Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները, որոնք հիմնականում գործել են թիֆլիսում: Հ. Հովնաթանյանը թողել է շուրջ 60 կտավ: 19-րդ դարի առաջին կեսին իր գործունեությունն է սկսում Հ.Այվազովսկին՝ Ղրիմի թեոդոսիա քաղաքում: Հայտնի նկարիչ էր Աբովյանի մանկության ընկեր Ստեփան Ներսիսյանը, որը հայտնի է Մ.Մաշտոցի, Ս.Պարթևի, Վ.Բեհբուքովի դիմանկարներով:

Երաժշտությունը մշակույթի կարևոր ճյուղերից էր: Դեռ 17-րդ դարում ֆրանսիացի Շարդենը վկայում էր Երևանում հայ գուսանների և թատրոնի մասին: 1827թ. Երևանում բեմադրվում է Ա.Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» հեղինակի ներկայությամբ: Ներկայացումներ էին տրվում թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, թատերասեր Շերմազանյանի տանը:

Չարգացած էին նաև մանրանկարչությունը, քանդակագործությունը և արվեստի այլ ճյուղեր:

55. 1877-1878թթ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ

ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1877թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ է սկսում Թուրքիայի դեմ: Պատերազմական գործողությունները մղվում էին միաժամանակ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը ապրիլի 12-ին հարձակման են անցնում Երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրապոլ-Կարս, Իզդիր-Բայազետ և Ախալցխա-Արդահան:

Երևանյան ջոկատի զորքերը գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ ապրիլին գրավում են Բայազետը և Ալաշկերտը:

Հաղթական կռիվներ մղելով Թուրքական զորքերի դեմ՝ Տեր-Ղուկասովի ջոկատը հասնում է Դահարի բարձունքները: 1877թ. հունիսի 9-ին այստեղ ուժեղ ճակատամարտ է տեղի ունենում: Երկուստեք ծանր

կորուստներ են տալիս: Նույն օրը, աչ թևում գործող գեներալ Գեյմանի զորամասի պարտության պատճառով, Տեր-Ղուկասովը նահանջի հրաման է ստանում և մեծ վարպետությամբ կազմակերպում է իր ջոկատի անկորուստ նահանջը:

1877թ. հունիսին հակառակորդը մեծ ուժեր կենտրոնացնելով՝ պաշարում է Բայազետի բերդը: Ավելի քան 10 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը մի շարք կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում: Գտնվելով թշնամու օղակում, անընդհատ անհավասար մարտեր մղելով հակառակորդի դեմ, Բայազետի կայազորը, որի պետը մայոր Ֆ.Շտոկվիչն էր, սպառել էր նյութական և ռազմական բոլոր պաշարները: Միակ փրկությունը դրսի օգնությունն էր: Իրենց օրհասական դրության մասին պաշտպանները քանիցս փորձել էին տեղեկացնել Տեր-Ղուկասովին, բայց չէր հաջողվել: Վերջապես հայ կամավորներից մեկը՝ Սամսոն Տեր-Պողոսյանը /Րաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանը/, քրդական տարագով, ծպտյալ անցնում է թշնամու օղակով և լուր հասցնում Տեր-Ղուկասովին: Երևանյան ջոկատը օգնության է հասնում Բայազետի կայազորին և համառ մարտերից հետո ազատագրում նրան 23 օրվա պաշարումից:

1877թ. մայիսին ռուսական զորքերը գրոհով վերցնում են Արդահանը:

1877թ. հոկտեմբերին Ալաշայի բարձունքներում ռուսական զորքերը ջախջախիչ հարված հասցրին թուրքական զորքերին: Գլխավոր հրամանատար Մուխտար փաշան հազիվ կարողացավ փախչել և փրկվել գերի ընկնելուց:

Այս հաղթանակից հետո ռուսական զորքերը պաշարում են Կարսը: Նրա գրավումը հանձնարարվում է գեներալ Հովհաննես Լազարևին: Չդիմանալով ռուս զինվորների գրոհներին՝ թուրքերը հանձնվում են: Նոյեմբերի 6-ի առավոտյան Կարսի ամրոցը ռուսների ձեռքում էր: Կարսի գրավումը Կովկասյան կորպուսի ամենախոշոր հաղթանակն էր: 1878թ փետրվարին ռուսական զորքերը մտան Կարսին /էրզրում/:

Բալկանյան ռազմաճակատում նույնպես ռուսական զորքերը տարան խոշոր հաղթանակներ: Հունվարին գրավելով Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիան՝ ռուսները մոտեցան Կ. Պոլսին: Թուրքական սուլթանը հարկադրված խնդրեց հաշտություն:

Ինչպես նախորդ պատերազմների ժամանակ, այս անգամ ևս հայերը ակտիվ մասնակցություն ունեցան թուրքերի դեմ մղվող մարտերին:

Հայկական հաղոր Սան-Ստեֆանոյում և Բեռլինում. Սան-Ստեֆանոյում կնքված /1878թ. փետրվարի 19/ պայմանագրով Ռուսաստանին էին անցնում Կարսի շրջանը, Ալաշկերտը և Բայազետը: Երզրումը և Բասենը մնում էր Թուրքիային, որոնց բնակիչները նորից թողնվում էին թուրքերի վրեժխնդրությանը:

19-րդ դարի երկրորդ կեսի հայ քաղաքական կյանքի գլխավոր հարցերից մեկը Հայկական հարցն էր: Որպես միջազգային դիվանագիտության հարց այն ծագել է 1877-1878թթ. պատերազմից հետո և առաջին անգամ իր արտահայտությունը գտել Սան-Ստեֆանոյի պայմանագրում:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, երբ Սան-Ստեֆանոյում Տատյան ազգանվամբ մի հայի տանը, սկսվում են հաշտության բանակցությունները: Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը դիմում է ռուսական պատվիրակությանը և խնդրում պայմանագրում համապատասխան կետ մտցնել Ռուսաստանի հովանավորության տակ Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծելու կամ գրաված շրջանները Ռուսաստանին միացնելու վերաբերյալ:

«} Ռուսական պատվիրակությանը հաջողվում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցնել միայն մի կետ՝ 16-րդ հոդվածը՝ Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ: Թուրքիան պարտավորվում է Արևմտյան Հայաստանում, առանց ուշացման, անցկացնել բարեփոխումներ և հայերի անվտանգությունը ապահովել քրդերից ու չերքեզներից: Ռուսական զորքերը 6 ամիս մնալու էին Արևմտյան Հայաստանում՝ բարեփոխումների անցկացումը հսկելու համար: Միջազգային փաստաթղթերում առաջին անգամ գործածվում էր «Հայաստան» բառը:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ուղքի է հանում Ռուսաստանի հակառակորդներին՝ առաջին հերթին Անգլիային ու Ավստրո-Հունգարիային: Անգլիան մայիսին Թուրքիայից ստանում է Կիպրոսը: 1878թ. հունիսին Բեռլինում մեծ տերությունների պահանջով կոնգրես է գումարվում Գերմանիայի կանցլեր Բիսմարկի նախագահությամբ:

Հայերի պահանջները կոնգրեսին ներկայացնելու համար Մ. Խրիմյանի գլխավորությամբ հատուկ պատվիրակություն է ուղարկվում Բեռլին՝ Մինաս Չերազի, Ստեփան Փափազյանի, Խորեն Նարբեյի մասնակցությամբ: Հայ պատվիրակները լինում են Իտալիայում,

Ֆրանսիայում, հանդիպում արտոգործնախարարների Կորտիի և Վատինգտոնի, Անգլիայում՝ վարչապետ Բիկոնսֆիլդի հետ, մի շարք դիմումներ ներկայացնում կոնգրեսին մասնակցող մեծ տերություններին: Բայց ոչ ոք դրանց վրա ուշադրություն չի դարձնում: Հայ պատվիրակներին թույլ չեն տալիս նույնիսկ մտնել կոնգրեսի շենքը: 16-րդ հոդվածի փոխարեն մտցվում է նոր հոդված՝ 61-րդը: Այսպես հայկական հարցը վճռվում է առանց հայերի մասնակցության:

Խոսելով Բեռլինի վեհաժողովի մասին Խրիմյանն այն նմանեցնում է հարիսայով լիքը պուտուկի. «Ով երկաթե շերեփ ուներ, - ասում է նա, - իր բաժինը վերցնում էր: Իմ ձեռքին թղթե շերեփ էր, խսիում էի՝ մնում էր մեջը»:

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը ևս թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր հայկական մարզերում բարեփոխումներ անցկացնել, ապահովել հայերի անվտանգությունը, բայց այդ հոդվածի իրագործման հսկողությունը դրվում էր վեհաժողովի մասնակից բոլոր պետությունների վրա: Դա վերջիններիս հնարավորություն էր տալիս միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Վեհաժողովը պարտավորեցնում էր Ռուսաստանին իր զորքերը անհապաղ դուրս բերել գրաված տարածքներից և ոչ մի երաշխիք չէր տալիս 61-րդ հոդվածի կենսագործման համար: Բացի այդ արդեն «Հայաստան» բառը փոխարինվում էր «Հայկական մարզեր» բառերով: Ռուսաստանին էր մնում միայն Կարսի մարզը, իսկ Ալաշկերտն ու Բայազետը վերադարձվում էին Թուրքիային:

Արևմտյան Հայաստանի հարցը միջազգային դիվանագիտության մեջ մտավ որպես «Հայկական հարց»: Մեծ տերությունների միջև եղած հակասությունների հետագա սրման կապակցությամբ այդ հարցը գնալով ավելի խճճվեց և նորանոր դժբախտություններ բերեց հայ ժողովրդին՝ հատկապես 1915 թվին:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի խոշոր հաղթանակներից մեկը Հայաստանի նշանավոր կենտրոն Կարսի գրավումն էր և նրա միացումը Ռուսաստանին: Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրով Կարսը, Արդահանը և Բաթումը ազատվեցին թուրքական լծից և միացան Ռուսաստանին: 1878թ. կազմվեց Կարսի մարզը, որի մեջ մտան Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի շրջանները: Իբրև առանձին վարչական միավոր Կարսի մարզը մտավ Կովկասի փոխարքայության մեջ:

56. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ
/1860-80-ԱԿԱՆ ԹԹ./

Բեռլինի վեհաժողովը ծանր հարված հասցրեց հայ ժողովրդին՝ հայկական հարցը խճճելով գաղութարար տերությունների մեծ ու խարդախ դիվանագիտության մեջ: Թուրքական կառավարությունը, օգտվելով ստեղծված իրադրությունից, ավելի խորացրեց իր ճնշումներն ու հալածանքները հայերի նկատմամբ:

Ժամանակի առաջավոր գործիչներ Գր.Արծրունին, Ռաֆֆին, Ռ.Պատկանյանը, Ծերենցը, Մ.Խրիմյանը և ուրիշներ, կոչ էին անում հետևել բալկանյան ժողովուրդների օրինակին, զինված պայքարի, ապստամբության ճանապարհով ազատագրվել թուրքական լծից:

1880-ական թվականներին մամուլը, գրականությունը լայնորեն սկսում են քարոզել Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը: Նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին ու նրա «Մշակ» թերթը ուղղություն էին տալիս այդ պայքարին: Ժամանակի մեծ գրող Ռաֆֆու հայրենասիրական-ազատագրական վեպերը պայքարի էին կոչում երիտասարդությանը:

Ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու և զխավորելու նպատակով 1870-1880-ական թթ. ինչպես արևելահայերի, այնպես էլ արևմտահայերի մեջ ստեղծվում են գաղտնի խմբակներ:»

1869թ. Ալեքսանդրապոլում, 1874թ. Մեծ Դարաքիլիսայում հիմնվում են արևելահայ առաջին ազգային-ազատագրական խմբակները, որոնք նպատակ էին դրել ազատագրել Հայաստանը օտար բռնակալների լծից: Ալեքսանդրապոլի խմբակը կոչվում էր «Բարենպատակ ընկերություն»: Խմբակի հիմնադիրն ու ղեկավարն էր երիտասարդ ուսուցիչ և ջերմ հայրենասեր Արսեն Կրիտյանը: Մեծ Դարաքիլիսայի նրա մասնաճյուղը կոչվում էր «Հայրենիքի սիրո գրասենյակ»: Վերջինիս ղեկավարը Համբարձում Բալասանյանցն էր:»

Կրիտյանի խմբակի մեջ ընդգրկված էր ավելի քան 40 մարդ՝ ուսուցիչներ, աշակերտներ, ծառայողներ, արհեստավորներ: «Բարենպատակ ընկերությունը» գործեց 6 տարի, հայտնաբերվեց և ջախջախվեց Երևանի նահանգի ժանդարմական վարչության կողմից:

1872թ. Հ.Կալոյանի, Գ.Արվանձտյանցի և Մ.Խրիմյանի ղեկավարությամբ Վանում ստեղծվում է «Միություն ի փրկություն» առաջին արևմտահայ գաղտնի ընկերությունը: Այն գաղտնի կապեր ուներ արևելահայերի հետ, որոնց միջոցով դիմում էր Ռուսաստանին և խնդրում,

որպեսզի «ռուսաց քաջաբի և մեծագոր ազգը օգնի իրենց ազատվելու բարբարոսների ձեռքից»: Այդ խմբակը գոյություն ունեցավ մոտ երկու տարի, բայց լայն գործունեություն ծավալել չկարողացավ: 1879թ. Վանում ստեղծվում է «Սև խաչ», ապա «Զինակիր» խմբակները, որոնք կարևորում էին ինքնապաշտպանության խնդիրը:»

Ավելի կազմակերպված և եռանդուն աշխատանք է կատարում 1881թ. Կարինում հիմնված «Պաշտպան հայրենյաց» գաղտնի խմբակը՝ տեղի Սանասարյան վարժարանի սաներից: Խմբակի անդամների մեծ մասը արհեստավորներ ու գյուղացիներ էին: Նրանց ղեկավարներն էին Խաչատուր Կերեկյանը, և Կարապետ Նշկյանը: Խմբակը նպատակ էր դրել պայքարել թուրքական բռնակալների դեմ և ազատագրել Հայաստանը:

Կարինի «Պաշտպան հայրենյաց» խմբակը որոշ փորձեր է կատարել իր ճյուղերը տարածելու նաև ուրիշ գավառներում: Նրա ղեկավարներից ոմանք կապեր են ունեցել Պոլսի և Կոստանի հայ հայրենասերների հետ, զենք ու դրամ են ձեռք բերել: Խմբակն ունեցել է հեկտոգրաֆ, տպել ու տարածել է հայրենասիրական կոչեր, կապեր պահպանել «Սև խաչ» կազմակերպության հետ:

1882թ. նոյեմբերի վերջերին թուրքական կառավարությունը հայտնաբերում է այդ խմբակը և ձերբակալում 70 հոգու: 1883թ. ապրիլին Կարինում տեղի է ունենում նրանց դատավարությունը սուլթան Համիդ II-ի հսկողությամբ: Շատերին դատապարտում են 5-10 տարվա բանտարկության, 5 հոգու՝ սկզբում մահապատժի, հետո՝ երկարաժամկետ բանտարկության:

1882թ. Մոսկվայում մի խումբ հայ ուսանողներ հիմնում են «Հայրենասերների միություն»-ը: Ինչպես ցույց է տալիս խմբակի անունը, նրա հիմնական նպատակը հայրենիքի ազատությունն էր: Միությունը հեկտոգրաֆով անլեզալ կերպով տպագրում էր «Ազատության ավետաբեր» թերթը: Միության անդամներից ոմանք կապեր ունեին ռուս և վրացի հեղափոխական գործիչների հետ: Խմբակի ղեկավարը՝ Ներսես Աբեյանը հայտնի գործիչներից էր:

1883թ. «Հայրենասերների միություն»-ը անլեզալ կոչով դիմում է հայ ժողովրդին, հույս չդնել Եվրոպայի վրա և զենքի ուժով ազատագրվել թուրքական լծից: Դունաստանի օրինակով: Կոչի բնաբան էր ընտրված Մ.Նալբանդյանի հայտնի «Ազատություն» բանաստեղծության վերջին տողերը.

**Պիտի գոռամ, պիտի կրկնեմ
Անդադար ազատություն:**

«Հայրենասերների միության» գլխավոր խնդիրը հայկական հարցի լուծումն էր, Արևմտյան Հայաստանը թուրքական բռնակալության լծից ազատագրումը: Այդ խմբակը դադարեց գործել 1884թ.:

1880-ական թթ. սկզբներին Երևանում գործում էր «Հայասեր» կամ «Ազգասեր» խմբակը: Ցարական պահնորդական բաժնի տվյալներով խմբակն ունեցել է մոտ 30 անդամ: Նրա նպատակն է եղել պայքարել հայոց լեզվի ու դպրոցի պահպանման, Հայաստանը ցարական ու սուլթանական լծից ազատագրելու համար: 1883թ. Երևանում խուզարկություններ ու բանտարկություններ են կատարվում, խմբակի անդամներից շատերին քաղաքից աքսորում են:

1882-1883թթ. Թիֆլիսում մի խումբ հայ երիտասարդներ՝ Գր.Արծրունու գլխավորությամբ հիմնում են գաղտնի խմբակ, որի գլխավոր նպատակը նույնպես հայկական հարցի լուծումն էր: 1885թ. հայկական դպրոցների փակման առթիվ խմբակն անլեգալ թռուցիկ է հրատարակում ցարական կառավարության դեմ: Նրա աշխատանքներին մասնակցում էին Բաֆֆին, Գ.Սունդուկյանը և ուրիշներ: Այդ խմբակը գոյություն է ունենում մինչև 1886թ.: 1880-ական թվականներին ազգային-ազատագրական խմբակներ են հիմնվում նաև ուրիշ վայրերում: Այս խմբակները մեծ գործ կատարեցին հայրենասիրական գաղափարների տարածման և քաղաքական կուսակցությունների ստեղծման համար:

**57. ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

1870-80-ական թվականներին ազատագրական խմբակները հիմք նախապատրաստեցին ավելի կազմակերպված քաղաքական պայքար ծավալելու համար: Նրանց բազայի վրա 1880-ական թվականների կեսերից ստեղծվեցին հայ ազգային-քաղաքական կուսակցությունները: 1885թ. Վանում հայտնի մտավորական Մկրտիչ Ավետիսյանի /Թեր-լեմեզյան/ կողմից ստեղծվեց առաջին հայ քաղաքական կուսակցությունը՝ «Արմենականներ» անունով: Այդ անունը նրանք ստացել էին Մարսելում Մկրտիչ Փորթուզալյանի հրատարակած «Արմենիա» թերթի գաղափարներին հետևելու պատճառով: Մ.Փորթուզալյանը հայտնի վանեցի մտավորական էր, որին որպես ուսուցչի, հետևում էին

արմենականները: Պատահական չէ, որ ոմանք նույնիսկ Մ.Փորթուզալյանին սխալմամբ համարում էին կուսակցության հիմնադիրը:

Արմենականները պայքարում էին արևմտահայերին լուսավորելու և թուրքական բռնակալությունից ազատագրելու համար: Հայկական հարցի լուծումը նրանք կապում էին Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի օգնության, համաժողովրդական ապստամբության հետ և պահանջում անհապաղ գործադրել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումները: Արմենականները հիմնեցին մոտ 150 խմբեր /յուրաքանչյուրը 12 հոգուց/ մի շարք տեղերում, հատկապես Վանում և Կովկասում: Նրանք Հայաստանի ազգային ազատագրությունը համարում էին առաջնակարգ խնդիր, իսկ սոցիալական ազատագրությունը՝ հետագայի հարց: Արմենականներն ընդունում էին մասնավոր սեփականությունը, իրենք էլ զբաղվում տնտեսական գործունեությամբ: Նրանք դեմ էին պայքարի անհատական ձևերին: 1896թ. և 1915թ. գլխավորեցին Վանի երկու հերոսամարտերը: Հետագայի հայտնի գործիչներից դարձավ Արմենակ Եկարյանը: 1921-ին Պոլսում արմենականները միավորվեցին Վերակազմյալ հնչակյաններին, Սահմանադիր ռամկավարներին և Հայ ժողովրդական կուսակցության հետ՝ վերակազմը վելով Ռամկավար ազատական կուսակցության:

Հնչակյան կուսակցությունը հիմնվել է 1887թ. Ժնևում: Նրա հիմնադիրներն էին Ժնևի համալսարանի մի խումբ կովկասահայ ուսանողներ: 1887թ. վերջին նրանք հրատարակում են «Հնչակ» թերթը, որի անունով էլ կոչվում է կուսակցությունը:

Հնչակյան կուսակցության հիմնադիրներն էին Ավետիս և Մարո Նազարբեկյանները, Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը և ուրիշներ: Սկզբում գտնվում էին ռուսական ցարոդինիայից ազդեցության տակ: Հետագայում շփվելով ռուս նշանավոր մարքսիստ Գ.Պլեխանովի և «Աշխատանքի ազատագրություն» խմբակի մյուս անդամների հետ, ժանոթանալով մարքսիստական գաղափարներին, նրանցից ոմանք հակվեցին դեպի մարքսիզմը, հայերեն թարգմանեցին Մարքսի և Էնգելսի որոշ երկեր: 1888թ. հրատարակվեց նրանց ծրագիրը:

Հնչակյան կուսակցության գլխավոր նպատակը հայկական հարցի լուծումն էր, Արևմտյան Հայաստանի ազատագրումը, սոցիալիզմին հասնելու շնորհիվ՝ մարդու կողմից մարդու շահագործման վերացումը: Այդ նպատակին հասնելու համար նրանք իրենց գրեթե բոլոր ուժերը և պրակտիկ գործունեությունը կենտրոնացրել էին Արևմտյան

Հայաստանում, գաղտնի կազմակերպություններ էին ստեղծում, ցույցեր, զինված ելույթներ կազմակերպում և այլն: 1890թ. Պոլսում նրանք կազմակերպեցին հայտնի «Գում-Գափուխ», իսկ 1895թ.՝ «Բապալը Ալիի» ցույցերը՝ պահանջելով կենսագործել 61-րդ հոդվածը: Նրանք 1894թ. Սասունի և 1895-96թթ. Ջեթունի ապստամբության մասնակիցներն էին:

1896թ. Լոնդոնի առաջին համագումարում հնչակյան կուսակցությունը, դեռևս լրիվ չձևավորված, պառակտվեց երկու թևի՝ սոցիալական և ազգային: Սոցիալական թևը՝ Ա.Նազարբեկյանի ղեկավարությամբ, որ կարևոր խնդիր էր համարում սոցիալական ազատագրությունը և սոցիալիզմը, կազմեց փոքրամասնություն, իսկ ազգայինը՝ մեծամասնություն: Վերջիններս իրենց կոչեցին «Վերակազմյալ հնչակյաններ» կամ «Արփիարականներ»՝ գրող Արփիար Արփիարյանի գլխավորությամբ: Հետագայում սոցիալական թևի ներկայացուցիչները, որոնք դեմ էին սոցիալիզմի մասին կետը ծրագրից հանելուն, մեծ մասամբ մտան սոցիալ- դեմոկրատական կուսակցության շարքերը:

1890թ. աշնանը Թիֆլիսում «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության բազայի վրա ստեղծվեց հայ իրականության ամենաուժեղ քաղաքական կուսակցությունը՝ Զրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ստեփան Զորյանի /Ռոստոմի/, Խաչատուր Մալումյանի /Ակունու/ և այլոց կողմից: Նպատակ ունենալով միավորել բոլոր հայ քաղաքական ուժերին՝ նրանք հանդես եկան դաշնակցելու կոչով: Ուստի նրանց կոչեցին «Հայ հեղափոխականների դաշնակցություն»: Նրանք հրատարակում էին «Դրոշակ» թերթը, ուստի հայտնի էին նաև դրոշակականներ անունով: 1891թ. նրանք փորձեցին միավորվել հնչակյանների հետ և նույնիսկ այդ մասին հանդես եկան հայտարարությամբ: Սակայն շուտով, հնչակյանների մեղքով նրանք նորից պառակտվեցին: 1892թ. Թիֆլիսում հրավիրվեց նրանց առաջին համագումարը, որում կուսակցությունը վերանվանվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»: Նրանց գլխավոր խնդիրը հայկական հարցն էր, որի իրագործման համար այդ կուսակցությունը պայքարում է ավելի քան 100 տարի: Արդեն 1890թ. սեպտեմբերին դաշնակցականները կազմակերպեցին Սարգիս Կուկունյանցի արշավանքը Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան՝ երկիրն ազատագրելու նպատակով: 1896թ. օգոստոսի 14-ին մոտ 30 հայ երիտասարդներ Բաբկեն Սյունու և Արմեն Գարոյի գլխավորությամբ ներխուժեցին Պոլսի Օթթոմանյան բանկը՝ պահանջելով անհապաղ գործադրել 61-րդ հոդվածը՝ հակառակ

դեպքում սպառնալով պայթեցնել բանկը: 1897թ. դաշնակցությունը Պարսկաստանից կազմակերպեց Խանասորի արշավանքը դեպի Վան և պատժեց վանեցիներին 1896թ. սպանած քուրդ մագրիկ ցեղին: Դաշնակցությունը ղեկավարեց Ֆիդայական շարժումը՝ տալով մի շարք փայլուն դեմքեր, գլխավորեց Սասունի 1904թ. ապստամբությունը:

1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության օրերին դաշնակցությունը առաջ քաշեց նաև սոցիալիզմի գաղափարը: Դաշնակցությունը ինքնապաշտպանական լուրջ աշխատանք կատարեց 1905-1907թթ. հայ-թաթարական կռիվներում, 1914-1916թթ. կազմակերպեց կամավորական շարժում և ամենակարևորը՝ 1918թ. մայիսին գլխավորեց հայկական պետականության վերականգնման գործը:

58. 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

1878թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը շուտով ոչ միայն մոռացվեց օսմանյան սուլթան Համիդ II-ի կողմից, այլև առաջարկվեց այդ հոդվածի կենսագործման ուրույն ճանապարհ, այն է՝ հայկական հարցը լուծել հայերին բնաջնջելու միջոցով՝ Նա պաշտոնապես առաջինը պետական գաղափարախոսություն դարձրեց պանիսլախիզմը և պանթուրքիզմը: Առաջինը ենթադրում էր իսլամադավան բոլոր ժողովուրդների միավորում, երկրորդը՝ թուրքալեզու ժողովուրդների միավորում Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ /գազավաթ/ բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ: Ուշագրավ է, որ այդ գյավուրների թվում նկատի էր առնվում հատկապես հայ ժողովուրդը:

Հայկական հարցը «լուծելու» նպատակով Համիդը հայերի դեմ գրգռեց կայսրության անհնազանդ քոչվոր քրդական ցեղերին: 1891թ. նրանցից նա ստեղծեց հատուկ հեծյալ գնդեր՝ համիդիե՝ Համիդեականները կառավարությունից ռոժիկ էին ստանում և իրավունք էին ձեռք բերում ազատորեն կողոպտելու և թալանելու հայ բնակչությանը: Այսպես ծագեց հայ-քրդական հակամարտությունը: Երկրում հաստատվեց դաժան տեռորի ռեժիմ: Մտցվեց խիստ գրաքննություն: Մամուլում արգելվեց գործածել «Հայաստան», «Համիդ» և այլ բառերի գործածությունը:

1894թ. համիդեական ջոկատները նետվեցին Արևմտյան

Հայաստանի գյուղերի ու քաղաքների վրա: Առաջին հարվածն ուղղվեց ազատատենչ Սասունի դեմ: Ապստամբությունը ճնշվեց արյան մեջ՝ Մեծ տերությունները ոճրագործության նյութերի հիման վրա 1895թ. մայիսի 11-ին թուրքիային ներկայացրեցին «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը»: Սակայն իշխանությունները ոչ միայն չիրագործեցին այն, այլև կազմակերպեցին հայերի զանգվածային կոտորածներ. սեպտեմբերին՝ Տրապիզոնում և Բաբերդում, ապա գրեթե ողջ Արևմտյան Հայաստանում: Ամենաբնական մոլեռանդ հոգևորականությունը լուրեր էր տարածում, թե հայերը նախապատրաստվում են համաժողովրդական ապստամբության և այլահը պահանջում է հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Քրդական՝ համիդեական ջոկատները գործիք դարձան իշխանությունների ձեռքին ջարդերն իրագործելու հարցում: Տրապիզոնում բազմաթիվ հայերի նավերով դուրս բերեցին բաց ծով և ջրասույզ արեցին: Սասունի 1894 և Ջեթունի 1895թթ. ապստամբությունները, Օթոմանյան բանկի գրավումը և այլ մասնակի դեպքերը Համիդը օգտագործեց թուրքերին ավելի գրգռելու նպատակով: Ամենաստակալի կոտորածները տեղի ունեցան 1894-96թթ.: Բազմահազար արևմտահայեր արտագաղթեցին տարբեր երկրներ, մոտ 100 հազար՝ Ռուսաստան, 200 հազար՝ Եվրոպա և Ամերիկա:

Ջարդերից խուսափելու նպատակով շատ հայեր ստիպված ընդունեցին մահմեդականությունը: Որոշ հաշվարկներով Օսմանյան թուրքիայում 1890- ական թթ. ոչնչացվեց մինչև 300 հազար հայ: Այս իրողությունն աշխարհում առաջին ցեղասպանություններից /գենոցիդ- գեն՝ ազգ, ցիդ՝ կտրել/ էր: Գենոցիդը մեկ ազգի կամ կրոնական համայնքի դեմ ուղղված պետական հանցագործություն է:

Սուլթան Համիդին չհաջողվեց իրագործել իր հրեշավոր ծրագիրը, ըստ որի նա պետք է ոչնչացներ բոլոր հայերին, թողնելով միայն մեկին՝ թանգարանի համար: Մեծ տերությունների բարձրացրած աղմուկը, արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները թույլ չտվեցին Համիդին ավարտին հասցնելու իր հրեշավոր ծրագիրը:

Արևմտահայաստանի տարբեր շրջաններում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Մալաթիայում եղիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ տեղի հայերը ջարդեցին թուրք ոստիկաններին և թուրքական խուժանին ու վտարեցին քաղաքից: Մի քանի օր մալաթիացիները կատաղի դիմադրեցին թուրքական զորքերին: Ինքնապաշտպանության ավարտից հետո սրի քաշվեցին մոտ 3 հազար հայեր:

Պաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Վանում: 1896թ. հունիսի 3-ին թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք: Նրանց միացան համիդեական զորքերը: Հայերը ցույց տվեցին կատաղի դիմադրություն: Վանի պաշտպանությունն իրենց վրա վերցրին հիմնականում արմենականները՝ Մկրտիչ Ավետիսյանի գլխավորությամբ: Նրանց միացան նաև մյուս քաղաքական կուսակցությունները: Պաշնակցականների առաջնորդ դարձավ Պետոն, հնչակյաններինը՝ Մարտիկը: Հունիսի 8-ին թշնամին սկսեց գերմանական հրանոթներով սաստիկ ռմբակոծել քաղաքի հայկական թաղամասը: Սկսվեց հրդեհ, որը սպառնում էր տարածվել փայտաշեն բոլոր թաղամասերում: Վախենալով դրանից, հայերը եվրոպացի հյուպատոսների միջոցով, առաջարկեցին հաշտություն: Թուրքերն ընդունեցին այդ առաջարկությունը և խոստացան պաշտպաններին թույլատրել անարգել անցնելու Պարսկաստան: Սակայն այդ խոստումը թուրքերը դրժեցին: Երբ 700 /այլ տվյալներով՝ 1500/ վանեցիներ փորձում էին անցնել Պարսկաստան, սահմանազլխին նրանց վրա հարձակվեցին քրդական մագրիկ ցեղի հրոսակները և սրի քաշեցին նրանց: Փրկվեց միայն 30 մարդ: Ջոհվեցին նաև Մկրտիչ Ավետիսյանն ու Պետոն: Ի պատասխան այս ոճրագործության, 1897թ. ՀՀ Պաշնակցությունը կազմակերպեց Խանասորի արշավանքը և վրեժխնդիր եղավ մագրիկ ցեղից: Վանում և շրջակայքում թուրքերը սպանեցին մոտ 20 հազար մարդ, ավերեցին ու թալանեցին Վասպուրականի վանքերը, ոչնչացրին բազմաթիվ ձեռագրեր:

Ուրֆայում /Եդեսիա /կառավարական գործերը փորձեցին իրականացնել կոտորածներ: Ուրֆացիները 3 ամիս համառորեն դիմադրեցին թշնամուն: Տեսնելով, որ հնարավոր չէ ընկճել հայերին, գավառապետը հավաստիացնում է հայերին, թե ինքը զորքեր կուղարկի հայկական թաղամաս՝ թուրք և քուրդ խուժանից նրանց պաշտպանելու համար: Հավատալով այդ խոստումներին՝ ուրֆացիները չեն խոչընդոտում զորքի մուտքը հայկական թաղամաս: Շուտով զորքը ինքն է սկսում կոտորածներ ոչնչացնելով 7 հազար մարդ:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Մուշում, Դիարբեքիում, Շատախում և այլուր: Որոշ վայրերում, ինչպես Մոկսում տեղի առանձին քրդեր ու թուրքեր կոտորածներից փրկեցին բազմաթիվ հայերի: Օրինակ, Մոկսի կառավարիչ /մյուղիր/, քուրդ Մուրթալա բեկը կարողացավ կանխել հարյուրավոր հայերի ոչնչացման հրամանը: Ցավոք մասն ղեպքերը մեծ թիվ չէին կազմում:

Կոտորածների հետևանքով արևմտահայ մի շարք գավառներ

հայաթափվեցին և բնակեցվեցին թուրքերով ու քրդերով:

1894-96թթ. կոտորածների ժամանակ մեծ տերությունները բավարարվեցին միայն թուրքիայից զիջումներ կորզելով: Պատահական չէ, որ գերմանական կայսեր Վիլհելմ II-ը ողջունեց Համիդի այս արարքը: Անգլիայի վարչապետ Սոլսբերին փորձեց արդարանալ հետևյալ արտահայտությամբ. «անգլիական նավերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները»: Իսկ Ռուսաստանի արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկին հայտարարեց, որ «Հայաստանը մեզ հարկավոր է առանց հայերի»: 3

Միայն անհատ հումանիստներ՝ Մարկ Տվենը, Ռոլեն ժաքմենը, ժան ժորեսը, Բելա Կունը, Անատոլ Ֆրանսը, Լեպսիուսը և ուրիշներ իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ ջարդերի: Մոլորված աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին իբրև բողոքի նշան Սև ծով շարտեց. սուլթան Համիդից ստացած շքանշանը՝ վրձնելով իր հայտնի «Հայերի ջարդը Տրապիզոնում» կտավը:

59. ԱՐԵՎՍՏԱՅԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՍԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼԸԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ.

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հաստատած արյունալի ռեժիմին արևմտահայությունը պատասխանեց ազատագրական շարժման նոր վերելքով: 1890թ. հունիսին երգրումում լուրեր տարածվեցին, թե իբր հայերը պատրաստվում են ապստամբության: Խուզարկելու նպատակով թուրքերը ներխուժեցին նաև երգրումի եկեղեցին՝ պատարագի ժամին: Հնչակյանները կազմակերպեցին դիմադրություն. զոհվեց 20 հայ: 2 օր անց սկսվեցին նոր ջարդեր: Այս լուրը հասավ Կ. Պոլիս, որտեղ 1890թ. հուլիսին հնչակյանները կազմակերպեցին ցույց Գում-Գափու թաղամասում: Նրանք պատռեցին Սուլթան Համիդի նկարը, ստիպեցին պատրիարք Ալեքյանին իրենց հետ շարժվել դեպի սուլթանի պալատը՝ պահանջելով պատժել երգրումի հանցագործության մեղավորներին և կենսագործել Բեռլինի 61-րդ հողվածը: Ոստիկանները կրակ բացեցին, և զոհվեցին շատ ցուցարարներ:

1890թ. սեպտեմբերին մի խումբ ռուսահայ ուսանողներ Սարգիս Կուկունյանի հետ ժամանեցին Թիֆլիս, համալրվելով նաև Ալեքսանդրապոլում և Կարսում, անցան ռուս-թուրքական սահմանը: Սակայն սահմանի վրա հակահարված ստացան թուրքերից և քրդերից ու

նահանջելով ընկան ռուս սահմանապահների ձեռքը: Ցարական դատարանը 27 հոգու դատապարտեց 3-ից 20 տարվա տաժանակրության: Կուկունյանին աքսորեցին Սիբիր:

Սասունի 1894թ. ապստամբությունը. Սասունը Բիթլիսի վիլայեթի լեռնային գավառներից էր՝ 35 հազ. հայ բնակչությամբ: 1890-ական թթ. այն դարձավ ֆիդայական շարժման կենտրոններից մեկը: Գործիչներ Միհրան Տամատյանը, Մեծն Մուրադը, Հրայրը, Գևորգ Չաուշը այստեղ պայքարի կոչ էին անում, համոզում չվճարել հարկերը: Թուրքերը Սասունի դեմ դրդեցին քրդերին, ձերբակալեցին Տամատյանին և 25 սասունցիների: Պայքարի զլուխ անցան Մեծն Մուրադը, Հրայրը, Չաուշը: Սասունի վրա շարժվեց Ձեքի փաշայի զորքը: Հայերը մերժեցին Ձեքիի պահանջը՝ 7 տարվա հարկեր վճարելու մասին: 1894թ. հուլիսի 27-ին ձեռնարկած թուրքերի գրոհը ենթարկվեց ուժեղ հակահարվածի: Թուրքերը գնացին բանակցությունների, սակայն նենգաբար սպանեցին 140 հայերի, որոնք գալիս էին բանակցությունների: Միայն օգոստոսի վերջին թշնամին ներխուժեց Սասուն և սրի քաշեց 7 հազար մարդու: Անարգանքից խուսափելու համար Շաքե անունով մի հայ աղջիկ իրեն նետում է ժայռից ցած: Նրան հետևում են շատ կանայք: Ձերբակալվեցին Մեծն Մուրադը և Չաուշը, որոնք հետագայում փախուստի են դիմում:

Այս ոճրագործության լուրը հասավ մեծ տերություններին, որոնք պահանջեցին ստուգիչ հանձնաժողով: 1894թ. նոյեմբերին կազմավորված հանձնաժողովը պարզեց Սասունի ոճրագործության մանրամասները: Այդ հանձնաժողովի նյութերի հիման վրա մեծ տերությունները 1895թ. մայիսի 11-ին սուլթանին հանձնեցին բարենորոգումների ծրագիր /Մայիսյան բարենորոգումների ծրագիր/:

Ծրագիրը նախատեսում էր Արևմտյան Հայաստանում հողային, հարկային, դատական գործի բարելավում: Ծրագրով պաշտոնյաներին նշանակելու էր սուլթանը: Սակայն տարբեր պատճառաբանություններով ծրագիրը չիրագործվեց: Սկսվեցին նոր կոտորածներ:

1895թ. սեպտեմբերին Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին 4 հազարանոց խաղաղ ցույց՝ շարժվելով կառավարության նստավայրը՝ Բապալը Ալի: Ցուցարարների վրա կրակ բացեցին, սկսվեցին նոր ջարդեր: Կ. Պոլսում զոհվեց 2 հազար մարդ: Մեծ տերությունները բողոք են ներկայացնում՝ պահանջելով իրագործել ռեֆորմները, սակայն ապարդյուն:

1895թ. հոկտեմբերին ինքնապաշտպանական մարտեր սկսվեցին Ձեյթունում: 75-ամյա Ղազար Շավրոյանի և հնչակյան հայտնի գործիչ

Աղասու /Գարուն Աղասի/ գլխավորությամբ գեթունցիները զինաթափեցին թուրքական կայազորը, գրավեցին 600 հրացան, 2 հրանոթ և մեծ քանակությամբ այլ զինամթերք: 1895թ. նոյեմբերին Ձեյթունի վրա շարժվեց թուրքական երկու բանակ՝ Ալի և Ռեմզի փաշաների գլխավորությամբ: Մինչև դեկտեմբերի 13-ը տևած մարտերում կրելով ծանր կորուստներ՝ թուրքերը նահանջում են: Իրեն չարդարացրած Ռեմզի փաշային թուրքական կառավարությունը փոխարինում է նոր հրամանատարով՝ Էդիեմ փաշայով, որը հայտնի էր իբրև հույն ժողովրդահիծ: Սակայն Ձեյթունը գրավելու ուղղությամբ վերջինիս օգնության անհաջողության են մատնվում:

1896թ. հունվարի 26-ին գործին միջամտում են մեծ տերությունները: Նրանց միջամտությամբ կնքվում է հաշտություն, ըստ որի թուրքերը պարտավորվում են զորքերը ետ քաշել Ձեյթունից, ներուժ չնորհել հայերին՝ ապահովել նրանց կյանքն ու գույքը: Ձեյթունում պետք է նշանակվեր եվրոպացի կառավարիչ, տեղական պաշտոնյաները լինելու էին հայեր: Այս լուրը զիջումների դիմաց թուրքերը պահանջեցին հնչակյան գործիչներին հեռանալ Ձեյթունից և հանձնել զենքը:

Այնհայտ է, որ այս պայքարը պսակվեց գեթունցիների հաղթանակով:

60. ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ /19-ՐԴ Դ.ՎԵՐՁ- 20-ՐԴ Դ. ՍԿԻՋԲ/

19-րդ դ. 80-90-ական թթ. կյանքի կոչվեց հայ ազատագրական պայքարի ամենավառ էջերից մեկը կազմող ֆիդայական /հայդուկային/ շարժումը: Նրա հայդուկային անունը ծագել է բալկանյան ժողովուրդների մղած հակաթուրքական, պարտիզանական՝ հայդուկային պայքարի անունից: Ավելի հաճախակի գործածվում է ֆիդայական շարժում ձևը, որը արաբերեն «ֆիդայի» կամ «ֆեդայի» բառից է, որ նշանակում է բառացի «զոհ», բայց ընկալվում է «անձնագոհ» իմաստով:

Վայս շարժման հանդես գալը Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր, այսինքն ուներ օբյեկտիվ պատճառներ: Այնպես, որ անհիմն են բոլոր այն թուրք պատմաբանների ու քաղաքագետների պնդումները, թե ֆիդայական շարժումը դրսից՝ Անդրկովկասից ներմուծված երևույթ է և նրա համար Օսմանյան կայսրությունում նախադրյալներ չկային: Ֆիդայական շարժման սկզբնավորման կապակցությամբ վեճեր են

ընթանում նաև մեկ այլ հարցի շուրջ՝ թե շարժումն է վաղ սկսվել, թե քաղաքական կուսակցություններն են վաղ ստեղծվել: Իրականությունն այն է, որ շարժումն ավելի վաղ է սկսվել, իսկ կուսակցությունները մի փոքր ուշ են ստեղծվել և չէին կարող կյանքի կոչել շարժումը, այլ միայն հետագայում իրենց հսկողության տակ են վերցրել այն և որոշակի ուղղվածություն են տվել:

Ֆիդայիները, որոնք Բաֆֆու խոսքերով ժողովրդական ռուներ ու հեղափոխականներ էին, հեռանում էին լեռները, որտեղ «հնտանիքից» իրենց նվիրելով ժողովրդի ազատագրությանը: Առաջին ֆիդայիներից էին Կարապետը՝ Սեբաստիայում, Արաբոն՝ Սասունում:

Իրավամբ ֆիդայական շարժման նահապետը հանդիսացել է Արաբոն: Նա ծնվել է 1863թ. Սասունի Կոռթեր գյուղում: Սկզբում նա հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1885 թվականից զինված հարձակումներ գործել թուրք և քուրդ հարկահավաքների վրա: Թուրքերի վրեժխնդրությունը հայերի նկատմամբ չառաջացնելու համար Արաբոն երկար ժամանակ ներկայացել է որպես քուրդ: Շուտով նրան են միացել Սասունում գործող Մխոյի /Սեֆերյան/, Ալիզնանցի Լևոնի, ավելի ուշ՝ Գևորգ Չաուշի ջոկատները:

Թուրքերին հաջողվում է ձերբակալել Արաբոյին: Սակայն նրան հաջողվում է փախչել Կովկաս, 1892թ. մտնել դաշնակցության շարքերը և մասնակցել նրա առաջին ընդհանուր ժողովին՝ իբրև Սասունի ներկայացուցիչ: 1893թ. Արաբոն 16 հոգով անցնում է նորից Արևմտյան Հայաստան և կռվի բռնվելով քրդերի ու թուրքերի հետ, Առաջի ձորում հերոսաբար զոհվում: Երկար ժամանակ ժողովուրդը չէր հավատում իր սիրելի առաջնորդի մահվանը և սպասում էր նրան՝ նոր առասպելներ հյուսելով նրա անվան շուրջ:

1880-ական թթ. վերջին Փոքր Հայքում՝ Սեբաստիայի վիլայեթում առաջացան զինված ջոկատներ՝ չեչլոներ անունով: Չեչլոները, որ նույնպես ներկայանում էին իբրև քրդեր, իրականում հայ ֆիդայական, վրեժխնդրական ջոկատներ էին:

Ֆիդայական շարժումը հատկապես ուժեղացավ 1890-ական թթ., երբ ընկավ քաղաքական կուսակցությունների՝ մասնավորապես դաշնակցության ազդեցության ու հսկողության տակ: Հատկապես ուժեղ խմբեր էին գործում Սասունում, Վանում և Սեբաստիայում: Ֆիդայիները մտցրեցին իրենց երդման տեքստը՝ «այսուհետև իմ բարձր լինելու են Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար

մեռնելը»: Բազմաթիվ հայ երիտասարդներ, թողնելով ընտանիքը, իրենց գրկելով աշխարհիկ բոլոր հաճույքներից, հեռանում էին լեռները և զինվորագրվում հայրենիքի ազատագրության գործին:

1890-ական թթ. սկզբներին մեծ համբավ ու ժողովրդականություն ձեռք բերեցին ֆիդայապետեր Աղբյուր Սերոբը /Սերոբ Վարդանյան, Աղբյուր՝ կյանք պարգևող/, Մեծն Մուրադը/ Համբարձում Պոյաջյան/, Գևորգ Չաուշը, Հրայր Դժոխքը /Արմենակ Ղազարյան/, Գուրգենը, Վազգենը և ուրիշներ:

Աղբյուր Սերոբը ծնվել է 1864թ. Ախլաթի /հլաթ/ Սոխորո գյուղում: Պատանի տարիքում սպանում է մի քրդի և ստիպված, ընտանիքով տեղափոխվում Պոլիս: 1891թ. նա անցնում է Ռումինիա, 1893թ. այնտեղ մտնում դաշնակցության շարքերը: Ռումինիայից Սերոբը գալիս է Բաթում, ապա՝ Կարին, իսկ 1895-ին՝ հայրենի Ախլաթ: Շուտով նա ստանձնում է Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայական ջոկատների ընդհանուր հրամանատարությունը: Բազմաթիվ մարտերում տարած հաղթանակների շնորհիվ Սերոբը դառնում է Արևմտյան Հայաստանի ազատարարի խորհրդանիշ: Նրան անվանում էին «Նեմրուծի հսկա» կամ «Ասլան»:

Դրանից անհանգստացած՝ թուրքական իշխանությունները որոշում են ամեն զնով վերացնել Աղբյուր Սերոբին: 1899թ., երբ նա գտնվում էր Սասունի գելիգուզան գյուղում, քուրդ ցեղապետ Բշարե խալիլը գեղաշեն գյուղի ավագ Ավեի միջոցով թունավորել է տալիս Սերոբին: Ապա թուրքական զորքերը շրջապատում են Սերոբի տունը, սպանում մահամերձ ֆիդայապետին, նրա թիկնապահներ Մխեին, Ջաքարին ու 12-ամյա որդուն՝ Հակոբին: Հայերի շրջանում մահ ու սարսափ տարածելու նպատակով թուրքերը կտրում են Սերոբի գլուխը և այն շրջում Սասունի հայկական գյուղերով: Սերոբի քաջարի կինը՝ Սոսեն շարունակում է ամուսնու հայրենանվեր գործը: 1900թ. Սերոբի հավատարիմ զինվորներ Գևորգ Չաուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով դավաճան Ավեի ողջ զերդաստանը և Բշարե խալիլին:

Գևորգ Չաուշը ծնվել է 1870թ. Սասունի Մկղենք գյուղում: Ծնողները նրան ուղարկում են Մշո Առաքելոց վանք՝ ուսանելու: Սակայն կյանքը ուրիշ դեր էր վերապահել Գևորգին: Արդեն 1894թ. նա ճանաչված ֆիդայի էր և Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը: 1896թ. փախչելով բանտից՝ նա միանում է Սերոբի ու Հրայր Դժոխքի ջոկատներին: 1901թ. նա մասնակցում է հայտնի Առաքելոց վանքի կռվին, Սասունի 1904թ. ապստամբությանը և հերոսաբար զոհվում 1907թ. մայիսի 27-ին Սուլուխի կռվում:

Ֆիդայական շարժման պայծառ ղեմներից է Անդրանիկ Օզանյանը: Նա ծնվել է 1865թ. փետրվարի 25-ին Շապին Կարահիսար քաղաքում, սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում, վրեժխնդիր եղել հայատյաց քրդերից ու թուրքերից և տեղափոխվել Կ.Պոլիս՝ խուսափելով հետապնդումներից: Սկզբում կռվել է Վազգենի ու Գուրգենի խմբերում, ապա նրանց հետ միացել Աղբյուր Սերոբին: 1900թ. Բշարե խալիլին սպանելուց հետո Անդրանիկը մեծ համբավ է ձեռք բերել և դարձել ամենահայտնի ֆիդայապետներից մեկը: 1901թ. նույնբերին Գևորգի հետ նա ղեկավարել է Առաքելոց վանքի կռիվը, Սասունի 1904թ. ապստամբությունը: Անդրանիկը 1912-1913թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ իբրև կամավոր կռվեց թուրքերի դեմ բուլղարական բանակի կազմում, առաջին աշխարհամարտում գլխավորեց առաջին կամավորական գունդը:

Ֆիդայական շարժման հայտնի ղեմներից է Հրայր Դժոխքը: Նա ծնվել է 1864թ. Սասունի Ահարոնք գյուղում, սկզբում հարել է հնչակյան կուսակցությանը, ապա անցել դաշնակցության շարքերը: Ի տարբերություն շատ ֆիդայապետերի, նա դեմ է եղել պարտիզանական, անհատական պայքարին, ցուցամոլությանը և խորապես համոզված էր, որ հաղթանակը ապահովելու համար պետք է տանել քրտնաջան ու երկարատև աշխատանք, ժողովրդին զինել ու նախապատրաստել համաժողովրդական ապստամբության: Հրայրը հանդիսացել է Սասունի 1904թ. ապստամբության ղեկավարներից մեկը և որի ժամանակ ապրիլի 13-ին զոհվել է: Մարտական ընկերները նրան հողին են հանձնել Սերոբի կողքին՝ Գելիգուզանում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդը տվեց ֆիդայիների մի ողջ համաստեղություն, որոնցից էին նաև Քեռին /Արշակ Գավաֆյան/, Սպաղանցի /Մակարը, Վարդանը /Սարգիս Մեհրաբյան/, Իշխանը /Արղության/, Նիկոլ Դումանը և ուրիշներ:

Ֆիդայական շարժումը հայ ժողովրդի պատմության անմոռաց էջերից է: /

61. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԲԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսին հայ մշակույթը թևակոխեց իր զարգացման բարձր փուլը, երբ ծաղկման նոր աստիճանի հասան

մշակույթի գրեթե բոլոր բնագավառները: Դա հետևանք էր այդ ժամանակաշրջանում սոցիալ- տնտեսական և հասարակական- քաղաքական կյանքի բուռն զարգացման:

Դպրոցը հայ մշակույթի ամենակարևոր օջախներից էր: 1860-70- ական թթ. հիմնադրվեցին բազմաթիվ նոր դպրոցներ: Բավական է նշել, որ արդեն 1885թ. կար 270 դպրոց: 80-ական թվականների վերջին Անդրկովկասում հայ աշակերտների թիվը անցնում էր 40 հազարից: Բացվում էին նաև իգական դպրոցներ: 19-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր դպրոցներն էին՝ Թիֆլիսի Ներսիսյան, Գայանյան դպրոցները, Երևանի, Շուշու, Նախիջևանի, Ախալցխայի դպրոցները: Նոր բացված դպրոցներից ամենանշանավորներն էին՝ Գևորգյան՝ ճեմարանը, որը հիմնադրվել է 1874թ. Գևորգ IV կաթողիկոսի նախաձեռնությամբ, 1878թ. Վանի վարժարանը, 1881թ. Երևանի ուսուցչական սեմինարիան, Կարինի Սանասարյան վարժարանը: Սակայն ժողովրդի մեծ մասը ի վիճակի չէր սովորելու այս բարձրագույն դպրոցներում, ուստի կրթական գործում անգնահատելի էին մնում 2-3-ամյա ծխական դպրոցները:

Թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության պայմաններում էլ հայ դպրոցական կյանքը վերելք ապրեց: Բավական է նշել, որ 1870-ական թվերի սկզբին Թուրքիայում գործում էր 400-ից ավելի հայկական դպրոց՝ 24 հազար աշակերտներով, իսկ 20-րդ դարի սկզբին կար 300 դպրոց /առանց Կ. Պոլսի/՝ 39 հազար աշակերտներով: Արևմտահայ դպրոցներից Փարիզի Մուրադյան և Վենետիկի Ռաֆայելյան վարժարանների միացման շնորհիվ Վենետիկում կազմվեց Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, որը 1897թ. իր հեղինակության համար իտալական կառավարության կողմից ստացավ պետական կարգավիճակ:

Մամուլ. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ մամուլը հասավ աննախադեպ զարգացման: Եթե 19-րդ դարի առաջին կեսին հրատարակվում էին 30-40, ապա երկրորդ կեսին՝ 246-340 անուն պարբերականներ: Այս վերելքը հետևանք էր հասարակական նոր հոսանքների և կուսակցությունների հանդես գալուն: Թիֆլիսում ճանաչված էին Գրիգոր Արծրունու «Մշակ» օրաթերթը, Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագիրը, Աբգար Հովհաննիսյանի «Փորձ» և «Արձագանք» պարբերականները, Կ. Պոլսում Ութուջյանի «Մասիս», Հ.Սվաճյանի «Մեղու» օրաթերթերը, Մոսկվայում՝ Ստ.Նազարյանցի «Հյուսիսափայլը»: 20-րդ դարի սկզբին այս պարբերականների կողքին հանդես եկան նորերը՝ Փարիզում Ա.Չոպանյանի «Անահիտը»,

Գ.Լևոնյանի «Գեղարվեստը» և այլն: Մանկական հանդես էր «Հասկերը» /Թիֆլիս/ 1905-1907թթ/: 1880-ական թթ. կեսերից նորույթ էր կուսակցական մամուլի ստեղծումը, ինչպես «Արմենիան», «Հնչակը», դաշնակցականների «Դրոշակը», «Ալիքը», «Հորիզոնը», «Ազատամարտը» և այլն: Մարքսիստական պարբերականներից էին «Պրոլետարիատը», «Պրոլետարիատի կռիվը», «Կայծը» և այլն:

Գիտության գլխավոր բնագավառներից էր հայագիտությունը: Խոշոր հայագետ պատմաբան էր Ղևոնդ Ալիշանը, որը երբեք չլինելով Հայաստանում, ստեղծեց Հայաստանի պատմական աշխարհագրության մի քանի կոթողներ՝ «Այրարատը», «Շիրակը», «Սիսականը», «Սիսվանը»: Ընդհանուր թվով նա թողեց 45 հատոր աշխատանք: Միանգամայն նորույթ էր հայ եկեղեցու պատմությանը նվիրված Մաղաքիա Օրմանյանի եռահատոր «Ազգապատում» աշխատությունը: Հետևելով Խորենացուն և Չամչյանին Ստեփանոս Պալասանյանցը գրեց հայոց ամբողջական պատմությունը մինչև 19-րդ դարի վերջի դեպքերը: Պատմագրության լուրջ գործեր ստեղծեցին Զեյնոբյան Պատկանյանը, Անտոն Գարագաշյանը, Ալեքսանդր Երիցյանը, Մկրտիչ Էմինը: Գարեգին Սրվանձտյանցը հավաքեց և հրատարակեց «Սասնա ծռեր» դյուցազնավեպը: Լեզվաբանության մեջ հսկայական հեղաշրջում կատարեցին Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը:

Պատմության բնագավառում անգնահատելի էր Լեոյի՝ Առաքել Բաբախանյանի դերը /1860-1932/: Միջնադարյան Հայաստանի պատմությանը նվիրված աշխատությունների ամբողջ շարք գրեց Նիկողայոս Ադոնցը: Բնական գիտությունների բնագավառում ճանաչում ձեռք բերեց երկրաբան քիմիկոս Անդրեաս Արծրունին, որն ուսումնասիրել է Կովկասի և Ուրալի հանքավայրերը:

Եվրոպայում և Ամերիկայում ճանաչված քիմիկոս էր Հակոբ Չամչյանը:

19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարի սկիզբը հայ գեղարվեստական գրականության ծաղկման մի ժամանակաշրջան էր, երբ ասպարեզ եկան հայ դասական բազմաթիվ տաղանդավոր գրողներ և բանաստեղծներ: 1860-ական թթ. փայլատակեց Միքայել Նալբանդյանի տաղանդը, որն իր «Ազատություն» և «Մանկության օրեր» և այլ բանաստեղծություններով քննադատության էր ենթարկում օտար և սեփական բռնակալներին: Ռաֆայել Պատկանյանը /Գամառ Զաթիպա/ ջերմ հայրենասեր բանաստեղծ էր, որի «Արաքսի արտասուքը» հայ պոեզիայի գոհարներից է:

Րաֆֆին /Յակոբ Սելիք-Յակոբյան/ հայ դասական վիպասանության ամենախոշոր դեմքն է, միաժամանակ՝ հայ ազգային գաղափարախոյունության հիմնադիրներից: Նա ստեղծեց հայ պատմավեպերի մի ամբողջ շարք՝ «Սամվել», «Դավիթ Բեկ», «Խենթ», «Կայծեր» և այլն:

Արևմտահայ բանաստեղծներ էին Սկրտիչ Պեշկեպաշյանը, Պետրոս Դուրյանը: Այդ ժամանակի հայտնի վիպասաններից էին Պերժ Պռոշյանը /«Հացի խնդիր», «Ցեցեր»/, Նար-Դոսը /«Մեր թաղը», «Սպանված աղավնին»/ և Մուրացյանը /«Գևորգ Մարգարետունի»/: 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց հայ երգիծաբանությունը: Արևմտահայ երգիծաբանության հիմնադիր դարձավ Յակոբ Պարոնյանը իր հայտնի «Ազգային ջոջեր», «Մեծապատիվ մուրացկաններ», «Պաղտասար Ախպար» և այլ գործերով: Արևելահայ երգիծաբանության և դրամատուրգիայի հզոր դեմքը Գաբրիել Սունդուկյանն էր՝ «Պեպո», «Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Քանդված օջախ» և այլ գործերով: 19-րդ դարի վերջին իրենց գրական գործունեությունը սկսեցին նաև Ղազարոս Աղայանը /մանկագիր/, Ալեքսանդր Շիրվանզադեն /«Քաոս», «Պատվի համար»/, Վահան Տերյանը, Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Վահան Տերյանը հայ սիմվոլիզմի խոշորագույն դեմքն էր, որին մեծ ճանաչում բերեց «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն: 20-րդ դարի սկզբին Ավետիք Իսահակյանը գրեց իր հայտնի «Աբու Լալա Մահարի» բարձրարժեք պոեմը:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ պոեզիայի ամենապայծառ դեմքը Հովի. Թումանյանն էր /1869-1923/: Թումանյանը խորաթափանց գրող էր, իր ժողովրդին նվիրված քաղաքական գործիչ, իմաստուն և մեծ հայրենասեր: Նրա գրչին են պատկանում հայ գեղարվեստական այնպիսի գոհարներ, ինչպիսիք են «Անուշը», «Թմբկաբերդի առումը», «Լոռեցի Սաքուն» պոեմները, «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, «Գիքորը» պատմվածքը և այլն: Հիշյալ ժամանակաշրջանը ծնեց այնպիսի արևմտահայ գրողների փայլուն համաստեղություն, ինչպիսիք են՝ Արփիար Արփիարյանը, Գրիգոր Զոհրապը /նովելներ/, Միսաք Մեծարենցը, Ծերենցը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Երվանդ Օտյանը /«Ընկեր Փանջունի»/, Ռ. Սևակը:

Թատրոն. 1851թ. Թիֆլիսում հիմնադրվեց Թամամշյանի, իսկ 1861թ. Կ. Պոլսում՝ Արևելյան թատրոնները: 1863թ. Կ. Պոլսում Վարդվյանը հիմնադրում է թատերախումբ՝ բեմադրելով ներկայացումներ հայերեն և թուրքերեն լեզուներով: Արևմտահայ

թատրոնի անկրկնելի դեմքերից էր Պետրոս Ադամյանը: Իրենց դերասանական արվեստով հայ թատրոնի զարգացմանը նպաստեցին Գևորգ Զմշկյանը, Սիրանուշը, Հովի. Աբեյանը:

Երաժշտության բնագավառում գոհարներ ստեղծեցին Տիգրան Զուխաշյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Մակար Եկմալյանը: Գուսանական երգարվեստի դեմքերից էին Զիվանին և Շերամը: Զուխաշյանը «Արշակ II» օպերայով դարձավ հայ օպերային արվեստի հիմնադիրը: Հայ երաժշտական արվեստի գլուխգործոցը դարձավ Կոմիտասը, որը հավաքեց, օտար տարրերից մաքրեց և ժողովրդին ներկայացրեց 3000 երգ՝ «Գարունը», «Մոկաց Միրզան», «Կռունկը» և այլն: Հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը Ալեքսանդր Սպենդիարյանն էր իր «Ալմաստ» անմահ օպերայով: Արմեն Տիգրանյանը ստեղծեց «Անուշ» օպերան՝ Թումանյանի համանուն պոեմի հիման վրա, որը բեմադրվեց Ալեքսանդրապոլում 1912թ.:

Հայ կերպարվեստի ամենախոշոր դեմքը Հովի. Այվազովսկին էր /1817- 1900/: Համաշխարհային հռչակ էր վայելում նրա «9-րդ ալիք» կտավը: Նա վրձնեց բազմաթիվ գործեր հայկական թեմաներով՝ «Արարատ», «Սևանա լիճը», «Խրիմյան Հայրիկը Եջմիածնում», «Հայերի ջարդը Տրապիզոնում» և այլն:

Վերոհիշյալ տասնամյակներում ստեղծագործել են Գևորգ Բաշինջաղյանը, Վարդգես Սուրենյանցը, Փանոս Թերլեմեզյանը, Եղիշե Թադևոսյանը և ուրիշներ:

Նշանավոր քանդակագործներ էին Յակոբ Գյուրջյանը, Անդրեաս Տեր-Մանուկյանը:

Ճարտարապետությունը. նոր աստիճանի հասավ, որը պայմանավորված էր քաղաքային կյանքի աշխուժացումով: Անդր-կովկասում և Ռուսաստանում գործող հայտնի ճարտարապետներ էին Գաբրիել Տեր-Միքելովը, Քրիստափոր Տեր-Մարկիսովը, Հովի. Քաջագունին, Ալեքսանդր Թամանյանը և ուրիշներ:

62. ՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Արևելյան Հայաստան. 20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդը շարունակում էր մնալ երկատված՝ Օսմանյան Թուրքիայում և Ռուսական կայսրության տարածքում ենթարկվելով ազգային ու սոցիալական ծանր

հալածանքների: Թև Արևելյան Հայաստանում հայությունը գտնվում էր ավելի բարենպաստ պայմաններում, նրան չէր սպառնում ֆիզիկական բնաջնջման թուրքական վտանգը, այնուամենայնիվ այստեղ ևս առկա էին ազգային ու սոցիալական բռնությունները, որոնք ժամանակ առ ժամանակ ավելի սուր բնույթ էին ստանում: Ցարական կառավարության ազգահալած մեծապետական քաղաքականությունը սաստկացավ հատկապես 1896թ. Կովկասի կառավարչապետ դարձած Գոլիցինի օրոք: Նրա սահրանքով ռուսաստանյան թերթերը ողողվեցին հակահայկական հողվածներով: Թշնամական մթնոլորտ ստեղծվեց հայ առաքելական եկեղեցու շուրջ:

Գաղափարական նմանօրինակ նախապատրաստումից հետո, Գոլիցինի դրոմամբ 1903թ. հունիսի 12-ին Նիկոլայ Երկրորդ ցարը ստորագրեց օրենք հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին: Այդ օրենքով եկեղեցու կալվածքները, գույքը հանձնվում էին պետությանը: Այն ուղղակիորեն ուղղված էր նաև հայ մշակույթի՝ դպրոցի դեմ, քանզի հայ եկեղեցու եկամուտների հաշվին պահվող բազմաթիվ ծխական ու թեմական դպրոցներ, կանգնում էին փակման իրողության առջև:

Այս անհեռատես ու տգետ քայլը բողոքի ալիք առաջացրեց հայության շրջանում: Ամենուր, ի նշան բողոքի հրաժարվեցին կատարել այս հրամանը: Այդ օրենքի կիրարկման դեմ հանդես եկան բոլոր քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցականները, հնչակյանները, սոցիալ-դեմոկրատները /Բոգդան Կնունյանց/: Անդրկովկասի բոլոր հայաշատ կենտրոններում տեղի ունեցան ցույցեր, դիմումներ հղվեցին ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին՝ պահանջվելով ոչ մի զիջման չզնալ ցարիզմին: Սակայն ցարիզմը անուշադրության մատնեց այդ բողոքները և ձեռնամուխ եղավ բռնությամբ գույքի պետականացմանը: Դրա հետևանքով տեղի ունեցան ընդհարումներ: Առաջին լուրջ բախումը տեղի ունեցավ օգոստոսի 29-ին Ելիզավետպոլում /Գանձակ/, երբ փոխնահանգապետ Անդրևի հրամանով կազակական երկու վաշտ կրակ բացեց տեղի հոգևոր առաջնորդի տան մոտ հավաքված հայերի վրա: Տասնյակ մարդիկ զոհվեցին: Օգոստոսի 31-ին Թիֆլիսում ևս եղան զինված ընդհարումներ և քաղաքում հայտարարվեց ռազմական դրություն: Սեպտեմբերի 2-ին Բաքվում հայ ցուցարարներն ընդհարվեցին զորքի հետ՝ տալով բազմաթիվ զոհեր: Ղարաբաղում սկսված հուզումները ճնշելու նպատակով ցարական իշխանությունները գործի դրեցին անգամ հրետանին: Այնուամենայնիվ, հուզումները տարածվեցին Ախալցխա, Ալեքսանդրապոլ, Երևան,

Էջմիածին, Նախիջևան և այլ քաղաքներում, Լոռու Դսեղ և Մարց գյուղերում:

1904թ. հոկտեմբերի 14-ին մի խումբ հնչակյաններ մահափորձ կատարեցին Գոլիցինի նկատմամբ: Վերջինս միայն վիրավորվեց: Ահաբեկման /տեռորի/ ենթարկվեցին Ելիզավետպոլի փոխնահանգապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին:

Այս քայլերը վերջապես ցարիզմին ստիպեցին շուտով զիջումների գնալ, հատկապես, որ 1904թ. ռուս-ճապոնական պատերազմն ու 1905թ. սկսված ռուսական առաջին հեղափոխությունը վատթարացրեցին երկրի վիճակը: Գոլիցինը հետ կանչվեց և նրան փոխարինեց Վորոնցով-Դաշկովը, որը ճարպիկ քաղաքագետ էր: Նա ճիշտ կողմնորոշվեց և Նիկոլայ II-ի առջև հարց բարձրացրեց հունիսի 12-ի օրենքը վերացնելու մասին: 1905թ. օգոստոսին ցարի ստորագրած հրովարտակով հայ եկեղեցուն էին վերադարձվում գույքը և կրթական գործով զբաղվելու իրավունքը:

Արևմտյան Հայաստան, 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրու թյունը շարունակում էր մնալ հետամնաց ռազմաֆեոդալական, դեսպոտական երկիր:

Համիդեական դաժան ռեժիմը չի ընկճում ազատագրական շարժումը: 1890-ական թթ. կոտորածներից հետո որոշ ժամանակ վայրէջքից հետո այն նորից 20-րդ դարի սկզբին վերածնվում է: 1901թ. նոյեմբերի 1-ին արդեն մեծ անուն ունեցող հայդուկապետեր Անդրանիկն ու Չաուշը որոշում են ամրանալ Մշո Առաքելոց վանքում և պայքարել թուրքական իշխանությունների դեմ այնքան ժամանակ, քանի դեռ չեն դադարի հայերի անլուր հալածանքները: Շուտով Անդրանիկին են միանում Կոտոյի Հաճին և Սեբաստացի Մուրադը: 17 ֆիդայիների /այլ տվյալներով 50-60/ դեմ թուրքերը դուրս են բերում մի քանի հազար մարդ Ֆերիզ փաշայի հրամանատարությամբ: Թշնամին հանդիպում է կատաղի դիմադրության և տալիս մեծ թվով զոհեր: Բիթլիսի նահանգապետը վանքի հոգևորականների միջոցով փորձում է համոզել ֆիդայիներին հանձնվել: Անդրանիկը պատասխանում է, որ ինքը անձնատուր չի լինի և չի հավատում անձի ապահովության մասին թուրքերի կեղծ խոստումներին: Միայն նոյեմբերի 27-ին, երբ թուրքերը սկսել էին վրեժ լուծել շրջակայքի անպաշտպան գյուղացիներից, Անդրանիկը հրամայում է իր ֆիդայիներին հագնել սպիտակ սավաններ և, օգտվելով սպիտակ ծյան շերտից, աննկատ և գրեթե անկորուստ դուրս գալ վանքից: Այս միջադեպը, որ հայտնի է «Առաքելոց վանքի կռիվ» անունով, մեծ համբավ բերեց հայ

Ֆիդայիներին:

20-րդ դարի սկզբին Մշո դաշտին հարող լեռնային Սասուն համայնքը, բուժելով 1894թ. վերքերը, նորից դարձավ ֆիդայական շարժման կենտրոններից մեկը: 1904թ. Սասունում բռնկվեց ֆիդայական շարժման ամենաուշագրավ էջը կազմող մի ապստամբություն: Դարասկզբին թուրքական իշխանությունները քայլեր ձեռնարկեցին Սասունի շրջակայքում ռազմական հենակետեր ստեղծելու ուղղությամբ: Ի պատասխան դրա, կուսակցությունները 1902-1904թթ. փորձեր արեցին զինական խմբեր տեղափոխել Սասուն Կովկասից և Արևմտյան Հայաստանի գավառներից: Դաշնակցության կողմից այնտեղ ուղարկված 11 խմբերից միայն Թորգոմի ջոկատը կարողացավ հասնել Սասուն: 23 հոգուց բաղկացած, «Մրիկ» կոչվող այդ խմբում էին Սեբաստացի Մուրադը, Սեպուհը և ուրիշներ: Մնացած խմբերը՝ Խանի, Նովրուզի, Աշոտ Երկաթի և այլոց գլխավորությամբ, տալով արյունալի մարտեր, մինչև Սասուն հասնելը, ցիր ու ցան եղան:

Արդեն 1903թ. վերջին Սասունում էին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր հայտնի ֆիդայապետերը՝ Անդրանիկը, Չառուշը, Հրայրը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Սմբատը /Մախլուտո/, Մակարը, Կորյունը և ուրիշներ: Սասունում ստեղծված օրհասական վիճակը քննարկելու համար 1903թ. վերջին Գելիգուզանում հրավիրվեց ինքնապաշտպանության զինվորական խորհուրդ, որում Անդրանիկն առաջարկեց սկսել համաժողովրդական ապստամբություն: Սակայն անցավ Հրայրի առաջարկը՝ բավարարվել միայն Սասունով՝ նոր կոտորածների տեղիք չտալու նպատակով: Ժողովն ընտրեց ինքնապաշտպանության խորհուրդ Անդրանիկի գլխավորությամբ:

1904թ. փետրվար-մարտին Սասունի մոտ կենտրոնացնելով 10 հազ. զորք և 5000 քրդական ջոկատ՝ թուրքական զորքերի հրամանատար Քեոսե Բինբաշին ապրիլի 1-ին անցավ հարձակման: Նրանց դեմ դուրս եկան ընդամենը 200 ֆիդայիներ և 1000 սասունցի գյուղացիներ:

Ապրիլի 11-12-ին թշնամին գրոհում է Շենիկ գյուղի ուղղությամբ, սակայն հաջողություն չի ունենում: Ապրիլի 13-ին կատաղի մարտեր են տեղի ունենում Գելիգուզան տանող կիրճում, որտեղ հերոսաբար զոհվում է Հրայրը: Նրան թաղում են Գելիգուզանում՝ Աղբյուր Սերոբի կողքին:

Ապրիլի 17-ին թուրքերը գրոհում են Գելիգուզանը, բայց տալով կորուստներ, նահանջում են: Ապրիլի 20-ին գրոհը կրկնվում է, որի ժամանակ թշնամին օգտագործում է 12 թնդանոթ: Դրությունը դառնում էր օրհասական: Զինվորական խորհուրդը, տեսնելով, որ թուրքերը սկսել

են Սասունի խաղաղ բնակչության բնաջնջումը, հրաման է արձակում քաշվել Անդոկ լեռը: Անդրանիկը շարունակում է դիմադրությունը մի խումբ քաջերով մինչև մայիսի 1-ը: Սեբաստացի Մուրադը, կատարելով խորհրդի հրամանը, մեծ դժվարությամբ 6 հազ. սասունցի գյուղացիների հասցնում է Մշո գյուղերը՝ փրկելով նրանց կոտորածներից: Անդրանիկն ու Վևորզը նահանջում են դեպի Վան, որտեղից Անդրանիկն անցնում է Պարսկաստան: Թուրքերը ներխուժելով Սասուն՝ մոխրակույտերի են վերածում 42 գյուղ, սրի քաշում 7-8 հազ. մարդու: Թև Սասունի 1904թ. ապստամբությունը արյունալի հետևանք ունեցավ և ծանր ազդեցություն թողեց ժամանակի հայ մտավորականության ու ժողովրդի վրա, այն հետագա սերունդների համար ծառայեց ազատագրական պայքարի վառ օրինակ:

63. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂՎՓՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1905-1907թթ.)

1905թ. հունվարի 9-ին Պետերբուրգում ցարական ոստիկանությունը կրակ բացեց խաղաղ ցուցարարների վրա. զոհվեց 500 մարդ: Հունվարի 9-ին՝ արյունոտ կիրակիով սկսվեց Ռուսաստանում առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Պետերբուրգի արյունալի դեպքերի արձագանքները հասան նաև Անդրկովկաս՝ Թիֆլիս, Բաքու և այլուր:

1905թ. մարտին գործադուլ սկսվեց Ալավերդում, որին մասնակցեց 100 մարդ: Միայն տնտեսական զիջումներ կորզելուց հետո բանվորները վերադարձան աշխատանքի: Ապրիլին Անդրկովկասյան երկաթուղում սկսված գործադուլին մասնակցեցին բազմաթիվ հայ բանվորներ:

Հեղափոխական ելույթները, որոնք բացի տնտեսական պահանջներից, ունեին քաղաքական ուղղվածություն /ցարիզմի տապալում, սահմանադրական կարգերի ստեղծում և այլն/, ընդգրկեցին նաև գյուղացիությանը: Հատկապես ուժեղ ելույթներ տեղի ունեցան Լոռիում կալվածատեր Բարաթովների դեմ:

1905թ. մարտ-ապրիլ ամիսներին հայ ազատամիտ մտավորականների մի խումբ Ռուսաստանի կառավարությանը և Կովկասի փոխարքային ներկայացրեց 2 խնդրագիր, որոնցում պահանջ էր դրվում գումարել Սահմանադիր ժողով, սահմանել խոսքի, մամուլի ազատություն,

8-ժամյա աշխատանքային օր և այլն:

Հեղափոխությանը հայերի ակտիվ մասնակցությունը ստիպեց Նիկոլայ II ցարին Անդրկովկասում ատելի փոխարքա Գոլիցինի փոխարեն նշանակել Վորոնցով-Դաշկովին: 1905թ. օգոստոսի 1-ին վերացվեց 1903թ. հունիսի 12-ի տխրահռչակ հրամանագիրը հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին: 1905թ. աշնանը և ձմռանը հեղափոխական շարժումը Ռուսաստանում հասավ իր գագաթնակետին: 1905թ. հոկտեմբերի 17-ին ցարը ստորագրեց մանիֆեստ, որով խոստանում էր խորհրդարանի դումայի ատեղծում, խոսքի, մամուլի ազատություն և այլն: Այսինքն՝ Ռուսաստանը դառնում էր սահմանադրական միապետություն: Սակայն մանիֆեստից հետո էլ հեղափոխական շարժումները շարունակվեցին: 1905թ. նոր գործադուլ բռնկվեց Ալավերդում:

Հայ-թաթարական (ադրբեջանական) կռիվները. Հեղափոխությունից ահաբեկված ցարիզմը, Ռուսաստանի ժողովուրդներին հակացարական պայքարից հեռու պահելու նպատակով, կազմակերպեց ազգամիջյան ընդհարումներ: Սկսվեցին հրեաների ջարդեր: Անդրկովկասում ամենակտիվ հեղափոխական տարրի՝ հայերի դեմ օգտագործվեցին հետամնաց, մուլեռանդ կովկասյան թաթարները /այժմյան՝ ադրբեջանցիներ/:

1905թ. փետրվարի 6-ին Բաքվում տեղական իշխանությունների և նահանգապետ Նակաշիձեի դրդմամբ մուլեռանդ թաթարները հարձակվեցին հայերի վրա: Մի քանի օր տևած բախումների ընթացքում զոհվեցին բազմաթիվ հայեր: Շուտով իշխանությունները ջանք չխնայեցին բախումները Անդրկովկասի այլ քաղաքներ տեղափոխելու հարցում: Գիտակցելով հայությանը սպառնացող վտանգը՝ հայ քաղաքական շրջանները ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության գործին: Հատկապես մեծ գործ կատարեց դաշնակցությունը: Հայտնի հայդուկ, խանատրի արշավանքի կազմակերպիչ Նիկոլ Դումանը ղեկավարեց Բաքվի հայության պաշտպանությունը: Բաքվում ստեղծված ջոկատներին փետրվարի վերջին հաջողվեց ուժեղ հակահարված տալ թաթարներին՝ պատճառելով զգալի կորուստներ: Ղարաբաղում ինքնապաշտպանությունը գլխավորեցին վարդանը, Համազասպը, Զանգեզուրում՝ Քեռին, Թիֆլիսում՝ Արմեն Գարոն և ուրիշներ:

1905թ. փետրվարին ընդհարումները տեղափոխվեցին Երևան և Նախիջևան:

Արյունալի ջարդեր եղան Ղարաբաղի կենտրոն Շուշիում: 1905թ. օգոստոսին վերսկսվեցին Բաքվի կոտորածները, որոնք ուղեկցվում էին

նավթահորերի հրդեհումներով: 1905թ. նոյեմբերի 20-ին Բաքվում ընթացավ հայ-թաթարական ջարդերի երրորդ ակտը, որն անցավ Թիֆլիս, Գանձակ և այլ շրջաններ: Թեև ամենուր էլ հայերը տվեցին կորուստներ, սակայն հիմնականում շնորհիվ դաշնակցականների կազմակերպած ջոկատների, թաթարներն ավելի մեծ վնասներ կրեցին: Իշխանությունները դրանից եկան անակնալի և սկսեցին օգնել թաթարներին: Փոխարքայի հովանավորությամբ Ելիզավետպոլի և Բաքվի նահանգում ստեղծեցին Դեֆայի /պաշտպանության/ կազմակերպությունը, որը ահաբեկչություններ էր կատարում, թուլացիկներ տարածում խաչվող երկու դաշույնների կնիքով: Երևանի նահանգում այդ օրինակով ստեղծվեց «Ջան բեզարների» /զլխից ձեռ քաշածների / կազմակերպությունը:

Դաշնակցությունը կրկին դիմեց պատասխան գործողությունների: Երիտասարդ Դրոն /Դրաստամատ Կանայան/ սպանեց Բաքվի ջարդերի գլխավոր կազմակերպիչ Նակաշիձեին: Եղան նաև ահաբեկչական այլ քայլեր:

Իշխանությունների դրդումով «Կարմիր քրքիջը», ինչպես այն ժամանակ կոչում էին հայ-թաթարական արյունահեղությունները, մերթընդմերթ կրկնվեցին 1906-1907թթ.: Հայ-թաթարական ջարդերը կանխելու գործում մեծ գործ կատարեցին Հովի. Թումանյանը և ադրբեջանցի գրող Սաբիրը, որոնք սպիտակ դրոշը ձեռքին շրջում էին հայկական և թաթարական գյուղերում՝ բնակչությանը բացատրելով ջարդերի անիմաստ բնույթը և նրանում ցարիզմի սադրիչ դերը:

Մինչև հեղափոխության ավարտը՝ 1907թ. հունիսի 3-ը, գործադուլային շարժումը, գյուղացիական ելույթները Հայաստանում չդադարեցին:

1906թ. օգոստոսին Ալավերդում տեղի ունեցած գործադուլը, որը տևեց մեկ ամիս՝ մոտ 3 հազար մարդու մասնակցությամբ, ճնշվեց գործի միջոցով:

1907թ. մարտին Ղափանում սկսված գործադուլը ստիպեց հանքատերերին հիմնականում կատարելու գործադուլավորների 27 պահանջների մեծ մասը:

1905-1907թթ. Ռուսաստանյան հեղափոխության շրջանում ակտիվ գործունեություն ծավալեցին քաղաքական կուսակցությունները՝ Դաշնակցությունը, Հնչակյանները, Սոցիալ- դեմոկրատները:

1907թ. հունիսի 3-ին Նիկոլայ II-ը ցրեց անհնազանդ II պետական դուման, այսինքն՝ իրականացրեց պետական հեղաշրջում: Այս իրադարձությամբ ավարտվեց Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը:

**64. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ /1912-1914ԹԹ./**

1904թ. Սասունի ապստամբության ճնշումից, Գրայրի /1904/, Գևորգ Չաուշի /1907/ սպանություններից հետո Արևմտյան Հայաստանում ֆիդայական շարժումը շեշտակի վայրէջք ապրեց, սկսվեց ընդհանուր հիասթափություն: Այս պայմաններում, երբ պարզ դարձավ, որ անհատական, պարտիզանական բնույթ կրող հայդուկային շարժումը չի կարող սպասելի արդյունքներ ունենալ, դաշնակցության ղեկավարությունը Սասուն ուղարկեց երիտասարդ դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանին՝ նրան հանձնարարելով ջանք չխնայել շարժումը դադարեցնելու և ժողովրդին համազգային ապստամբության նախապատրաստելու համար: Նրան հաջողվեց մի շարք ֆիդայապետերի հանդգել առժամանակ պայքարը դադարեցնելու և ապստամբության պատրաստվելու հարցում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թուրքահպատակ ժողովուրդներից բացի համիդեական արյունալի ռեժիմի դեմ հանդես են գալիս Եվրոպայում ուսանած բազմաթիվ երիտասարդ թուրք գործիչներ: Նրանց ջանքերով ստեղծված կուսակցություններից հայտնի էր «Միություն և առաջադիմություն» կամ «Երիտասարդ Թուրքիա» կուսակցությունը: Ցավոք, ժողովրդավարության, ազգերի իրավահավասարության մասին երիտթուրքերի կարգախոսները և Համիդի դեմ նրանց պայքարը հետաքրքրություն ~~և~~ առաջացրին հայ, հույն, հրեա, արաբ և այլ քաղաքական շրջաններում: Վերջիններս փորձեցին համագործակցել երիտթուրքերի հետ ընդհանուր թշնամու՝ Համիդի դեմ:

1908թ. հուլիսին երիտթուրքերը, սպաներ Նիազիի և Էնվերի ղեկավարությամբ, հայ և այլ թուրքահպատակ ժողովուրդների քաղաքական առանձին ուժերի օգնությամբ հեղաշրջում կազմակերպեցին և զավթեցին իշխանությունը: Երկիրը դարձավ սահմանադրական միապետություն, տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ: Հայերը պառլամենտում ստացան 10 տեղ: Եղան ազգերի հավասարության, անձի ազատությունների խոստումներ: Սակայն շուտով Թալեաթ և Էնվեր փաշաների երիտթուրքական կառավարությունը ցույց տվեց իր ազգայնամոլ դեմքը՝ փաստորեն շարունակելով Համիդի ազգահալած քաղաքականությունը: 1909թ. ապրիլին Ադանայում և Կիլիկիայի այլ վայրերում կազմակերպվեցին հայկական կոտորածներ, որոնց զոհ գնաց մոտ 30 հազ. մարդ: Զգալով իրենց սխալը՝ դաշնակցական և հնչակյան

գործիչների մեծագույն մասը խզեց իր կապերը երիտթուրքերի հետ: Ադանայում կազմակերպվեց դիմադրություն Կարապետ Լաչինյանի գլխավորությամբ: 12 օր դիմադրեց Հաճընը /Կիլիկիա/:

1911թ. Սալոնիկում կայացած համագումարում երիտթուրքերը որոշում ընդունեցին, որում նշվում էր Թուրքիայի զուտ թուրքական պետության վերածվելու ձգտումը և ազգային փոքրամասնությունների վերացման անհրաժեշտությունը: Այնպես, որ հայերը նորից կանգնում էին նոր կոտորածների վտանգի առջև:

1912թ. Բալկանյան երկրների և Թուրքիայի միջև ծագեց պատերազմ, որը թուրքական լծից ազատագրվելու հույսեր արթնացրեց հայերի մեջ: Հայ քաղաքական գործիչները, Գևորգ V հայոց կաթողիկոսը հայկական հարցը վերաբացելու խնդրանքով դիմեցին մեծ տերություններին: Կովկասի կառավարչապետ Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ II-ին հղած զեկուցագրում կոչ էր անում պաշտպանել հայկական հարցը՝ դրանով իսկ շահելով հայերի համակրանքը, հանգամանք, որը մեծապես Ռուսաստանին կօգներ առաջիկա պատերազմում Արևմտյան Հայաստան ներթափանցելու համար: Գևորգ V կաթողիկոսը եզիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարին լիազորում է հայկական հարցի՝ 61-րդ հոդվածի խնդիրը Եվրոպայում բարձրացնել Բեռլինի կոնգրեսի մասնակից պետությունների առջև: 1912թ. դեկտեմբերին Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը որոշում է կայացնում բարենորոգումների մոռացված հարցը մեծ տերությունների ուշադրությանը արժանացնելու մասին: Այսպես, Բալկանյան պատերազմի շրջանում /1912-1913/ կրկին վերաբացվում է հայկական հարցը: Անդրանիկը և Գարեգին Նժդեհը իբրև կամավորականներ մտնում են բուլղարական բանակի մեջ, արժանանում շքանշանների:

Հայկական հարցում, ելնելով իր շահերից, առավել հետաքրքրություն հանդես բերեց Ռուսաստանը, որը վաղուց նպատակ էր դրել գրավել Արևմտյան Հայաստանը: Նիկոլայ II-ը Կ. Պոլսում ռուսական դեսպանության գլխավոր-թարգման Անդրեյ Մանդելշտամին հանձնարարեց մշակելու հայկական ռեֆորմների ծրագիր՝ 61-րդ հոդվածի և Պոլսի հայոց պատրիարքարանի ներկայացրած նյութերի հիման վրա:

1913թ. հունիսի 8-ին Մանդելշտամը ներկայացրեց իր նախագիծը, որի համաձայն հայկական 6 նահանգներից /Վան, Էրզրում, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Սեբաստիա/ կազմվում էր մեկ նահանգ՝ պրովինցիա, որը կառավարվելու էր թուրքահպատակ քրիստոնյայի կամ եվրոպացու կողմից: Նահանգապետը, որին մեծ պետությունների

առաջարկությամբ նշանակելու էր սուլթանը, իր ձեռքում էր կենտրոնացնելու երկրամասի գործադիր իշխանությունը, հսկելու էր ոստիկանությանը, զորքերին: Երկրամասի ներկայացուցչական ժողովը / պառլամենտը/ պետք է ունենար հավասար թվով քրիստոնյա և մահմեդական պատգամավորներ: Գավառները կառավարվելու էին 6 հոգուց բաղկացած վարչական խորհրդի կողմից: Վերացվելու էին համիդիե ջոկատները, դադարեցվելու էին հայերի հալածանքները, մահմեդականների բնակեցումը Բալկաններից Հայաստան: Այս նախագիծը, որ որոշ փոփոխություններից հետո հավանության արժանացավ Ռուսաստանի դաշնակից Անգլիայի և Ֆրանսիայի կողմից, շատ հեռու էր հայերին ինքնավարություն տալու իրողությունից: Այնուամենայնիվ, այն դիմադրության հանդիպեց հիշյալ եռյակին՝ Ռուսաստանին, Անգլիային և Ֆրանսիային հակադրվող Գերմանիայի կողմից, որը, վախենալով Ռուսաստանի ազդեցության ուժեղացումից Արևմտյան Հայաստանում, պաշտպանության տակ վերցրեց թուրքիային: Գերմանա-թուրքական ճնշման տակ Ռուսաստանը, որ դեռ պատրաստ չէր պատերազմի, գնաց զիջման: 1914թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր, որը վերանայում էր Մանդեղեշտամի ժրագիրը: Ըստ այս համաձայնագրի, Արևմտյան Հայաստանը բաժանվելու էր երկու նահանգի՝ սեկտորի, որոնցից մեկի կենտրոնը լինելու էր Վանը, մյուսինը՝ Էրզրումը: Վանի սեկտորի մեջ մտցվելու էին Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի, իսկ Էրզրումի սեկտորի մեջ՝ Էրզրումի, Սեբաստիայի և Տրապիզոնի նահանգները: Նահանգապետերին հաստատելու էր սուլթանը: Նրանք հսկելու էին ոստիկանությանը, բայց զորք էին ստանում միայն «անհրաժեշտության դեպքում»: Համիդիեները չէին վերացվում, այլ վերածվում էին պահեստի հեծելազորի և խաղաղ ժամանակ զենք չէին կրելու: Պարզ էր, որ այս ժրագիրը ավելի համեստ էր, քան Մանդեղեշտամինը: Եվրոպայից ժամանած նահանգապետեր Գոֆը և Վեստենենկը նոր էին ժամանել Հայաստան, երբ սկսվեց համաշխարհային պատերազմը: Բարեփոխումների հարցը կրկին մոռացության տրվեց:

65. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ: ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՄ

Պատերազմի սկսվելուց /1914թ. օգոստոսի 1/ մի քանի օր անց օգոստոսի 6-ին եռյակ դաշինքին /Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա/ գաղտնի պայմանագրով միացավ թուրքիան՝ թև նախապես հայտարարել էր իր չեզոքությունը: Հոկտեմբերի 30-ին թուրքիան թույլատրեց գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերին անցնելու Բոսֆորի նեղուցով և ռմբակոծելու ռուսական նավահանգիստները: Ի պատասխան այս քայլի նոյեմբերի 3-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց թուրքիային, որի հետ ռազմական գործողություններն ընթացան Կովկասյան և Բալկանյան ռազմաճակատներում, ինչպես և Սև ծովում:

Թուրքիան 720 կմ-ոց կովկասյան ռազմաճակատում, որը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը, Ռուսաստանի դեմ դուրս բերեց 300 հազարանոց 3-րդ և 4-րդ Անատոլիական բանակները՝ ռազմական մինիստր Էնվերի գլխավորությամբ: Ռուսական զորքերի թիվը մոտ 200 հազար էր, որի հրամանատարը ցարի եղբայրն էր, իսկ 1916թ.՝ Յուդենիչը: Ռուս-թուրքական առճակատումը ծանր կացության առաջ կանգնեցրեց երկատված հայ ժողովրդին: Մոտ երկու ու կես միլիոն արևմտահայեր, որոնք ապրում էին կայսրության տարածքում, հայտնվեցին երկրնտրանքի առջև, մասնակցե՞լ պատերազմին, թե ոչ: Հայ քաղաքական կուսակցությունները այս հարցում չունեցան միասնական կարծիք: Դաշնակցության լիդերների մեծ մասը, հիմնականում արևմտահայեր, հասկանալով պահի լրջությունը, պնդում էր, որ միակ ելքը լիակատար չեզոքությունն է: Ի տարբերություն նախկին ռուս-թուրքական պատերազմների, այս անգամ թուրքական կառավարությունը հայերին բանակ զորակոչելու հրաման արձակեց: Ավելին՝ ներքին գործերի նախարար Թալեաթը պաշտոնապես դաշնակցությանը առաջարկեց կազմակերպել կամավորական շարժում թուրքական բանակում ընդդեմ ռուսների: 1914թ. աշնանը Էրզրումում Թալեաթը բանակցություններ սկսեց հայտնի դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Հայ քաղաքական կուսակցությունները կտրականապես մերժեցին թուրքերի առաջարկը, հանգամանք, որը սրեց հայ-թուրքական հարաբերությունները: Այս առումով ծանր էր նաև արևլահայերի վիճակը: Այստեղ էլ ցարիզմը փորձեց պատերազմի մեջ քաշել արևելահայերին:

1914թ. սեպտեմբերին ցարը ընդունեց հատուկ մանիֆեստ՝

ուղղված հայ ժողովրդին, որում կոչ էր արվում իբրև կամավորներ զինվորագրվել ռուսական բանակին անհավատ մահմեդականներից Արևմտյան Հայաստանն ազատելու նպատակով: Մանիֆեստի վերջում ցարը խոստանում էր վարձահատույց լինել: Կովկասի փոխարքան՝ Վորոնցով-Դաշկովը կաթողիկոս Գևորգ V-ին հավատացնում էր, թե նվիրվածության դիմաց հայերը կստանան ինքնավարություն թուրքերից Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո: Հատկանշական է, որ նույնատիպ խոստումներ տալիս էր Թալեաթը արևմտահայերին՝ Արևելյան Հայաստանը գրավելու դեպքում:

Այս ճակատագրական հարցում փաստորեն կամա թե ակամա կիսվեցին արևելյան և արևմտյան հայերի կարծիքները: Շուրջ 300 հազ. արևմտահայեր զորակոչվեցին թուրքական բանակ: 200 հազ. արևելահայեր հազան ռուսական զինվորական համազգեստ: Սակայն արևելահայերի մոտ ոգևորությունը և Վորոնցով-Դաշկովի խոստումները հանգեցրին կամավորական շարժման կազմակերպման գաղափարին, որին զորավիճ էղան կաթողիկոս Գևորգ V-ը, Հայոց Ազգային քյուրուհ, հայտնի դաշնակցականներ Ջավրիյանը, Խատիսյանը, Արմեն Գարոն, Համո Օհանջանյանը: Ամենուր սկսեցին կազմակերպել հանգանակություն, որն ընդգրկեց նաև սփյուռքը: Կամավորական ջոկատներ կազմավորվեցին Թիֆլիսում, Երևանում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Հունաստանում և այլուր: Միայն Ամերիկայի հայերը հանգանակեցին 1,5 միլիոն դոլար:

Արդեն 1914թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ձևավորվեց մի կամավորական ջոկատ Թիֆլիսում, որին պահանջվում էր հեղինակավոր ղեկավար: Վերադառնալով հայրենիք՝ Անդրանիկը գլխավորեց հայկական առաջին կամավորական ջոկատը: Նոյեմբերի 3-ին Անդրանիկի ջոկատը Նախիջևանի վրայով ուղարկվեց Պարսկաստան՝ գեներալ Օգանովսկու կորպուսի հետ: Նոյեմբեր-դեկտեմբերին Իգդիրում կազմակերպվեց երկրորդ կամավորական ջոկատը, որը գլխավորեց Դրաստամատ Կանայանը /Դրո/: Դեկտեմբերին կազմավորված երրորդ ջոկատի ղեկավարությունը ստանձնեց Համազասպը: Չորրորդ ջոկատը գլխավորեց Արշակ Գավաֆյանը՝ Քեռին: 1914թ. նոյեմբերին թուրքական զորքերը ներխուժեցին Կարսի մարզի տարածքը՝ զանգվածային կոտորածներ կազմակերպելով հայկական բնակավայրերում: 1914թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915թ. հունվարի 5-ը տեղի ունեցավ Կովկասյան ճակատի ամենաուժեղ ճակատամարտը՝ Սարիղամիշի տակ: Մարտերին մասնակցեցին Քեռու ջոկատի զինվորները: Թուրքական

բանակը կորցրեց 90 հազարից 70 հազարը:

1915թ. գարնանը Անդրանիկի ջոկատը մասնակցեց Հյուսիսային Պարսկաստանի կռիվներին: 1915թ. ապրիլի 18-ին տեղի ունեցավ նշանավոր Դիլմանի ճակատամարտը, որտեղ փայլեց Անդրանիկի ռազմական տաղանդը: Հետագայում ստեղծվեցին նաև վեցերորդ և յոթերորդ ջոկատները: Վեցերորդի հրամանատարները հաջորդաբար եղան Ջանփոլադյանը, Ավշարյանը և Գայը: Յոթերորդ գնդի հրամանատարը իշխան Արղությանն էր:

1915թ. ապրիլին Հայոց ազգային բյուրոյի որոշմամբ բոլոր կամավորական ջոկատները ետ կանչվեցին՝ մեկ հայկական բանակ ստեղծելու նպատակով: Անդրանիկը հրաժարվեց վերադառնալ: Արդեն կազմավորված հինգերորդ ջոկատի բազայի վրա միավորվեցին երկրորդ, երրորդ, չորրորդ ջոկատները և ստեղծվեց Արարատյան գունդը՝ Վարդանի գլխավորությամբ: Կաթողիկոսի օրհնությամբ Արարատյան գունդը ուղարկվեց Արևմտյան Հայաստան: Այն խնդիր ստացավ Բայազետ-Ալաշկերտի վրայով հասնել Վան: Մայիսի 5-ին կամավորականների հեծելազորը Խեչոյի հրամանատարությամբ մտավ Վան: Մայիսի 6-ին Վան հասան գնդի մյուս մարտիկները: Վանեցիների ինքնապաշտպանության առաջնորդ Արամ Մանուկյանը քաղաքի բանալիները հանձնեց ռուսներին: Մայիսի 20-ին Վան հասավ Անդրանիկը: Հայերի ոգևորությունը և ռազմական ուժի հզորացումը, պետականության վերականգնման մասին հաճախակի դարձած կոչերը, խորը մտահոգություն պատճառեցին ռուսական հրամանատարությանը: 1915թ. հունիսի 2-ին ռուսական զորքերը հանկարծակի թողեցին Վանը: Վանի նահանգում սկսվեց սարսափելի խուճապ՝ 200 հազար մարդ բռնեց գաղթի ճանապարհը: Թուրքերը գրավեցին Վանը և սրի քաղեցին տեղում մնացած հայերին: Հունիսի 23-ին ռուսները վերագրավեցին մոխրակույտի վերածված քաղաքը:

1915թ. վերջին ցարը ընդունեց որոշում հայկական ջոկատները ցրելու և ռուսական բանակի մեջ տարալուծելու մասին: Այն դեպքում, երբ հայ կամավորները արյուն թափեցին Սարիղամիշում, Ալաշկերտում, Պարսկաստանում, ամենագործուն մասնակցություն ունեցան Վանի, 1916թ. Բիթլիսի, ամռանը՝ Բաբերդի, Էրզրումի, Երզնկայի գրավմանը: 1916թ. Ռևանդուզի ճակատամարտում զոհվեց Քեռին: Փաստորեն պայքարը մնաց անհետևանք:

Այնուամենայնիվ կամավորական շարժումը հայ ազատագրական պայքարի ամենավառ էջերից է:

66. 1915Թ. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԸ

Մոտավոր հաշվարկներով 1-ին համաշխարհային պատերազմում զոհվեց 10 միլիոն մարդ, վիրավորվեց և հաշմանդամ դարձավ 20 միլիոն: Սակայն բնակչության տեսակարար կշռի տեսանկյունից ոչ մի ժողովուրդ չկրեց այնպիսի խոշոր կորուստներ, ինչպես հայ ժողովուրդը: Այն ենթարկվեց աշխարհում առաջին կանխամտածված ցեղասպանությանը՝ գեոցիդին, որը մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունն է: Այն նպատակ է հետապնդում ոչնչացնել ազգային, կրոնական կամ ռասսայական մի խմբի: Այդ ծրագրին առաջինը լծվեց սուլթան Համիդը: Նրան փոխարինեցին երիտթուրքերը: 1911թ. հունական Սալոնիկի քաղաքում կայացած գաղտնի ժողովում Թալեաթի /ցերքին գործերի նախարար/, Էնվերի /ռազմական նախարար/, Ջեմալի /ծովային նախարար/ ղեկավարությամբ որոշում կայացվեց առաջիկա պատեհ առիթի դեպքում վերջնականապես լուծել հայկական հարցը՝ հայերին իսպառ ոչնչացնել, «Մեծ Թուրան» ստեղծելու պանթուրքիստական ծրագիրը դարձնել իրականություն:

1930-ական թթ. երիտթուրքական կոմիտեի անդամ Մեւլան Ջադե Ռիֆաթը հրապարակեց գաղտնի փաստաթղթեր, որոնցից պարզվում է, որ հայերի ցեղասպանության հրեշավոր ծրագրի իրականացման հրամանը արձակվել է 1915թ. ապրիլի 15-ին: Այդ օրը երիտթուրքական կոմիտեի նիստում ընդունվեց որոշում, որում մասնավորապես նախատեսվում էր.

1. Ձինաթափել օսմանյան բանակի հայ զինվորներին՝ մեղադրելով դավաճանության մեջ:

2. Կայսրության բոլոր հայաբնակ շրջաններում ձերբակալել և աքսորել հայ մտավորականությանը:

3. Տեղահանել հայ բնակչությանը և նրան անձի ու գույքի ապահովության պատճառաբանությամբ աքսորել Սիրիայի անապատները:

4. Հրամանի պատճենները ուղարկվում էին բոլոր նահանգապետերին: Այն չկատարողները, անկախ ազգությունից, ենթարկվում էին պատասխանատվության:

Ապրիլի 24-ին, լույս 25-ի գիշերը Կ. Պոլսում և կայսրության հայաբնակ քաղաքներում ձերբակալվեցին 600 հայ մտավորականներ՝ կուսակցական, ազգային, հոգևոր գործիչներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլ մասնագետ անձինք: Նրանց թվում էին օսմանյան պառլամենտի անդամներ գրող Գրիգոր Չոիրապը և Վարդգեսը, գրողներ Դանիել

Վարուժանը, Ռուբեն Սևակը, Սիամանթոն, Թլկատիցցին, Երուխանը և ուրիշներ: Ձեթունում դավադրաբար սպանվեց Նազարեթ Չաուշը, Վանում՝ Վռամյանը և ուրիշներ:

Հայ մտավորականությանը աքսորեցին երեք ուղղությամբ՝ Չանկրի, Չորում, Այաշ: Չանկրիի մերձակայքում սպանեցին Դանիել Վարուժանին և Սևակին, իսկ Ուրֆայի մոտ՝ Գրիգոր Չոիրապին: Մոտավոր հաշվարկներով բանակում զինաթափ արվեց և գնդակահարվեց 200 հազար մարդ: Հայ մեծանուն երգահան Կոմիտասը, որը հրաշքով փրկվեց տեղահանվելուց, չտանելով թուրքերի ոճրագործությունները, զրկվեց հոգեկան հավասարակշռությունից:

Ստեղծվեց տեղահանության հատուկ կոմիտե: Երիտթուրքական կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ բանտերից ազատ արձակված հանցագործներից ստեղծվեցին հատուկ չեթեական գնդեր, որոնց ուժերով իրականացվեց հայ բնակչության տեղահանությունը: Ձանգվածային տեղահանումները սկսվեցին 1915թ. մայիսից: Մինչև հոկտեմբեր հայաթափ արվեցին երգրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքրի, Սեբաստիայի, Ադանայի, Իկոնիայի, Հալեպի վիլայեթները:

Հունիսի 15-ին Կ. Պոլսի «Սուլթան Բայազետ» հրապարակում կախաղան բարձրացվեցին 20 հնչակյան գործիչներ, այդ թվում՝ Փարամազը: Ճակատագրական եղավ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանի կոչը հնազանդորեն տեղահանվելու մասին: Ամբողջ Կիլիկիան, բացառությամբ Մուսա լեռան, բռնեց տարագրության ուղին: Արևմտյան Հայաստանի գաղթականների քարավանները ձգվում էին Երզրում, Դերջան, Երզնկա, Խարբերդ, Մալաթիա, Հալեպ, Դեր Ջոր ճանապարհով: Ամենասարսափելի կոտորածները տեղի ունեցան Եփրատն անցնելու ժամանակ՝ Կամախ քաղաքի մոտ և Սիրիայի անապատ Դեր Ջորում: Հայերի զանգվածային բռնագաղթ չեղավ միայն Կ. Պոլիս և Ջմյուռնիա քաղաքներից: Թուրքերը վախեցան Եփրոպայի միջամտությունից:

1916թ. սկզբներին Դեր Ջորում կուտակված 500.000 հայերից ողջ էր մնացել միայն 10-20 հազար մարդ: Հարյուր հազարավոր մարդիկ, լքելով Հայրենիքը, ապաստան էին գտել աշխարհի տարբեր երկրներում:

Գերմանացի հումանիստ դոկտոր Լեպսիուսի հաշվումներով 1915-16թթ. Օսմանյան կայսրությունում զոհվել են 1 մլն 350 հազար հայեր, այսինքն՝ մոտ 1.5 մլն. մարդ: Բացի մարդկային կորուստներից ահռելի գումար կազմեցին նյութական կորուստները՝ 15 մլրդ ֆրանկ. ավերվեց

66 քաղաք, 25.000 գյուղ, 2.350 եկեղեցի, 1.500 դպրոց:

Երբ ԱՄՆ-ի դեսպան Սորոզենթաուն այս վայրագությունների համար բողոքեց Թալեաթին՝ ասելով, թե դու պատասխան ես տալու հայերի առջև, նա ցինիկորեն պատասխանեց, թե «ու՞մ առջև, չէ որ այլևս հայեր չկան: Ես երեք ամսում արեցի ավելին, քան 3 տասնամյակում արել է սուլթան Յամիդը»:

Հայոց եղեռնի սանձազերծման մեջ հավասարապես մեղավոր էր նաև Թուրքիայի դաշնակից Գերմանիան, որը ամեն կերպ խրախուսում էր երիտթուրքերին: Այս անգամ ևս միայն անհատ հումանիստներ /Լեպ-սիուս, Անատոլ Ֆրանս, Վեսելովսկի, Լանսեն, Բրյուսով, Բլոկ և ուրիշներ/ իրենց բողոքի ձայնը բարձրացրին ի պաշտպանություն հայերի:

1921-22թթ. դաշնակցականների նախաձեռնությամբ մի շարք հայ վրիժառուներ /Սողոմոն Թեհլիրյան, Արշավիր Շիրակյան, Արտաշես Գևորգյան և ուրիշներ/ իրականացրին եղեռնի գլխավոր կազմակերպիչների սպանությունները /Թալեաթ, Ջեմալ, Բեհհաեդդին Շաքիր, Մայիդ Հալիմ փաշա և այլն/: Այս գործողությունները հայտնի են «Նեմեսիս» օպերացիա անունով (Նեմեսիսը հունական դիցաբանության մեջ վրեժի աստվածն է):

Այսպես հայկական հարցը «լուծվեց» ցեղասպանության եղանակով: Հետագայում այն ստացավ «Հայ դատ» անունը: Սփյուռքահայերի համառ պայքարի ջանքերով 1987թ. հունիսին Ստրասբուրգում Եվրոխորհուրդը դատապարտեց հայոց եղեռնը: Հաջորդ տասնամյակում իբրև համայն մարդկության դեմ ուղղված ոճրագործություն, հայոց ցեղասպանության դատապարտմամբ հանդես եկան Ռուսաստանի Դաշնության, Հունաստանի և այլ երկրների պառլամենտներ, զանազան միջազգային կազմակերպություններ:

67. 1915Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ

1915թ. ոչ միայն ողբերգության և կոտորածների տարեթիվ էր, այլև հերոսական ինքնապաշտպանության և մաքառման ժամանակաշրջան: Հայոց ցեղասպանության բոլոր կազմակերպիչները պատերազմից հետո ստացան իրենց արժանի պատիժը՝ ենթարկվեցին ահաբեկչության:

1915թ. բազմաթիվ վայրերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Դեռ մարտին դիմադրեցին Սոկսը և Շատախը, որոնց օգնեց քուրդ Մուրթալա բեկը: 1915թ. մարտի վերջերին Էնվերի փեսա Ջևդեթը,

որը վանի նահանգապետն էր, զորքերը շարժեց Վասպուրականի վրա: Ապրիլի 7-ին ապստամբեց Վան քաղաքը: Նրա Այգեստան թաղամասում ապրում էր 20 հազ., քաղաքամեջում՝ 2500 հայ: Մահմեդականները փախան քաղաքամեջից: Ստեղծվեց գինվորական կոմիտե՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրանտ Գալիկյանի գլխավորությամբ: Վանում էին հայտնի ֆիդայիներ Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Ակարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ:

Առաջին անգամ 3 հայ քաղաքական կուսակցությունները մոռացան իրենց ներկուսակցական տարածայնությունները և համատեղ դուրս եկան պայքարի: Քաղաքը բաժանվեց պաշտպանական գոտիների /Քաղաքամեջ, Այգեստան և այլն/: Կանանցից ստեղծվեցին սանիտարական արտադրություն. գինագործները արտադրում էին օրական 2000 փամփուշտ: Բալկանյան պատերազմների հայտնի կամավորական Բուլղարացի Գրիգորը նույնիսկ պատրաստեց թնդանոթ: Ապրիլի 10-ին Ջևդեթի 12 հազ. բանակը գրոհեց քաղաքի վրա, բայց հաջողություն չունեցավ: Ապրիլի 17-ին 7 հազ. օգնական զորք ստանալով Էրզրումից՝ Ջևդեթը վերսկսեց հարձակումը:

Թուրքերը ռմբակոծեցին քաղաքը: Ապրիլի 28-ին սկսվեց ամենակատաղի ճակատամարտը: Ջևդեթը, լսելով հայ կամավորների մոտենալը, ուժեղացրեց գրոհները: Բայց բոլոր ջանքերը ապարդյուն էին: Մայիսի 3-ին թուրքերը փախան Բիթլիսի ուղղությամբ: Մայիսի 5-ին Խեչոյի հեծելազորը, իսկ 6-ին ամբողջ «Արարատյան գունդը» մտան Վան: Արամ Մանուկյանը քաղաքի բանակիները հանձնեց ռուսական զորքերին: Ռուսները Արամին նշանակեցին Վանի նահանգապետ, իսկ կամավորների դրոշները ծածանվեցին Վանի միջնաբերդի աշտարակին:

Բացի Վանից ուժեղ դիմադրություն կազմակերպվեց Մուշում: Ամբողջ մի թուրքական բանակ 7 միս չէր կարողանում տեղահանել Մշո գյուղերի բնակչությանը: Հունիսի 13-ին հայ պաշտպանների մի մեծ խումբ Ռուբենի և Կոմսի գլխավորությամբ դաշտից նահանջեց դեպի Սասուն, որտեղ միանալով սասունցիներին, դիմադրեց մինչև վերջին մարդը: 1916թ. ապրիլի 18-ին ռուսական զորքերը /Նրանց հետ մաս Անդրանիկը/ գրավեցին Մուշն ու Սասունը: Ցավոք, արդեն հայ հերոսամարտի այդ օջախները հայաթափված էին, բնակավայրերը՝ թալանված ու ավերված:

1915թ. հունիսի 2-ին սկսվեց Անդրանիկի ծննդավայր Շապին Կարահիսարի հերոսամարտը Ղուկաս Տեովլեթյանի գլխավորությամբ: Մինչև հունիսի վերջը տևած այս պաշտպանության ժամանակ 5 հազար

հայեր քաղաքի միջնաբերդում կռվեցին և զոհվեցին մինչև վերջին մարդը: Շատ հերոսների թվում աչքի ընկավ 14-ամյա Հայկ Թևեքեյանը: Մանկական երգչախումբը իր հայրենասիրական երգերով ոգևորում էր պաշտպաններին:

1915թ. սեպտեմբերի 29-ին սկսվեց Հայաստանի հարավում ընկած Ուրֆայի /Եդեսիա/ հերոսամարտը: Ինքնապաշտպանությունը գլխավորեց Մկրտիչ Յոթնեղբայրյանը: Ջեմալ փաշայի հրամանով Ուրֆա շարժվեց գեներալ Ֆահրիի բանակը: Չնայած այդ ամենին, թուրքերը չկարողացան գրավել քաղաքը: Գործին միջամտեցին գերմանացիները. մի գեներալ ներկայացավ Յոթնեղբայրյանին և առաջարկեց հանձնվելու դեպքում երաշխավորել բոլոր հայերի անվտանգությունը: Վերքերից արյունաքամ լինող Յոթնեղբայրյանը պատասխանեց գերմանացուն. «Եթե դուք մտածում եք հայերի մասին որպես թուրքերի դաշնակից, բարի լինեիք երաշխավորելու Դեր Ջորում մեռնող հայերի անվտանգությունը»: Հոկտեմբերի 23-ին թուրքերը սկսեցին ընդհանուր գրոհ: Երբ քաղաքը գրավված էր, նրա կենտրոնում թուրքերը հանդիպեցին հայ հերոսների դիակների մի մեծ կույտի: Թվում էր, թե բոլոր պաշտպանները զոհվել են: Հանկարծ դիակների կույտից անհայտ մարդիկ կրակ են բացում թուրքերի վրա: 2 օր շարունակ թուրքերը գնդակոծում էին հայերի դիակները, սակայն այնտեղից ստանում են ուժեղ պատասխան: Երբ հայ հերոսների բոլոր փամփուշտները վերջացան, թուրքերը սարսափեցին, տեսնելով, որ այդ կրակողներից մեկը աղջիկ է: Թուրք փաշան փորձեց վրեժ լուծել՝ աղջկան անարգելու միջոցով: Վերջին պահին հայ հերոսուհին կարողանում է խլել ասկյարներից մեկի ատրճանակը և սպանել փաշային ու մի քանի թուրք զինվորի: Ուրֆայի հերոսամարտը տևեց 25 օր:

Հայերի ինքնապաշտպանության նշանավոր կենտրոններից էր Մուսա լեռը: Միջերկրական ծովի ափին գտնվող Մուսետիայի գավառակի 6 հայկական գյուղերի ավելի քան 4 հազար բնակիչներ աքսորից ու կոտորածից փրկվելու նպատակով, 1915թ. հուլիսի վերջին բարձրացան Մուսա լեռ և նախապատրաստվեցին դիմադրության Տիգրան Անդրեասյանի, Եսայի Յաղուբյանի և Պետրոս Տվլաքյանի ղեկավարությամբ: Կառավարությունը նրանց դեմ զորք ուղարկեց: Սկսվեցին արյունահեղ կռիվները: Օգտվելով լեռան անառիկ ամրություններից՝ հայերը հերոսաբար պաշտպանվում էին գերակշիռ թուրքական զորքերի գրոհներից: Լեռան գագաթին նրանք կրակ վառեցին և դրոշ բարձրացրին «Քրիստոնյաները վտանգի մեջ են» գրությամբ:

Սակայն սպառվում էին հայերի ուժերը: Նրանք բոլորն էլ

կկոտորվեին, եթե մի երջանիկ անակնկալ տեղի չունենար: Սեպտեմբերի 5-ին ծովում երևում է ֆրանսիական «Կիչեն» ռազմանավը: Շուրջ չորս հազար հայերի հաջողվում է սեպտեմբերի 14-ին ֆրանսիական 5 նավերով, այդ թվում՝ «Ժաննա Դ Արկ» շոգենավով, փոխադրվել Պորտ-Սաիդ: Այս դեպքերն իրենց գեղարվեստական արտացոլումն են սևագել ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում: Նման հերոսություն կրկնեցին Սլովենիայի պարտիզանները 1942թ. Ռոզ լեռան վրա ֆաշիստների դեմ պայքարում:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև այլ վայրերում: Շնորհիվ այդ կռիվների հաջողվեց առանձին շրջաններում խուսափել զանգվածային կոտորածներից և տեղահանությունից:

68. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1917Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ: ԱՁԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐԻ ԱՏԵՂՈՒՄԸ

1917թ. փետրվարի 27-ին Պետրոգրադում հաղթանակեց⁷ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Մարտի սկզբին Նիկոլայ II ցարը հրաժարվեց իշխանությունից: Տապալվեց Ռոմանովների 300-ամյա դինաստիան: Իշխանությունն անցավ 4-րդ պետական դումայի պատգամավորներից կազմված ժամանակավոր կառավարության ձեռքը՝ իշխան Լվովի գլխավորությամբ: Տեղերում իրական իշխանությամբ օժտված էին նաև սովետները՝ խորհուրդները, ուստի երկրում հաստատվեց երկիշխանություն: Կառավարության մեջ մեծամասնություն էին կազմում կադետները, իսկ սովետներում՝ էսեռներն ու մենշևիկները: Ռուսաստանը բռնեց ժողովրդավարական զարգացման ուղին: Բանտերից ու աքսորներից ազատվեցին բազմաթիվ հեղափոխականներ, սկսեցին ազատորեն գործել արգելված քաղաքական կուսակցությունները:

Ամենուր սկսեցին կազմավորվել ժամանակավոր կառավարության տեղական մարմիններ: Թիֆլիսում ձևավորվեց քաղաքային գործկոմը, որի բյուրոյի մեջ ընտրվեց այնտեղի քաղաքագլուխ, դաշնակցական Ալ. Խատիսյանը: Բարսի 9-ին ժամանակավոր կառավարության որոշմամբ վերացվեց 1844թ. ստեղծված Կովկասի փոխարքայությունը և, այն փոխարինվեց նոր մարմնով՝ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեով /ՕՁԱԿՈՄ/: Նրա մեջ մտան Անդրկովկասից պետդումայի պատգամավորներ Խառլամովը /Նախագահ/, Պապաջանյանը, Զիսենկելին, Աբաշիձեն և Ջաֆարովը: Օգակոմի տեղական մարմիններ

դարձան գործադիր կոմիտեները: Նրա իշխանությունը տարածվում էր նաև պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանում գրավված տարածքների վրա: Լինելով ժողովրդավարական կառավարություն՝ ԼՂՎԻ վարչակազմը բարյացակամ վերաբերմունք հանդես բերեց ռուսական կայսրության ազգերի նկատմամբ: Ամենուր աշխուժացան ազգային կուսակցությունները: Անդրկովկասում գործող կուսակցություններից ուժեղագույնը հայ հեղափոխական դաշնակցությունն էր, վրաց մենշևիզմը և արբերջանական «Մուսավաթը»: Բացի բոլշևիկներից, բոլոր ազգային կուսակցությունները պաշտպանում էին ժամանակավոր կառավարության քաղաքականությունը: Դաշնակցության կովկասյան կազմակերպությունների ապրիլի 9-ի կոնֆերանսը որոշում կայացրեց Անդրկովկասում Ռուսաստանի հովանավորությամբ Ֆեդերատիվ հանրապետություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Ռուսաստանի իշխանության ներքո ինքնավարություն ստեղծելու գաղափարը պաշտպանեց նաև Հայ ժողովրդական կուսակցությունը: Հնչակյանները հանդես էին գալիս ազգերի լիարժեք իրավահավասարության, ինքնորոշման կոչերով:

Ժամանակավոր կառավարությունը բարյացակամ վերաբերմունք հանդես բերեց հայկական հարցի նկատմամբ: Ի տարբերություն ցարիզմի, այն թույլատրեց Արևմտյան Հայաստան վերադառնալ հայ գաղթականությանը: 1917թ. ապրիլի 26-ին իշխան ԼՂՎԻՂ և արտգործնախարար Միլյուկովը ստորագրեցին հրովարտակ պատերազմի ժամանակ ռուսների գրաված Արևմտյան Հայաստանի տարածքում հատուկ զինվորական վարչություն՝ գեներալ-կոմիսարություն ստեղծելու մասին: Թուրքահայաստանի /Արևմտյան Հայաստանի/ գեներալ - կոմիսարությունը, որի կոմիսար նշանակվեց գեներալ Պ. Ավերյանովը, իսկ տեղակալ՝ հայազգի Յակով Ջավրիյանը /դաշնակցական, բժիշկ, հայտնի հասարակական գործիչ/, ուղղակի ենթարկվում էր ժամանակավոր կառավարությանը: Վերջինիս հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը և գեներալ-կոմիսարության ստեղծումը հայերի մեջ մեկ միասնական ինքնավար հայրենիք ունենալու հույսեր էր արթնացնում:

Մայիսի 2-11-ը Երևանում կայացավ արևմտահայերի առաջին համագումարը՝ Անդրանիկի, Արամ Մանուկյանի և այլոց նախածեռնությամբ: Հետևելով համագումարի պատվավոր նախագահ Անդրանիկի կոչերին՝ համագումարը որոշումներ ընդունեց թուրքերից ազատված Արևմտահայաստանում զինական ուժեր հաստատելու

գաղթականներին վերադարձնելու, որբանոցներ բացելու, դպրոցական կյանքը վերականգնելու մասին: Համագումարն ընտրեց Արևմտահայ ազգային խորհուրդ՝ Վահան Փափազյանի /Կոմս/ նախագահությամբ: Անդրանիկը ղեկավարեց խորհրդի ռազմական բաժինը: Սկսվեց «Մեկ հայ, մեկ ոսկի» հայտնի շարժումը, որը գլխավորեց Հովհաննես Թումանյանը: Հայ բնակչությունից հավաքված հանգանականությունը օգտագործվեց Օսմանյան Թուրքիայի խորքերը քշված հայ տարագիրներին ազատելու համար /յուրաքանչյուր հայի դիմաց՝ մեկ ոսկի/: Չեռնարկված միջոցառումների շնորհիվ, որին մեծապես օգնեց գեներալ-կոմիսարությունը, Արևմտյան Հայաստան վերադարձվեց շուրջ 140 հազ. գաղթական: Գեներալ-կոմիսարության տարբեր բաժանմունքներում ընդգրկված հայրենասերների ուժերով բացվեցին որբանոցներ, դպրոցներ, վերաշինվեցին շատ բնակավայրեր:

Ժամանակավոր կառավարությունը շուտով ընդառաջեց Ջավրիյանի և Արմեն Գարոյի խնդրանքներին և Եվրոպայում կռվող հազարավոր հայ ռազմիկների թույլատրեց վերադառնալ հայրենիք և տեղափոխվել Արևմտյան Հայաստան: 1917թ. մայիսից սկսեց ձևավորվել հայկական կորպուսը, որի հրամանատար նշանակվեց ռուսական բանակում ճանաչված հայազգի գեներալ Թովմաս Նազարբեկյանը: Հայկական կորպուսը, որի թվակազմը մինչև հոկտեմբեր հասավ 8 հազարի, բաղկացած էր 3 դիվիզիաներից: Առաջինը գլխավորում էր Արեշյանը, երկրորդը՝ Սիլիկյանը, երրորդը, որ մեծ մասամբ արևմտահայեր էին՝ Անդրանիկը: Հայկական կորպուսի առանձին գումարտակներ դրվեցին Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարության ենթակայության տակ: Նույն նպատակով Երկիր /Արևմտյան Հայաստան/ ուղարկվեցին այլ կամավորներ, որոնց առաջնորդներից ոմանք նույնիսկ ստացան պաշտոններ: Սեբաստացի Մուրադը ստանձնեց Երզնկայի, իսկ Սեպուհը՝ Բաբերդի գավառապետերի պաշտոնները:

1917թ. սեպտեմբերի 29-ին Թիֆլիսում բացվեց Արևելահայերի, համագումարը տարբեր կուսակցությունների 203 պատգամավորների մասնակցությամբ /նրանցից 113-ը դաշնակցականներ էին/: Համագումարը ստեղծեց Արևալեռայ ազգային խորհուրդ՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Ազգային խորհրդի 35 անդամների թվում էին հայտնի գործիչներ Արամը, Ռուբենը, Կարմիկյանը, Խատիսյանը և ուրիշներ: Ազգային խորհուրդներ ստեղծվեցին նաև Բաքվում, Երևանում և այլուր: Բաքվի խորհրդի նախագահը Աբրահամ Գյուլխանդանյանն էր: Հայոց ազգային խորհուրդները զգալի հայրենասիրական գործ կատարեցին.

դարձան հայ կյանքի ղեկավարման կենտրոններ: Սակայն այս հայանպաստ վիճակը երկար չտևեց և ընդհատվեց 1917թ. հոկտեմբերին տեղի ունեցած հեղաշրջմամբ:

69. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1917Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ: ԹՈՒՐԸԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԴԵԿՐԵՏԸ

Ինչպես ամբողջ Եվրասիայում, այնպես էլ Անդրկովկասում իրադարձությունները կտրուկ շրջադարձ ապրեցին 1917թ. հոկտեմբերից, երբ Ռուսաստանում, օգտվելով երկրում ստեղծված ծանր սոցիալ-քաղաքական կացությունից, բոլշևիկյան կուսակցությունը Վ.Ի.Լենինի ղեկավարությամբ, զինված ճանապարհով զավթեց իշխանությունը: Հոկտեմբերի 24-25-ին /նոյեմբերի 7-8/ Պետրոգրադում բռնի տապալվեց ժամանակավոր կառավարությունը: Սովետների համառուսաստանյան 2-րդ համագումարում կազմվեց կառավարություն՝ Ժողկոմխորի՝ Լենինի նախագահությամբ:

Ռուսաստանում ընդհատվեց հեղափոխության ժողովրդավարական զարգացումը: Սկզբում բոլշևիկները, շարունակելով ժամանակավոր կառավարության դեմոկրատական քայլերը, խոստացան խոսքի, մամուլի ազատություն, ազգերի իրավահավասարություն, հողի մասին դեկրետով՝ հող, խաղաղության մասին դեկրետով՝ պատերազմի ավարտ: Այս խոստումների շնորհիվ նրանք ստացան ժողովրդի բավական լայն շրջանների աջակցությունը: Հատկապես ազգային փոքրամասնությունների կողմից ոգևորությամբ ընդունվեց 1917թ. նոյեմբերի 3-ին «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որով ռուսահպատակ ժողովուրդներին բոլշևիկները խոստանում էին իրավահավասարություն, սուվերենություն, ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչում՝ ընդհուպ մինչև Ռուսաստանից անջատվելն ու ինքնուրույն պետություն ստեղծելը: Սակայն շուտով Լենինի կառավարությունը մոռացավ այդ խոստումները: Դեռ ավելին, 1918թ. այն զենքի ուժով ցրեց Սահմանադիր ժողովը:

Հոկտեմբերյան հեղաշրջումը հանկարծակիի բերեց Անդրկովկասի ժողովուրդներին: Այնտեղ գործող կուսակցությունները զգուշությամբ վերաբերվեցին կառավարությանը: ՀՀ դաշնակցությունը, որ նույնպես սոցիալիզմի կողմնակից կուսակցություն էր, իր մամուլում բոլշևիկների քայլերը զնահատեց անիրական, իսկ ամբողջ աշխարհում սոցիալիզմի

հաստատման Լենինի թեզը պատրանք:

Շուտով Անդրկովկասի շատ քաղաքական ուժերի զգուշավոր դիրքը բոլշևիկների նկատմամբ վերածվեց անվստահության, նույնիսկ՝ հակադրության: Հատկապես այն բանից հետո, երբ պարզ դարձավ պատերազմի նկատմամբ նրանց մոտեցումը, Անդրկովկասում ուժեղացավ Ռուսաստանից անջատվելու ձգտումը: Բոլշևիկները գտնում էին, որ համաշխարհային պատերազմը, որը շարունակվում է 4 տարի, պետք է դադարեցնել և գրավված բոլոր տարածքները վերադարձնել իրենց նախկին տերերին: Դա նշանակում էր, որ արյան գնով գրավված Արևմտյան Հայաստանը պետք է վերադարձվեր Թուրքիային: Այդ քաղաքականությունից խիստ դժգոհեցին հայ քաղաքական կուսակցությունները, որոնք հույս ունեին ռուսների կողմից գրավված Արևմտյան Հայաստանը միացնել Ռուսաստանին կամ վերջինիս հովանավորությամբ ստեղծել ինքնավարություն: Տրապիզոնի նահանգի նկատմամբ հավակնություն ունեին վրացիները, ուստի նրանք ևս դեմ էին գրավված հողերի վերադարձմանը: Այս և այլ հանգամանքներ դրդեցին Անդրկովկասում քաղաքական կուսակցություններին ինքնուրույն քայլերի:

1917թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում կազմվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ մեջևիկ Եվզենի Գեգեչկորու գլխավորությամբ: Կոմիսարիատի մեջ ընդգրկվեցին 12 կոմիսարներ, այդ թվում 3 հայեր՝ Խ. Կարծիկյանը /ֆինանսների կոմիսար/, Հ. Օհանջանյանը և Գ. Տեր-Ղազարյանը:

Կոմիսարիատի ստեղծումով փաստորեն դադարեցվեց Օզակոնի գործունեությունը և Անդրկովկասը իբրև ֆեդերատիվ երկրամաս, բռնեց Ռուսաստանից անջատվելու կուրս: Կոմիսարիատը, փաստացի չենթարկվելով կենտրոնական իշխանությանը, հաշվի չէր նստում Անդրկովկասում ստեղծված պայթուցավտանգ իրադրության հետ:

1917թ. դեկտեմբերի 16-ին Լենինի կառավարությունը քննարկեց Անդրկովկասում իրադրության հարցը՝ դատապարտելով կոմիսարիատի անջատողական կուրսը: Ժողկոմխորից չեղյալ հայտարարեց կոմիսարիատի լիազորությունները և հայ նշանավոր բոլշևիկ Ստ. Շահումյանին նշանակեց Անդրկովկասի արտակարգ և լիազոր կոմիսար՝ մինչև խորհրդային կարգերի հաստատումը երկրամասում: Շահումյանի նշանակման մանդատը և 500 հազ. ռսկի ռուբլին Թիֆլիս հասցրեց բոլշևիկ -հեղափոխական Կամոն: Քանի որ 1917թ. աշնանը Բաքվում հռչակած խորհրդային իշխանությունը տապալվել էր, Շահումյանը տեղափոխվեց Թիֆլիս և պայքար սկսեց Անդրկովկասում

խորհրդային իշխանություն հաստատելու ուղղությամբ: 1918թ. հունվարի 26-ին կոմիսարիատը սկզբում հրաման արձակեց նրան ձերբակալելու մասին, հետո զիջման գնաց և պահանջեց 24 ժամում հեռանալ Անդրկովկասից:

Առաջին քայլը, որ ձեռնարկեց կոմիսարիատը, Թուրքիայի հետ բանակցությունների մեջ մտնելն էր, որի արդյունքում Երզնկայում 1917թ. դեկտեմբերի 5-ին կնքվեց զինադադար: Ռազմաճակատի ողջ երկայնքով՝ Տրապիզոնից մինչև Սիրիա դադարեցվում էին ռազմական գործողությունները: Թուրքական կողմը «Երաշխավորում էր» իր հսկողության տակ գտնվող տարածքում հայերի անվտանգությունը: Իրականում թուրքերի համար այս զինադադարը նպատակ ուներ ժամանակ շահելու՝ նոր հարձակում սկսելու համար: Դրությունը բարդանում էր նրանով, որ պատերազմից հոգնած ռուսական կովկասյան բանակը ձգտում էր հեռանալ Ռուսաստան: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում այն կազմալուծվեց: Ռուս դասալիք զինվորների խմբերը հարյուրավոր կիլոմետրերով ձգվում էին Երզնկայից մինչև Յուսիսային Կովկաս: Դրան նպաստում էր նաև կոմիսարիատի վրաց-ադրբեջանական մեծամասնության հակառուս գործակցությունը: 1918թ. հունվարի 12-13-ին Շամխորում վրաց մենչևիկներն ու ադրբեջանցի ռուսավաթականները զինաթափեցին հեռացող ռուսական զորամասերից մի քանիսին: Եղան զինված ընդհարումներ, որի ընթացքում սպանվեցին ռուս զինվորներ: Վերջիններից բռնագրավվեց 15 հազ. հրացան ու զնդացիր: Ինչպես ամենաազդեցիկ հայ ազգային կուսակցությունը՝ դաշնակցությունը, այնպես էլ մյուսները, դեմ էին ռուսական զորքերի հեռանալուն՝ դրա մեջ տեսնելով Յայաստանի համար մեծ վտանգ:

«Թուրքահայաստանի մասին ժողկոմխորհի դեկրետը». 1917թ. նոյեմբեր-դեկտեմբերին խորհրդային կառավարությունը սկսեց զբաղվել Արևմտյան Յայաստանի հարցով: Ազգժողկոմատին կից ստեղծված «Յայկական գործերի կոմիսարիատի» անդամներ Վառլամ Ավանեսովին և գրող Վահան Տերյանին, ինչպես և հայտնի էսենական Պոռոշ Պոռոշյանին ու դաշնակցական Ռոստոմին հանձնարարվեց մշակել դեկրետ Արևմտահայաստանի մասին: Որոշ խմբագրումներից հետո այն ընդունվեց 1917թ. դեկտեմբերի 29-ին: «Թուրքահայաստանի մասին» այդ դեկրետով Ռուսաստանը ճանաչում էր Արևմտյան Յայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ այդ տարածքում պետություն ստեղծելը: Այդ նպատակով ժողկոմխորհը նախատեսում էր հետևյալ պայմանները.

1. Ռուսական զորքերի դուրսբերում Արևմտյան Յայաստանից և

երկրամասում կարգ ու կանոն հաստատելու համար՝ ժողովրդական միլիցիայի ստեղծում, 2. Յայրենիքից բռնագաղթված հայերի վերադարձը Թուրքահայաստան, 3. Տարագիր հայերի վերադարձից հետո Ռուսաստանը պարտավորվում է Թուրքիայի հետ բանակցություններում պնդել հոգուտ Արևմտյան Յայաստանի ազատ ինքնորոշման իրավունքի, 4. Ժողովրդավարական եղանակով Արևմտյան Յայաստանի ժամանակավոր իշխանության մարմնի՝ ժամանակավոր վարչության ստեղծում հայ և մահմեդական բնակչության հավասար տեղերով: Դեկրետի 2-րդ և 4-րդ կետերի կենսագործումը դրվում էր Անդրկովկասի արտակարգ և լիազոր կոմիսար Ստ.Շահումյանի վրա:

Այս փաստաթղթի վերաբերյալ այսօր էլ հայտնվում են տարբեր կարծիքներ: Մասնագետների մի մասը գտնում է, որ դեկրետով Արևմտահայաստանին ինքնորոշում տալը կեղծիք էր, քանի որ գեներոզի ենթարկված, հայաթափված երկրում ինքնավար պետություն ստեղծելը անհնարին էր, առավել ևս, որ առաջին կետով նախատեսվում էր ռուսական զորքերի դուրսբերում այնտեղից: Ուշագրավ է, որ ռուսական բանակի դուրսբերումը անհանգստացրել է նաև դեկրետի նախագծի հեղինակներին, ինչպես Տերյանին: Վերջինս Լենինի հետ զրույցի ժամանակ մտավախություն է հայտնել, որ ռուսների հեռանալուց հետո Թուրքահայաստանը կմնա մեն-մենակ թուրքերի դեմ և կնվաճվի նրանց կողմից:

Իրականում բուլշևիկները, տեսնելով, որ կորցնում են այդ երկրամասը, հայերին հաճոյանալու համար ընդունեցին այդ դեկրետը: Պատահական չէ, որ նրանք իրական քայլեր չկատարեցին այն կենսագործելու ուղղությամբ: Ավելին՝ 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտությամբ Լենինի կառավարությունը թուրքերին հանձնեց ոչ միայն Արևմտահայաստանը, այլև Կարսի մարզը:

Ինչևէ, այս դեկրետը նաև չի կարելի անտեսել, քանի որ նրանով ժամանակի ամենամեծ երկրներից մեկը՝ Ռուսաստանը ճանաչում էր հայերի օրինական իրավունքները իրենց հայրենիքի՝ Արևմտյան Յայաստանի նկատմամբ:

70. ԹՈՒՐԵԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ 1918Թ.:
ՍԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ:
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ:
ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1918թ. հունվարին, օգտվելով ռազմաճակատի կազմալուծումից, թուրքական զորքերը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ խախտեցին Երզնկայի զինադադարը և անցան հակահարձակման: Ռուսական զորքը Արևմտյան Հայաստանում թողնելով ահռելի քանակությամբ զինամթերք՝ արագորեն սկսեց հեռանալ: Մեծ զոհերի գնով գրավված հսկայածավալ Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ մեն-մենակ հայտնվեցին հայ կամավորները: Վերջիններս տեղ-տեղ փորձեցին դիմադրություն կազմակերպել՝ Երզնկայում Սեբաստացի Մուրադը, Բաբերդում՝ Սեպուհը, Քղիում՝ Թուրիկյանը: 1918թ. հունվարին Կովկասյան բանակի հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց գեներալի կոչում և նշանակեց ռազմաճակատի հրամանատար:

Անդրանիկը ժամանեց Ալեքսանդրապոլ, որտեղ ապարդյուն անցան կամավորներ հավաքագրելու նրա փորձերը: Ապա նա անցավ Կարս, փետրվարի 10-ին ժամանեց Երզրում, որը փորձեց դարձնել ուժեղ ամրոց: Արյունալի մարտեր մղելով՝ բազմաթիվ զաղթականների հետ Մուրադը Երզնկայից նահանջեց Դերջան, ապա՝ Երզրում: Ապարդյուն անցան նաև Քղիում թուրքերին և քրդերին կանգնեցնելու Թուրիկյանի ջանքերը:

Հայերի ռազմական անհաջողությունները պայմանավորվեցին նաև անբարենպաստ միջազգային իրադրությամբ: Թուրքերի ճնշման տակ Անդրկովկասի վրաց և ադրբեջանական քաղաքական ուժերը կատարեցին երկրամասը Ռուսաստանից անջատելու նոր քայլ: 1918թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը, որում ներկայացված էին 32 մենչևիկներ, 30 մուսավաթականներ, 27 դաշնակցականներ և տասնյակ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեյմի նախագահ ընտրվեց Չխեիձեն: Սեյմը դարձավ Անդրկովկասի ֆեդերատիվ հանրապետության իշխանության նոր մարմինը՝ փոխարինելով կոմիսարիատին: Հայ դաշնակցականները, որոնցից էին Քաջագունին, Խատիսյանը, Կարճիկյանը և ուրիշներ, դեմ լինելով Ռուսաստանից անջատվելուն, մտան սեյմի մեջ՝ թուրքերի դեմ միայնակ չմնալու համար: Մինչդեռ, թուրքերը շարունակում էին անարգել առաջանալ: Նրանք փետրվարին գրավեցին Դերջանն ու Բաբերդը, մարտի սկզբին՝ Երզրումը, որտեղից Անդրանիկը նահանջեց Կարս՝ չստանալով օգնական ոչ մի ուժ:

Այս ամենին գումարվեց Բրեստ-Լիտովսկում 1918թ. մարտի 3-ին խորհրդային Ռուսաստանի և գերմանաթուրքական բլոկի միջև կնքված չարաբաստիկ պայմանագիրը, որով բոլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արևմտյան Ուկրաինայից, Արևմտյան Բելոռուսիայից և Մերձբալթիկայից՝ հօգուտ Գերմանիայի և Արևմտյան Հայաստանից՝ հօգուտ Թուրքիայի: Դեռ ավելին, փաստորեն թուրքերին էր տրվում նաև Կարսի մարզը, որը 1878 թվից Ռուսաստանի կազմում էր:

Անդրկովկասյան սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը և 1918թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության /Մախագահ՝ Ա.Չխենկելի/ 12 անդամներից 7-ը մահմեդականներ էին, ուստի շուտով դրսևորվեց վերջիններիս թուրքամետ դիրքորոշումը: Ադրբեջանցի պատվիրակները, ընդառաջ գնալով իրենց թուրք եղբայրների թալանչիական պահանջներին, գտնում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի անցումը Թուրքիային: Վրաց պատվիրակները, թեև դեմ էին Արևմտյան Հայաստանի և Տրապիզոնի անցմանը Թուրքիային, սակայն իրականում ոչ մի լուրջ քայլ չէին կատարում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ: Պատահական չէ, որ վրացի գեներալ Օդիշելիձեի դավաճանության պատճառով և Չխենկելու հրամանով 1918թ. ապրիլի 11-12-ին, գրեթե առանց կռվի, հանձնվեց բավական լավ ամրացած Կարսի բերդը: Շուտով բանակցությունները Տրապիզոնում արդյունք չտվեցին և Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս:

Ստեղծված իրադրության մեջ պարզ էր դառնում, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի բռնագրավմամբ և ներխուժելու են նաև բուն Արևելյան Հայաստան՝ այն գրավելու և այնտեղ ևս իրականացնելու համար հայ բնակչության ոչնչացումը: Այդ ժամանակ Երևանում հայրենիքի պաշտպանության գործը իր վրա վերցրեց 1915թ. Վանի հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկյանը, որը 1917թ. դեկտեմբերի վերջից գլխավորում էր Երևանի ազգային խորհուրդը: Շուտով Արամը ստացավ դիկտատորի լայն լիազորություններ՝ իր ձեռքը կենտրոնացնելով Արևելյան Հայաստանի ռազմական և վարչական իշխանությունը: Նա Երևան հրավիրեց մի շարք նշանավոր զինվորականների՝ Սիլիկյանին, Դանիել Բեկ-Փիրումյանին, Դրոյին, Ղորղանյանին և այլոց: Արամը կարողացավ կարգ ու կանոն հաստատել Երևանի նահանգում, սանձել ավազակային խմբերը, կազմակերպել զինական ուժեր և ուղարկել ռազմաճակատ:

Իրադրությունը Անդրկովկասում շարունակում էր ավելի վտանգավոր դառնալ: Թուրքերի ճնշման տակ սեյմը 1918թ. ապրիլի 9/22/-ին վրաց մենշևիկների և ադրբեջանցի մուսավաթականների ջանքերով ընդունեց որոշում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակությունը, որ դեմ էր այդ որոշմանը, մնաց փոքրամասնության մեջ: Երկրամասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշկանդ դարձրեց թուրքերի նվաճողական ձեռնարկումները: Մայիսի 15-ին, անցնելով Ախուրյան գետը, թուրքական հորդաները ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Այստեղ ևս բավականաչափ ուժեր կային թշնամուն դիմադրելու համար: Սակայն սեյմի ղեկավարությունը կարգադրություն արեց քաղաքը թուրքերին հանձնելու մասին: Ալեքսանդրապոլի գավթումից հետո թուրքական «Կարս» զորամիավորումը 4 ուղղություններով սկսեց առաջանալ Արևելյան Հայաստանի խորքերը: Թուրքերի 3-րդ և 4-րդ բանակային զորախմբերը հրաման էին ստացել Արարատյան դաշտով մտնել Երևան: Մայիսի 21-ին այդ զորախմբերը գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը, անմիջապես վտանգ կախվեց էջմիածնի ու Երևանի վրա, որտեղ բազմահազար արևելահայերի հետ ծվարել էր հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներ: Երևանի անկումը կնշանակեր թուրքերի ձեռնարկած 1915թ. ցեղասպանության ավարտ, հայ ժողովրդի իսպառ ոչնչացում:

Այս օրհասական ժամին խոսեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական բնագործ: Վերջ տրվեցին միջկուսակցական տարածայնություններին, սկսվեց համախմբման ուժեղ շարժում: Արամ Մանուկյանը գեներալ Նազարբեկյանին լիազորեց ստանձնելու հայկական բոլոր զորքերի հրամանատարությունը: Վերջինս էլ գեներալ Սիլիկյանին նշանակեց Երևանյան ուղղությունը պաշտպանող զորաջոկատի հրամանատար: Սարդարապատի շրջանում ռազմական գործողությունների անմիջական ղեկավար դարձավ արցախցի գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը: Վերջինիս ազգական Պողոս Բեկ-Փիրումյանը գլխավորեց կամավորներից կազմված «Մահապարտների գունդը»: Սարդարապատում հայկական զորքերի դեմ դուրս բերվեց թուրքական 15 հազարանոց զորաբանակ Շևքի փաշայի հրամանատարությամբ:

Մայիսի 22-ին հայերն անցան հակահարձակման և հուժկու հարվածով ոչնչացրին Ղամշլու /Եղեգնուտ/ գյուղի շրջանում կենտրոնացած թուրքական ուժերը ազատագրելով մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը նահանջեցին և նոր դիրքեր բռնեցին Արաքս կայարանի շրջանում: Այս հաղթանակը ոգևորեց

հայկական ուժերին: Տարբեր տեղերից սկսեցին ժամանել նորանոր ջոկատներ: Մարտիկների առջև ելույթ ունեցավ Սիլիկյանը՝ հիշեցնելով Ավարայրի հերոսներին և այն մասին, որ նահանջել չի կարելի, քանզի թիկունքում Սուրբ Էջմիածինն է: Համանման ճառ արտասանեց նաև Նազարբեկյանը. «Մեր ապագան մեր ձեռքին է, կամ կհասնենք նրան պայքարով կամ երբեք մենք և մեր սերունդները չեն տեսնի այն»:

Մինչև մայիսի 27-ը տևած արյունալի մարտերից հետո հայկական ուժերը թշնամուն ետ չպրտեցին մինչև Արաքս կայարանը: Ապարանի ուղղությամբ հայկական ուժերին շրջանցելու և թևերից հարվածելու թուրքերի 9-րդ դիվիզիայի ջանքերն անցան ապարդյուն: Դա տեղի ունեցավ շնորհիվ Բաշ-Ապարանի ուղղությամբ հայկական զորքերի հաջող գործողությունների: Բաշ-Ապարանի շրջանում աչքի ընկավ Դրաստամատ Կանայանը: Հերոսաբար զոհվեց հայտնի կամավորական Ջեմյակը: Մայիսի 27-29-ի ընթացքում Բաշ-Ապարանի տակ թշնամին գլխովին ջախջախվեց և ետ չպրտվեց: Սարդարապատի և Բաշ-Ապարանի շրջանում կրած պարտությունների վրեժը թուրքերը փորձեցին հանել Մեծ Ղարաքիլիսայում: Այս ուղղությամբ թուրքերը ձգտում էին ճեղքել դիմադրությունը և դուրս գալ դեպի Թիֆլիս: Մայիսի 24-28-ին Մեծ Ղարաքիլիսայի մարտերում աչքի ընկան գնդապետներ Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գարեգին Նժդեհը: Միայն մայիսի 30-ին մեծ կորուստների գնով թշնամին կարողացավ ներխուժել Ղարաքիլիսա: Այնուհանդերձ, ընդհանրապես մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին թշնամու ջախջախմամբ: Տալով 3500 զոհ՝ թուրքերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ: Մայիսյան հերոսամարտերում, որոնք հայոց պատմության ամենապայծառ էջերից են և հայ ժողովրդի գոյատևման հզորագույն գրավականը, աչքի ընկան նաև հեծյալ ջոկատի հրամանատար Հովհաննես Բաղրամյանը, կապիտան Դոլուխանյանը, գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, ռուս զինվորականներ Պերեկրեստովը, Սիլինը, հույն Սակելարին, բազմաթիվ հոգևորականներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ և ուրիշներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴՈՒ
ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մայիսի 26-ին սեյմի վրաց մենշևիկյան ֆրակցիան հանդես եկավ սեյմը լուծարելու և անկախ վրացական պետության հռչակման

հայտարարությամբ: Սեյմը ցրելու առաջարկությունը պաշտպանեցին մուսավաթականները, որոնք էլ մայիսի 27-ին հռչակեցին իրենց պետականության ստեղծումը՝ Գյանջա /Գանձակ/ մայրաքաղաքով /Բաքուն այդ ժամանակ գտնվում էր սովետների ձեռքին՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ/: Սեյմի փլուզումից վերջնականապես պարզ դարձավ, որ հայերը մեծ-մեծակ են մնում թուրքական ագրեսիայի առջև: Վրացիները ստացան Գերմանիայի, իսկ ադրբեջանցիները՝ թուրքերի աջակցությունը: Սեյմի հայ պատվիրակները բողոք ներկայացրին Վրաստանի նորակազմ կառավարության նախագահ Լոյ ժորդանիային, որ ցինիկորեն պատասխանեց. «Դուք՝ հայերդ խեղդվում եք, մենք պարտավոր չենք ձեզ հետ խեղդվել»:

Մայիսի 28-ին Ազգային խորհուրդն ընդունեց որոշում անկախ պետություն ստեղծելու մասին: Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը հրապարակեց Նիկոլ Աղբալյանի ձեռքով գրված Հայաստանի անկախության հռչակագիրը, որը տպագրվեց մայիսի 30-ին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումով լուծարվում է Անդրկովկասյան դաշնակցությունը, Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման ֆունկցիաները Հայկական գավառների նկատմամբ»: Հունիսի 1-ին նոր հայտարարությամբ Ազգային խորհուրդը իրեն հռչակում էր հայկական բոլոր հողերի միակ իշխանություն: Այսպես 1045թ. մայր հայրենիքում և 1375թ. Կիլիկիայում պետականությունը կորցնելուց հետո, հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախությունը:

Նորաստեղծ պետականությունը փրկելու համար անհրաժեշտ էր միջպետական հարաբերություններ հաստատել դարավոր ըջնամու՝ թուրքիայի հետ: Այդ նպատակով, հետևելով Անդրկովկասյան հարևան երկու նորաստեղծ պետությունների օրինակին, ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ իրականացնող Ազգային խորհուրդը իր պատվիրակությունն ուղարկեց Բաթում, որտեղ ընթանում էին մի կողմից թուրքիայի, մյուս կողմից անդրկովկասյան հանրապետությունների բանակցությունները: Հայկական կողմը ներկայացրեցին խառնաձայն և քաջազուններ: Սկզբում թուրքական պատվիրակությունը չէր ուզում բանակցել հայերի հետ: Սակայն, հավանաբար տեղեկանալով իրենց գործերի անհաջողություններին Սարդարապատում, հաշվի նստեց նաև հայերի հետ: Հունիսի 4-ին Բաթումում կնքվեց հաշտություն թուրքիայի և առանձին-առանձին՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև:

Թուրքիան ճանաչում էր Հայաստանի հանրապետության անկախությունը: Սակայն հայերի համար այդ անկախությունը տրվում էր չափազանց թանկ գնով: Բաթումի պայմանագիրն ավելի ծանր էր, քան Բրեստ-Լիտովսկի հաշտությունը: Հայաստանը հրաժարվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանից ու Կարսի մարզից, այլև Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններից՝ Ալեքսանդրապոլի և Համամլուի /Սպիտակ/ գավառներից, Երևանի ու Էջմիածնի գավառների մի մասից, Շարուր-Ղարալագյազի 1/5-րդից, Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթուղուց /բացի Երևան-Մասիս 6 վերստանոց հատվածից/: Հայաստանում տեղակայվելու էին թուրքական կայազորներ: Թուրքերը իրավունք էին ստանում Հայաստանով գործ տեղափոխել Բաքու, որտեղից պետք է դուրս բերվեին կոմունան պաշտպանող հայկական ուժերը: Եւ վերջապես, Հայաստանը պարտավորվում էր իր տարածքում զինաթափել հակաթուրքական ավազակային զորաշուկատները: Վերջինիս տակ թուրքերը ի նկատի ունեին հատկապես Անդրանիկի ջոկատը: Այս հանգամանքը զայրույթ առաջացրեց Անդրանիկի մոտ և նա հրաժարվեց ճանաչել հանրապետության կառավարությանը, հեռացավ Չանգեզուր:

Այսպիսի ծանր պայմաններում, 12 հազ. քառ. կմ-ի վրա ծնվեց հանրապետությունը, որը սակայն, աստիճանաբար ամրապնդվեց և ուժեղացավ:

71. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1918թ. մայիսի 28-ին հանրապետության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր ֆունկցիաներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով /երկաթուղին թուրքերի ձեռքին էր/ չէր կարողանում Վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում Արամ Մանուկյանի ղեկավարությամբ: Վերջինս հսկայական գործ կատարեց Երևանում պետականության հռչակումը նախապատրաստելու և նորաստեղծ պետությունը ամրապնդելու ուղղությամբ: Պատահական չէ, որ իրավամբ Արամին ընդունված է համարել հայոց պետականության վերականգնման հեղինակը: Նրա ղեկավարած Հատուկ կոմիտեն մինչև հուլիսի կեսերը՝

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ժամանումը Երևան, Հայաստանում կատարեց ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ:

1918թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը վերջապես ժամանեց Երևան: Ազգային խորհուրդների /Թիֆլիսի, Երևանի/ և քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդ /պառլամենտ, խորհրդարան/, որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների /եզդիներ, ռուսներ, մահմեդականներ/ ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի /18-ը՝ դաշնակցականներ/: Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ ճարտարապետ Հովհ. Բաջազունի /1868-1937/, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան /1879-1919/, արտգործնախարար՝ Ալ. Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ զեներալ Հովհ. Հախվերդյան և արդարադատության նախարար՝ Գր. Տեր-Պետրոսյան: Օգոստոսի 1-ին հանդիսավորությամբ Երևանում բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի /խորհրդարանի/ առաջին նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը /Հայր Աբրահամ/: Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ շուտափույթ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչև հիմնական օրեցօրի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի «Հավաք օրինաց» /օրենքների ժողովածու/ օրենքների ժողովածուով: Մինչև տարեվերջ բարելավվեց դատական գործը: Ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարան: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց մի կարևոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այսուհետև կատարվելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշմ՝ եռագույնը, որը Արամի կարգադրությամբ պետք է բարձրացվեր պետական, կառավարական հիմնարկների վրա: Եռագույնի կարմիրը խորհրդանշում էր հայ ժողովրդի թափած արյունը, երկնագույնը՝ ազատագրված հայրենիքի բաց երկինքը, նարնջագույնը՝ աշխատանքը /հողի գույնը/: Ճարտարապետ Ալ. Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի կողմից ներկայացված հանրապետության զինանշանը, դրոշակի օրինակով, ընդունվեց ժամանակավորապես: Զինանշանի վրա երկու Մասիսների շուրջ հին հայկական արքայատոհմերի /Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյան/ զինանշաններն էին, աջ և

ձախ կողմերում արծվի և առյուծի պատկերներ էին, ներքևում՝ սուրը, գրիչը, հասկերը: Հանրապետությունում իբրև պետական հիմն գործածվում էր «Մեր հայրենիքը»: Սահմանվեցին շքանշաններ, տոներ: Եղան «Հայրենիքին ծառայության համար», «Վարդան զորավար» և այլ շքանշաններ ունենալու մասին որոշումներ:

Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն հատկացրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլևս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմացրվեց և նոր՝ 20-25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան: Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Մինչև 1920թ. բանակի թիվը իր 10 գնդերում հասավ 25 հազարի: Սևանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնեկը դարձավ «Աշոտ Երկաթ» ռազմանավը: Բանակը ամրապնդվեց հատկապես 1920թ., երբ ռազմական նախարար դարձավ Ռուբեն Տեր-Մինասյանը:

Հանրապետությունում մեծ թիվ կազմող արևմտահայ գաղթականությունը դժգոհ էր, որ իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը դուրս է մնացել կառավարության ուշադրությունից: 1918թ. հոկտեմբերի վերջին համաշխարհային պատերազմում Անտանտի երկրներից Թուրքիայի կրած պարտության լուրը ոգևորություն առաջացրեց հայերի շրջանում: 1919թ. փետրվարին Երևանում կայացավ արևմտահայ գաղթականների համագումար, որը առաջ քաշեց «Միացյալ Հայաստանի» ստեղծման գաղափարը: Համագումարը գտնում էր, որ այս հանրապետությունը պետք է կոչել Արարատյան հանրապետության, իսկ Հայաստանի Հանրապետությունը այն է, որը ներառում էր նաև Արևմտյան Հայաստանը: Ի կենսագործումն այդ պատմական խնդրի՝ միացյալ Հայաստանի ստեղծման, անկախության տարեդարձի օրը՝ մայիսի 28-ին կառավարությունը, որն արդեն գլխավորում էր Ալ. Խատիսյանը, Հայաստանը հռչակեց «Միացյալ, ազատ հանրապետություն»: Դրանով կառավարությունը իրեն համարում էր նաև Արևմտյան Հայաստանի տերը և Հայաստանը հռչակվում էր միասնական պետություն: Այս որոշումը վտանգավոր համարելով՝ հայ ժողովրդական կուսակցության 4 նախարարները դուրս եկան կառավարության կազմից:

1919թ. հունիսի վերջին անցկացվեցին ընտրություններ 366 հազ. ընտրողների, 7 քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ: Խորհրդարանի 80 անդամներից 72-ը դաշնակցականներ էին: 1919թ.

օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նու կառավարության կազմը վարչապետ Խատիսյանի ղեկավարությամբ:

72. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920ԹԹ.

Հանրապետությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: 1918թ. թուրքական ներխուժման պատճառով քայքայվել էր տնտեսությունը: 1919թ. 1913թ. համեմատությամբ գյուղատնտեսության մակարդակը ընկել էր 6 անգամ: Չէին աշխատում պղնձի հանքերը, գործարանները: 1918թ. վերջին և 1919-ի սկզբներին սովյալների թիվն անցավ կես միլիոնից: Սովից և համաճարակներից մահացավ 180 հազ. մարդ, հիմնականում արևմտահայ գաղթականներ: Վիճակը սկսեց որոշ չափով լավանալ միայն 1919թ. աշնանից, երբ ստացվեց ամերիկյան օգնությունը և համեմատաբար լավ բերք հավաքվեց: Բացվեցին բազմաթիվ որբանոցներ ծնողազուրկ երեխաների համար: Դանդաղորեն իրականացվում էր հողային ռեֆորմը:

Դրսում օգնություն կազմակերպելու համար Եվրոպա և Ամերիկա մեկնեց պատվիրակություն՝ վարչապետ Հովհաննես Քաջազունու ղեկավարությամբ: Ամերիկյան առաջին օգնությունը Հայաստան հասավ 1919թ. մայիսին: 1919թ. Ամերիկայից ստացվեց 1,3 միլիոն փութ ալյուր, 257 հազար փութ ցորեն և այլ սննդամթերք: Առաջնակարգ խնդիր էր նաև հայ գաղթականությանը օբևան տալը և կերակրելը: Նրանց ընդհանուր թիվն անցնում էր 200 հազարից: Գաղթականները բնակվեցին լքյալ բնակավայրերում:

Հայաստանի տարբեր վայրերում ստեղծվեց մանկատների ամբողջ ցանց: Ամերիկոնը /Ամերիկյան կոմիտեն/ մեծ օժանդակություն ցույց տվեց նաև երկրի չքավոր ու գաղթական բնակչությանը:

1920թ. ընդունվեց նոր հողային օրենք: Ըստ այդ օրենքի անհատույց բռնագրավվում և ազգայնացվում էին կալվածատիրական հողերը և օգտագործման հանձնվում գյուղացիներին:

Սփյուռքահայ մի շարք մեծահարուստներ բարեգործական միջոցներ հատկացրին և կտակներ փոխադրեցին Հայաստան, ինչպես Եգիպտոսից Մելքոնյան եղբայրները, եգիպտահայ ռամկավարները, Ստավրոպոլից՝ Պոպովը, Թիֆլիսից՝ Ա. Մելիք-Ազարյանը, Բաքվից՝ Արշակ Ղուկասյանը և ուրիշներ: Ամերիկայում անցկացվեց Հայաստանի

«Բանակի օր», որի անունով կատարվեցին հանգանականություններ:

Այսպիսի պայմաններում մոռացության չտրվեց երկրի մշակութային կյանքը, որի բարելավումը մեծապես կապվեց նախարար Նիկոլ Աղբալյանի անվան հետ: Վերջինիս ջանքերով 1920թ. հունվարի 30-ին Ալեքսանդրապոլում բացվեց համալսարանը, որի միակ ֆակուլտետում /պատմալեզվաբանական/ սկզբում հաշվվում էր 290 ուսանող: Բացվեցին նաև բազմաթիվ դպրոցներ, ակումբներ, գրադարաններ: Սակայն նորաստեղծ հանրապետության մշակույթի վերելքը երկար չտևեց 1920թ. սկսված թուրք-հայկական պատերազմի և երկրի խորհրդայնացման հետևանքով:

Կազմակերպվեց Հնությունների պահպանության պետական կոմիտե: Թիֆլիսից Երևան էր փոխադրվելու պետական թանգարանը, նախատեսվում էր կազմակերպել պետական թատրոն:

Հայաստանը վերածվել էր ժողովրդավարական պետության: Ազատորեն գործում էին քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցությունը, որը կառավարող կուսակցությունն էր, սոցիալ-դեմոկրատները /մենչևիկներ, բոլշևիկներ/, հնչակյանները, էսեռները և այլոք: 1920թ. ձևավորվեց Հայաստանի կոմկուսը: Այս կուսակցությունները ընդդիմություն կազմեցին դաշնակցությանը: Միայն հայ ժողովրդական կուսակցությունը որոշ ժամանակ մտավ կառավարության մեջ և կուլիցիա կազմեց դաշնակցության հետ:

Հայաստանի Հանրապետության համար առավել վտանգավոր էին թուրք-թաթարական խռովությունները, որոնք անկայուն էին դարձնում երկրի ներքին կյանքը, դեռ ավելին, սպառնում էին պետությունը ներսից կործանել: Այդ խռովությունները կազմակերպում և ղեկավարում էին թուրք և թաթար /ադրբեջանցի/ գործակալները: Մուսավաթական Ադրբեջանը իր հակահայկական գործունեությունն իրականացնում էր Երևանի իր լիազոր-ներկայացուցչության միջոցով:

Հայաստանի իշխանություններն աշխատում էին խաղաղ միջոցներով վերջ տալ ադրբեջանցիների անհնազանդությանը: Իսկ երբ նրանք դիմադրում էին, իշխանությունները ստիպված էին լինում դիմել զինված ուժերի օգտագործմանը: Այդպես ճնշվեց թուրք-թաթարական խռովությունը Չանգի-բասարում /Մասիսի շրջան/, Բեյուք-Վեդիում /Արարատի շրջան/ և այլ վայրերում:

Հայաստանի Հանրապետության կյանքի կայունացման գործընթացը ընդհատվեց 1920թ. բոլշևիկների բարձրացրած Մայիսյան խռովությամբ: Այդ ժամանակ Խորհրդային Ռուսաստանը, տանելով

հաղթանակներ քաղաքացիական կռիվներում և Անտանտի երկրների նկատմամբ, 1920թ. սկզբներին ներթափանցեց Անդրկովկաս: Ապրիլի 28-ին կարմիր բանակը մտավ Ադրբեջան, և այն խորհրդայնացավ: Հայաստանում ազատորեն գործող բոլշևիկները /որոնք խորհրդարանում ունեին 1 պատգամավոր /ոգևորվեցին այդ հանգամանքով ու որոշեցին ապստամբություն բարձրացնել և զենքի ուժով Հայաստանը խորհրդայնացնել: Մայիսի 1-ին նրանք ցույցեր կազմակերպեցին կառավարության դեմ: Ալեքսանդրապոլի բոլշևիկները, որոնց կողմն էր անցել «Վարդան Ջորավար» զրահագնացքի անձնակազմը Սարգիս Մուսայեյլյանի գլխավորությամբ, մայիսի 7-ին կազմեցին «ապստամբության» ղեկավար մարմին՝ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ): Վերջինս գլխավորեց Ս.Մուսայեյլյանը:

Ալեքսանդրապոլի բոլշևիկները, որոնք հայ ժողովրդի փրկությունը տեսնում էին դաշնակցության տապալման և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության իրականացման մեջ, սկսեցին ապստամբությունը: Մայիսի 10-ին Ալեքսանդրապոլի ՌՀԿ-ն դիմեց բնակչությանը զավառում խորհրդային իշխանություն հաստատելու մասին:

Բոլշևիկյան խռովությունը կարող էր տարածվել և սպառնալ հանրապետության գոյությանը: Խորհրդարանը ընդհատեց իր նիստերը և 1920թ. մայիսի 5-ին կազմեց նոր կառավարություն, որը բացառապես բաղկացած էր դաշնակցականներից /ուստի հաճախ կոչվում էր բյուրոկառավարություն/: Խատիսյանին վարչապետի պաշտոնում փոխարինեց բժիշկ Համո Օհանջանյանը: Ընդունվեց օրենք արտակարգ դատարաններ ստեղծելու մասին:

Բոլշևիկները փորձում էին ընդարձակել ապստամբության շրջանակները: Ալեքսանդրապոլի ելույթի օրինակին հետևեցին Շիրակի գյուղերը, Կարսը: Կարսի մարզի հայ բնակչությունը ոչ մի աջակցություն ցույց չտվեց այնտեղի ՌՀԿ-ին: Վերջինս կարողացավ որոշ պաշտպանություն գտնել մարզի մահմեդական և վերաբնակիչ ռուս ազգաբնակչության կողմից: Սակայն դարձյալ Կարսի ՌՀԿ-ի ուժերը թույլ էին, և նրանք որոշեցին նահանջել դեպի Ալեքսանդրապոլ: Արգինա գյուղի մոտ նրանք ընդհարվեցին կառավարական զորքերի հետ և տվեցին զոհեր: Ձոհվածների թվում էր երիտասարդ բոլշևիկ Դուկաս Դուկասյանը:

Կառավարական ուժերը, որոնց թվում էին հիմնականում արևմտահայ կամավորականներ, Սեպուհի հրամանատարությամբ, առաջադրանք ստացան ճնշելու ապստամբության կենտրոնավայր

Ալեքսանդրապոլի ելույթը: Նրանք վերջնագիր ներկայացրին ՌՀԿ-ին անարյուն անձնատուր լինելու համար: Վերջնագիրը քննարկվեց մայիսի 13-ին զրահագնացքում: ՌՀԿ-ի անդամներից ոմանք իրավամբ նշեցին, որ ապստամբությունը լավ չի նախապատրաստված և պետք է առանց կռվի անձնատուր լինել: Սակայն Ավիս Նուրիջանյանի պնդմամբ ընդունվեց որոշում դիմադրելու մասին: Բայց երբ ստացվեց Սեպուհի 300 հոգանոց զորաշուկատի մոտենալու մասին, որոշումը վերանայվեց: Մայիսի 14-ին Ալեքսպոլում վերականգնվեց օրինական իշխանությունը: Խռովարարների մի մասը փախուստի դիմեց, մյուսները ձերբակալվեցին: Շիրակում ապստամբության պարտությունը անդրադարձավ մյուս շրջանների ելույթների վրա, որոնք նոր էին սկսվում:

Սարիղամիշում ապստամբությունը սկսվեց այն ժամանակ, երբ Ալեքսպոլում և Կարսում այն պարտություն էր կրել: Այստեղ ՌՀԿ-ն «իշխանությունն» իր ձեռքը պահեց միայն մի քանի օր: Նոր Բայազետում ապստամբությունը գլխավորեց Հայաստանի կոմիտեի կողմից ուղարկված Հովհաննես Սարուխանյանը: Սակայն այստեղ ևս մի քանի օրից ապստամբությունը ճնշվեց:

Համեմատաբար երկար տևեց բոլշևիկների ելույթը Ղազախ-Շամշադինում, որտեղ նրանց զինական օգնություն ցույց տվեցին Ադրբեջանից ժամանած կարմիրբանակայինները: Միաժամանակ ելույթներ տեղի ունեցան Չանգեզուրում, որտեղ բռնություններ գործադրվեցին տեղի պաշտոնական անձանց նկատմամբ: Ի պատասխան դրա, իշխանությունները ապստամբությունը ճնշելուց հետո, զնդակահարեցին մի շարք բոլշևիկ ղեկավարների՝ Ստ.Ալավերդյանին, Բ.Ղարիբջանյանին, Ս.Մուսայեյլյանին, Հ.Սարուխանյանին և այլոց:

Այս ապստամբությունը նախապատրաստված չէր: Նրա համար չկային նախադրյալներ, ժողովուրդը շահագրգռված չէր: Չստանալով օգնություն կարմիր բանակից՝ այն հեշտությամբ ճնշվեց: Սակայն ունեցավ ծանր հետևանքներ. եղան մեծ զոհեր, հասարակությունը բաժանվեց երկու մասի, այն էլ թուրջական նոր ներխուժման նախօրյակին:

73. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920)

Հայաստանի Հանրապետության առաջին ճանաչողը եղավ Թուրքիան 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով: Հայոց ազգային խորհուրդը դրանից հետո փորձեց հասնել Թուրքիային դաշնակից եռյակ-դաշինքի երկրների կողմից Հայաստանի ճանաչմանը: Այդ նպատակով Կ. Պոլիս ուղարկվեց Ա.Ահարոնյանի, իսկ Բեռլին՝ Զ.Օհանջանյանի պատվիրակությունները: Մինչև համաշխարհային պատերազմում եռյակ դաշինքի պարտությունը՝ 1918թ. աշունը, փաստորեն Ահարոնյանի պատվիրակությունը ծառայեց որպես Հայաստանի ներկայացուցչություն Թուրքիայում, իսկ Օհանջանյանինը՝ Գերմանիայում: 1919 թվականից սկսվեց Հայաստանի ճանաչման նոր շրջանը: 1919թ. մարտին փոխադարձաբար Վրաստանն ու Հայաստանը ճանաչեցին միմյանց անկախությունը: 1920թ. հունվարի 23-ին ստացվեց Անգլիայի արտոգործնախարար լորդ Քերզոնի հեռագիրը, որում ասվում էր, որ Անտանտի երկրների հրավիրած Փարիզի վեհաժողովը որոշել է ճանաչել Հայաստանի անկախությունը: Այդ լուրը երևանում նշանավորվեց 101 թնդանոթային զարկերով: 1920թ. ապրիլի 24-ին Հայաստանը ճանաչվեց ԱՄՆ-ի կողմից, Արմեն Գարոն նշանակվեց այնտեղ հանրապետության ներկայացուցիչ: Դժբախտաբար, Խորհրդային Ռուսաստանի հետ դիվանագիտական ու բարեկամական կապեր հաստատելու փորձերն անցան ապարդյուն: Այդ կապերը հաստատվեցին միայն Դենիկինի, Կուլակի և այլ հակախորհրդային զենեթալիների հետ: Հայաստանում ներկայացուցչություններ ստեղծեցին Վրաստանը, Ադրբեջանը, Պարսկաստանը, միջազգային տարբեր ընկերություններ:

1918թ. Հայաստանը գտնվում էր դիվանագիտական, ռազմական ու տնտեսական մեկուսացման մեջ: Վիճակը սկսեց բարելավվել միայն այն բանից հետո, երբ պատերազմում Թուրքիան պարտություն կրեց և 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում Անտանտի երկրների հետ կնքած զինադադարով կապիտուլացիայի ենթարկվեց: Թուրքերը պարտավորվեցին իրենց զորքերը հետ քաշել մինչև նախապատերազմյան՝ 1914թ. սահմանները:

1918թ. նոյեմբերից թուրքական նվաճողները սկսեցին հեռանալ Անդրկովկասում գրաված մի շարք շրջաններից, այդ թվում Լոռուց և Ախալքալաքի գավառից: Վրացիները, որոնք դեռ 1917թ. կողմնակից էին տարածքների էթնիկական սկզբունքով բաժանմանը, /այսինքն՝ որ

տարածքում ապրում է տվյալ ազգի մեծամասնությունը, նրա կազմի մեջ էլ պետք է մտնե՞ր այդ շրջանը/, շուտով հրաժարվեցին նրանից և տարածքային պահանջ ներկայացրին հայաբնակ և պատմականորեն հայկական հող հանդիսացող Լոռու և Ախալքալաքի գավառի նկատմամբ: Հայաստանի կառավարությունը առաջարկեց վրացիներին հրաժարվել ռազմական ուժով այդ հարցի լուծումից և բանակցություններ սկսել: Առերես համաձայնվելով խաղաղ ճանապարհով հարցի լուծման սկզբունքի հետ՝ իրականում վրացիները զավթեցին նախ Լոռին, իսկ դեկտեմբերի 5-ին՝ Ախալքալաքը: Շուտով փակվեցին նաև Վրաստանից եկող երկաթուղային ճանապարհները, որոնցով Հայաստանը ստանում էր երկրին այնքան անհրաժեշտ հացահատիկը: Այս ամենը նշանակում էր թշնամական վերաբերմունք և ռազմական բախումը դառնում էր անխուսափելի: 1918թ. դեկտեմբերի կեսերին Լոռու և Ախալքալաքի համար ծագեց հայ-վրացական պատերազմ: Հայկական զորքը Դրոյի գլխավորությամբ կարողացավ վրացիներին դուրս մղել Սանահինից, Հաղպատից, վերցնել մեծ քանակությամբ ռազմամթերք, այդ թվում՝ 2 զրահագնացք /հետագայի «Ազատամարտ» և «Վարդան զորավար»/ և հասնել Լոռվա հյուսիսային շրջանները՝ Բուլինս-խաչեն: Հայկական զորքերի առաջխաղացումը դեպի մայրաքաղաք Թիֆլիս կանխեցին միայն անգլիացիները, որոնց միջամտությամբ 1919թ. հունվարի 9-17-ը կայացած հայ-վրացական կոնֆերանսում կնքվեց հաշտություն: Լոռին դարձավ չեզոք գոտի՝ անգլիական զենեթալ-նահանգապետի իշխանությամբ: Վերջինս պետք է ունենար երկու տեղակալ՝ ազգությամբ հայ և վրացի: Ախալքալաքի գավառը ժամանակավորապես մնալու էր Վրաստանի իշխանության ներքո, իսկ այնտեղից արտագաղթած տասնյակ հազարավոր հայ գաղթականները իրավունք էին ստանում վերադառնալու հայրենիք: Շուտով կնքվեց հայ-վրացական համաձայնություն տրանզիտի և դիվանագիտական փոխադարձ ճանաչման մասին:

Պարսկաստանի հետ հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ: Պատահական չէր, որ Անտանտի երկրներից ստացվող օգնության զգալի մասը Հայաստան էր հասցվում Իրանի վրայով: Ադրբեջանն ու Թուրքիան ի սկզբանե կարծր ու թշնամական դիրք վրայով: Ադրբեջանն ու Թուրքիան ի սկզբանե կարծր ու թշնամական դիրք վրայով: Ադրբեջանը տարածքային բռնեցին Հայաստանի նկատմամբ: Ադրբեջանը տարածքային հավակնություն հանդես բերեց Ղարաբաղի, Ձանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ: 1919թ. աշնանը Ձանգեզուրի համար ծագեցին հայ-ադրբեջանական բախումներ: Ձանգեզուրում շնորհիվ նախ Անդրանիկի,

ապա Գ. Նժդեհի հաջողվեց պարտության մատնել ադրբեջանցիներին: Դարաբաղը թեև չկարողացավ միանալ Հայաստանին, սակայն իբրև ինքնիշխան պետություն, արյունալի պայքար սկսեց Ադրբեջանի դեմ: 1919թ. գարնանը հայկական զորքերը անգլիացիների աջակցությամբ ազատագրեցին Կարսի մարզը /Ղորղանյանը նշանակվեց Կարսի նահանգապետ/ և Նախիջևանի գավառը /վերջինս մինչ այդ՝ 1918թ. ամռանը որոշ ժամանակով վերցվել էր Անդրանիկի հսկողության տակ/: Այսպես հանրապետության տարածքը հետզհետե ընդլայնվեց և հասավ մոտ 70 հազ. քառ. կմ.-ի:

74. ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ: ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Թուրքիայի պարտությունը պատերազմում հայկական հարցի լուծման հույսեր առաջացրեց հայության շրջանում: Մուղրոսի զինադադարից հետո Անտանտի երկրները նախապատրաստվեցին պարտված եռյակ դաշինքի երկրների հետ հաշտության կնքմանը, որով պետք է որոշվեին հետպատերազմյան սահմանները: Հայ ժողովուրդը, որը պատերազմում կրել էր մեծաթիվ զոհեր, իրավունք ուներ ակնկալելու իր համար ցանկալի սահմաններ: Հանրապետության խորհրդարանը 1918թ. վերջին կազմեց հատուկ պատվիրակություն /Նախագահ՝ Ավ. Ահարոնյան, անդամներ՝ Մ. Պապաջանյան և Գ. Օհանջանյան/ և ուղարկեց Եվրոպա՝ 1919թ. հունվարին Փարիզում բացված խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար: Փարիզ ժամանեց նաև աշխարհով մեկ սփռված արևմտահայությանը ներկայացնող հայոց ազգային պատվիրակությունը՝ Եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարի ղեկավարությամբ: Երկու պատվիրակությունների միջև ծագած առանձին տարածայնությունները հարթվեցին բանակցությունների շնորհիվ և մշակվեց կոնֆերանսին ներկայացվելիք միասնական ծրագիր: Երկու նախագահներին լսեց վեհաժողովի ղեկավար մարմիններից մեկը՝ «Տասի խորհուրդը»: Եռյակ դաշինքի երկրներից Թուրքիայի հետ հաշտության նախագծի մշակման համար 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում /Իտալիա/ հրավիրված կոնֆերանսում, /որը Փարիզի վեհաժողովի փաստացի մասն էր/ մեծ տերությունների ղեկավարները հատուկ ուշադրություն հատկացրին հայկական հարցին՝ ընդգծելով, որ նրա լուծումը նշանակում է

Հայաստանի երկու մասերի միավորում: Այդ խնդիրը իրական դարձնելու նպատակով անհրաժեշտ էր որևէ մեծ տերության կողմից հայոց մանդատի հովանավորության ընդունումը: Ընտրությունը կանգ առավ ԱՄՆ-ի վրա, որի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը աչքի ընկավ իր հայամետ գործունեությամբ: Ապրիլի 24-ին թեև ԱՄՆ-ը ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն 1920թ. հունիսի 1-ին սենատի որոշմամբ /52 դեմ՝ մանդատին, 23-ը՝ կողմ/ մերժեց ընդունել աղքատ ու ավերակված Հայաստանի հովանավորությունը:

Վերջապես, 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում ստորագրվեց հայերի համար բաղձալի հաշտությունը Անտանտի երկրների և Թուրքիայի միջև: Հայաստանի կողմից պայմանագիրը ստորագրեց Հայաստանի պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը՝ նախապես պատվիրած հատուկ ոսկե գրիչով: Պայմանագրի 88-ից 93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ և անկախ պետություն. որին պետք է միացվեին Երզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթների մեծ մասը: Այդ վիլայեթներով կոնկրետ սահմանագծի անցկացման իրավունքը 89-րդ հոդվածով վերապահվում էր Վիլսոնին: Հայաստանը ստանում էր ելք դեպի Սև ծով՝ Տրապիզոն նավահանգստով: Դրանով իսկ Հայաստանի տարածքը կազմելու էր մոտ 160 հազ. քառ. կմ: Մեր, Վրաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքների հարցը վճռվելու էր հատուկ շահագրգիռ հանձնաժողովի կողմից: Եթե վերջինս արդյունքի չհասներ, այդ հարցը մնալու էր մեծ տերությունների իրավասությանը: Կիլիկիան, որը Հայաստանին միացնելու ծրագրի եռանդուն պաշտպանը Պողոս Նուբարն էր, մնում էր Ֆրանսիայի հսկողության տակ /Կիլիկիայի հարցում Հայաստանի պատվիրակությունը զիջման գնաց՝ փոխարենը ստանալով Տրապիզոնի միացման համաձայնությունը/:

Սևրի դաշնագիրը ենթադրում էր ոչ միայն հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացում, այլև համապատասխանում էր բազմաթիվ թուրքահպատակ այլ ժողովուրդների շահերին: Արաբական մի շարք ժողովուրդներ ազատագրվում էին ատելի օսմանյան լծից /Իրաք, Պաղեստին, Սիրիա և այլն/, քրդերը ստանում էին ինքնավարություն ստեղծելու իրավունք:

Ցավոք, այս պայմանագիրը բազմաթիվ հանգամանքների բերումով կյանքի չկոչվեց: Նախ՝ այն չվավերացվեց ստորագրող պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Ռումինիայի, Թուրքիայի, Եույնիսկ՝ Հայաստանի /սկսված թուրք-հայկական պատերազմի

պատճառով/ խորհրդարանների կողմից: Երկրորդ՝ մեծ տերությունները հետաձգեցին նրա կենսագործումը, ապա մոռացության տվեցին՝ պատճառաբանելով, որ դրա համար անհրաժեշտ կլինեն հսկայական ռազմական միջոցներ թուրքիայում այդ պայմանագիրը չճանաչող քեմալականներին ճնշելու համար: Երրորդ՝ Անտանտի հակառակորդ խորհրդային Ռուսաստանը սատար կանգնեց Քեմալ Աթաթուրքին՝ Սևրի ռիսերիմ թշնամուն և դարձավ նրա դաշնակիցը: Խորհրդային Ռուսաստանի գեները օգտագործվեց 1920թ. աշնանը Հայաստանի դեմ, և Սևրի պայմանագիրը մնաց թղթի վրա: Ավելին, պատերազմում պարտվելով, Հայաստանը 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով հրաժարվեց Սևրի պայմանագրից:

Իրադարձությունները Կիլիկիայում. 1918թ. Կիլիկիան գրավեցին անգլիացիները, որոնց 1919թ.-ին փոխարինեցին ֆրանսիացիները: Երկրամասի ազատագրմանը ակտիվորեն մասնակցեցին հայերը, որոնք «Արևելյան լեգեոնի» կազմում ստեղծեցին 5 հազարանոց «Հայկական լեգեոնը», որն աչքի ընկավ 1918թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում՝ Արարայի ճակատամարտում: Մինչև 1920թ. զգալի թվով կիլիկիահայեր վերադարձան հայրենիք: 1920թ. օգոստոսին Միհրան Տամատյանի գլխավորությամբ Կիլիկիան հռչակվեց «Ինքնավար հանրապետություն»՝ Ֆրանսիայի հովանավորությամբ: Ֆրանսիան, որ դեմ էր այդ հռչակմանը, լուրջ քայլեր չձեռնարկեց երկիրը քեմալական թուրքերի և քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Միայն Մարաշում զոհվեց 12 հազար, Հաճընում՝ 6 հազար հայ:

1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում քեմալականների հետ կնքած զաղտնի համաձայնագրով ֆրանսիացիները դավաճանաբար հեռացան Կիլիկիայից, իսկ այնտեղ մտած թուրքերը կազմակերպեցին հայկական նոր կոտորածներ:

75. 1920Թ. ԹՈՒՐԸ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ: ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1920թ. ապրիլից միջազգային մթնոլորտը սկսեց եսպես փոխվել: Դա պայմանավորված էր թուրքիայում և Ռուսաստանում տեղի ունեցող փոփոխություններով: Պատերազմում թուրքիայի պարտությունից հետո այն մասնատվելու հաղթանակած Անտանտի երկրների քաղաքակա- նությունը դժգոհություն առաջացրեց թուրք ազգայնական շրջաններում:

Համախմբվելով Մուստաֆա Քեմալի շուրջը՝ նրանք դեռ 1919թ. հաստատվեցին Անկարայում և, չճանաչելով սուլթանական կառավարությանը, շարժում ծավալեցին թուրքիան մասնատումից փրկելու ուղղությամբ: 1920թ. հետզհետե ամրապնդվեց խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական իրավիճակը: Վերջինս հաղթանակներ տանելով Դեմիկիևի և Կոչլակի դեմ՝ մոտեցավ Անդրկովկասի սահման- ներին: «Սոցիալիստական» հեղափոխությունը սկսեց արտահանվել դեպի Արևելքի երկրներ՝ ռազմական ճանապարհով: Դրան սկսեցին նպաստել Անդրկովկասի բուլշևիկները, որոնք իրենց երկրների փրկությունը տեսնում էին խորհրդայնացման մեջ: Անդրկովկասի երկրների խորհրդայնացման հարցում Քեմալը փորձեց Լենինի կառավարությանը առաջարկել իր ծառայությունները՝ իր հերթին հույս ունենալով ստանալ Ռուսաստանի աջակցությունը Անտանտի դեմ պայքարում: Խորհրդային ղեկավարությունն իր կողմից Անտանտի երկրներին համարում էր սոցիալիստական հեղափոխության և Ռուսաստանի թշնամիներ, ուստի չհապաղեց դաշնակցել քեմալականների հետ: Արդեն 1920թ. ապրիլի 28-ին Քեմալի բավական գործուն աջակցությամբ մուսավաթական Ադրբեջանն առանց դիմադրության ընդունեց 11-րդ կարմիր բանակին և խորհրդայնացավ: Ռուս-քեմալական համագործակցությունն սկսեց ընդունել ավելի գործուն ձևեր: Լենինի կառավարությունը 1920թ. թուրքիային տրամադրեց 200 կգ ձուլածո ոսկի, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Հայաստանի կառավարությունը փորձեց Ռուսաստանի հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ: Մոսկվա ուղարկվեց հատուկ պատվիրակություն ԼԼՈՆ Շանթի ղեկավարությամբ: Հայ- ռուսական բանակցություններն ընթանում էին բավական լավ, որում զգալի դեր էր խաղում Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ, հայազգի ԼԼՈՆ Կարախանը: Սակայն քեմալականներն ու խորհրդայնացած Ադրբեջանը ամեն կերպ խոչընդոտում էին հայ-ռուսական բարեկամական պայմանագրի ստորագրմանը: Մայիսին սկսված բանակցություններն ի վերջո ընդհատվեցին երևանում շարունակելու որոշմամբ:

1920թ. մայիսին կարմիր բանակը մտավ Ղարաբաղ, հունիսին՝ Ջանգեզուր, իսկ օգոստոսին՝ Նախիջևան: Հայկական բանակը չխոչընդոտեց: Օգոստոսի 10-ին՝ նույն Սևրի կնքման օրը, Թիֆլիսում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը համաձայնվում էր վերոհիշյալ 3 գավառների ժամանակավոր գրավմանը ռուսների կողմից իբրև հայ-ադրբեջանական վիճելի տարածքների:

1920թ. օգոստոսի 24-ին Սոսկվայում համաձայնեցվեց ռուս-թուրքական «Արտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, որով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը, այդ թվում Կարս, Արդահան և Բաթում քաղաքներով, այսինքն՝ 1877թ. սահմաններով: Ըստ էության օգոստոսի 24-ի համաձայնագիրը ուղղված էր Հայաստանի դեմ: Պատահական չէ, որ շուտով սեպտեմբերի 1-7-ը Բաքվում կոմիտեռնի նախաձեռնությամբ հրավիրված «Արևելքի ժողովուրդների համագումարում» ավելի ընդգծվեց քեմալականների ու բուլշևիկների գործակցությունը և այդ համագործակցության հակահայկական ուղղվածությունը: Համագումարին ներկա էր նաև հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Էնվեր փաշան: Արևելքի մուսուլման ժողովուրդներին կոչ արվեց դուրս գալու «սրբազան պատերազմի» ընդդեմ անհավատների, սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու համար: Ուշագրավ է, որ համագումարում Ադրբեջանը, որն արդեն խորհրդային էր, համարվում էր միջազգային պրոլետարիատի միջնաբերդ, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ ինպերիալիզմի որջ: Վերջինս ջախջախելու և այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար նախատեսվում էր օգտագործել քեմալական թուրքերի ռազմական ուժերը: Այս հակահայկական համագումարից մի քանի օր անց, խորհրդային կառավարության թողտվությամբ և աջակցությամբ, քեմալականները ներխուժեցին Հայաստանի Հանրապետության տարածքը: Ցավալի է, որ Բաքվի այդ համագումարում ներկա գտնվող հայ բուլշևիկների մի մասը ևս հավանություն տվեց թուրքերի միջոցով հանրապետությունը տապալելու և բռնությամբ խորհրդայնացնելու ծրագրին:

1920թ. սեպտեմբերի 23-ին քեմալական բանակը Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Թուրքերը, որ լավ նախապատրաստվել էին հարձակմանը, իրենց առաջխաղացումը պատճառաբանում էին հունիսին հայկական բանակի կողմից գրավված Օլթիի քարածխով հարուստ շրջանը ետ վերապահարձնելու անհրաժեշտությամբ: Սակայն այդ քայլի համար Հայաստանին իրավունք էր վերապահված Թուրքիայի կնքած 1918թ. Մուղղոսի գինադարարով, ըստ որի թուրքերը հեռանալու էին մինչև 1914թ. սահմանները այսինքն Օլթիից արևմուտք: Այնպես որ Օլթիի գրավումը հայերի կողմից թուրքերի համար միայն պատրվակ էր:

Հայաստանի կառավարությունը օրենք ընդունեց ամբողջ երկրում ռազմական դրություն հայտարարելու մասին: Կատարվեց զինակոչ:

Խստագույն պատիժներ սահմանվեցին դասալիքների, դավաճանների նկատմամբ, ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե»: Բացի կոմունիստներից, բոլոր քաղաքական կուսակցությունները հանդես եկան հայրենիքի պաշտպանության կոչով: Հայ բուլշևիկները պատերազմական վիճակը նպաստավոր էին համարում Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար: Ցավոք, նրանց մի մասը նույնիսկ կոչ էր անում չդիմադրել թուրքերին՝ որպես ռուսների դաշնակիցների և հայ ժողովրդի ազատարարների: Դժբախտաբար, այս քարոզչությունը վատ ազդեցություն թողեց ռազմիկների մարտունակության վրա:

Թշնամին արագորեն հասավ Սարիղամիշին և սեպտեմբերի 29-ին առանց դժվարության գրավեց այն: Նույն օրը թուրքերը գրավեցին նաև Կաղզվանը:

Հայկական բանակը, որի հրամանատարն էր Թովմաս Նազարբեկյանը, դիրքեր բռնեց Կարսի մատույցներում: Այստեղ կենտրոնացվեցին զգալի ուժեր՝ որոշ տվյալներով՝ 24 հազ. մարդ: Թուրքերը, որ խորհրդային ղեկավարության հետ ունեցած համաձայնությամբ պետք է Սարիղամիշից առաջ չանցնեին, շարժվեցին Կարսի վրա: Թշնամին փորձեց գրավել Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղու Մացրա կայարանը, սակայն հաջողություն չունեցավ: 60 ասկյարներ ընկան զերի: Թուրքերը չկարողացան գրավել նաև Ալեքսպոլ-Երևան երկաթգծի Բազարջիկ հատվածը:

Հոկտեմբերի 29-ին թշնամին մոտեցավ Կարսին: Այդ օրհասական օրերին Հայաստանի կառավարության դիմումները Անտանտի երկրների ներկայացուցիչներին օգնության մասին, մնացին անպատասխան: Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունները, Ազգերի լիգան ոչ մի ջանք չգործադրեցին թուրքերի ու խորհրդային Ռուսաստանի դեմ միայնակ հայտնված Հայաստանը փրկելու ուղղությամբ: Չարմանալիորեն բավական արագությամբ հայկական բանակը բարոյալքվեց, սկսվեց զանգվածային դասալքություն: Պատահական չէ, որ հոկտեմբերի 30-31-ին, առանց լուրջ դիմադրության, թշնամուն հանձնվեց ռազմավարական մեծ կարևորություն ներկայացնող Կարսի բերդը: Շուրջ 3 հազ. զինվորներ գերի ընկան, այդ թվում՝ 120 սպա, գեներալներ Գ.Բեկ-Փիրումյանը, Արարատյանը և ուրիշներ: Չհանդուրժելով այս ամոթալի պարտությունը՝ որոշ սպաներ ինքնասպան եղան: Կարծես այս բանակը 2 տարի առաջվա Սարդարապատի հերոսական բանակը չէր: Օգտվելով հայերի ծանր վիճակից՝ վրացիները, որոնց հետ համաձայնեցված էր քեմալական հարձակումը, հարձակվեցին և գրավեցին Արդահանը:

Հիշենք, որ նույն ժամանակ կարմիր բանակը օկուպացված էր պահում Ղարաբաղը, Ջանգեզուրը: Կարսի անկումից հետո թուրքերը արագորեն հասան Ալեքսանդրապոլի մատույցներին և նոյեմբերի 5-ին կնքված զինադադարով, մտան քաղաք: Ուշագրավ է, որ նրանք այնտեղ նոյեմբերի 6-ին տեղի որոշ հայ բոլշևիկների աջակցությամբ, գավառում «հայտարարեցին» խորհրդային իշխանություն, իսկ նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան հեղափոխության 3-րդ տարեդարձի օրը, կազմակերպեցին շքերթ: Կրացիները չհապաղեցին այժմ էլ պահանջել Լոռին: Նոյեմբերի 13-ին Հայաստանի հետ ձեռք բերած համաձայնությամբ՝ նրանք օկուպացրին Լոռու Չեզոք գոտին: Նոյեմբերի 18-ին հայկական կողմը հարկադրված ընդունեց թուրքերի առաջարկած զինադադարը և ռազմական գործողությունները դադարեցրին: Հայտնվելով դիվանագիտական և ռազմական մեկուսացման մեջ՝ Հայաստանը պարտություն կրեց:

1920թ. նոյեմբերի 29-ին հայիեղկոմը 11-րդ բանակի օգնությամբ Ադրբեջանից մտավ Իջևան և հայտարարեց երկրում խորհրդային իշխանություն: Դեկտեմբերի 2-ին Երևանում դաշնակցությունը խաղաղ ճանապարհով իշխանությունը հանձնեց: Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքվեց հայ-թուրքական պայմանագիր, որով պատերազմն ավարտվում էր: Հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը թուրքերի և Ալեքսպոլում գտնվող Ռուսաստանի ներկայացուցիչ Մոխիվանու բռնած հակահայ դիրքի պայմաններում, ստորագրեց այդ ծանր պայմանագիրը, թեև Երևանում արդեն իր կառավարությունը հրաժարական էր տվել:

Ալեքսանդրապոլի հաշտությամբ Հայաստանի տարածքը կրճատվում էր մինչև 9,5 հազ. քառ. կմ: Հայ-թուրքական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով /ինչպես այսօր/, երբեք Թուրքիայի կազմում չէր ձևավորվում Սուրմալուի գավառն անցնում էր Թուրքիային, Նախիջևանում մտցվելու էր հատուկ կառավարում՝ թուրքերի հսկողությամբ: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, ունենալու էր միայն 1500 հոգանոց զորք, 8 թնդանոթ և 20 զնդացիր: Չնայած Շիրակը մնալու էր Հայաստանին, սակայն թուրքերը դեռ չէին անցրել այնտեղից դուրս գալ:

Այսպես, Քեմալ-Լենինի համագործակցության շնորհիվ կործանվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո 11-րդ կարմիր բանակը մտավ Ղարաբաղ, Ջանգեզուր և Նախիջևան: Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ քեմալականներն ամրապնդեցին իրենց բանակը և բոլշևիկների համաձայնությամբ 1920թ. սեպտեմբերին ներխուժեցին Հայաստան: Հայ բոլշևիկները չհապաղեցին օգտվել երկրի համար ստեղծված ծանր իրավիճակից՝ այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար: Նրանց մեծ մասն սկսեց գործել Բաքվում: Հայկական բանակը կրեց ծանր պարտություններ, և թուրքերը ներխուժեցին Արևելյան Հայաստան, գրավեցին Ալեքսանդրապոլը, այնտեղ «հռչակեցին» խորհրդային իշխանություն: 1920թ. նոյեմբերի կեսերին Բաքվում Հայաստանի կոմկուսի անդամներից կազմվեց Հայաստանի ռազմաօդային կոմիտե՝ Սարգիս Կասյան /Նախագահ/, Մռավյան, Տեր-Գաբրիելյան, Նուրիջանյան, Բեկզադյան և Դովլաթյան կազմով: ՀՌՀԿ-ն ժամանեց Ղազախ՝ այնտեղից բարվանսարա /Իջևան/ անցնելու և Հայաստանում խորհրդային իշխանության համար պայքար ծավալելու նպատակով:

Մայիսին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները վերսկսվեցին միայն հոկտեմբերին: Խորհրդային կառավարությունը Երևան ուղարկեց Լեզրանի պատվիրակությանը, որին հանձնարարված էր հասնել խաղաղ ճանապարհով Հայաստանի խորհրդայնացմանը և Հայաստանի վրայով դեպի Թուրքիա զինամթերք տեղափոխելուն: Հայաստանն էլ ձգտում էր Ռուսաստանի կողմից իր ճանաչմանը և ռուսների միջոցով թուրքական ագրեսիայի դադարեցմանը: Հոկտեմբերի 28-ին Թիֆլիսում Լեզրանը առաջարկեց Հայաստանին թույլատրել ռազմամթերք տեղափոխելու Թուրքիա հայկական երկաթուղով՝ փոխարենը խոստանալով Ջանգեզուրի և Նախիջևանի միացումը Հայաստանին: Հոկտեմբերի 28-ին կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր վերոհիշյալ պայմաններով: Սակայն շուտով Ադրբեջանը խիստ դժգոհություն հայտնեց Ջանգեզուրի և Նախիջևանի կապակցությամբ և ջանք չխնայեց հայ-ռուսական հարաբերությունները վատթարացնելու համար: Դրանից հետո Երևանում Լեզրանի հետ բանակցություններն ընթացան ավելի դժվարին պայմաններում: Չմոռանա՞ք, որ մյուս կողմից Ռուսաստանի վրա ճնշում էր բանեցնում նրա դաշնակից Թուրքիան՝ չհանդուրժելով հայ-ռուսական մերձեցումը:

1920թ. նոյեմբերի 19-ին Բ. Լեզրանին ընդունեցին վարչապետ

Չ.Օհանջանյանը և գինվորական նախարար Ռ.Տեր-Մինասյանը, որտեղ ռուսական կողմը ուղղակիորեն դրեց Հայաստանը ռուսական բանակի միջոցով խորհրդայնացնելու պահանջը: Հայկական կողմը այդ պահանջն ընդունեց պայմանով, որ Ռուսաստանը երաշխավորի ապագա խորհրդային Հայաստանի սահմանները 1914թ. վիճակով, այսինքն՝ Կարսի մարզի հետ միասին: Բացի այդ քայլից, դաշնակցությունը երկիրը փրկելու մեկ այլ քայլ կատարեց. նոյեմբերի 23-24-ին Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց: Կազմվեց նոր կառավարություն ձախ-դաշնակցականներից և էսեռներից: Վարչապետի պաշտոնը տրվեց Սիմոն Վրացյանին, որի կաբինետին վիճակված էր կառավարելու ընդամենը 10 օր:

Վրացյանի կառավարությունը նոյեմբերի 24-ին խափսյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլ ուղարկեց պատվիրակություն՝ թուրքերի հետ հաշտություն կնքելու համար:

Նոյեմբերի 29-ին հայիեղկոմը 11-րդ կարմիր բանակի գործառնների ուղեկցությամբ Ղազախից մտավ Քարվանսարա /Իջևան/ և այնտեղ շինծու բանվորա-գյուղացիական ապստամբության անունից, Հայաստանում հայտարարեց օրինական իշխանության տապալման և խորհրդային իշխանության հաստատման մասին: Հեղկոմի հրապարակած հատուկ ղեկավարացիայով Հայաստանը հռչակվում էր խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ավիս Նուրիջանյանը Քարվանսարայից կարմիր բանակի ներկայացուցիչ Օրջոնիկիձեին հայտնում էր, որ հայկական բանակը ոչ մի դիմադրություն չի ցույց տալիս և ժողովուրդն ընդունում է իրենց: Սակայն ժողովուրդը եթե չէր դիմադրում, դա ոչ թե խորհրդային իշխանության նկատմամբ հավատի արդյունք էր, այլ ռուսական կողմնորոշման: Շատերը իրավամբ երկիրը փրկելու միակ միջոցը տեսնում էին Ռուսաստանին միանալու մեջ:

Միջազգային իրավունքի տեսակետից հայիեղկոմի և կարմիր բանակի այս քայլը բացարձակ ագրեսիա էր անկախ պետության նկատմամբ: Հայիեղկոմը լիազորված չէր հայ ժողովրդի կողմից օրինական իշխանության փոխարեն խորհրդային կարգեր հռչակելու համար: Այն ուղղակի գործիք էր խորհրդային կառավարության, ազդեցությանիների և թուրքերի ձեռքին Հայաստանը բռնությամբ խորհրդայնացնելու համար: Պատահական չէ, որ հեղկոմը, լայն աջակցություն չստանալով ժողովրդի կողմից, նոյեմբերի 30-ին հեռագիր հղեց Լենինին և խնդրեց ռազմական օգնություն: Ուշագրավ է, որ նույն օրը խորհրդանալու առիթով շնորհավորական նամակներ ստացվեցին թուրքական գործերի հրամա-

նատար Զ. Կարաբեքիրից և Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն.Նարիմանովից:

Ստանալով Քարվանսարայում հեղկոմի ընդունած հայտարարության լուրը՝ Լեգրանը դեկտեմբերի 1-ին վարչապետ Վրացյանին առաջարկեց հրաժարական տալ հօգուտ հեղկոմի: Նույն օրը դաշնակցության բյուրոն, պառլամենտի դաշնակցական ֆրակցիան և կառավարությունը որոշեցին ընդունել «կարմիրների առաջարկը խորհրդայնացման մասին»:

1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց համաձայնություն Ռուսաստանի ներկայացուցիչ Բ.Լեգրանի և Հայաստանի կառավարության լիազորներ Դրոյի և Տերտերյանի ստորագրությամբ: Համաձայնագիրը բաղկացած էր 8 կետից և պարունակում էր շատ կարևոր կետեր: Առաջին կետով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվում է իշխանությունից և այն ժամանակավորապես, մինչև հեղկոմի ժամանումը Երևան, հանձնում կարմիր բանակի հրամանատարությանը՝ Դրոյի և Ռուսաստանի կոմիսար Սիլինի ղեկավարությամբ: Հեղկոմի կազմի մեջ պետք է մտնեին 5 բոլշևիկներ և 2 դաշնակցականներ /Դրոն և Վրացյանը, ընդ որում Դրոն ստանձնելու էր բանակի հրամանատարությունը/: Հաջորդ կետերով Ռուսաստանը և հայիեղկոմը պարտավորվում էին բռնություններ չգործադրել նախկին կառավարության անդամների ու նրա համակիրների, դաշնակցականների նկատմամբ: Երևանի համաձայնագրով խորհրդային կառավարությունը պարտավորվում էր մտնել բանակցությունների մեջ Թուրքիայի հետ և սահմանների հարցում պաշտպանել Հայաստանին :

Այսպես, խորհրդա-քեմալական համագործակցության հետևանքով 1920թ. դեկտեմբերի 2-ին կործանվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որը գոյություն ուներ 1918թ. մայիսի 28-ից: Դաշնակցությունը խոհեմ գտնվեց և իշխանությունը հանձնեց անարյուն: Թեև ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունը անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ խորհրդային Հայաստանը, որի 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային խոշոր առաջընթաց:

77. ՉԱՆԳԵԶՈՒԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1918-1921ԹԹ.

1918թ. մայիսի վերջին Անդրկովկասում երեք հանրապետությունների հռչակումից հետո հանդես եկան տարածքային լուրջ տարածայնություններ: Ադրբեջանի հանրապետությունը, ոգեշնչված թուրքերի Անդրկովկաս ներխուժելու հանգամանքից, տարածքային հավակնություններ հանդես բերեց Հայաստանի նկատմամբ: Ադրբեջանցիները իրենց հանրապետության տարածք դիտեցին պատմականորեն հայկական Ձանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի գավառները: Սակայն առաջին երկու գավառների՝ Ձանգեզուրի և Ղարաբաղի հայությունը, ինչպես և հանրապետության կառավարությունը վճռականորեն հանդես եկան Ադրբեջանի այդ քաղաքականության դեմ: Այդ շրջանների բնակչությունը արյունալի պայքարի դուրս եկավ ադրբեջանցիների ոտնձգությունների դեմ:

1918թ. հունիսի սկզբին, դուրս գալով Դիլիջանից, Անդրանիկը մեկնեց Ձանգեզուր՝ այն թուրքերի ներխուժումից պաշտպանելու և Պարսկաստան մտած անգլիացիներին միանալու նպատակով: Նրա ջանքերով երկրամասը զգալիորեն մաքրվեց թուրք-թաթարներից: Ձանգեզուրը Անդրանիկը դարձրեց այն հենակետը, որտեղից նա հարձակումներ գործեց Նախիջևանի և Ղարաբաղի վրա: 1918թ. ամռանը, մասնավորապես Նախիջևանն ընկավ նրա հսկողության տակ, իսկ առաջխաղացումը դեպի Արցախ կանգնեցվեց անգլիացիների միջամտությամբ: Անդրանիկի շնորհիվ բազմաթիվ գաղթականներ բնակեցվեցին Ձանգեզուրում: Ցավոք, հանրապետության ղեկավարության հետ ունեցած տարածայնությունների և այլ հանգամանքների բերումով 1919թ. մարտին Անդրանիկը թողեց Ձանգեզուրը, էջմիածնում ցրեց զորքը և անցավ արտասահման:

Անդրանիկի հեռանալուց հետո երկրամասը պաշտպանելու համար կառավարությունը 1919թ. մարտի 25-ին Ձանգեզուր ուղարկեց իր ներկայացուցիչ Արսեն Շահմազյանին: Շահմազյանը նշանակվեց Ձանգեզուրի գեներալ-նահանգապետ: Նահանգի կենտրոն դարձավ Գորիսը: 1919թ. աշնանը մուսավաթական Ադրբեջանը նոր քայլեր կատարեց Ղարաբաղն ու Ձանգեզուրը հպատակեցնելու համար: Հանրապետության ղեկավարությունը Ձանգեզուր ուղարկեց բալկանյան պատերազմներում և Ղարաքիլիսայի ճակատամարտում աչքի ընկած զինվորական Գարեգին Նժդեհին: 1919թ. հոկտեմբերի 15-ին նա ստանձնեց Կապարզողթի /Կապան, Արևիք և Գողթն/ շրջանի միացյալ զինուժի

հրամանատարությունը: Արագորեն Նժդեհը Ձանգեզուրը վերածեց անառիկ ամրոցի: Ամրացվեցին երկրամաս տանող բոլոր լեռնային կիրճերը, այնտեղ տեղադրվեցին պահակազորեր: Ջորջի և ժողովրդի ոգին բարձրացնելու համար նա սկսեց հայրենասիրական դասախոսություններով հանդես գալ ամենուր: Երկրամասում ստեղծված բազմաթիվ պաշտպանական ամրոցներ Նժդեհի նախաձեռնությամբ ստացան նշանավոր ազգային գործիչների անուններ՝ Քրիստափորաբերդ, Ռոստոմաբերդ և այլն:

1919թ. սեպտեմբերի վերջին ադրբեջանական 2 զորաբանակ գեներալներ Շիխլինսկու և Մեհմանդարովի հրամանատարությամբ, ներխուժեցին Ձանգեզուր: Թշնամին կարողացավ տիրել Տեղ, Կոռնիժոր գյուղերին և մոտենալ Գորիսին: Հավաքագրելով ժողովրդի ուժերը՝ Նժդեհը Գորիսի տակ կազմակերպեց հակազորի՝ նախապես այրել տալով շրջակայքի խոտի դեզերը՝ մեծաքանակ զորքի տպավորություն թողնելու նպատակով: Թշնամին խուճապահար վախուստի դիմեց դեպի Ավդալար /այժմ՝ Լաչին/: Ադրբեջանի խորհրդարանում, երբ Մեհմանդարովից և Շիխլինսկուց հաշիվ էին պահանջում կրած խայտառակ պարտության համար, նրանք արդարանում էին, թե Նժդեհն իրենց դեմ դուրս է բերել մեծաքանակ բանակ: Իրականում հայկական ուժերը հիմնականում համալրված էին հնարավոր ամեն ինչով զինված գյուղացիներով: Այս պարտությունից հետո ադրբեջանցիները մինչև 1920թ. ապրիլը չհամարձակվեցին հարձակվել Ձանգեզուրի վրա: Ադրբեջանը օգտագործեց նաև թուրքական ուժերը, որոնք 1920թ. ապրիլին Նուրի փաշայի գլխավորությամբ, փորձեցին գրավել Կապանը, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին Ռոտանի կիրճում: Ապրիլի վերջին Նժդեհը ոչ միայն ետ մղեց թշնամու բոլոր գրոհները, այլև Դրոյի հետ անցավ Արցախ և օգնություն հասցրեց հերոսական արցախահայությանը:

Սակայն ապրիլի 28-ին խորհրդայնացած Ադրբեջանը Արցախի և Ձանգեզուրի դեմ կարողացավ օգտագործել նաև 11-րդ կարմիր բանակը: Վերջինս մայիսին մտավ Ղարաբաղ, հուլիսի 5-ին՝ Գորիս: Ժողովուրդը չդիմադրեց, կարծելով, որ փրկության ելքը խորհրդային դառնալու մեջ է, թե Նժդեհը պահանջում էր կռվել նաև կարմիր բանակի հետ, որի հետ Արցախ ու Ձանգեզուր էին մտել նաև բազմաթիվ «կարմիր» ադրբեջանցիներ ու քեմալական թուրքեր: Փոքրաթիվ ուժերով մղելով մարտեր բոլշևիկների դեմ՝ Նժդեհը հարկադրված քաշվեց Խուստուպ լեռը: Շուտով հանձարեղ զորավարի զուլաջումներն իրականացան: Գորիսում հաստատված հեղկումը, որի կազմում մեծ թիվ էին կազմում

ադրբեջանցիները, տեռորի ռեժիմ հաստատեց տեղի հայ բնակչության նկատմամբ: Ազատորեն ժողովրդին սկսեցին բալանել ու կոտորել գավառ մտած 1200 թուրքեր: Ժողովուրդը սթափվեց և վճռեց գեների դիմել: 1920թ. հոկտեմբերի 10-ին Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ բոլշևիկների դեմ ապստամբություն բռնկվեց, որին միացավ խուստուփից իջած Նժդեհը: 11-րդ կարմիր բանակը ծանր պարտություններ կրեց Ձեյվա գյուղի մոտ: Շուտով ազատագրվեց Կապանի ամբողջ շրջանը: Ժողովուրդը ամենուր ցնծությամբ ընդունեց Նժդեհին: Նոյեմբերի 21-ին ապստամբած Գորիսը ևս ողջունեց իր սիրելի ղեկավարին: Ցավոք, Նժդեհը Ձանգեզուրն ազատագրելուց հետո չկարողացավ անցնել իր հայրենի Նախիջևան, որն ընկավ թուրք-թաթարական ուժերի ձեռքը:

1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում դաշնակցությունը հրաժարական տվեց: Հայաստանի խորհրդայնացումը ևս չընկճեց Նժդեհին: Լավ գիտակցելով, որ Ձանգեզուրի հարցում խորհրդային Ռուսաստանը պաշտպանում է ադրբեջանցիներին, Նժդեհը շարունակեց պայքարը բոլշևիկների դեմ: 1920թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարը Ձանգեզուրը հռչակեց «Ինքնավար Սյունիք», ընդ որում ժամանակավորապես՝ մինչև քաղաքական իրադրությունը թույլ կտար միանալու մայր հայրենիքին: Նժդեհը ճանաչվեց Սյունիքի սպարապետ:

1921թ. փետրվարի կեսերին Երևանում բոլշևիկյան ռեժիմը ապստամբության հետևանքով տապալվեց: Մինչև ապրիլի սկիզբը վերականգնվեց օրինական իշխանությունը: Ապստամբության պարտությունից հետո նրա մասնակիցները, բազմաթիվ հայ մտավորականներ, զինվորականներ, փրկվեցին՝ հաստատվելով Ձանգեզուրում, Նժդեհի մոտ: 1921թ. ապրիլի 26-ին Տաթևի 2-րդ համագումարում «Ինքնավար Սյունիքը» վերակազմվեց «Լեռնահայաստան» պետության: Ս.Վրացյանը դարձավ վարչապետ, Նժդեհը՝ արտգործնախարար: Խորհրդային կառավարությունը բազմիցս փորձեց պատվիրակությունների միջոցով Նժդեհին համոզել հեռանալու Ձանգեզուրից: Վերջինս միայն հուլիսի 10-ին, համոզվելով, որ երկրամասն անցնելու է խորհրդային Հայաստանին, նոր միայն հեռացավ և անցավ Պարսկաստան: Նժդեհի ջանքերով Ձանգեզուրը մնաց Հայաստանի կազմում:

78. ԱՐՑԱՆԸ 1918-1923ԹԹ.: ԱՐՑԱՆԱԴԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԷԱՐԸ

1918թ. մայիսի վերջին Հայաստանի հանրապետության հռչակումից հետո Հայաստանի հյուսիս-արևելքում ընկած պատմական Արցախը, որը 16-17-րդ դարերից կրում էր օտար Ղարաբաղ անունը, համառ ու տևական պայքար սկսեց Ադրբեջանի ոտնձգությունների դեմ՝ նպատակ հետապնդելով ամեն գնով վերամիավորվել մայր հայրենիքի հետ: Հայաստանի ծանր քաղաքական վիճակը, լեռներով Սյունիքից կտրվածությունը և այլ հանգամանքներ, 1918-1919թթ. թույլ չտվեցին արցախահայությանը իրագործելու իրենց նպատակները, թև իր հերթին Հայաստանն էլ քայլեր կատարեց Արցախն իրեն միացնելու ուղղությամբ:

1918թ. ամռանը Ղարաբաղում ստեղծվեց իշխանության ինքնուրույն մարմին՝ Ազգային խորհուրդ, որն իր հրավիրած համագումարներում պարբերաբար որոշումներ ընդունեց Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականության մասին: Ազգային խորհուրդը հրաժարվեց ենթարկվել Ադրբեջանին և հիմնականում իր սեփական ուժերով պայքար ծավալեց մուսավաթականների դեմ: 1918թ. հոկտեմբերին, ընդառաջելով իրենց օգնության հասնելու Ղարաբաղի բնակչության խնդրանքներին, Անդրանիկը Գորիսից Ավդալարի /Լաչին/ վրայով շարժվեց դեպի Շուշի: Նա հասավ Ձաբուղի ձորը, որտեղ նրան կանգնեցրին անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի պատվիրակները, սպառնալով հակառակ դեպքում Փարիզում կայանալիք խաղաղության վեհաժողովում չպաշտպանել հայկական հարցը: Անդրանիկը հարկադրված եղավ վերադառնալու Գորիս: Շուտով անգլիացիները կատարեցին երկրորդ հակահայկական քայլը. Ղարաբաղում անգլիական հովանավորությամբ մտցվեց գեներալ-նահանգապետություն՝ Խոսրով բեկ Սուլթանովի ղեկավարությամբ: 1919թ. փետրվարին և ապրիլին ադրբեջանական զորքերը ներխուժեցին Արցախ՝ գեներալ Սուլթանովի իշխանությունն ամրապնդելու նպատակով: Հայ բնակչությունը ցույց տվեց համառ դիմադրություն: Թուրքերը ոչնչացրին մի շարք հայկական գյուղեր: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հատուկ որոշումով Ձանգեզուրի նահանգապետ Արսեն Շահմազյանին նշանակեց նաև Ղարաբաղի /Ձանգեզուր-Ղարաբաղի/ նահանգապետ՝ դրանով իսկ հայտնելով իր վճռականությունը այդ երկրամասը հայրենիքին միացնելու հարցում:

Սակայն նույն անգլիացիների ոչ հայանպաստ դիրքորոշման

պայմաններում 1919թ. օգոստոսին Ղարաբաղի ազգային խորհրդի 7-րդ համագումարը հարկադրված, ժամանակավորապես համաձայնեց ընդունել Ադրբեջանի ներկայացուցիչ Սուլթանովի ենթակայությունը: Ընդ որում հայերն արեցին մի շարք վերապահումներ՝ Սուլթանովից և անգլիացիներից պահանջելով հայ բնակչության անվտանգության երաշխիքներ: Սակայն շուտով Սուլթանովը բազմիցս խախտեց իր խոստումները, իրականացրեց հայկական գյուղերի թալան ու ջարդեր, իսկ անգլիացիները՝ նոյեմբերին անսպասելի հեռացան Ղարաբաղից ու Անդրկովկասից: Տեղի հայությունը հայտնվեց մեն-մենակ ադրբեջանական իշխանությունների դեմ: Անգլիացիների հեռացումը ավելի լկտի դարձրեց ադրբեջանցիներին, որոնք այստեղ հրավիրեցին նաև թուրքական զորքեր: 1920թ. փետրվարին Ղարաբաղի ազգային խորհուրդը չեղյալ հայտարարեց իր 7-րդ համագումարի որոշումը և կրկնեց առաջինից վեցերորդ համագումարների որոշումները՝ Հայաստանին միանալու ձգտման մասին: Գեներալ Սուլթանովը 1920թ. մարտի 23-ին՝ մահմեդականների նովուզի /նոր տարի/ օրը, թուրք-ադրբեջանական զորքերով ներխուժեց Շուշի և այնտեղ կազմակերպեց հայ բնակչության սոսկալի կոտորած: Հայկական թաղամասը վերածվեց ավերակների, զոհվեցին հազարավոր մարդիկ: Սուլթանովի զորքերն անցան Արցախի մյուս բնակավայրերի ավերմանը: Թվում էր, թե թշնամին հասել է իր նպատակին և տիրել Արցախին: Սակայն արցախցիների համբերության բաժակը լցվեց, և նրանք սպասամբություն բարձրացրին: Ապստամբության կենտրոններից դարձավ Վարարակն գյուղաքաղաքը /Ստեփանակերտ/: Ապրիլի 15-ին թշնամին դուրս չարտվեց Արցախի զգալի մասից: Ապրիլի 17-ին Հայաստանը զինական օգնություն ցույց տվեց իր հայրենակիցներին: Դրոն Գորիսից հասավ Շուշի, իսկ Նժդեհը՝ Ղափանից՝ Դիզակ /Հաղրութ/: Ապրիլի 25-ին կայացած Ղարաբաղի ազգային խորհրդի 9-րդ համագումարն ընդունեց պատմական որոշում՝ մայր հայրենիքի հետ վերամիավորվելու մասին:

Սակայն դեպքերն այլ զարգացում ունեցան: Ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացավ և Ղարաբաղի հարցում ձեռք բերեց խորհրդային Ռուսաստանի աջակցությունը: Պատահական չէ, որ ոչ միայն խորհրդային Ադրբեջանի արտգործնախարար Հուսեյնովը, այլև կարմիր բանակի ներկայացուցիչներ Օրջոնիկիձեն ու Կիրովը պահանջեցին Հայաստանի Հանրապետությունից զորքերը դուրս բերել Ղարաբաղից: Ուշագրավ է, որ բոլշևիկներին հաճոյանալու նպատակով տեղի մուսավաթականների մեծ մասը մտավ կոմկուսի շարքերը: Նույնիսկ

Սուլթանովը դարձավ Ղարաբաղի հեղկոմի նախագահ: Ցավոք, հայ բոլշևիկների քարոզչության հետևանքով Դրոյի զորքերում սկսվեց դասալքություն և վերջինս ստիպված վերադարձավ Գորիս: Մինչ այդ Դրոն հանդիպեց Ղարաբաղի նոր հեղկոմի նախագահ, հայազգի բոլշևիկ Սաքո Համբարձումյանի հետ և խնդրեց նրան իր դուրս գալուց հետո այստեղ պայքարել հայկական ոգին պահպանելու համար: Մայիսին կարմիր բանակը մտավ Ղարաբաղ: Ժողովուրդը չդիմադրեց՝ համոզված լինելով, թե երկրամասում արյունահեղության դադարեցման միակ տարբերակը նրա խորհրդայնացման և ռուսական հպատակություն ընդունելու մեջ է: Կարմիր բանակի կողմից Ղարաբաղի ժամանակավոր օկուպացման հետ համաձայնեց նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Ռուսաստանի հետ 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքած համաձայնագրով:

1920թ. նոյեմբերի 29-ին հայհեղկոմի կողմից Հայաստանը խորհրդային հռչակելուց մեկ օր հետո՝ նոյեմբերի 30-ին ստացվեց Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի հեռագիրը, որով Ադրբեջանը հօգուտ խորհրդայնացած Հայաստանի հրաժարվում էր վիճելի համարվող Ձանգեզուրից, Ղարաբաղից և Նախիջևանից: Սակայն շուտով խորհրդային Ադրբեջանը մոռացավ իր խոստումները և պայքար սկսեց վերոհիշյալ գավառների, առաջին հերթին՝ Ղարաբաղի համար: Ավելին, տեղի հայության նկատմամբ գործադրվեցին բռնություններ, նոր իշխանությունները սկսեցին կրկնել մուսավաթի հակահայ քաղաքականությունը: 1921թ. սկզբին այնքան ծանրացավ Արցախի հայ բնակչության վիճակը, որ վերջինս օգնության խնդրանքով դիմեց հարևան «Ինքնավար Սյունիքի» սպարապետ Նժդեհին: Սյունիքը 1921թ. փետրվարին սպա Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ 4 վաշտ ուղարկեց Արցախ, նրանց և տեղի ապստամբական ուժերով բոլշևիկներից մաքրվեց Ղարաբաղի ամբողջ հարավը՝ Դիզակը: Ապստամբական ելույթներ եղան նաև Վարարակնում: Պարզորոշ երևում էր, որ արցախահայությունը չի հաշտվի երկրամասը Ադրբեջանին միացնելու մտքի հետ:

1921թ. հունիսի 12-ին խորհրդային Հայաստանի կառավարությունն ընդունեց որոշում Ղարաբաղը իր հանրապետության անբաժանելի մաս հռչակելու մասին: Ի կատարումն այս որոշման, Ա.Մռավյանը նշանակվեց Հայաստանի արտակարգ կոմիսար Ղարաբաղում և մեկնեց այնտեղ: Ադրբեջանը կտրականապես հանդես եկավ այս որոշման դեմ:

Սահմանային վեճերը Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների միջև լուծելու նպատակով 1921թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում հրավիրվեց Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության /ՌԿԲ/ Կովկասյան բյուրոյի նիստ: Ի թիվս վիճելի այլ հարցերի /Ախալքալաք, Լոռի, Ձանգեզուր, Ձաքաթալա/, քննարկվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որի բնակչության ավելի քան 90%-ը հայեր էին: Հուլիսի 4-ի նիստում, որին ներկա էին Ա.Մյասնիկյանը, Ն.Նարիմանովը, Ս.Կիրովը, Ս.Օրջոնիկիձեն և ուրիշներ, որոշվեց Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայկական ԽՍՀ-ի մեջ: Սակայն Նարիմանովը բողոքեց այդ որոշման դեմ և Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը պահանջեց տեղափոխել Մոսկվա: Սակայն, թեև կայացվեց նոր որոշում՝ հարցը Մոսկվա տեղափոխելու մասին, հուլիսի 5-ին ընդունվեց անօրինական հետևյալ որոշումը. «Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով լայն մարզային ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով»: Ապրիլի այս որոշումն ընդունվեց Նարիմանովի ու Ստալինի ճնշման տակ և առանց քննարկման: Արդյունքում մոտ 95 % հայ բնակչությամբ պատմական Արցախը հայտնվեց Ադրբեջանի կազմում: Հայ ժողովուրդը մերժեց այդ տխրահոռակ որոշումը: Հայաստանի կոմկուսի կենտրոնի բյուրոն ևս 1921թ. հուլիսի 16-ի նիստում սխալ համարեց այն:

1923թ. հուլիսի 7-ին Լեռնային Ղարաբաղն անջատվեց իր դաշտային մասից և այնտեղ կազմվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը /ԼՂԻՄ/: Խորհրդային շրջանում բազմիցս հայ ժողովուրդը ծայր բարձրացրեց այդ անօրինականության դեմ մինչև 1988թ. հոգոր շարժումը:

**79. 1921Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ:
ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում դաշնակցության իշխանությունից հրաժարվելուց մի քանի օր անց հայիեղկոնը կարմիր բանակի ուղեկցությամբ մտավ մայրաքաղաք: Սակայն հենց սկզբից հայիեղկոնը խախտեց դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագիրը, ըստ որի հեղկոնի մեջ պետք է ընդգրկվեին նախկին կառավարությունից 2 հոգի: Շուտով բոլշևիկները խախտեցին այդ համաձայնագրի մյուս

կետերը: Գավառներում ևս ստեղծվեցին հեղկոններ, որոնք դարձան իշխանության միառիշտ մարմիններ: Այսպիսով, Հայաստանում հաստատվեց բոլշևիկյան կուսակցության մենիշխանություն: Պատահական չէ, որ հեղկոնի առաջին միջոցառումներից մեկը եղավ Հայաստանում արտակարգ հանձնաժողով՝ Չեկա ստեղծելը, որի նպատակը «հակահեղափոխության» դեմ պայքարն էր: Հեղկոնում նկատվեց երկու թև. առաջինը, որ ներկայացնում էին Ս.Կասյանը, Ա.Մռավյանը և ուրիշներ, գտնում էր, որ նախկին իշխանությունների դեմ պետք է մեղմ վերաբերմունք հանդես բերել և նրանց ներգրավել Հայաստանում խորհրդային կարգերի ամրապնդման գործի մեջ: Երկրորդ թևը, որի ամենամուլի ներկայացուցիչը Ավիս Նուրիջանյանն էր, պնդում էր հոգուտ կտրուկ, դաժան միջոցառումների՝ ընդդեմ դաշնակցության: Հեղկոնը, հատկապես ավելի կարծր, այսինքն՝ երկրորդ ուղղությանը, նախապատվություն տվեց, երբ Հայաստանի Չեկայի նախագահ դարձավ Ռուսաստանում իր գործադրած բռնությունների համար անուն վաստակած Գևորգ Աթարբեկյանը: Վերջիններիս ճնշման տակ Հայաստանում սկսեցին կիրառել «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որը ենթադրում էր բազմաթիվ բռնամիջոցներ հասարակության, հատկապես գյուղացիության նկատմամբ: Ձեռքի սպառնալիքի տակ բազմաթիվ հայ գյուղացիներ, իբրև դասակարգային թշնամիներ, ունեզրկվեցին:

ՌԿԲ/Կ կենտկոմի կավբյուրոն 1921թ. փետրվարի 1-ին հայիեղկոնից պահանջեց պայքար ծավալել դաշնակցություն կուսակցությունը Հայաստանում վերացնելու ուղղությամբ: Բանտերը լցվեցին բազմաթիվ հայտնի դաշնակցականներով, զինվորականներով ու մտավորականներով, որոնց թվում էին նախկին վարչապետեր Համո Օհանջանյանը, Հովհ. Քաջազնունին, նախարարներ Նիկոլ Աղբալյանը, Ռուբեն Դարբինյանը, Համազասպը՝ կամավորական 3-րդ գնդի հրամանատարը, և այլոք: Սիմոն Վրացյանը փետրվարի 4-ին, հանդիպելով հեղկոնի ղեկավարությանը, անօգուտ քայլ կատարեց բռնությունները դադարեցնելու ուղղությամբ: Շուտով Հայաստանից աքսորվեց Դրոն, որը դեկտեմբերի 2-ի համաձայնագրով զբաղեցնում էր կարմիր բանակի հրամանատարի պաշտոնը: Ավիս Նուրիջանյանի անմիջական ղեկավարությամբ /նա զինվորական գործերի կոմիսարն էր/ իրականացվեց հայկական բանակի 1400 սպաների աքսորը հայրենիքից: Նրանց մի մասը արգելափակվեց Բաքվում, մյուսները հասցվեցին Ռյազան: Ամեն կերպ հայ սպաներին ստորացնում էին, հարցաքննում և

թալանում: Բավական է նշել, որ Չեկան Երևանից մինչև Աղստաֆա կայարանը՝ 170 կմ, ձմռան սառնամանիքի պայմաններում, ստիպեց ոտքով անցնել հայ սպաներին, որոնց թվում էին նաև ծերունազարդ թովմաս Նազարբեկյանը, Սարգսրապատի հերոս Մովսես Սիլիկյանը և ուրիշներ: Դանիել Բեկ-Փիրումյանը սպանվեց աքսորավայրում, իսկ Պողոս Բեկ-Փիրումյանը՝ ինքնասպան եղավ՝ չտանելով իր նկատմամբ Չեկայի ձեռնարկած նվաստացումները: Այս դաժան «միջոցառումները» դժգոհություն առաջացրին ժողովրդի մեջ: Ջայրույթ առաջացրեց գյուղացիության մեջ 1920թ. դեկտեմբերի 10-ի Հայաստանի կոմկուսի նախաձեռնությամբ իրականացվող «հացահատիկի կամավոր հավաքումը» բնակչությունից՝ կարմիր բանակի զինվորներին կերակրելու նպատակով: Հացահատիկը բռնագրավվում էր անզամ չբավոր գյուղացիությունից: Սրան զուգահեռ սկսվեցին բանտերում պահվող դաշնակցականների ու զինվորականների գնդակահարությունները: Ավիս Նուրիջանյանի դրդումով, ի թիվս այլ գործիչների, դաժանաբար կացնահար արվեց Համազասպը: Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և նա դուրս եկավ նորաստեղծ խորհրդային իշխանության դեմ:

Ապստամբությունն սկսվեց տարերայնորեն՝ ընդգրկելով կոտայքը, Գառնին, Բաշ-Ապարանը և այլ շրջաններ: Ապստամբության ակտիվ մասնակիցներ դարձան վերջին վարչապետ Ս.Վրացյանը, սասունցի Փեթարա Մանուկը, խմբապետեր Մարտիրոսը, Սմբատը, Յապոնը և ուրիշներ: Տեղերում տապալելով հեղկոմները՝ ապստամբները տարբեր կողմերից շրջապատեցին Երևանը: Բոլշևիկները, չստանալով օգնություն կարմիր բանակից, փախուստի դիմեցին: Փետրվարի 18-ին Երևանում հաղթանակեց ապստամբությունը, հայոց եռագույնը նորից փողփողաց կառավարության շենքի վրա: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» Ս.Վրացյանի գլխավորությամբ: Վրացյանի առաջին քայլը եղավ կոմունիստներին ձերբակալելը և բանտերից հայ մտավորականներին ու զինվորականներին ազատելը: Մինչև փախուստը, բոլշևիկները հասցրել էին բանտում սպանել 30 մարդու, այդ թվում՝ Համազասպին, Ն. Ղորղանյանին և այլոց: Այսպես բոլշևիկների վարած հակաժողովրդական ու անհեռատես քաղաքականության պատճառով արյունաքամ եղած Հայաստանը կանգնեց քաղաքացիական պատերազմի իրողության առջև:

Հայիեղկոմը, Հայաստանի կոմկուսի կենտկոմը և հայկական փոքրաթիվ կարմիր բանակը 2 գրահագնացքներով հեռացան դեպի Ղամարլու /Արտաշատ/ թիկունքում գտնվող խորհրդային Նախիջևանի

թուրքերից օգնություն ստանալու մտադրությամբ: Բոլշևիկների մյուս խմբավորումն էլ հաստատվեց Ղարաքիլիսա-Դիլիջան-Սևան հատվածում Գ.Աթարբեկյանի գլխավորությամբ:

Ապստամբներին միայն աջակցում էր հայ բնակչությունը, իսկ բոլշևիկներին՝ Հայաստանի թուրքերն ու Նախիջևանից ժամանած 400 հոգանոց «Կարմիր տաբոր» ջոկատը, որը նույնպես բաղկացած էր թուրքերից: 11-րդ կարմիր բանակը դուրս էր բերվել Հայաստանից՝ անկախ Վրաստանը զենքի ուժով խորհրդայնացնելու համար: Վրացյանի կառավարությունը միայն որոշ հույսեր կապում էր Ջանգեզուրում հաստատված Նժդեհի և Վրաստանի կառավարության հետ: Սակայն Վրաստանը փետրվարի 25-ին խորհրդայնացվեց, իսկ Նժդեհը, Ղամարլուի բոլշևիկյան ուժերով կտրված լինելով Երևանից, չկարողացավ ցույց տալ գործնական աջակցություն: Դրսից օգնության հույսերն այնքան նվազ էին, որ Վրացյանի կառավարությունը, կատարելով հուսահատ ու անիմաստ քայլ, օգնության խնդրանքով դիմեց հայ ժողովրդի թշնամուն՝ քեմալական թուրքիային: Վերջինս ոչ միայն չօգնեց, այլև շուտով՝ մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի հետ կնքեց բարեկամության պայմանագիր, որով ոտնահարվեցին հայ ժողովրդի ազգային շահերը:

Ապստամբներին սատար կանգնեցին ոչ միայն դաշնակցությունը, այլև էսեռական, սոցիալ-դեմոկրատական այլ կուսակցություններ: Ղամարլուի ճակատում բոլշևիկների համար ստեղծվեց ծանր վիճակ: Թիկունքից՝ Դարալազյազի կողմից նրանց հարվածեց խմբապետ Յապոնը: 45 օր բոլշևիկները պաշտպանվում էին օղակի մեջ: Կարմիր բանակի հրամանատարությունը ինքնաթիռով նրանց հասցրեց 47 կգ ոսկի, որով Պարսկաստանից ձեռք բերվեց զենք ու զինամթերք: Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատելուց հետո կարմիր բանակը նորից տեղափոխվեց Հայաստան:

Բոլշևիկները Երևանի վրա հարձակումն սկսեցին երեք ուղղություններով՝ Վեդի-Ղամարլուից, Համամուլուից /Սպիտակ/ և Ելենովկայից /Սեվան/: Բացի կարմիր բանակից, նրանք օգնություն ստացան նաև խորհրդային Ադրբեջանից: Այս վերջիններիս ուժերով Գ.Աթարբեկյանը կարողացավ գրավել Նոր Բայազետը /Կամո/ և այնտեղ դաժանորեն ճնշել գյուղացիության ելույթները: Մարտի կեսերին խորհրդային ուժերը մարտերով մոտեցան Երևանին: Մայրաքաղաքի գրավումն անմիջապես հանձնարարվեց ռուս բոլշևիկ-զինվորական Վ.Վելիկանովին: Քանաքեռի մոտ ապստամբական ուժերը շրջապատեցին կարմիրբանակայինների մի գորախումբ և ջախջախեցին: Սակայն Երևանի ուղղությամբ գրոհները

չարունակվեցին:

Մարտի 20-ին, արյունահեղությունից խուսափելու համար 11-րդ կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ Օրջոնիկիժեն վերջնագիր ներկայացրեց Հայրենիքի փրկության կոմիտեին՝ զենքը վայր դնելու պահանջով: Հաջորդ օրը, միջնորդական առաքելությամբ եղբայրասպան քաղաքացիական կռիվը դադարեցնելու համար՝ Թիֆլիսից Երևան ժամանեց հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը: Նրա ջանքերով հաջողվեց բացահայտել տարածվող այն կեղծ լուրերը, թե իբր ապստամբները զանգվածաբար զնդակահարում են բոլշևիկներին, ուստի անհրաժեշտ է նույն կերպ վարվել նրանց հետ:

Մարտի 25-ին 3 ուղղություններով խորհրդային զորամասերը ընդհուպ մոտեցան Երևանին, զրավեցին Բաշ-Գառնին, Քանաքեռը: Ապրիլի 2-ին նրանք մտան Երևան: Ապստամբները նահանջեցին դեպի Չանգեզուր՝ Նժդեհի մոտ: Քաղաքից հեռացան նաև բազմաթիվ հայ մտավորականներ, ազգային գործիչներ, արևմտահայ գաղթականներ ու զինվորականներ: Ճանապարհին՝ Գնդեվազում և Տաթևում նրանք զնդակահարեցին մի խումբ բոլշևիկների ու կարմիրբանակայիների: Ապստամբությունը պարտություն կրեց, որովհետև այն ճնշվեց օտար ուժերի՝ Ռուսաստանի ռազմական օգնության շնորհիվ: Վրացյանի կառավարությունը մնաց մոտ 40 օր, սակայն նրա շնորհիվ փրկվեց հայ մտավորականությունը և մեղմացվեցին բոլշևիկների կամայականությունները:

80. 1921Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Շնորհիվ խորհրդային Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության, քեմալականները զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը և հսկողություն սահմանեցին Թուրքիայի մի զգալի հատվածի վրա: 1921թ. փետրվարմարտին, երբ Հայաստանում բռնկվել էր ժողովրդական ապստամբություն բոլշևիկների դեմ, նրանք Մոսկվայում բանակցություններ սկսեցին խորհրդային ղեկավարության հետ: խորհրդային Հայաստանից կոնֆերանսին ուղարկվեց Ալ.Բեկզադյանի պատվիրակությունը: Սակայն թուրքական կողմը շատ խորամանկորեն օգտագործեց այն հանգամանքը, որ փետրվարի 18-ին Երևանում տապալվել է հեղկոմը, ուստի նրա ներկայացուցիչ Բեկզադյանը լիազորված չէ ներկայացնելու Հայաստանի շահերը: Արդյունքում

ստացվեց այնպես, որ Բեկզադյանին արգելեցին մտնել կոնֆերանսի դահլիճ: Այսպես 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց խորհրդաթուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Այն կնքվեց առանց հայ ժողովրդի կենսական շահերը հաշվի առնելու և առանց հայերի մասնակցության: Պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի դեմ: Այս ամոթալի պայմանագրի կնքման գործում իրենց մասնակցությունն ունեցան խորհրդային Ադրբեջանի ղեկավարները և ազգությունների ժողկոմ Ի.Ստալինը: Պատահական չէ, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա գալու ճանապարհին մի քանի օր հանգրվանել էր Բաքվում և կնքվելիք պայմանագրի տեքստը համաձայնեցրել ադրբեջանցիների հետ: Ինչ վերաբերում է Ստալինին, որը հայտնի էր իր հակահայկական կեցվածքով, ջանք չխնայեց, որպեսզի Ռուսաստանի արտգործնախարար Չիչերինը հրաժարվի իր հայամետ դիրքորոշումից և կոնֆերանսում մեծ գիջումներ կատարի թուրքերին: Իզուր չէ, որ վերջինս տեղակալ Լեոն Կարախանը չմտցվեց խորհրդային պատվիրակության կազմի մեջ: Փաստորեն Մոսկվայի կոնֆերանսում հաղթանակեց Ստալինի այն թեզը, թե հանուն համաշխարհային հեղափոխության «հայ ժողովուրդը պետք է հրաժարվի ոչ միայն դաշնակների մեծ Հայաստանի գաղափարից, այլև հայկական համարվող հողերի միավորման համեստ ցանկությունից»: Ավելին, կոնֆերանսի նախօրյակին, ընդունելով թուրքական պատվիրակությանը Ստալինն ասել էր, թե հարկ չկա անհանգստանալու կոնֆերանսում հայկական հարցի խնդրով, քանի որ «Դուք այն լուծել եք: Եթե դեռևս մնացել են չլուծված հարցեր՝ վճռեք մինչև վերջ»:

Մարտի 16-ի պայմանագրով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը և նրա իրավունքները նաև Կարսի մարզի նկատմամբ: Թուրք-հայկական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով: Ռուսաստանը ստանում էր Բաթում նավահանգիստը՝ փոխարենը Թուրքիային զիջելով երբեք նրա կազմում չեղած հայկական Սուրմալուի գավառը: Քեմալականները պարտավորվում էին ազատել Ալեքսանդրապոլի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալությամբ, պայմանով, որ այդ իրավունքը նա մեկ այլ երրորդ պետության զիջել չէր կարող /հողված 3/: Պարզ է, որ խոսքը գնում էր Հայաստանին չզիջելու մասին: Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի միացյալ հանձնաժողովը կատարելու էր շտկում Նախիջևանի և Հայաստանի սահմանի մի հատվածում: Թուրքիան պարտավոր էր ազատել նաև Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթգիծը:

խորհրդային Ռուսաստանը պայմանագրով պարտավորվում էր նաև ջանքեր գործադրել նմանօրինակ պայմանագիր Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կնքելու համար:

Մոսկվայի կոնֆերանսից հետո Ալ.Բեկզադյանը բողոքներ կայացրեց խորհրդային կառավարությանը իր պատվիրակությանը մասնակցությունից զրկելու և հակահայկական պայմանագիր ստորագրելու համար: Սակայն այդ բողոքը ոչ մի գործնական նշանակություն չունեցավ: Պայմանագրի ստորագրումից հետո էլ թուրքերը չշտապեցին հեռանալ Ալեքսանդրապոլի գավառից, որը մնալու էր Չայաստանին: Այն ազատվեց միայն ապրիլի 22-ին՝ այնտեղ իրականացված կոտորածներից ու թալանից հետո: Խորհրդային Ռուսաստանը օգտագործեց Չայաստանի թուլությունը՝ նրան ևս այս պայմանագիրը պարտադրելու համար:

1921թ. մայիսի 7-ին Բաքվում հավաքվեցին անդրկովկասյան խորհրդային երեք հանրապետությունների պատվիրակությունները՝ Թուրքիայի հետ Մոսկվայի պայմանագրից բխող պայմանագրեր կնքելու համար: Մշակվեց ընդհանուր մոտեցում, որի համաձայն Թուրքիայի հետ բանակցություններում երեք հանրապետությունները պետք է հանդես գային միասնաբար: Նախատեսվում էր հիմնականում պահպանելով Մոսկվայի պայմանագրի կետերը, որոշ ճշտումներ մտցնել, որոնք բխում էին Չայաստանի շահերից. հասնել Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերից Չայաստանի օգտվելու իրավունքի շնորհմանը: Չայաստանը ձգտում էր նաև ձեռք բերել Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունքը և այլն:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կոնֆերանսը իրավիրվեց 1921թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13-ը: Հայկական պատվիրակության կազմում էին Ասքանազ Մռավյանը /Նախագահ/ և Պողոս Մակինցյանը: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Քյազիմ Կարաբեքիրը, որը թուրք-հայկական պատերազմի ժամանակ աչքի էր ընկել իր հակահայկական դիմագծով: Խորհրդային Ռուսաստանը ներկայացնում էր Յակով Գանեցկին: Հայկական պատվիրակությունը փորձեց հօգուտ Չայաստանի որոշ ճշտումներ մտցնել Մոսկվայի պայմանագրի մեջ: Մռավյանը թուրքական կողմին առաջարկեց Չայաստանին հանձնել Ախուրյանի աջ ափին մնացող պատմական Անի մայրաքաղաքի ավերակների շրջանը, իրավունք շնորհել Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերից օգտվելու համար,

վերադարձնել Ալեքսանդրապոլի դեպոյից թուրքերի բռնագրաված գույքը:

Քյազիմ Կարաբեքիրը շողջորթ ելույթ ունեցավ ասելով, թե Թուրքիան չի խուսափում հօգուտ «եղբայրական» հայ ժողովրդի զիջելու վերոհիշյալ շրջանները: Սակայն ինքը լիազորված չէ Մոսկվայի պայմանագրով նախատեսված սահմանագծում փոփոխություններ կատարել: Պայմանագրի կնքումից հետո նա այդ մասին տեղյակ կպահի իր կառավարությանը և հուսով է, որ մերժում չի ստանա: Պայմանագիրը ստորագրվեց հոկտեմբերի 13-ին՝ Մոսկվայի պայմանագրի կետերի համեմատությամբ առանց որևէ էական փոփոխության: Ուշագրավ է, որ Թուրքիան և Ադրբեջանը նորից գործում էին միասնաբար, մասնավոր, եթե խոսքը գնում էր Չայաստանի օգտին որևէ փոփոխության: Պատահական չէ, որ Կարս էին ժամանել նաև Վեդիի թուրքերը, որոնք ձգտում էին հասնել իրենց շրջանը Նախիջևանին միացնելուն: Սակայն Չայաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչները մերժեցին այդ պահանջը:

Այսպես, Չայաստանը Մոսկվայի և Կարսի երկու պայմանագրերով ունեցավ տարածքային լուրջ կորուստներ:

81. ԱՆԴՐՖԵՂԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1921թ. փետրվարյան ապստամբության ճնշումից հետո բոլշևիկները հարկադրված էին ավելի մեղմ քաղաքականություն վարել ժողովրդի նկատմամբ: Նոր մոտեցումը նկատվեց հատկապես այն ժամանակ, երբ Լենինի հանձնարարությամբ Անդրկովկաս ժամանեց նշանավոր բոլշևիկ Ալեքսանդր Մյասնիկյանը 1921թ. ապրիլին, որը ստանձնեց հայիեղկոմի ղեկավարությունը: Շուտով հեղկոմները, որոնք իշխանության ժամանակավոր մարմիններ էին, վերակազմվեցին ժողովմիտրիների: Նմանապես հայիեղկոմը վերակազմվեց Չայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի /ԻԽՍՀ ժողովմիտրի/: Վերջինիս նախածեռնությամբ 1921թ. դեկտեմբերին կայացան ընտրություններ: Ընտրված գավառային և քաղաքային /երևան, ապա՝ Գյումրի/ խորհուրդները դարձան իշխանության մարմիններ: 1922թ. հունվար-փետրվարին իրավիրեց ԻԽՍՀ խորհուրդների 1-ին համագումարը 252 պատգամավորների մասնակցությամբ: Բացի բոլշևիկներից այլ կուսակցություններ չէին ներկայացված ընտրություններում: Այսինքն՝ դա

կոմունիստական ամենատիրության սկիզբն էր:

1922թ. փետրվարի 3-ին համագումարում ընդունվեց ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը՝ երկրի հիմնական օրենքը: Այն թև զուրկ էր ժողովրդական մի շարք կարևոր հոդվածներից և ապահովում էր բոլշևիկյան ռեժիմի մենիշխանությունը, սակայն ժամանակի համար առաջադիմական երևույթ էր: Նրա վերջին հոդվածներում ներկայացվում էին հանրապետության խորհրդանիշները՝ գերբը /հեղ.՝ Մարտիրոս Սարյան/ և դրոշը:

1921թ. ապրիլի 14-ին Անդրկովկասի կոմունիստներին հասցեագրված իր նամակում, որը բերվեց Մյասնիկյանի կողմից, Վ.Լենինը պնդում էր, որ նորաստեղծ խորհրդային պետությունը իր կառուցվածքով պետք է լինի ֆեդերատիվ՝ դաշնակցային պետություն, այսինքն՝ նրա մեջ պետք է մտնեն տարբեր ինքնուրույն պետություններ՝ իբրև մեկ միության անդամներ: Ելնելով այդ ցուցումից՝ Կովկասի կոմունիստները լծվեցին ֆեդերատիվ պետության ստեղծման գործին: 1921թ. նոյեմբերի սկզբին Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց Անդրկովկասյան խորհրդային հանրապետություններից ֆեդերացիա ստեղծելու անհրաժեշտության մասին: Միաժամանակ հանձնարարվեց 3 կոմկուսներին քարոզչություն տանել իրենց ժողովուրդների շրջանում ֆեդերացիայի ստեղծման օգտին: Այս գաղափարը բացի համակիրներից գտավ նաև հակառակորդներ, առաջին հերթին Վրաստանում: Այստեղի կոմկուսի համագումարում ֆեդերացիայի հակառակորդները Բուդու Մդիվանու գլխավորությամբ, պնդում էին, որ չի կարելի անդրկովկասյան երեք-հանրապետություններից ստեղծել մեկ ֆեդերատիվ պետություն: Այդ հանրապետությունները պետք է սերտորեն կապվեն տնտեսական կապերով, սակայն քաղաքական առումով պետք է մնան ինքնուրույն: Ցավոք, վրաց բոլշևիկների այս միանգամայն ճիշտ մոտեցումը Ստալինի և Օրջոնիկիձեի կողմից խիստ դատապարտվեց իբրև ազգային թեքում կուսակցության մեջ և մեկուսացվեց: Փաստորեն կովկասյան կոմունիստներին պարտադրվեց ֆեդերացիայի գաղափարը:

1922թ. մարտի 12-ին Թիֆլիսում կայացավ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնականների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանս, որը հաստատելով դաշնակցային պայմանագիրը, հիմնադրեց Անդրկովկասյան ֆեդերացիան, որի լրիվ անունն էր՝ Անդրկովկասի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ֆեդերատիվ Միություն /ԱԽՍՀՄ/: 1922թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների 1-ին համագումարում

Անդրկովկասի հանրապետությունների ֆեդերատիվ միությունը /ԱԽՍՀՄ-ն վերակազմվեց Անդրկովկասի խորհրդային ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության՝ ԱԽՖՍՀ-ի: Վերջինս՝ հանրապետությունը, ի տարբերություն ֆեդերատիվ միության, Անդրկովկասի երեք հանրապետությունների իրավունքներն ավելի էր սահմանափակում: Եթե առաջինի մեջ յուրաքանչյուր հանրապետություն միության լիիրավ անդամ էր, ապա այստեղ նա դառնում էր մեկ ընդհանուր հանրապետության սովորական բաղկացուցիչ մասը: Դա նկատվում էր նաև ԱԽՖՍՀ-ի ընդունած սահմանադրության մեջ, որով փաստորեն հանրապետությունների իրավունքները հավասարեցվում էին նվազագույնի: ԱԽՖՍՀ-ի կենտրոն դառնում էր Թիֆլիսը:

Անդրֆեդերացիայի վերոհիշյալ 1-ին համագումարը որոշում ընդունեց նաև խորհրդային մյուս հանրապետություններին միանալու մասին: Համագումարը դիմեց Ռուսաստանի խորհրդային ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կենտրոնականին՝ ԽՍՀՄ ստեղծելու նպատակով համամիութենական համագումար հրավիրելու համար: 1922թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում հրավիրվեց ԽՍՀՄ խորհուրդների 1-ին համագումարը: Համագումարի նախօրյակին մեկ ընդհանուր խորհրդային ֆեդերատիվ պետություն ստեղծելու հարցի շուրջ ընթացել էին լուրջ վեճեր: Ի.Ստալինը առաջ էր քաշում կուլտուր-ավտոնոմիզացիայի ծրագիրը, ըստ որի բոլոր հանրապետությունները իբրև ինքնավար կազմավորումներ պետք է մտնեին Ռուսաստանի ֆեդերացիայի՝ ԱԽՖՍՀ-ի մեջ և ունենային միայն կուլտուր-ավտոնոմիա /մշակութային ինքնուրույնություն/: Այս ծրագիրը դիմադրության հանդիպեց վրաց կոմունիստների կողմից Բ.Մդիվանու գլխավորությամբ: Նա նորից կրկնում էր իրավահավասար հանրապետությունների միության ստեղծման գաղափարը և յուրաքանչյուր պետության լայն քաղաքական իրավունքների անհրաժեշտությունը: Մդիվանին և նրա կողմնակիցները հեռացվեցին Վրաստանի կոմկուսից:

Այնուհանդերձ, Ստալինի ինքնավարության մասին ծրագիրը հավանության չարժանացավ նաև Լենինի կողմից: Նա հասկացավ, որ ստալինյան ծրագիրը կարող է հանգեցնել ազգային շրջաններում մեծ դժգոհությունների և պնդեց հօգուտ բոլոր հանրապետությունների, այդ թվում ՌԽՖՍՀ-ի մասնակցությամբ միահավասար իրավունքներով միության ստեղծման: Այս սկզբունքով էլ ԽՍՀՄ խորհուրդների 1-ին համագումարը ստեղծեց խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ ԽՍՀՄ-ը, որի մեջ մտան ՌԽՖՍՀ-ն, ԱԽՖՍՀ-ն,

ՈՒԽԱՅ-Ե /Ուկրաինա/ և ԲԽՍՅ-Ե /Բելոռուսիա/: Համագումարը հաստատեց ԽՍՀՄ կազմավորման մասին դեկլարացիան և պայմանագիրը: ԽՍՀՄ ստեղծումով չլուծվեց ազգային հարցը: Թև ստեղծվեց ֆեդերատիվ միություն, սակայն այն օրըստօրե ավելի նմանվեց ստալինյան ինքնավար ծրագրով նախատեսվող կենտրոնացված բռնապետության, որում ոտնահարվեցին տարբեր ազգությունների իրավունքները: Հայաստանը, որ ԽՍՀՄ-ի մեջ չէր մտնում անգամ ուղղակիորեն մինչև 1936թ., հայտնվեց ծանր պայմաններում: ԱԽՖՍՅ-ի վրաց-ադրբեջանական մեծամասնությունը 1920-30-ականներին իրականացրեց մի շարք տարածքային վերաբաժանումներ, որոնց հետևանքով ՀԽՍՀ-ն կորցրեց հողակտորներ այժմյան Վարդենիսի, Կապանի և այլ շրջաններից: Հայկական մի շարք տարածքներ Լեռնային Ղարաբաղը, Ախալքալաքը, Նախիջևանը հարևան հանրապետությունների կազմում հայտնվեցին քաղաքական, տնտեսական ու մշակութային ծանրագույն պայմաններում:

82. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 1921-1928ԹԹ.

Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ եղան երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործին: Չէին գործում առանց այն էլ սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունները: Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր նախապատերազմյանի 10 տոկոսը: Քայքայված էր երկաթուղային տրանսպորտը: Թուրքական զավթիչները ավերել ու թալանել էին միակ երկաթուղային դեպոն Ալեքսանդրապոլում: Ծանր վիճակում էր նաև գյուղատնտեսությունը: Շարունակվում էին պարենային ճգնաժամը, սովը և համաճարակները, որոնք խլում էին մեծ թվով զոհեր:

Հայաստանի տնտեսության վերականգնման շրջանը համընկավ Ռուսաստանում ռազմական կոմունիզմի տխրահռչակ քաղաքակա- նությունից նոր տնտեսական քաղաքականությանը՝ ՆԷՊ-ին անցնելուն: Քաղաքացիական պատերազմի տարիներին կիրառվող ռազմական կոմունիզմից հատկապես տուժեց գյուղացիությունը, որից բռնությամբ խլվում էր նրա արտադրանքի մեծ մասը և տրվում էր կարմիր բանակին: Արգելված էր մասնավոր առևտուրը, որի մենաշնորհը պատկանում էր

միայն պետությանը: Երկիրը կործանումից փրկելու համար Լենինի կառավարությունը հրաժարվեց ռազմկոմունիզմից և անցավ նեպիւլյաժմ թույլատրվեց գյուղացուն, միայն վճարելով պարենհարկ, իր արտադրանքի ավելցուկը իրացնելու շուկայում, զբաղվելու առևտրով: Վերացվեց նաև մասնավոր սեփականության նկատմամբ եղած արգելքը: Գյուղի և քաղաքի միջև հաստատվեցին աշխույժ առևտրատնտեսական հարաբերություններ: Անցումը նեպիւն հնարավորություն տվեց հետզհետե հաղթահարելու տնտեսական խորը ճգնաժամը: Հայաստանում նեպի քաղաքականությունը մտցվեց 1921թ. ապրիլից մինչև հունիս ամիսը, որի հաջող անցկացման գործում զգալի գործ կատարեց հայիեղկոմի /ապա՝ ժողկոմխորհի/ նախագահ Ա.Մյասնիկյանը, որը միաժամանակ ժողկոմի նկատմամբ մեղմ քաղաքականության կողմնակից էր:

Շուտով Հայաստանում ստեղծվեց սպառողական կոոպերացիա՝ Հայկոպ, որի միջոցով մարդիկ կարողանում էին կազմակերպել իրենց արտադրանքի իրացումը: 1920-ականների սկզբներին սկսեց արտադրանք տալ Երևանի «Արարատ» գինու-կոնյակի գործարանը: Վերաբացվեցին նաև կաշվի նախնական մշակման և մի քանի այլ մանր ձեռնարկություններ:

1920թ. դեկտեմբերի 25-ին Երևանում կազմակերպվեց առաջին շաբաթօրյակը, որի ժամանակ կատարվեց որոշակի հանրօգուտ աշխատանք: 1921թ. սեպտեմբերին հիմնադրվեց Հայաստանի օգնության կոմիտեն՝ ԴՕԿ-ը, որի կենտրոնական վարչության նախագահ ընտրվեց մեծանուն բանաստեղծ, ժամանակի հայտնի «Մեկ հայ՝ մեկ ոսկի» շարժման ղեկավարներից Գովհաննես Թումանյանը: ԴՕԿ-ը զգալի հանգանակություններ կատարեց, որի հաշվին իրականացվեց լայն շինարարական աշխատանք: Ցավալի է, որ հետագայում ԴՕԿ-ի անդամներից շատերի նկատմամբ, իբրև «դասակարգային թշնամիների», իրականացվեց դաժան տեռոր:

1920-ական թվականներին Հայաստանին որոշակի օգնություն ցույց տվեց Խորհրդային Ռուսաստանը: 1920թ. վերջին Հայաստանի համար ՌԽՖՍՅ ժողկոմխորհը բաց թողեց 3 մլրդ ռուբլի խորհրդային թղթադրամ, սննդամթերք ու արդյունաբերական ապրանքներ:

Հայաստանի տնտեսության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում գյուղատնտեսությանը: 1920թ. դեկտեմբերի 28-ի դեկրետով և 1923թ. հողային օրենքով բռնագրավվում էին կալվածատիրական ու վանքապատկան հողերը և դրանք՝ 1,5 մլն հեկտար տարածք, ազգայնացվում էին: Գողը անհատույց տրվում էր գյուղա-

ցիությանը՝ հավասարարական սկզբունքով: Հող ստացան նաև արևմտահայ գաղթականները: Հողի բաժանումը տվեց զգալի արդյունքներ, նկատվեց գյուղատնտեսության աշխուժացում: Սակայն այդ գործընթացը երկար չտևեց և ընդհատվեց 1920-ական թթ. վերջին, երբ սկսվեց բռնի կոլեկտիվացումը: 1929թ. ապրիլի քան 44 հազ. գյուղաբնակներ շարունակում էին մնալ հողագուրկ:

1920-ական թթ. սկզբներին գյուղացիության ընդգրկումը «սոցիալիստական շինարարության» մեջ իրականացվում էր գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով: 1924թ. կազմակերպվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը՝ Հայգյուղկոոպը: 1925թ. հիմնականում ավարտվեց Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումը: Այդ տարում ցանքատարածությունները գրեթե կազմեցին 1913թ. մակարդակը:

Վերականգնման տարիներին կառուցվեցին մի շարք կարևոր օբյեկտներ, որոնց շնորհիվ ոռոգելի դարձան տասնյակ հազարավոր հեկտարներ: Հատկապես հիշարժան է Շիրակի օբյեկտները, որը սկսվեց 1922թ. և ավարտվեց 1925թ. հունիսին: 30 կմ երկարության այդ օբյեկտը ոռոգելի դարձրեց 10 հազ. հեկտար հողատարածություն: Զգալի վերելք նկատվեց նաև անասնապահության բնագավառում: Նկատելիորեն հանրապետությունում ավելացավ անասունների զլխաքանակը:

Գյուղատնտեսության որոշ աշխուժացումը պայմանավորեց նաև արդյունաբերության վերականգնումը: 1925-1926թթ. տնտեսական տարում գինու արտադրությունը զերազանցեց նախապատերազմյան մակարդակը: 1924թ. նոյեմբերի 7-ին Ղափանում վերսկսվեց պղնձի ձուլումը, որը դադարել էր 1916թ.: Վերականգնողական աշխատանքներ տարվեցին նաև Ալավերդում: 1924թ. նոյեմբերին Լենինականի տեքստիլ ֆաբրիկան տվեց իր առաջին արտադրանքը: Տնտեսության վերելքին նպաստեց Հայաստանի ժողովրդի /ԺԿԽ/ նախագահ Սարգիս Լուկաշինի /1881-1937/ գործունեությունը:

Ժողտնտեսության արագ վերականգնման համար անհրաժեշտ էր կառուցել էլեկտրակայաններ: 1923թ. սկսվեց Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի կառուցումը:

1924թ. սկզբին անցկացվեց դրամական ռեֆորմը, որը որոշ կայունություն մտցրեց երկրի դրամական համակարգի մեջ: Որոշ չափով կրճատվեց գործազրկությունը: Բնակչության համար սկսվեց պետական բնակարանային շինարարություն: 1928թ. Հայաստանի

ժողտնտեսությունը հասավ 1913թ. մակարդակին:

Հայաստանի կյանքում նկատվեց քաղաքաշինության արագ զարգացում: Երբեմնի փոքրիկ Երևանը սկսեց բավական արագ տեմպերով ընդարձակվել: Հիմնադրվեցին մայրաքաղաքի առաջին նորաբնակ թաղամասերը, որոնցում հաստատվեցին նաև հայրենադարձված սփյուռքահայերը: 1924թ. կառավարությունը հաստատեց Երևանի նոր հատակագիծը, որը կազմել էր ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը:

Ժողտնտեսության արագ վերականգնմանը օրեցօր խոչընդոտում էր կոմկուսի մեցիշխանության ամրապնդումը, որը դառնում էր համընդհանուր երևույթ՝ պայմանավորված Ի. Ստալինի անձի պաշտամունքի ուժեղացմամբ:

83. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՊՈՒՏՐԱՑՈՒՄԸ (1928-1940թթ.)

Նոր տնտեսական քաղաքականության նպի կենսագործումը տևական չեղավ և ընդհատվեց: Շուկայական հարաբերությունների այդ աշխուժացումը շուտով կանխվեց վերևից՝ կոմունիստական կուսակցության և կառավարության կողմից, որոնց միաձայն ղեկավար, Լենինի մահից հետո, աստիճանաբար դարձավ Ի. Ստալինը: 1920-ական թթ. կեսերին առկա տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար իշխանությունները կրկին դիմեցին բռնամիջոցների՝ ընդ որում հաշվի չնստելով գործող տնտեսական օրենքների հետ: Այն արտահայտվեց ԽՍՀՄ-ում տնտեսությունը ինդուստրացնելու և գյուղատնտեսությունը կոլեկտիվացնելու ձևերով:

ԽՍՀՄ ինդուստրացման հարցը առաջադրեց ՀամԿ/բ/Կ /կոմկուս/ 14-րդ համագումարը 1925թ. դեկտեմբերին: Համագումարը գտնում էր, որ կապիտալիստական երկրների շրջապատման պայմաններում ԽՍՀՄ-ում հնարավոր է միայնակ սոցիալիզմի կառուցումը, որի համար անհրաժեշտ է կենսագործել երկրի ինդուստրացումը՝ սոցիալիզմի նյութատեխնիկական բազա ստեղծելու համար: Այդ ծանրագույն խնդրի իրականացման համար գործի դրվեց ժողովրդի շահագործման ու կողոպտման ամեն մի միջոց, ծանր հարկման ենթարկվեց գյուղացիությունը, ունեզրկվեց եկեղեցին: Գյուղը սկսեց քայքայվել, իսկ այնտեղից քաղաք հոսող գյուղացիները դարձան էժան աշխատուժ: Ուշագրավ է, որ ինդուստրացումը սկսվեց ոչ թե թեթև արդյունա-

բերությունից, ինչպես տեղի էր ունեցել ամբողջ աշխարհում, այլև ծանր արդյունաբերությունից՝ չունենալով նյութական ու ֆինանսական միջոցներ:

Այնուհանդերձ, զանազան բռնամիջոցների կիրառմամբ և ժողովրդական զանգվածներին «կերակրելով» պայծառ օսցիալիստական ապագայի խոսքերով, խորհրդային իշխանությունը հիմնականում կարողացավ խՍՀՄ-ը վերածել ինդուստրիալ երկրի: Ինդուստրացումը ընդգրկեց նաև խորհրդային Չայաստանը: Տանջալից ու գրեթե չվճարվող ծանր աշխատանքի շնորհիվ Չայաստանում ստեղծվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ: 1926թ. շարք մտան Երևանի ձեթ-օճառի գործարանը, կարի առաջին ֆաբրիկան, սկսվեց Մեխանիկական գործարանի կառուցումը: 1927թ. շահագործման հանձնվեց Չայաստանի քիմիական արդյունաբերության առաջնեկը Երևանի կարբիտի գործարանը: Ի դեպ, փոքրիկ Չայաստանում քիմիական արդյունաբերության հիմնադրումը կոպիտ սխալ էր և հղի էր ծանր բնապահպանական հետևանքներով: Բանն այն է, որ տիրում էր այն թյուր կարծիքը, թե Չայաստանը իբր ջրային ռեսուրսներով հարուստ հանրապետություն է և կարող է արտադրել էլեկտրաէներգիա, որը կօգտագործվի շատ էներգիա պահանջող քիմիական արդյունաբերության մեջ: Ընդ որում ջրի պաշարներ ասելով ի նկատի էր առնվում Սևանա լիճը: Նախատեսվեց օգտագործել նրա բարձրադիր դիրքը՝ 1900մ և կասկադով ջուրը իջեցնել Արարատյան դաշտ՝ միաժամանակ ջուրը օգտագործելով ոռոգման նպատակով: Արդեն 1926թ. մայիսին գործարկվեց Երևանի հէկը, 1927-ին հիմք դրվեց Ձորահէկին, իսկ 1928թ. շարք մտավ Լենինականի հիդրոկայանը:

Չայաստանը մասնագիտացավ նաև լեռնահանքային արդյունաբերության մեջ: Ավելի ընդլայնվեցին Ալավերդու և Դափանի պղնձահանքերը և ծուլարանները: Պղնձի արտադրությունը խՍՀՄ-ի համար ուներ կարևոր տնտեսական ու ռազմական նշանակություն, ուստի, առանց հաշվի առնելու բնապահպանական հարցերը, Չայաստանի պղնձահանքերը շահագործվում էին ամենադաժան եղանակներով:

Ինդուստրացման, քիչ ուշ նաև գյուղատնտեսության կոլեկտիվացման արագացման նպատակով հաստատվեց խՍՀՄ ժողտնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը 1928 /29/- 1932/33/թթ.: 1930-ական թթ. քիմիայի նոր օջախ դարձավ Դարաքիլիսան /Կանաձոր/, ուր կառուցվեց քիմիական գործարան՝ կարբիտի, կալցիումի արտադրամասերով: 1933թ. Երևանում հիմնադրվեց կաուչուկի

գործարանը՝ հետագայի Նաիրիտը, որը շահագործման հանձնվեց 1940թ.: Լենինականը դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոն:

Շինանյութերի արդյունաբերությունը ևս չդարձավ առաջատար ճյուղերից մեկը: Լենինական-Արթիկ երկաթուղու շինարարությունը զարկ տվեց Արթիկ տուֆի արդյունահանմանը: Արթիկի գեղեցիկ տուֆը 1928թ. Փարիզում արժանացավ բարձր գնահատականի: Ցեմենտի արտադրության կենտրոնի վերածվեց Դավալուն /Արարատ/:

Չայաստանում առաջին հնգամյակի տարիներին գործարկվեց 18, իսկ երկրորդում /1933-1937/ 26 արդյունաբերական ձեռնարկություն: 1937թ. արդյունաբերության համախառն արտադրանքը 1913թ. համեմատությամբ աճեց ավելի քան 12 անգամ: Դա նշանակում էր, որ Չայաստանը ծանր գնով, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, վերածվեց ինդուստրիալ երկրի:

84. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը «սոցիալիզմի» կառուցման մյուս կարևորագույն «միջոցառումն» էր: Դեռ չէր ավարտվել գյուղացիությանը հողակտորներով ապահովելու միջոցառումը, երբ ստալինյան ղեկավարությունը առաջ քաշեց գյուղում «սոցիալիզմի բազա» ստեղծելու համար հողի կոլեկտիվացման ծրագիրը: 1927թ. վերջին ՀամԿ/բ/Կ 15-րդ համագումարը որոշում կայացրեց գյուղատնտեսության կոլեկտիվացմանն անցնելու մասին: 1-ին հնգամյա պլանով նախատեսվեց Չայաստանում մասնավոր տնտեսություններից կոլեկտիվ տնտեսությունների մեջ ընդգրկել գյուղացիության 17 տոկոսը: Դա նշանակում էր, որ մինչև 1933թ. Չայաստանը շարունակելու էր դեռ մնալ իբրև գերազանցապես մասնավոր տնտեսություններ ունեցող հանրապետություն: Սակայն Ստալինի ակտիվ միջամտությամբ գյուղի կոլեկտիվացման տեմպերը ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Չայաստանում զգալիորեն արագացվեցին: 1929թ. հռչակվեց «Մեծ բեկման տարի»՝ ի նկատի ունենալով այն կեղծ ստալինյան թեզը, թե իբր գյուղացիության մեծամասնությունը՝ միջակները շահագրգռված են կոլեկտիվացման մեջ, ուստի անհրաժեշտ է նրանց ներգրավել այդ պրոցեսի մեջ: Արդյունքում հազարավոր և տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ, որոնց թվում կային և չքավորներ, նոր

հողեր ստացած արևմտահայ գաղթականներ ու հայրենադարձներ, բռնությամբ ունեզրկվեցին և մտցվեցին կոլտնտեսությունների մեջ: Ստալինյան ղեկավարությանը հաճոյանալու նպատակով Անդրֆեդերացիայի և Հայաստանի կոմունիստները, հաշվի չառնելով, որ Անդրկովկասում կոլեկտիվացումը երկրի մյուս շրջանների համեմատությամբ պետք է իրականացվի ավելի ուշ ժամկետում, արհեստականորեն արագացրին մասնավոր գյուղացիական տնտեսությունները բռնությամբ կոլտնտեսություններ մտցնելու գործողությունները: Ուշագրավ է, որ ինչպես Ի. Ստալինը, այնպես էլ նրան ընդօրինակող բազմահազար կոմունիստները, ամենուր խոսում էին կամավորության սկզբունքով կոլտնտեսություններ մտնելու անհրաժեշտության մասին, սակայն ամեն կերպ բռնամիջոցներով արագացնում էին այդ գործընթացը: Խստությունները կիրառվում էին նաև այն բանվորների կողմից, որոնք կոմկուսի հանձնարարությամբ ժամանում էին գյուղ: Քիչ թե շատ կայուն տնտեսություն ստեղծած, որպես կանոն աշխատասեր գյուղացիները, հայտարարվեցին դասակարգային թշնամիներ՝ կուլակներ, ունեզրկվեցին և աքսորվեցին: Դիմադրող գյուղացիները ենթարկվում էին ֆիզիկական հաշվեհարդարի: Ըստ որոշ տվյալների 1930թ. ապրիլի դրությամբ Հայաստանում իբրև «կուլակ» ունեզրկվել էր արդեն 1100 տնտեսություն:

Մի շարք շրջաններում գյուղացիությունը համառ դիմադրություն ցույց տվեց իշխանությունների նմանօրինակ անօրինականություններին: Շամշադինում /Տաուշ/, Դարալագյազում, Թալինում, Վեդիում և այլ շրջաններում տեղի ունեցան գյուղացիական ելույթներ: Այսպես, Դարալագյազում 1930թ. մարտից մինչև մայիս ապստամբ գյուղացիները, Իրանից Նախիջևանի վրայով Հայաստան ներթափանցած խմբապետ Մարտիրոսի զլխավորությամբ զավառից դուրս քշեցին կոմունիստներին և փաստորեն զրավեցին իշխանությունը: Շարժման կենտրոնը Գնդեվազ գյուղն էր: Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, եղան բազմաթիվ ձերբակալություններ ու սպանություններ: Առանձին դեպքերում գյուղացիական ելույթներին հարեցին ընդհատակում գտնվող դաշնակցականներ: Սակայն չպետք է մոռանալ, որ օգտվելով գյուղում ստեղծված լարված իրավիճակից, գլուխ բարձրացրին նաև ավազակային խմբեր, որոնք իրականացրին թալան ու կողոպուտ՝ ավելի ծանրացնելով ժողովրդի վիճակը:

Գյուղացիության մի մասն էլ իր բողոքը իշխանությունների դեմ արտահայտում էր այլ կերպ. կոլտնտեսություն մտնելուց առաջ անխնա կոտորում էր իր անասունները, փչացնում գյուղատնտեսական

գործիքները՝ կոլտնտեսություններին չհանձնելու համար: Պատահական չէ, որ 1929-1934թթ. ընթացքում Հայաստանում խոշոր անասնազխաքանակը կրճատվեց 30, իսկ մանր եղջերավոր անասուններինը՝ 50 տոկոսով:

Գյուղում ահ ու սարսափի մթնոլորտ ստեղծելու համար բոլշևիկները մտցրին մի օրենք՝ 1932թ. օգոստոսի 7-ին, որով նախատեսվում էր մահապատիժ անգամ ոչ ծանր « հանցագործության» համար: Գյուղացին դրվեց ծանր հարկման տակ: Այս դաժան միջոցառումների արդյունքը եղավ ոչ թե գյուղատնտեսության «սոցիալիստական» վերակառուցումը, այլև նրա քայքայումը: 1932-33թթ. Ուկրաինայում սկսված սովից մահացան միլիոնավոր մարդիկ: Հայաստանում կոլեկտիվացումը պատճառ դարձավ հազարավոր ընտանիքների հեռանալուն: Միայն Սևանի ավազանից արտագաղթեց 6750 ընտանիք: Մինչև 1937թ. Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնությունը մտցվեց կոլտնտեսությունների մեջ /1000 կոլտնտեսություններում ընդգրկվեց 180 հազ. գյուղացիական տնտեսություն/:

Կոլեկտիվացումը ծանր հարված հասցրեց գյուղին: Վիճակը փոխելու խորհրդային իշխանության հետագա ջանքերը արդյունք չտվեցին: Գյուղատնտեսությունը տասնամյակներ շարունակ մնաց ցածր մակարդակի վրա:

50

85. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920-30-ԱԿԱՆ ԹԹ.

Խորհրդային իշխանությունը ժողովրդի աչքում նոր՝ «սոցիալիստական» կարգերի «առավելությունները» ընդօժեցելու նպատակով կարևոր էր համարում նաև երկրի կրթական կյանքի, մշակույթի, գիտության զարգացումը: Ուշագրավ է, որ թև խՍՀՄ-ում օրեցօր ամրապնդվում էր ստալինյան բռնապետական ռեժիմը, միակուսակցական համակարգը, այնուհանդերձ, կրթական ու մշակութային կյանքը զգալիորեն վերելք էր ապրում:

Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունը, այնպես էլ ՀԽՍՀ-ն 1920-ական թթ. համատարած անգրագիտության երկիր էր: Ուստի խնդիր դրվեց ժողովրդի մեջ լայնորեն ծավալել կոլտուր-լուսավորական աշխատանք: Արդեն 1921թ. սեպտեմբերին Ալ.Մյասնիկյանի ստորագրությամբ

ընդունվեց դեկրետ «Հայաստանում անգրագիտության վերացման մասին», ըստ որի 16-50 տարեկան բոլոր անգրագետ ու կիսագրագետ քաղաքացիները պարտավոր էին սովորել գրագիտություն մայրենի լեզվով: Այդ նպատակով ամենուր ստեղծվեցին լիկվիդացիոն կայաններ՝ լիկվայաններ: Սակայն վերջիններին մակարդակը շատ ցածր էր և աշխատանքը ոչ այնքան արդյունավետ: Դեռ 1926թ. Հայաստանում հաշվվում էր 200 հազ. անգրագետ:

Դպրոցները մանկավարժներով ապահովելու նպատակով Ալեքսանդրապոլում /Գյումրի/, Ստեփանավանում, Էջմիածնում և այլուր բացվեցին մանկավարժական տեխնիկումներ: 1921-22թթ. ուստարում ՀԽՍՀ-ում կար 506 հանրակրթական դպրոց՝ 47 հազ. սովորողներով: 1923թ. Երևանում և Ալեքսանդրապոլում /1924թ.՝ Լենինական/ ստեղծվեցին բանֆակներ՝ բանվորների համար: 1924թ. բացվեցին յոթնամյա դպրոցներ նաև գյուղական երիտասարդության համար: Նույն թվականին Երևանում կայացավ Հայաստանի ուսուցիչների առաջին համագումարը: Կարևոր էր 1930թ. հուլիսի 25-ին Հայաստանի կոմկուսի կենտրոնի ընդունած որոշումը պարտադիր տարրական ուսուցման անցնելու մասին: Սակայն շատ դեպքերում անգրագիտության դեմ պայքարը, դպրոցական շինարարությունը իրականանում էր թղթի վրա՝ կեղծ ու շինծու վիճակով, մանավանդ որ դպրոցը դրվել էր մարքս-լենինյան գաղափարական կաղապարների մեջ և գուրկ էր դեմոկրատական զարգացման հնարավորությունից:

1922թ. նոյեմբերին Երևանում հիմնադրվեց պետական հանրային գրադարանը: Ստեղծվեցին թանգարաններ, որոնց թիվը 1940թ. հասավ 11-ի:

Բարձրագույն կրթության գործում խոշոր դեր խաղաց Երևանի ժողովրդական համալսարանը, որը հիմնադրվեց 1920/21թթ., 1923-ին վերանվանվեց պետականի: Սկզբում այն ուներ 2 ֆակուլտետ՝ բնագիտության և հասարակագիտության, հետագայում այդ թիվը աճեց: Տարբեր ֆակուլտետների հիմքի վրա հետագա տարիներին ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ՝ մանկավարժական, բժշկական, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական /այժմ՝ Ճարտարագիտական/ և այլ բուհեր:

1923թ. բացվեց առաջին երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական կոնսերվատորիան, որի առաջին ղեկավարը դարձավ Ռոմանոս Մելիքյանը: 1940-41թթ. ուստարում Հայաստանում կար 11 բուհ:

Ստալինյան ռեժիմի պայմաններում այնուհանդերձ զգալի վերելք ապրեց գիտությունը: 1921թ. փետրվարին Էջմիածնի մատենադարանի հիմքի վրա հիմնադրվեց Հայաստանում առաջին գիտահետազոտական ինստիտուտը, որը 1939թ. Էջմիածնից տեղափոխվեց Երևան: Այժմ այն կրում է Մ. Սաշտոցի անունը /Մատենադարան/, որտեղ պահվում են ավելի քան 16 հազ. ձեռագրեր:

1935թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի հիմնադրումը խոշոր իրադարձություն եղավ հայկական գիտության զարգացման գործում: Արմֆանի հիմքի վրա հետագայում /1943թ./ ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Արմֆանի նախագահության առաջին նախագահն էր ակադեմիկոս Ֆ. Լևինսոն-Լեսսինգը, իսկ 1938թ.՝ ակադ. Գրիգորի Օրբելին: Առանձին հայ գիտնականներ 1930-ական թթ. արժանացան միութենական ու համաշխարհային ճանաչման, ինչպես Լեոն ու Գրիգորի Օրբելի եղբայրները, պատմաբան Հակոբ Մանանդյանը, որոնք ընտրվեցին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ: Խորհրդային Հայաստանի ճանաչված պատմաբաններից դարձավ նախորդ շրջանից հայտնի հայագետ Լեոն՝ Առաքել Բաբախանյանը: Նա գրեց մի շարք արժեքավոր գործեր /«Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» և այլն/:

Խորհրդահայ գրականության ստեղծման գործում հսկայական ներդրում ունեցան նախախորհրդային շրջանի մի շարք հայ դասականներ, ինչպես Դավիթանես Թումանյանը, Նար-Դոստը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ալ. Երվանդադեան, Ավ. Իսահակյանը և ուրիշներ: 1920-30-ական թթ. փայլատակեց եղիշե Զարենցի տաղանդը: 1920-ական թթ. հանդես եկան այնպիսի հայտնի գրական անուններ, ինչպիսիք էին Ակսել Բակունցը, Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, Գեղամ Սարյանը և ուրիշներ: Ցավալի է, որ թև նրանցից շատերը ռեալիստական կյանքի նկարագրությունից բացի իրենց ստեղծագործություններում ներկայացնում էին խորհրդային իշխանության ձեռքբերումները, այնուամենայնիվ, ենթարկվեցին ֆիզիկական հաշվեհարդարի /Զարենց, Բակունց/, հալածանքների ու աքսորի:

Արվեստի կյանքում խոշոր իրադարձություն էր 1922թ. Երևանում Հայաստանի պետդրամատիկական թատրոնի բացումը: Վերջինս 1937թ. կոչվեց մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի անունով: Այս թատրոնի խոշոր դեմքերից դարձավ ականավոր դերասան Վահրամ Փափազյանը: Հայտնի դերասաններ էին Գովհ. Աբելյանը, Արուս Ոսկանյանը և ուրիշներ:

Հետագայում ստեղծվեցին մի շարք այլ թատրոններ՝ Երևանի պատանի հանդիսատեսի, Լենինականի Ա.Սռավյանի անվան դրամատիկական, Կ.Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական և այլն:

1920-ական թթ. Խորհրդային Հայաստանում դրվեցին հայկինոարվեստի հիմքերը: 1923թ. Երևանում ստեղծվեց Հայկական ԽՍՀ պետկինոն, որը հետո վերանվանվեց Հայկինո: 1925թ. Էկրան բարձրացավ հայկինոյի առաջին արտադրությունը՝ «Խորհրդային Հայաստան» վավերագրական կինոնկարը: Նույն տարում ցուցադրվեց առաջին գեղարվեստական նկարը՝ «Նամուսը», իսկ 1935թ. առաջին հնչյունային ֆիլմը՝ «Պեպոն»: Հայ կինոյի հիմնադրման գործում անգնահատելի գործ կատարեց ականավոր կինոռեժիսոր Համո Բեկնազարյանը:

1933թ. բացվեց Հայաստանի օպերայի ու բալետի պետթատրոնը, որը հետագայում անվանվեց անվանի կոմպոզիտոր Ալ.Սպենդիարյանի անունով: 1930-ական թթ. սկսեց փայլատակել Արամ Խաչատրյանի երաժշտական տաղանդը:

Խորհրդային կերպարվեստի խոշորագույն վարպետներ էին Մարտիրոս Սարյանը, Եղիշե Թադևոսյանը, Հակոբ Կոջոյանը և ուրիշներ: Ճարտարապետության մեջ անգերազանցելի դարձավ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, որի նախագծով կառուցվեց Երևանի կենտրոնը, հանրապետության հրապարակը, օպերայի ու բալետի թատրոնի շենքը և այլն:

Ցավոք, մշակույթի այս ձեռքբերումները իրականացվում էին հայ մտավորականների՝ գիտնականների, գրողների, գործիչների դաժան հալածանքներով: Ստալինյան բռնությունները մեծապես խոչընդոտեցին մշակութային կյանքի լիարժեք զարգացմանը:

86. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-30-ԱԿԱՆ ԹԹ.

1920թ. դեկտեմբերի 2-ից Հայաստանում հաստատված բոլշևիկյան իշխանությունը, մոռանալով այդ օրը կնքված Երևանյան համաձայնագրի մի շարք կետեր, սկսեց արմատավորել կոմունիստական մենիշխանության և վարչահրամայական կառավարման համակարգը: Ի խախտումն Երևանյան համաձայնագրի, բոլշևիկները պայքար սկսեցին հատկապես դաշնակցության դեմ՝ այն վերացնելու նպատակով: Այդ խնդիրը դրվեց

Հայաստանի չեկայի և ՀԿԿ կոմկուսի վրա: Բոլշևիկների պահանջով դաշնակցականները մամուլում սկսեցին հանդես գալ հայտարարութուններով իրենց կուսակցության գործունեությունը դադարեցնելու և այդ նպատակով համագումար հրավիրելու մասին: Բոլշևիկների հավանությամբ նախկին վարչապետ Քաջազունին գրեց «Դաշնակցությունը այլևս անելիք չունի» աշխատությունը: 1923թ. Երևանում ՀՀ Դաշնակցության այսպես կոչված ինքնավերացման համագումարը որոշում ընդունեց իր գործունեությունը Հայաստանում դադարեցնելու մասին: Նման համագումար բոլշևիկները կազմակերպեցին նաև Հայաստանից դուրս: Սկսվեց կուսակցությունների անդամների ցուցակագրությունը. շուրջ 4000 դաշնակցական: Այդ ցուցակները հետագայում օգտագործվեցին բացահայտված դաշնակցականներին ոչնչացնելու համար: 1924թ. Հայաստանի «Երիտասարդ դաշնակցականների» համագումարում ևս որոշում կայացվեց լուծարման մասին:

Լուծարվեցին նաև հնչակյան, մենշևիկյան, էսեռական, հայ ժողովրդական կուսակցությունները: Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում հաստատվեց կոմկուսի մենիշխանությունը: 1924թ. Լենինի մահից հետո, Ստալինը ձեռնամուխ եղավ նաև բոլշևիկյան կուսակցության ներսում այլախոհության վերացմանը: Վերացվեց տրոցկիզմը՝ ձախ թեքումը Տրոցկու գլխավորությամբ /հայտնի բոլշևիկ, որին 1929թ. վտարեցին երկրից, իսկ 1940թ. սպանեցին Մեքսիկայում/: Վերջիններս դեմ էին ինդուստրացմանը, բռնություններին և այլն: 1930-ական թթ. վերջնականապես հաստատվեց Ստալինի անձի պաշտամունքը: Հայաստանի կոմկուսը փաստորեն ՀամԿ/ԲԿ բաղկացուցիչ մասն էր, չունեցրեց ծրագիր, ոչ կանոնադրություն և կախված էր Մոսկվայից և Անդրֆեդերացիայից: Հայաստանի կոմկուսը ևս բռնությունների ենթարկվեց: 1929 և 1935թթ. անցկացվեց ՀԿԿ շարքերի գտում: Փաստորեն ընտրական կարգը, դատարանը, տեղական իշխանությունները կախված էին ՀԿԿ ղեկավարությունից և Մոսկվայից: Հայաստանի հասարակական կազմակերպությունները, արհմիությունները, կոմերիտմիությունները, իրականում ոչ մի իշխանություն չունեին: 1930-ական թթ. վերջին Հայաստանում կոմերիտմիության մեջ հաշվվում էր 93 հազ. մարդ: Այդ տարիներին Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար են եղել Աշոտ Յովհաննիսյանը /1922-27թթ. ակադեմիկոս, հայտնի պատմաբան/ և Աղասի Խանջյանը /1930-36թթ./:

Բոլշևիկներն իրենց պատկերացրած սոցիալիզմը կառուցելու նպատակով գլխավոր միջոց դարձրին բռնությունները: Հայաստանում

դրանք նկատվեցին դեռևս 1920թ. դեկտեմբերից, երբ աքսորվեցին հայկական սպայակազմը, նախկին կառավարության ղեկավարները և դաշնակցության անդամներ: 1920-21թթ. աքսորվեց 1400 սպա, որոնց թվում էին ծերունազարդ թուվմաս Նազարբեկյանը, Սարգսրապատի հերոս Մովսես Սիլիկյանը և ուրիշներ: Պողոս Բեկ-Փիրումյանն ինքնասպան եղավ: 1920-ականների կեսերից ձերբակալվեցին բազմաթիվ դաշնակցականներ, մարդիկ, որոնք հրաժարվել էին այդ կուսակցությունից: Կոլեկտիվացման շրջանում ունեզրկվեց և կոլեկտիվացվեց 1100 տնտեսություն: Ամենուր բռնագրավվում էր «կուլակների» ունեցվածքը: Դաժան հալածանքներ սկսվեցին եկեղեցու նկատմամբ: Փակվեցին եկեղեցիներ: 1938թ. չեկայի ցուցումով նրա գործակալները խեղդամահ արեցին կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանին: Բռնագրավվեց եկեղեցու ունեցվածքը: Արգելվեց էջմիածնին կապեր պահպանել սփյուռքի հետ: 1926թ. եկեղեցուն արգելվեց պատարագները՝ ի հիշատակ 1915թ. ցեղասպանության զոհերի: 1930-ական թթ. կեսերին ստալինյան բռնությունները նոր ալիք ապրեցին, որի համար Ստալինին առիթ ծառայեց 1934թ. վերջին բուլշևիկ Կիրովի սպանությունը: Բանտերը նետվեցին, աքսորվեցին միլիոնավոր մարդիկ: Սիբիրում, ծայր Դյուսիսում և Արևելքում ստեղծվեցին բազմաթիվ համակենտրոնացման ճամբարներ՝ բանտարկյալների համար: Իր քայլերն արդարացնելու համար Ստալինը առաջ քաշեց այն թեզը, թե որքան մոտենում ենք սոցիալիզմի հիմքերի կառուցման ավարտին, այնքան սոցիալիզմի թշնամիները՝ շահագործող դասակարգը ուժեղացնում է իր պայքարը սոցիալիզմի դեմ: 1936թ. հուլիսին թիֆլիսում Ստալինի զինակից Բերիայի կողմից կազմակերպվեց ԶԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը: 1936թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Զայաստանում սկսվեցին զանգվածային ձերբակալություններ: Այդ գործը հանձնարարվեց ՆԳ ժողկոմ Խաչիկ Մուրդուխանյանին: Վերջինս սկսեց կեղծ գործեր սարքել հայ մտավորականների դեմ՝ մեղադրելով նրանց հակահեղափոխության մեջ, ինչպես մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսես Ստեփանյանի, գրողներ Զարենցի, Բակունցի, Մկրտիչ Արմենի, Գուրգեն Մահարու դեմ: 1937թ. օգոստոսին հարցաքննության ժամանակ, ինքնասպան եղավ կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը՝ իրեն ցած նետելով 3-րդ հարկից:

1939թ. սեպտեմբերին Ստալինի ցուցումով Երևան ժամանեցին բուլշևիկներ Միկոյանը, Մալենկովը և Բերիան՝ իրենց հետ բերելով

Ստալինի նամակը՝ Զայաստանում բռնություններ իրականացնելու պահանջով:

Ամենուր սարքված կեղծ գործերով սկսվեցին դատական գործեր, զննակահարություններ, բանտարկություններ և աքսոր, ինչպես Ստեփանավանում, Երևանում և այլուր: 1937թ. Զայաստանում բռնադատվեց 4700 մարդ, որից 3200 մարդ զննակահարվեց: 1938թ. զննակահարվեց 3050 մարդ, բանտարկվեց՝ 1500: Ընդհանուր թվով Զայաստանում բռնությունների ենթարկվեց 25.000 մարդ: Այսպես ԽՍՀՄ-ում հաստատվեց ամբողջատիրություն /տոտալիտարիզմ/, որտեղ կեղծ սոցիալիզմի լոզունգներով գործում էր միայն բուլշևիկյան կուսակցության ղեկավարության ամենաթողությունը՝ մարդկային ազատությունների լիակատար բացակայության պայմաններում:

Բռնությունները միայն ժամանակավորապես դադարեցին Զայենական մեծ պատերազմի պատճառով:

87. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական սփյուռքն առաջացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Զայաստանում թուրքիայի կողմից իրականացված հայ ժողովրդի ցեղասպանության և տեղահանության հետևանքով, երբ հարյուր հազարավոր հայ գաղթականներ համալրեցին աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող հայկական համայնքները:

1920-ական թվականների սկզբին հայկական համայնքներում ապրում էր մոտ մեկ միլիոն հայ: Առավել խոշոր էին Մերձավոր Արևելքի /Լիբանան, Սիրիա, Եգիպտոս/, Բալկանյան թերակղզու /Բուլղարիա, Յունաստան, Ռումինիա/ երկրների, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համայնքները: Հայերի թիվն ավելացավ նաև Լատինական Ամերիկայում: Միայն Դյուսիսային Կովկասում հաստատվեց 130 հազար հայ գաղթական:

Թուրքիայում, որտեղ մինչև ցեղասպանությունը կար ավելի քան 2,5 միլիոն հայ, մնացել էր մոտ 230 հազար մարդ, որոնց մեծ մասը Կ. Պոլսում:

1920-ական թթ. սկզբից սփյուռքահայությունը պայքար ծավալեց հայկական հարցի լուծման նպատակով:

1921թ. փետրվար-մարտին Լոնդոնում կայացավ մեծ տերությունների կոնֆերանս: Այդ կապակցությամբ Լոնդոն էր ժամանել

հայկական երկու պատվիրակություն : Մեկը /ղեկավար Ավետիս Ահարոնյան/ ներկայացնում էր նախկին Հայաստանի Հանրապետությունը, մյուսը /ղեկավար՝ Պողոս Նուբար փաշա/ սփյուռքահայությունը: Կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը պահանջեց վերանայել Սևրի պայմանագիրը, վերականգնել Թուրքիայի նախապատերազմյան սահմանները /այդ թվում թուրքերի նվաճած Կարսի մարզը և այլ տարածքներ/: Իսկ հայկական պատվիրակությունները խնդրում էին ուժի մեջ թողնել Սևրի պայմանագիրը: Սակայն կոնֆերանսը մերժեց հայերի պահանջը:

Լոնդոնի կոնֆերանսը Հայկական հարցի վերաբերյալ ընդունեց մի անորոշ ձևակերպում Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական «ազգային օջախ» ստեղծելու մասին: Թուրքիայի կողմից այս առաջարկը ևս մերժվեց: Փաստորեն արևմտյան տերությունները հրաժարվել էին Սևրի պայմանագրից:

Վերջին անգամ Հայկական հարցը քննարկվեց Լոզանի կոնֆերանսում /1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս/: Այստեղ թուրքական պատվիրակությունը դարձյալ մերժեց Թուրքիայի տարածքում հայկական «ազգային օջախ» ստեղծելու գաղափարը, որի հետ հաշտվեցին մեծ տերությունները: Լոզանի պայմանագրում այլևս չհիշվեցին Հայաստանը և հայերը, և Հայկական հարցի փոխարեն առաջ քաշվեց հայ գաղթականների հարցը, որը հանձնվեց Ազգերի լիգայի քննարկմանը: Ինչպե՞ս վարվել հայ գաղթականների հետ: Որտեղ տեղավորել նրանց, ինչ՞ միջոցներով: Այս հարցերն էին քննարկվում ազգերի լիգայում տարիներ շարունակ՝ 1920-ական թվականներին, և ապարդյուն: Սփյուռքահայությունը շարունակեց հետապնդել Հայկական հարցը նոր անվանումով՝ Հայ դատը՝ արթուն պահելով այն պատմության ամբողջ ընթացքում: Կազմակերպվում էին Հայ դատի խմբեր, հրապարակվում էին ցեղասպանության և Հայկական հարցի մասին փաստաթղթեր ու գրքեր միջազգային հասարակայնությանը տվյալ ուղղությամբ տրամադրելու, Հայկական հարցի լուծմանը վերադառնալու համար:

Հայրենադարձությունը. Սփյուռքահայության ծուլման վտանգը կանխելու նպատակով ստեղծվում էին մշակութային-կրթական հաստատություններ: Մեծ էր հատկապես հայ եկեղեցու դերը, որը սփյուռքահայությանը միավորող ու համախմբող միակ ուժն էր: Հայկական եկեղեցիներ էին գործում գրեթե բոլոր հայաշատ վայրերում: Իրենց գործունեությունն էին շարունակում հայկական կուսակցությունները՝ Դաշնակցությունը, Հնչակյանները, Ռամկավար-Ազատական

կուսակցությունը: Դաշնակցությունը ժխտական վերաբերմունք ուներ Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ռամկավար-Ազատական կուսակցությունը դեմ լինելով կոմունիստական գաղափարախոսությանը, այնուամենայնիվ հաշտվողական վերաբերմունք ուներ, ճանաչում էր Խորհրդային Հայաստանին: Իսկ Հնչակյանների վերաբերմունքը համակրական էր, սակայն, դրանով հանդերձ, նրանք երկար ժամանակ Հայաստանում դրական գնահատանքի չէին արժանանում:

Սփյուռքի հասարակական կազմակերպություններից իր հանրօգուտ, հայրենանվեր գործունեությամբ առավել հեղինակավոր և ճանաչված էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը /ՀԲԸՄ/, որն իր մասնաճյուղերն ուներ սփյուռքահայ համայնքներում:

1920-ական թվականների սկզբին կապեր հաստատելու նպատակով արտասահման մեկնեցին Խորհրդային Հայաստանի պատվիրակները՝ գրողներ Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը և ուրիշներ: Հայաստան-սփյուռք կապերի հաստատման և ամրապնդման գործում լայն գործունեություն ծավալեց Հայաստանի օգնության կոմիտեն /ՅՕԿ/, որի առաջին նախագահն էր Հովհաննես Թումանյանը: ՅՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծվեցին սփյուռքի շատ համայնքներում: Այն գործեց մինչև 1937թ. և լուծարվեց երկրում իշխող քաղաքական բռնությունների պատճառով: Դա մեծ վնաս հասցրեց Հայրենիք-սփյուռք կապերի հետագա զարգացմանը:

Հայրենադարձությունը 1920-1930-ական թվականներին. Սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու առաջին քայլերը տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության տարիներին /1918-1920թթ./: 1919-1920թթ. Ադրբեջանի Շամախի, Նուխի և այլ գավառներից Հայաստան տեղափոխվեց 20 հազար հայ գաղթական: Սա առաջին կազմակերպված հայրենադարձությունն էր:

Երբ Լոզանի կոնֆերանսում թուրքերը մերժեցին հայկական «ազգային օջախի» ստեղծման առաջարկը, իսկ Ազգերի լիգան երկար քննարկումներից հետո, միջոցներ չգտավ հայերի հայրենադարձություն կազմակերպելու համար, դրա միակ հույսը մնաց Խորհրդային Հայաստանը, որը, չնայած իր աղքատությանը, միջոցներ գտավ տարագիր հայ զավակներին հայրենիքում ընդունելու համար:

Ընդ որում հայերի հայրենադարձություն կազմակերպելու հնարավորություններ գտնելու ուղղությամբ հայանպաստ գործունեություն ծավալեց Ազգերի լիգայի ներկայացուցիչ, նորվեգացի հայտնի բեռնախույզ Ֆրիտյոֆ Նանսենը, որը եղավ նաև Խորհրդային

Հայաստանում: Լա, ի վերջո, ստիպված եղավ հանդես գալ «Խաբված ժողովուրդը» գրքով, որտեղ դատապարտում էր արևմտյան տերությունների հանցավոր վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Դեպի Խորհրդային Հայաստան հայրենադարձների առաջին քարավանը կազմակերպվեց 1921թ. վերջին, Միջազգետքից: 1925-1926թթ. հայրենադարձություն տեղի ունեցավ Հունաստանից, Իրանից, Թուրքիայից, Սիրիայից՝ շուրջ 20 հազար մարդ: 1926-1929թթ. Հայաստանն ընդունեց ևս 6 հազար հայրենադարձների Հունաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից: 1932-1933թթ. նոր քարավաններ եկան Բուլղարիայից և Հունաստանից: 1921-1936թթ. Հայաստան վերադարձած հայրենադարձների թիվը կազմեց 42 հազար մարդ:

Հայրենադարձներին բնակարաններով ապահովելու գործում նախածեռնությամբ հանդես եկան սփյուռքի հայրենակցական միությունները: Հայաստանում ստեղծվեցին Երևանի Նոր Արաբկիր, Նոր Բուքանիա, Նոր Խարբերդ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա թաղամասերը, Նուբարաշեն ավանը և այլն:

Հայրենադարձության հետագա գործընթացն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով:

57.

88. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՍԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ /1941-1945ԹԹ./

1939թ. սեպտեմբերի 1-ին Լեհաստանի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումով սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Մինչև 1941թ. ամառը հիտլերականները գրավեցին Արևմտյան Եվրոպայի գգալի մասը, իսկ 1941թ. հունիսի 22-ին հարձակվեցին ԽՍՀՄ-ի վրա: Գերմանացիները նպատակ ունեին ջախջախել Խորհրդային Միությունը, նրա կազմում ապրող բազմաթիվ ազգերի: Վերջիններս, հիմնականում ռուսները, սլավոնական մյուս ժողովուրդները, հայերը և ուրիշ ժողովուրդներ, խորապես գիտակցելով ֆաշիզմի ողջ հանցագործ ծրագրերի վտանգը, պայքարի դուրս եկան գերմանական զավթիչների դեմ: Հայերիս համար այդ պատերազմում Խորհրդային Միության կողմում մարտնչելն ընդդեմ ֆաշիզմի ուներ կենսական նշանակություն: Թուրքիան գաղտնի բանակցություններ էր վարում Հիտլերի հետ՝ ԽՍՀՄ-ի վրա նույնպես հարձակվելու համար: Անդրկովկասի վրա թուրքերի 26 դիվիզիաների հարձակումը կնշանակեր

Խորհրդային Հայաստանի իսպառ ոչնչացում: Ուստի հավասարապես մեզ համար ևս այդ պատերազմը Հայրենական պատերազմ էր: Պատահական չէ, որ հայկական Սփյուռքը նույնպես կանգնեց ԽՍՀՄ-ի պաշտպանության շարքերում:

1941թ. հունիսի 22-ից մինչև Հայրենական պատերազմի ավարտը՝ 1945թ. մայիսի 9-ը բանակ զորակոչվեց ավելի քան 500 հազ. հայ: Ցաշիզմի վտանգը ստիպեց Խ.Ստալինին դադարեցնելու իր բռնությունները, ազգերին պատերազմի մեջ ներգրավելու համար, պատերազմի սկզբում վերականգնելու վերացված ազգային զորամիավորումները: Հայ ռազմիկներից ստեղծվեցին 6 ազգային դիվիզիաներ:

Առաջինը 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Խորհրդային Հայաստանի ստեղծման հետ: Այն աչքի ընկավ հատկապես Ստալինգրադի ճակատամարտում: Ցուցաբերած սխրագործությունների հա մար 76-րդ դիվիզիան ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով վերակազմվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի: Ապա այն մասնակցեց Կուրսկի ճակատամարտին, Ուկրաինայի ու Մերձբալթիկայի ազատագրման:

Երկրորդը 89-րդ դիվիզիան էր, որը կազմավորվեց 1941թ. դեկտեմբերին Երևանում: Այն ռազմաճակատ մեկնեց 1942թ. սեպտեմբերին և Կովկասյան նախալեռներից 3700 կմ մարտական ուղի անցնելով, մարտերով հասավ Բեռլին: 1942թ. օգոստոսին 89-րդ դիվիզիան ծանր պաշտպանական մարտեր մղեց Թերեքի ափին /Ղյուս. Կովկաս/: Սկզբում հրամանատարը փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանն էր, ապա Արտաշես Վասիլյանը: Կուրսկում մղվող մարտերից մեկում զոհվեց Ա.Վասիլյանը և նրան փոխարինեց Նվեր Սաֆարյանը /1907-1982/: Վերջինիս ղեկավարությամբ դիվիզիան մասնակցեց Թամանյան թերակղզու ազատագրմանը, որի համար ստացավ «89-րդ Թամանյան դիվիզիա» անունը:

Երրորդը՝ 390-րդ դիվիզիան էր, որը կազմվեց 1941թ. աշնանը Անդրկովկասում և 1942թ. հունվարից մտավ մարտի մեջ Կերչի թերակղզում: Ցավոք, այստեղ այն տվեց շատ ծանր կորուստներ, զոհվեց նաև հրամանատար, գնդապետ Սիմոն Ջաքյանը:

Չորրորդը՝ 409-րդ դիվիզիան էր, որը նույնպես կազմավորվել էր 1941թ. աշնանը: Այն Թերեքի մոտ մտավ մարտերի մեջ և հաղթականորեն հասավ մինչև Դանուբի ափերը: Այն հայտնի էր 409-րդ Կիրովոգրադյան

անունով:

Հինգերորդը՝ 408-րդ դիվիզիան էր, կազմավորված Երևանում 1942թ. գարնանը: 408-րդը մասնակցեց Կովկասի սևծովյան ափերի ծախս մարտերին:

Վեցերորդը՝ 261-րդ դիվիզիան էր, որը կազմավորվել էր 1942թ. ամռանը Հայաստանում և պաշտպանում էր խորհրդային սահմանը Թուրքիայի հարձակումից, որը սպասում էր նաև Մոսկվայի, ապա նաև Ստալինգրադի անկմանը Անդրկովկասի վրա հարձակվելու համար: Բացի այս 6 դիվիզիաներից կեսից ավելի հայերով էին համալրված մի շարք այլ զորամիավորումներ՝ 61, 136 /15-րդ գվարդ./, 138 /70-րդ գվարդ./, 151 և 320-րդ դիվիզիաները:

Հայ ռազմիկները իրենց փայլուն մասնակցությունն ունեցան գրեթե բոլոր վճռական ճակատամարտերին: Պատերազմի առաջին օրերին միայն Բրեստի ամրոցում կռվում էին 200 հայ ռազմիկներ: Այստեղ հերոսի մահով ընկավ հայ ռազմիկ Թավադի Բաղդասարյանը: Բրեստի շրջանում աչքի ընկավ գեներալ- մայոր Քրիստափոր Ալավերդյանի դիվիզիան:

Հայ ռազմիկներն աչքի ընկան Մոսկվայի, Լենինգրադի Մերձբալթիկայի, Կիևի, Կերչի համար մղվող մարտերում: Բալթիկայի համար մղված մարտերում հռչակվեց 1700 մարտական թռիչքներով հայտնի օդաչու Նելսոն Ստեփանյանը, որին անվանում էին «Բալթիկա» մրրկահավ»: Նա հետմահու արժանացավ ԽՍՀՄ կրկնակի հերոսի կոչման:

1943թ. 89-րդ Թամանյան դիվիզիայի մարտիկ Հունգար Ավետիսյանը սեպտեմբերի 16-ին Դոլգայա բարձունքի գրավման ժամանակ կրծքով փակեց թշնամու հրակնատը՝ փրկելով շատերի կյանքը ապահովելով ընկերների առաջխաղացումը:

Հայկական սփյուռքը իր ակտիվ մասնակցությունն ունեցավ պատերազմին: Գաղթօջախներում հանգանակված գումարով սփյուռքահայերը ստեղծեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Իրանահայերի նախաձեռնությամբ ստեղծվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը: Նրանք ոսկեգոծ թուր նվիրեցին Հովհաննես Բաղրամյանին: Պատերազմում հաղթանակի համար հսկայական գործ կատարեց նաև թիկունքում գտնվող հայությունը:

Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը տվեց 70 գեներալ և ԽՍՀՄ 103 հերոս: Այդ կոչմանը առաջինը հայերից արժանացավ Լազր Չափչախյանը:

Հայ զորահրամանատարներից ամենանշանավոր դեմքը դարձավ Հովհ. Բաղրամյանը: Նա ծնվել է դաշտային Ղարաբաղի Չարդախլու

գյուղում 1897թ.: Մասնակցել է Կիևի պաշտպանությանը, Մոսկվայի մարտերին: 1942թ. ամռանը նշանակվել է 16-րդ բանակի հրամանատար, որը վերակազմվել է 11-րդ գվարդիական բանակի: 1943թ. նոյեմբերին նա նշանակվեց Մերձբալթյան առաջին ռազմաճակատի հրամանատար: Նրա ռազմական տաղանդը փայլատակեց Բելոռուսիայի, Մերձբալթիկայի ազատագրման ժամանակ: 1944թ. արժանացավ ԽՍՀՄ հերոսի կոչման: Պատերազմից հետո Բաղրամյանը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալն էր: Նա արժանացել է կրկնակի հերոսի կոչման և Խորհրդային Միության մարշալի աստիճանի:

Խորհրդային ռազմածովային նավատորմի հայտնի հրամանատարներից էր Հովհաննես Խսակովը: Նա 1942-43թթ. Սևծովյան նավատորմի հրամանատարն էր: Աչքի է ընկել Տուլապետի համար մարտերում, որտեղ զրկվել է ոտքից: Ապաքինվելուց հետո նա ստացավ հերոսի և ծովակալի կոչում, դարձավ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի պետ:

Խորհրդային բանակի ճանաչված հայազգի հրամանատարներից էին նաև ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը /Արմենակ Խանփերյանց/, զրահատանկային զորքերի մարշալ, նույնպես Չարդախլու գյուղի բնակիչ Համազասպ Բաբաջանյանը, հրետանու գեներալ Միքայել Պարսեղովը և ուրիշներ:

Բազմաթիվ հայեր մասնակցեցին ընդհատակյա և պարտիզանական պայքարին: Թշնամու թիկունքում գործում էին Միկոյանի անվան թիվ 10 և 41, «Կարմիր աստղ», «Հաղթանակ» և պարտիզանական այլ ջոկատներ: 1942թ. գերմանացիները հայ ռազմագերիներից և ԽՍՀՄ այլ ազգերից ստեղծեցին ազգային լեգեոններ խորհրդային երկրի դեմ նրանց օգտագործելու համար: Նժդեհի, Դրոյի և այլոց նախաձեռնությամբ ստեղծվեց նաև հայկական լեգեոն, որի կազմակերպիչները գնացին ոչ թե դավաճանության, այլ փորձ կատարեցին ԽՍՀՄ-ի պարտության դեպքում կանխել հիտլերականների կողմից Հայաստանում հնարավոր կոտորածները:

Մոտ 300 հայեր իրենց կյանքը տվեցին 11 համաշխարհային պատերազմում՝ նպաստելով ֆաշիզմի ջախջախման գործին:

89. ՀԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
1945-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայրենական պատերազմի ժամանակ թև Հայաստանը չի ենթարկվել ռազմական ավերածությունների, սակայն նրա տնտեսությունը զգալիորեն տուժել էր՝ անհամամասնական զարգացման պատճառով: Անհրաժեշտ էր այժմ ռազմական ռելսերից տնտեսությունը վերադարձնել խաղաղ ժամանակների պահանջներին: Տնտեսության վերականգնման խնդիրը քննարկվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1945թ. հուլիսին կայացած նստաշրջանում, որտեղ հաստատվեց ժողտնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանը /1946-1950թթ./: Հնգամյակում խնդիր դրվեց մինչև 1950թ. վերականգնել ու կրկնապատկել արդյունաբերական համախառն արտադրանքը: Մինչև 1947թ. հիմնականում ավարտվեց տնտեսության վերականգնումը և համապատասխանեցումը խաղաղ պայմաններին: Այդ գործում իրենց ավանդն ունեցան ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Գր. Հարությունյանը /1937-53/ և Ս. Թովմասյանը /1953-1960թթ./:

Հետպատերազմյան տարիներին հատուկ ուշադրություն հատկացվեց հանրապետության էներգետիկ բազայի ընդլայնմանը: 1949թ. շահագործվեց Սևանի ստորգետնյա հեկը, որն իր տեսակի մեջ նմանը չուներ աշխարհում: Սկսվեց Սևանի կասկադի ամենամեծ հեկի՝ Գյումուշի շինարարությունը: Էներգետիկ նոր աղբյուրների հանդես գալը նպաստեց արդյունաբերության զարգացմանը: Միայն 4-րդ հնգամյակում շարք մտան ավելի քան 50 արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում՝ Քանաքեռի ալյումինի, ավտոդողերի, կաբելի, ժամացույցի, Սպիտակի շաքարի և այլն: Սակայն կային զարգացման լուրջ խոչընդոտներ՝ վարչահրամայական համակարգի պատճառով: Բացակայում էր բանվորների նյութական շահագրգռվածությունը:

Տնտեսության մեջ վարչահրամայական համակարգի որոշ դեմոկրատացում նկատվեց 1950-ական թթ. կեսերին՝ Ի. Ստալինի մահից հետո: ԽՍՀՄ կառավարության որոշմամբ /1955թ./ հանրապետությունների թույլատրվեց ինքնուրույն տնօրինելու հատկացված ֆինանսական միջոցները: Դրան նպաստեց տնտեսության կառավարման նոր մարմինների՝ ժողտնտխորհների ստեղծումը:

1950-ական թթ. շարունակվեց Հայաստանի արդյունաբերության քիմիացման կուրսը: Նորաստեղծ քիմիական ձեռնարկությունները ավելի վատթարացրին հանրապետության էկոլոգիական վիճակը, ստիպեցին նոր

էլեկտրակայաններ հիմնել և անխնա օգտագործել Սևանի ջուրը: Իջեցվեց լճի մակարդակը՝ Հրազդան գետի գետաբերանը ընդլայնելու ճանապարհով՝ այդ կոպիտ սխալը պատճառաբանելով հեկերը աշխատեցնելու և ոռոգման ցանցը ընդլայնելու հանգամանքով: 1957թ. շահագործման հանձնվեց Գյումուշի հեկը:

1960-ական թթ. սկզբին, զգալով թույլ տրված կոպիտ սխալը, ԽՍՀՄ կառավարությունը որոշում կայացրեց Արփա գետի ջրերը թունելով /49 կմ/ հասցնել Սևան և կանխել մակարդակի հետագա անկումը և փրկել լիճը ճահճացումից: 1960-66թթ. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը՝ հայտնի գործիչ Յակով Զարոբյանն էր:

1960-ական թթ. ակնհայտ դարձավ, որ միայն արտադրանքի ծավալը ընդարձակելու եղանակով զարգացող խորհրդային տնտեսությունը աստիճանաբար իրեն սպառում է և առաջընթաց իրականում չի նկատվում: Պատահական չէ, որ տնտեսական պլանները հաճախ կատարվում էին միայն թղթի վրա՝ կեղծումների, հավելագրումների հաշվին: Այդ խոչընդոտները հաղթահարելու նպատակով ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ս. Խրուշչովը /որի ջանքերով մերկացվեց ստալինյան անհատի պաշտամունքը 1956թ. ԽՄԿԿ 20-րդ համագումարում և երկիրը որոշակիորեն դեմոկրատացվեց/ և 1964թ. նրան փոխարինած Լ. Բրեժնևը փորձեցին իրականացնել բարեփոխումներ: Մտցվեց տնտեսաշվարկ, որի պայմաններում ավելացվում էր ձեռնարկությունների ինքնուրույնությունը, ազատ գործելու հնարավորությունները: Սակայն ձեռնարկված քայլերը, խորհրդային ընդհանուր համակարգի պահպանման պայմաններում, արդյունք չտվեցին: 1960-ական թթ. վերջից նկատվեցին տնտեսության լճացման նշաններ: 1966-1974թթ. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը Անտոն Քոչինյանն էր, 1974-1988թթ.՝ Կարեն Դեմիրճյանը:

1960-70-ական թթ., քանի որ Հայաստանում արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացված էր Երևանում, Կիրովականում և Լեճիճականում, մասնաճյուղեր կառուցվեցին շրջկենտրոններում՝ նպատակ ունենալով թեթևացնել մեծ քաղաքների ծանրաբեռնվածությունը: 1960-65թթ. Հայաստանում կառուցվեց 300-ից ավելի ձեռնարկություն: 1969թ. սկսվեց հայկական ատոմակայանի շինարարությունը: Առաջին էներգոբլոկը շահագործման հանձնվեց 1976թ., երկրորդը՝ 1979թ.: Խիտ բնակչություն ունեցող Արարատյան դաշտում, սեյսմիկ գոտում նրա կառուցումը հետագայում զնահատվեց նույնպես սխալ: Ուշագրավ է, որ ատոմակայանի արտադրած էներգիայի 40 %-ը

պաշտամունքի և նրա կազմակերպած ու իրականացրած չարագործությունների ու բռնությունների քննադատությունը հնարավոր դարձավ միայն նրա մահից հետո: Այդ քննադատությունը ծավալվեց ԽՍՀՄ 20-րդ համագումարում 1956թ.: Աճեհատի պաշտամունքի քննադատությամբ առանձին զեկուցումով հանդես եկավ ԽՍՀՄ Կենտկոմի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովը, որը տվյալ հարցում հանդես բերեց բավական նախաձեռնություն ու քաջություն:

1964թ. հեղաշրջման միջոցով ԽՍՀՄ-ում հաստատվեց Բրեժնևի պահպանողական տիրապետությունը:

1960-1980-ական թվականներին ևս ԽՍՀՄ-ում պահպանվում էր ուռճացած վարչաիրամայական համակարգը: Հայաստանի համար դա ավելի էր բնորոշ, ընդգծված: Օրինակ, Հայաստանում ավելի շատ նախարարություններ ու գերատեսչություններ կային, քան Ռուսաստանում:

Հանրապետության ղեկավար գործիչների մեջ կային նաև ազնիվ, ժողովրդի և ազգային շահերին նվիրված գործիչներ: Այդպիսի ազնիվ գործիչներից էին ԳԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Ջարոբյանը, որն այդ պաշտոնը վարեց 1960-1966թթ.: Նրա անմիջական նախաձեռնությամբ սկսվեց 1915թ. հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի շինարարությունը Երևանում: Մինչդեռ միութենական ղեկավարությանը չէր կարող դուր գալ ազգային նման նկարագիր ունեցող հանրապետական ղեկավարը, և նա ազատվեց պաշտոնից: Հայաստանում և ամբողջ ԽՍՀՄ-ում շարունակվում էր Կոմունիստական կուսակցության միահեծան տիրապետությունը: Կոմունիստական կուսակցությունը քաղաքական կազմակերպությունից դարձել էր քաղաքական-տնտեսական կառավարող մարմին, իսկ նրա վերնախավի ձեռքում կենտրոնացել էր հանրապետության ողջ իշխանությունը:

Ազգային գաղթոնքի նախադրյալները. Օգտվելով Խրուշչովի ղեկավարման ժամանակ ստեղծված հարաբերական ազատությունից հայ ժողովուրդը փորձեց արտահայտել իր ազգային իղծերը: 1965թ. ապրիլի 24-ին հայոց մեծ եղեռնի 50-ամյակի կապակցությամբ Երևանում կայացավ համազգային ցույց: Այն ԽՍՀՄ-ի պատմության մեջ առաջին զանգվածային ելույթն էր: Ցուցարարները ղեկավարությունից պահանջում էին պաշտոնապես դատապարտել հայոց ցեղասպանությունը, հասնել նրա միջազգային ճանաչմանը, պաշտպանել հայ ժողովրդի պատմական իրավունքները: Ցուցարարների ներկայացուցիչները փորձեցին մուտք

գործել Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենք, ուր առաջին անգամ պետական մակարդակով նշվում էր մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը: Սակայն ուժային մարմինների միջոցով ցույցը ցրվեց, իսկ կազմակերպիչները պատժվեցին:

Հետագայում ևս այդ հարցը, Արցախի հարցի հետ մեկտեղ, բազմիցս բարձրացվել է հանրապետության լայն հասարակայնության կողմից: 1960-ական թվականներին Հայաստանում ստեղծվեցին գաղտնի կազմակերպություններ, ինչպես Ազգային միացյալ կուսակցությունը /ԱՄԿ/, Հայ հայրենասերների միությունը /ՀՀՄ/, որոնք հանդես գալով տիրապետող իրավակարգի դեմ, նպատակ ունեին հասնել Հայ դատի ու պահանջատիրության միջազգային ճանաչմանը, Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորմանը, ժողովրդավարության հաստատմանը: 1967թ. Երևանում, Ծիծեռնակաբերդ բլրի վրա, ավարտվեց 1915թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի կառուցումը: 1968թ. նշվեց 1918թ. մայիսյան հերոսամարտի 50-ամյակը: Ի նշանավորումն այդ տարելիցի, Սարդարապատում կառուցվեց հուշարձան-համալիր:

Այսպիսով, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար ստեղծված դժվարությունների կողքին հասարակական-քաղաքական կյանքում արմատավորվում էին լճացման երևույթներ:

91. ՍՓՅՈՒՆԸԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ

Ձանգվածային հայրենադարձությունը 1946-1948թթ.. Հայրենական պատերազմում ԽՍՀՄ-ի տարած հաղթանակը մեծապես բարձրացրեց նրա հեղինակությունը սփյուռքահայության լայն շրջաններում: Աճեց նաև Խորհրդային Հայաստանի վարկը: Դա տեղի ունեցավ նաև այն բանի շնորհիվ, որ մտայնություն էր ստեղծվել հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու մասին: Հայկական հողերը վերադարձնելու հարցը բարձրացվեց ԽՍՀՄ ղեկավարների կողմից 1945թ. Պոտսդամի կոնֆերանսում, դաշնակից երկրների ղեկավարների հետ ունեցած գրույցների ժամանակ: Սակայն հայ ժողովուրդի շահերը այս անգամ էլ հակասության մեջ էին մեծ տերությունների քաղաքական շահերի հետ:

Միաժամանակ ակտիվ գործունեություն ծավալեցին սփյուռքահայ շրջանները: Բազմաթիվ դիմումներ տրվեցին մեծ տերություններին, Միավորված ազգերի կազմակերպությանը /ՄԱԿ/, պահանջով, որ

սպառում էր Ադրբեջանը, 35 %-ը՝ Վրաստանը, իսկ միայն 25 %-ը՝ Հայաստանը: Սրան գուզահեռ շարունակվում էր «Փոքր հանրապետություն և մեծ քիմիա» սխալ կարգախոսի իրականացումը:

1980-ական թթ. արդեն Հայաստանում գործում էին 600 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում էին միութենական նշանակության այնպիսի հզոր գործարաններ, ինչպիսիք էին «Նաիրիտը», Ալավերդու պղնձածուլական գործարանը և այլն: Սակայն այս ամենի հետ արտադրության համախառն արտադրանքը կրճատվում էր, արտադրությունը լճանում, ճգնաժամը խորանում:

Գյուղատնտեսությունը հետպատերազմյան տարիներին մնում էր ցածր մակարդակի վրա: Կոլտնտեսությունները, որոնցում անտեսված էր նյութական շահագրգռվածությունը, չէին կարողանում ապահովել բնակչության սննդամթերքի պահանջները: Գյուղի մեքենայացման նպատակով 50-ական թթ. մտցվեցին մեքենատրակտորային կայանները՝ ՄՏԿ-ները: Սակայն ձեռքի աշխատանքը շարունակեց նկատելի դեր ունենալ գյուղատնտեսության մեջ: 1946-1950թթ. քայլեր կատարվեցին գյուղի էլեկտրականացման ուղղությամբ: 1950թ. արդեն գործում էին 50-ից ավելի գյուղական հէկեր, որոնց շնորհիվ գյուղերը էլեկտրիֆիկացվեցին 66 %-ով: Ընդարձակվեց ոռոգման ցանցը: Գյուղին մեծ վնաս հասցրեց ԽՍՀՄ կառավարության այն սխալ որոշումը /1950/, ըստ որի Հայաստանը պետք է հացով ապահովեր իր պահանջները: 50-ական թթ. բազմաթիվ կոլտնտեսության ցանքատարածություններ վերածվեցին հացահատիկի դաշտերի և արդյունքում ծագեցին նոր դժվարություններ: Կրճատվեցին այգիները, խոտհարքները, ընկավ բերքատվությունը: 1953թ. ԽՄԿԿ կենտկոմի սեպտեմբերյան պլենումի որոշմամբ բարձրացվեցին գյուղմթերքների գները՝ արտադրությունը խթանելու նպատակով: Այդ միջոցառումը տվեց դրական արդյունք, սակայն ժամանակավորապես: 1960-ական թթ. ճգնաժամն ընդգրկեց գյուղատնտեսությունը: Այն ավելի խորացավ 70-80-ական թթ.: Ծագեց պարենային ճգնաժամը, որը հաղթահարելու բրեժնևյան ղեկավարության ջանքերն անցան ապարդյուն,

Ընդհանուր ճգնաժամի պատճառը խորհրդային համակարգի մեջ էր, որի վերափոխմանը լծվեց 1985թ. ապրիլից Մ. Գորբաչովը՝ իր վերակառուցման քաղաքականությամբ:

90. ՀԱՍՄՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂՈՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1945-1985ԹԹ.

Կոմունիստական կուսակցության ամենատիրության հետագա ամրապնդման ուղղությամբ 1940-ական թվականների վերջերին իրականացվեցին մի շարք որոշումներ գաղափարական հարցերի գծով, անցկացվեցին բանավեճեր գիտության տարբեր բնագավառների հիմնահարցերի շուրջը: 1947-1951թթ. այդպիսի բանավեճեր տեղի ունեցան փիլիսոփայության, կենսաբանության, ֆիզիոլոգիայի, լեզվաբանության, քաղաքատնտեսության հարցերի վերաբերյալ: Բանավեճերն առիթ դարձան մեծանուն, բայց գաղափարական տեսակետից կուսակցության համար անցանկալի մասնագետների հետ հաշվեհարդար տեսնելու համար:

Հայաստանում ևս անհարկի վարկաբեկվեցին ու քննադատվեցին շատ գիտնականներ: Նրանք մեղադրվեցին այսպես կոչված «միասնական հոսանքի»՝ օտարամոլություն, ֆորմալիզմի և այլ մեղքերի մեջ: Ամեն ինչ ավելի էր ենթարկվում կուսակցության խոսքին ու կոմունիստական գաղափարախոսությանը:

1949թ. զանգվածային աքսորը. 1949թ. ԽՍՀՄ կառավարության որոշումով Հայաստանում և մյուս հանրապետություններում իրականացվեցին նոր զանգվածային բռնություններ: Հունիս ամսին Ստալինի և Բերիայի ցուցումով Հայաստանի բնակչության մի խոշոր զանգված, առանց դատ ու դատաստանի աքսորվեց հեռավոր Ալթայի երկրամաս: Պետական անվտանգության մարմինները նախօրոք պատրաստել էին աքսորի ենթակա ընտանիքների՝ «անբարեհույս տարրերի» ցուցակները: Հունիսի 11-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմը հրավիրեց զաղտնի խորհրդակցություն, որով տեղյակ պահվեց, թե ինչպես պետք է կենսագործել որոշումը՝ ըստ պատրաստված ցուցակների:

Աքսորի որոշումը կատարվեց հունիսի 14-ին, ամենասեղմ ժամկետում, խիստ գաղտնիության պայմաններում: Աքսորվեց շուրջ 2700 ընտանիք կամ մոտավորապես 12 հազար մարդ /չհաշված այլ հանրապետություններից աքսորված հայերին/:

1953թ. Ստալինի մահից և Բերիային մերկացնելուց ու ձերբակալելուց /գնդակահարելուց/ հետո վերանայվեցին նաև 1949թ. աքսորվածների գործերը: Նրանք բոլորը արդարացվեցին ու հնարավորություն ստացան վերադառնալ հայրենիք.

Անհատի պաշտամունքի քննադատությունը. Ստալինի

վերականգվի պատմական արդարությունը, հայերը վերադառնան իրենց պատմական հայրենիքը:

Այսպիսի իրադրության մեջ զարգացավ սփյուռքահայության հայրենադարձության միտքը և շարժումը: Հենվելով դրա վրա, և հաշվի առնելով Հայաստանի կառավարության միջնորդությունը, ԽՍՀՄ-ի կառավարությունը 1945թ. նոյեմբերին որոշում ընդունեց հայերի ներգաղթ կազմակերպելու մասին: Հայաստանի կառավարությանը կից ստեղծվեց Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե: Սփյուռքում կազմակերպվեցին հայրենադարձությանը նպաստող հանձնաժողովներ: Հայրենադարձների առաջին քարավանը դուրս եկավ Բեյրութի նավահանգստից /Լիբանան/ 1946թ. հունիսի 23-ին՝ «Տրանսիլվանիա» շոգենավով և 4 օր անց հասավ Բաթում, որտեղից գնացքը մարդկանց փոխադրեց Հայաստան: Նույն թվականին Լիբանանից, Իրանից, Սիրիայից և Հունաստանից և այլ երկրներից Հայաստան վերադարձան շուրջ 51 հազար հայեր: Չանգվածային հայրենադարձությունը շարունակվեց նաև հաջորդ երկու տարիներին (1947թ.՝ 25 հազար, իսկ 1948թ.՝ 10 հազար հայրենադարձ): Այսպիսով 1946-1948թթ. սփյուռքից վերադարձողների ընդհանուր թիվը կազմեց շուրջ 90 հազար մարդ: Նրանք Հայաստան եկան աշխարհի 12 երկրներից: Հետագայում հայրենադարձությունը շարունակվում էր, սակայն ավելի նվազ չափերով: 1950-ական թվականներին Հայաստան ներգաղթեց 4 հազար, 1960-1970-ական թվականներին՝ ևս 32 հազար մարդ: Հետագա տարիներին հայրենադարձությունը ոչ միայն չչարունակվեց, այլև սկսվեց հակառակ գործընթացը՝ տարբեր պատճառներով, որոնց թվում հիմնականը Հայաստանում կենսամակարդակի անկումն էր: Որոշ թվով նախկին հայրենադարձներ ու նրանց հարազատներ հեռացան Հայաստանից: Այս երեույթն ուժեղացավ հատկապես 1980-ական թվականների վերջին և 1990-ական թվականների սկզբին:

Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքը. 1950-1980-ական թվականներին սփյուռքում տեղի ունեցան նշանակալի փոփոխություններ, որոնք պայմանավորված էին միջազգային քաղաքական իրադարձություններով և բուն սփյուռքի սերնդափոխությամբ: 1950-ական թվականներից տասնամյակներ շարունակ տեղաշարժեր էին կատարվում Արևելքի երկրներից, որտեղ ստեղծվել էին անկայուն քաղաքական պայմաններ:

1952թ. Եգիպտոսում կատարվեց հեղափոխություն, Լիբանանում երկար ժամանակ քաղաքացիական կռիվներ էին: Կիպրոսի մի մասը

զավթեց Թուրքիան, Իրանում եղավ իսլամական հեղաշրջում, 1980-1988թթ. ընթացավ Իրաք-իրանյան պատերազմը: Ուստի զգալի թվով հայեր արտագաղթեցին Եգիպտոսից, Լիբանանից, Սիրիայից, Իրանից: Արտագաղթողները մեկնեցին ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Ավստրալիա, Արևմտյան Գերմանիա, Անգլիա, ինչպես նաև Շվեդիա, Ավստրիա, Բելգիա և այլ երկրներ: Սովարացան այնտեղի համայնքները կամ ստեղծվեցին նորերը: Խոշոր համայնք դարձավ ԱՄՆ-ի գաղութը՝ մինչև 800 հազ. մարդ, որից 250 հազարը Լոս-Անջելոսում: Սովարացան Անգլիայի և Ֆրանսիայի հայ համայնքները: Չնայած արտագաղթին, այնուամենայնիվ Լիբանանի հայ գաղութը պահպանեց սփյուռքի կենտրոնի դերը:

Նոր մոտեցում մշակվեց նաև Հայկական հարցի նկատմամբ, ելնելով նրանից, որ սփյուռքն էր շարունակում մնալ Հայ դատի /պահանջատիրության/ համար պայքարող միակ ուժը:

1965թ. ամբողջ սփյուռքում լայնորեն նշվեց Մեծ եղեռնի 50-ամյակը: Բազմաթիվ ուղերձներ ներկայացվեցին պետություններին ու միջազգային կազմակերպություններին՝ նպատակ ունենալով ուշադրություն հրավիրել Հայկական հարցի վրա, պարտադրել Թուրքիային ճանաչել հայերի ցեղասպանությունը: Մեծ աշխատանք կատարեցին Հայ դատի հանձնախմբերը: Այդ ամենը ունեցավ որոշ դրական արդյունք: Ուրուզվայի և Կիպրոսի կառավարությունները պաշտոնապես հայտարարեցին ՄԱԿ-ում Հայկական հարցը քննարկելու անհրաժեշտության մասին: Ֆրանսիան դատապարտեց հայերի ցեղասպանությունը, իսկ որոշ միջազգային կազմակերպություններ ընդունեցին հայկական ցեղասպանության փաստը: 1987թ. Եվրոխորհրդարանը դատապարտեց հայերի ցեղասպանությունը՝ Թուրքիային կոչ անելով ճանաչել այն: 1995թ. հայոց ցեղասպանությունը ընդունեց և դատապարտեց Ռուսաստանի բարձրագույն մարմինը՝ Պետական դուման:

1964թ. Հայաստանում ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե: Սփյուռքի դպրոցների համար 1962 թվականից տպագրվում էին դասագրքեր:

1958թ. հանրապետության բուհերն ընդունվեցին առաջին սփյուռքահայերը: 1960-1980-ական թվականներին Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտեցին ավելի քան հազար սփյուռքահայեր: 1992թ. հանրապետության բուհերում սովորում էր 1200 սփյուռքահայ ուսանող:

Հայաստանի գիտական հիմնարկների հետ մշտական կապեր էին պահպանում սփյուռքահայ շատ գիտնականներ: Նրանցից առավել ակնազարկներն ընտրվեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամներ: Ընդլայնվեցին գրական կապերը: Հայաստանում հրատարակվեցին Կարապետ Սիտալի, Շահան Շահնուրի, Վահե Հայկի, Լևոն Մեսրոպի և սփյուռքի այլ գրողների գրքերը: Բազմիցս Հայաստան այցելեց ամերիկացի հայտնի գրող Վիլյամ Սարոյանը: Սփյուռք այցելեցին Հայաստանի բազմաթիվ ստեղծագործական կոլեկտիվներ: Մշակութային խմբերի ելույթները ուժ ու եռանդ էին հաղորդում սփյուռքահայ զանգվածներին: Սփյուռքահայության համախմբման, մայր հայրենիքի հետ նրա կապերի ամրապնդման գործում հայրենամարտի աշխատանք էր կատարում հայ առաքելական եկեղեցին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի գլխավորությամբ: Հայրենիք տեղափոխվեցին հայտնի դիրիժորներ Օհան Դուրյանը և Լորիս Ճգնավորյանը:

Իր հերթին սփյուռքահայությունը մեծ օգնություն ցույց տվեց մայր հայրենիքին 1988թ. աղետաբեր երկրաշարժից հետո: Նրա կազմակերպությունների ու առանձին անհատների միջոցներով աղետի գոտում կառուցվեցին հիվանդանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ, ուղարկվեց սննդամթերք, դեղորայք, բժշկական սարքավորում: Անկախ պետության Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո հայրենիք-սփյուռք կապերն ավելի սերտացան:

92. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1945-1980-ԱՎԱՆ ԹԹ.:

Հետպատերազմյան տարիներին ձեռք բերվեցին լուրջ հաջողություններ գիտության, արվեստի, գրականության ու կրթության ասպարեզներում:

1945-1980-ական թվականներին որոշակի տեղաշարժեր կատարվեցին հանրապետության ժողովրդական կրթության համակարգում, որոնք հիմնականում արտահայտվեցին դպրոցական ցանցի շոշափելի ընդլայնմամբ: Եթե 1945թ. Հայաստանում կար տարբեր տիպի 1173 դպրոց՝ 250 հազար սովորողներով, ապա 1980թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմեցին 1500 դպրոց՝ 600 հազար սովորողներով: Աստիճանաբար անցում կատարվեց դեպի պարտադիր միջնակարգ կրթություն:

Սակայն Հայաստանի դպրոցական շենքերի մեծ մասը իր

կառուցման որակով, ինչպես նաև լաբորատորիաների ու կաբինետների տեխնիկական հագեցվածության մակարդակով չէր բավարարում ժամանակի պահանջներին և զգալիորեն զիջում էր միութենական մի շարք հանրապետություններին:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում զարգացավ նաև հանրապետության բարձրագույն կրթության համակարգը: Նոր բուհեր կան նրանց մասնաճյուղեր ստեղծվեցին Լենինականում, Կիրովականում /Վանաձոր/, իսկ հետագայում նաև Ստեփանավանում և Գորիսում: 1980թ. հանրապետության 14 բուհերում սովորում էր 50 հազար ուսանող՝ 100 մասնագիտությունների գծով: Ընդլայնվեց նաև հանրապետության տեխնիկումների ցանցը: Դրանց թիվն հասավ 70-ի:

Բուհական կյանքը խիստ քաղաքականացված էր: Մեծ ուշադրություն էր դարձվում գաղափարախոսությանը: Բոլոր բուհերի ուսուցման ծրագրերում, անկախ դրանց մասնագիտական ուղղվածությունից, պարտադիր առարկաներ էին ԽՄԿԿ պատմությունը, մարքս-լենինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմը, աթեիզմը և այլն: Մինչդեռ, հայոց պատմությունը և ազգային այլ առարկաներ դասավանդվում էին միայն հասարակագիտական բաժիններում՝ սահմանափակ ժամաքանակով:

Գիտություն. Պատերազմի տարիներին գիտական կյանքի կարևորագույն իրադարձություններից էր 1943թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Նրա հիմնադիրներից էին խոշոր գիտնականներ ֆիզիոլոգ Լևոն Օրբելին, ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, լեզվաբաններ Հր.Աճառյանը, Գր.Ղափանցյանը, պատմաբան Հ.Մանանդյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, բանաստեղծ Ավ.Իսահակյանը և ուրիշներ: Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց նշանավոր արևելագետ Հովսեփ Օրբելին, որին 1947թ. փոխարինեց աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը:

Բյուրականի աստղադիտարանը, որը հիմնադրվեց պատերազմի ավարտից անմիջապես հետո, ակադեմիկոս Վ.Համբարձումյանի գլխավորությամբ, շուտով դարձավ աշխարհում աստղաֆիզիկական գիտահետազոտական խոշոր կենտրոններից մեկը:

Ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանների ջանքերով 1957թ. երևանում կառուցվեց և գործարկվեց էլեկտրոնային օդակամե արագացուցիչը:

Հայկական մաթեմատիկական դպրոցի հիմնադիրը դարձավ ակադեմիկոս Ա.Շահինյանը, որին աշակերտեցին Մ.Զրբաշյանը և Ս.Մերգելյանը: Հետպատերազմյան տարիներին իրենց բեղուն գործունեությունն էին շարունակում ավագ սերնդի անվանի գիտնական, հայագետ-լեզվաբաններ Հ.Աճառյանը, Ս.Մալխասյանը, Գ.Ղափանցյանը, Հ.Մանանդյանը, ավելի ուշ՝ պատմաբաններ Աշ.Հովհաննիսյանը, Աբ.Հովհաննիսյանը, Ս.Երեմյանը, Մ.Ներսիսյանը, հնագետներ Բ.Պիտոռովսկին, Բ.Առաքելյանը, լեզվաբաններ Գ.Ջահուկյանը, Է.Աղայանը և ուրիշներ:

1960-80-ական թվականներին Ակադեմիայի պատմության ինստիտուտը հրատարակեց «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը: Այն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի:

Մեծ աշխատանք տարվեց հայ գրականության դասականների երկերի հրատարակման ուղղությամբ: Մշակութային մեծ իրադարձություն էր Հայկական հանրագիտարանի հրատարակումը՝ 12 հատորով /1974-1988թթ./:

1980-ական թվականներին հանրապետությունում գործում էին ավելի քան 150 գիտական հիմնարկներ՝ 20 հազար գիտաշխատողներով:

Գրականություն: Հետպատերազմյան առաջին տասնամյակում գրական գործեր ստեղծեցին արձակագիրներ Հրաչյա Քոչարը, Սերո Խանգաղյանը, բանաստեղծներ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը:

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո՝ 1950-ական թթ. կեսից նոր շրջան սկսվեց հայ գրականության բնագավառում: Տևական ընդմիջումից հետո հայ գրականության մեջ իրենց արժանի տեղը վերագրեցին ականավոր գրողներ Բաֆֆին, Ռափայել Պատկանյանը և ուրիշներ, որոնց գործերի հրատարակումն ու նույնիսկ ընթերցումը մինչ այդ արգելված էր:

Ավագ սերնդի գրողներ Ավ.Իսահակյանի, Դ.Դեմիրճյանի, Գ.Սարյանի, Ստ.Զորյանի, Ն.Ջարյանի, Գ.Մահարու կողքին 1950-1960-ական թթ. բեղմնավոր աշխատանք ծավալեցին բանաստեղծներ Հովհ.Շիրազը, Պ.Սևակը, Ս.Կապուտիկյանը, Գ.Էմինը, արձակագիրներ Վ.Անանյանը, Մ.Սարգսյանը և ուրիշներ, 1970-1980-ական թթ. նոր սերնդի բանաստեղծներ Ռազմիկ Դավոյանը, Լյուդվիգ Դուրյանը, արձակագիրներ Հրանտ Մաթևոսյանը, Մուշեղ Գալշոյանը, Վարդգես Պետրոսյանը, Պերժ Զեյթունցյանը և այլոք: Հովհ.Շիրազը և Պարույր Սևակը հայ պոեզիայի մեջ մնացին եղեգնի թեմային նվիրված

«Դանթեական» և «Անլոբելի զանգակատուն» պոեմներով:

1950-1980-ական թվականներին հայ երաժշտական արվեստը նշանավորվեց օպերային բարձրարժեք նոր գործերով: Իր արգասավոր ստեղծագործական գործունեությունն էր շարունակում աշխարհի խոշորագույն երգահաններից մեկը՝ Արամ Խաչատրյանը: 1950-ական թվականներին նա ստեղծեց համաշխարհային երաժշտության գլուխգործոցներից մեկը՝ «Սպարտակ» բալետը:

1950-ական թվականների երկրորդ կեսից հանդես եկան երիտասարդ տաղանդավոր երգահաններ Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդուարդ Միրզոյանը, Էդգար Հովհաննիսյանը, Կոստանդին Օրբելյանը և ուրիշներ:

Հանրապետության սահմաններից դուրս մեծ ճանաչում գտան նշանավոր երգիչներ Գոհար Գասպարյանը, Լուսինե Զաքարյանը, դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, խմբավարներ Օհան Դուրյանը, Հովհաննես Չեքիջյանը, ջութակահար Ժան Տեր-Մերկերյանը:

1950-60-ական թվականներին իր բեղմնավոր աշխատանքն էր շարունակում հանճարեղ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը:

Այդ ժամանակաշրջանում գեղանկարչության երկնակամարում աչքի ընկան վարպետներ Գրիգոր Խանջյանը, Մինաս Ավետիսյանը, Հակոբ Հակոբյանը: Ճանաչված քանդակագործներ էին Նիկողայոս Նիկողոսյանը, Արա Հարությունյանը, Լևոն Թոքմաշյանը:

Առաջընթաց ապրեց նաև հայ թատերական արվեստը: 1950-ական թվականներին հայ բեմի ականավոր վարպետներ Վահրամ Փափագյանը, Հրաչյա Ներսիսյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի կողքին, Գաբրիել Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում հանդես եկան նոր սերնդի ներկայացուցիչներ՝ Բաբկեն Ներսիսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Վարդուհի Վարդերեսյանը, հորեն Աբրահամյանը, Սոս Սարգսյանը, Միեր Մկրտչյանը և ուրիշներ: Վերջիններս, հիանալի դերուսույց Վարդան Աճեմյանի զխավորությամբ զգալի ներդրում ունեցան հայ թատրոնի զարգացման գործում:

1963թ. երևանում հիմնադրվեց դրամատիկական նոր թատրոն, որի գեղարվեստական ղեկավարն էր հանրաճանաչ բեմադրիչ Հրաչյա Ղափանյանը:

Հայկիսոն թողարկեց Ֆ.Դովլաթյանի հայտնի «Բարև, ես եմ», Հ.Մալյանի «Եռանկյունի», «Նահապետը», «Ձորի Միրոն», Ալբերտ Մկրտչյանի «Մեր մանկության տանգոն» և այլ ֆիլմեր:

Հետպատերազմյան տարիների հայ կինոարվեստի նշանակալից

նվաճումներից էր հանճարեղ կինոբեմադրիչ Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» նկարը, որը խոշոր երևույթ էր նաև համաշխարհային կինոյի բնագավառում:

Հետպատերազմյան տարիներին վերելք ապրեց հայ ճարտարապետությունը: 1960-1980-ական թվականներին Հայաստանում կառուցվեցին մի շարք ճարտարապետական հուշարձաններ, այդ թվում՝ Սարդարապատի հերոսամարտի մասնակիցների հիշատակին նվիրված համալիրը, 1915թ. եղեռնի զոհերի հուշարձանը, «Հրազդան» մարզադաշտը, Երիտասարդության պալատը, «Զվարթնոց» օդանավակայանը, Մարզահամերգային համալիրը, մետրոպոլիտենը և այլն: Հայ ճարտարապետության խոշոր դեմքերից էր Ռաֆայել Իսրայելյանը:

Այսպիսով, հետպատերազմյան ժամանակաշրջանում հայ մշակույթը զգալի հաջողությունների հասավ: Սակայն դրանք ավելի ակնառու կարող էին լինել, եթե մշակույթի զարգացմանը չխոչընդոտեր տիրապետող վարչահրամայական համակարգը:

93. ԱՐՅԱԽՅԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

1985թ. ԽՍԿԿ կենտկոմի ապրիլյան պլենումում Միխայիլ Գորբաչովի նախաձեռնությամբ հռչակած «վերակառուցման» կուրսը պայմաններ ստեղծեց խորհրդային երկրի ժողովրդավարացման համար: Նոր ժողովրդավարական պայմանների ստեղծումը խթանեց ազգային-ազատագրական շարժումների ծավալումը ԽՍՀՄ-ում, որն էլ ի վերջո մինչև 1991թ. դարձավ խորհրդային կայսրության փլուզման գլխավոր պատճառներից մեկը:

Լեռնային Ղարաբաղի հայությունը, ոգեշնչված «վերակառուցման» քաղաքականությամբ, բարձրացրեց դեռևս 1921 թվից ծխացող «ղարաբաղյան հիմնահարցը»՝ ձգտելով ուղղել թույլ տված պատմական այդ անարդարությունը և վերամիավորվել Հայաստանի հետ: Մինչև 1980-ական թթ. ադրբեջանական իշխանությունների վարած հակահայկական քաղաքականության հետևանքով ԼՂԻՄ-ում զգալիորեն կրճատվել էր հայ բնակչության թիվը՝ 95%-ից նվազելով մինչև 75%-ի: Ադրբեջանի վարչական մյուս շրջանների համեմատությամբ Արցախը եեթարկվում էր նաև տնտեսական խտրականության: Շինարարական աշխատանքները տարվում էին հիմնականում ադրբեջանաբնակ բնակավայրերում:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայաստանին միացնելու խնդրանքով: Այդ պատմական որոշմամբ մկսվեց Արցախյան ազատագրական շարժումը:

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում սկսվեցին զանգվածային ցույցեր ի պաշտպանություն ԼՂԻՄ մարզային խորհրդի այդ որոշման դրական լուծման: Երևանի Թատերական /Ազատության/ հրապարակում հրավիրված հանրահավաքների կազմակերպիչներն էին տնտեսագետ Իգոր Մուրադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Վաչե Սարուխանյանը և ուրիշներ: Հադյուր հազարանոց այդ միտինգները ԽՍՀՄ-ի պատմության մեջ աննախադեպ երևույթներ էին: Փետրվարի 21-ին ԽՍԿԿ կենտկոմի քաղբյուրոն բացասական դիրք բռնեց շարժման նկատմամբ՝ այն որակելով «ծայրահեղական»:

1988թ. փետրվարի 26-ին հանդարտության և զսպվածության դիմումով հայ և ադրբեջանական ժողովուրդներին դիմեց ԽՍԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը: Եթե հայերը այդ դիմումն ընդունեցին պահի լուրջ գիտակցությամբ և դադարեցրին ցույցերն ու գործադուլները, ապա Ադրբեջանի Սուեզայիթ քաղաքում գազազած ամբոխը փետրվարի վերջին կազմակերպեց հայերի կոտորածներ, բռնաբարություններ, բնակարանների թալան: Պաշտոնական տվյալներով սպանվեց 26 հայ, կողոպտվեց 200 բնակարան: Վայրենացած ու մոլեռանդ ադրբեջանցի երիտասարդները հրկիզեցին Մելքունյանների ընտանիքի բոլոր անդամներին: Ինչպես պարզվեց, այս վայրագությունների կազմակերպման մեջ մասնակցություն ունեին ադրբեջանական իշխանությունները: Նախապես անջատվել էին հայերի բնակարանների հեռախոսները, գործարաններում պատրաստվել սուր ծայրերով երկաթյա իրեր, կազմվել հայերի տների ցուցակներ և այլն: Մոլեռանդ ամբոխը գործում էր մուսուլմանական և թուրքական դրոշների ներքո: Այս ոճրագործության մեջ մեղքի խոշոր բաժին ունեին նաև կենտրոնական իշխանությունները, որոնք միջոցներ ձեռք չառան հայերի ջարդերը կանխելու համար:

Սուեզայիթյան եղեռնը չընկճեց հայ ժողովուրդին: Արցախյան շարժումը ծավալվեց նոր թափով: Գորբաչովյան ղեկավարությունը ոչ միայն չդատապարտեց սուեզայիթյան ոճիրը, այլև հայերի օրինական ու արդարացի պահանջը՝ մայր հայրենիքի հետ Արցախի վերամիավորման վերաբերյալ, որակեց իբրև անօրինական, հակասահմանադրական, իսկ

շեքթման մասնակիցներին կպցրեց ծայրահեղականներ /էքստրեմիստներ/ պիտակը:

1988թ. մարտին Երևանում ու Արցախում վերսկսվեցին հանրահավաքները: Մայիսից Ազատության հրապարակում ուսանող-երիտասարդությունը ձեռնարկեց նստացույցեր՝ պահանջելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան՝ ԼԴԽ-ի դիմումը /փետրվարի 20-ի նստաշրջանի/ քննարկելու համար: Փաստորեն հայությանը բացարձակապես չբավարարեց ԽՍՀՄ կառավարության մարտի վերջին ընդունած որոշումը ԼԴԽ-ի սոցիալ-տնտեսական զարգացման մասին, ըստ որի մոտ կես միլիարդ ռուբլու շինարարական աշխատանք էր նախատեսվում Արցախում: Հայ ժողովուրդը ձգտում էր հարցի ոչ թե տնտեսական, այլ քաղաքական լուծմանը՝ վերամիավորմանը:

Ժողովրդի ճնշման տակ 1988թ. հունիսի 15-ին հրավիրված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հարգեց ԼԴԽ-ի դիմումը և դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ հարցը դրականորեն լուծելու համար: Հունիսի 17-ին հրավիրված Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը անընդունելի համարեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնելու ԼԴԽ-ի դիմումը: Հունիսի 18-ին Մոսկվայում հրավիրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը մերժեց հայերի խնդրանքը և, ելնելով ԽՍՀՄ սահմանադրության այն դրույթից, թե հանրապետության սահմանները չեն կարող փոփոխվել առանց նրա համաձայնության, պաշտպանեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 17-ի որոշումը:

Կենտրոնական իշխանությունների հակահայկական այս դիրքորոշումը ավելի բորբոքեց շարժումը: 1988թ. նոյեմբերի 7-ին Հոկտեմբերյան հեղափոխության 71-րդ տարեդարձին նվիրված շքերթն անցավ հանրապետության ղեկավարությանը դատապարտող լոզունգներով, «Միացում» և «Արցախ» կարգախոսներով:

Հայաստանում շարժումը ճնշելու նպատակով 1988թ. նոյեմբերի 24-ին իշխանությունները Երևանում մտցրեցին հատուկ դրություն: Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժը, ժամանակավորապես պատճառ դարձավ շարժման անկմանը: Գորբաչովյան ղեկավարությունը առիթն օգտագործեց շարժման առաջնորդ հանդիսացող «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ձերբակալելու համար /Լ.Տեր-Պետրոսյան, Վ.Մանուկյան, Ա.Մանուչարյան և ուրիշներ/: 6 ամսյա բանտարկությունից հետո, ժողովրդի համառ պայքարի, աշխարհահռչակ գիտնական Անդրեյ

Սախարովի և այլոց օժանդակության շնորհիվ 1989թ. մայիսին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներն ազատ արձակվեցին: «Ղարաբաղ» կոմիտեի հիմքի վրա ստեղծվեց Հայոց համազգային շարժում կազմակերպությունը:

1989թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում ԼԴԽ-ում հատուկ կառավարման կոմիտե ստեղծելու մասին, որը գլխավորեց ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Վոլսկին: Այս կոմիտեն փոխարինեց իշխանության տեղական մարմիններին՝ մարզային և շրջանային խորհուրդներին: Պետք է նշել, որ Վոլսկու կոմիտեն որոշակի աշխատանք տարավ ԼԴԽ-ի և ՀԽՍՀ տնտեսական ու մշակութային մերձեցման, մարզի տնտեսական կյանքի աշխուժացման ուղղությամբ: Այս ամենի հետ մեկտեղ, կոմիտեն, Ադրբեջանի ղեկավարության ճնշման տակ, փորձեր կատարեց մարզը ադրբեջանականացնելու համար: Պատահական չէ, որ ավելի շատ շինարարական աշխատանք տարվեց ադրբեջանաբնակ վայրերում: Հատուկ կոմիտեն պահպանվեց մինչև 1989թ. նոյեմբերի 28-ը: Այդ ընթացքում ադրբեջանական ղեկավարությունը սկսեց իրականացնել Հայաստանի ու Արցախի ճանապարհների շրջափակում, որը հսկայական տնտեսական վնաս հասցրեց երկրաշարժից ավերված Լեռնիականը, Կիրովականը, Սպիտակը, Ստեփանավանը վերաշինելու գործին:

1989թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և սեպտեմբերին ստեղծված ԼԴԽ Ազգային խորհրդի համատեղ որոշմամբ ԼԴԽ-ը հռչակվեց ՀԽՍՀ մաս: Սակայն այս որոշումը չճանաչվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից և չկենսագործվեց: Ի պատասխան հայերի պայքարի՝ ադրբեջանցիները Բաքվում 1990թ. հունվարին նոր ջարդեր կազմակերպեցին: Նորանոր հայ գաղթականներ մազապուրծ գաղթեցին Հայաստան ու ԽՍՀՄ այլ հանրապետություններ: Ավելի ուժեղացավ Հայաստանի ու Արցախի շրջափակումը Ադրբեջանի կողմից: Վերջինս այս գործողություններում ստանում էր կենտրոնական իշխանությունների աջակցությունը: Պատահական չէ, որ մոսկովյան ղեկավարության ցուցումով ԽՍՀՄ զինված ուժերը 1991թ. ապրիլի վերջին բռնությամբ տեղահանեցին Խանլարի շրջանի հայտնի Գետաշեն և հարակից գյուղերի հայ բնակչությանը և կազմակերպեցին կոտորածներ: Այսպես շարժումը թևակոխեց իր զինված պայքարի փուլը: Ադրբեջանը վերջնականապես վճռեց հարցը լուծել արցախահայությանը կոտորելու ու բռնագաղթեցնելու հայտնի թուրքական մեթոդներով: Արցախի հայությունը չիուսալքվեց և զենքը ձեռքին դուրս եկավ պայքարի: Վիճակը ԼԴԽ-ում

վատթարացավ հատկապես 1991թ. վերջից, երբ կործանվեց խորհրդային կայսրությունը և Արցախից դուրս բերվեցին խորհրդային զինված ուժերը: Օղակի մեջ վերցվեց մայրաքաղաք Ստեփանակերտը, որի վրա մահացու կրակ էր տեղում 1920թ. հայկական կոտորածից հետո հիմնականում ադրբեջանաբնակ դարձած Շուշի քաղաքից:

Հայկական զինված կամավորական ջոկատները 1991թ. դարձան մարզի հայ բնակչության անվտանգության պաշտպանության միակ միջոցները: 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի ժողպատզամավորների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության ծնունդը: Այսպես հիմք դրվեց նոր հայկական մի պետության: ԼՂՀ առաջին նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը:

Նորաստեղծ պետությունը դիմացավ պատմության բոլոր փորձություններին: Հանրապետության զինված ուժերը 1992թ. սկզբներին ազատագրեցին ադրբեջանաբնակ կրկժան և խոջալու բնակավայրերը, իսկ մայիսի 8-9-ին՝ գնդապետ Արկարի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ, նաև հինավուրց Շուշի քաղաքը: Մի քանի օր անց հայկական զինված ուժերը թշնամուց մաքրեցին Լաչինի միջանցքը և դուրս եկան դեպի Հայաստան: 1993թ. Ղարաբաղի ազատամարտիկները ազատագրեցին նաև Քելբաջարի /Քարվաճառ/ շրջանը, ապա Աղդամը, իսկ աշնանը՝ նաև Ղաշտային՝ Ղարաբաղի շատ շրջաններ՝ Ֆիզուլին, Ձանգելանը, Ջաբրաիլը և այլն:

Այսօր էլ Արցախը մաքառում է իր անկախության համար՝ ապագայի նկատմամբ լցված խորը հավատով:

57

94. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ: ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ

1985թ. ապրիլին Մ.Գորբաչովի հռչակած «վերակառուցման» քաղաքականությամբ իրականացվող բարեփոխումները 1980-ական թթ. վերջին թև զգալիորեն դեմոկրատացրին հասարակությունը, սակայն ի վիճակի չէր նաև կանխելու ԽՍՀՄ տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորացումը: Երկրում սրվեց ազգային հարցը, ուժեղացան հանրապետությունների անջատողական ձգտումները, փաստորեն սկսվեց քաղաքական քաոս: Ազգային շրջաններում, օգտվելով ստեղծված անկառավարելի վիճակից, ազգային փոքրամասնությունները,

հատկապես միութենական հանրապետություններում, փորձեցին հասնել իրենց անկախության հռչակմանը: Անկախացման կուրս բռնեցին մերձբալթյան հանրապետությունները, Վրաստանը, Ուկրաինան, ավելի ուշ՝ Հայաստանը: Ամենուր խորանում էր քաղաքական և տնտեսական ճգնաժամը: ԽՍՀՄ-ի հիմքերին առաջին ուժեղ հարվածը հասցրեց Ղարաբաղյան շարժումը: Գորբաչովյան ղեկավարությունը մերժեց հայերի օրինական պահանջը՝ հայրենիքին միանալու հարցում: Մոսկվայի թողտվությամբ 1988թ. փետրվարի վերջին Սունգայիթում կազմակերպվեց հայերի կոտորած: Օգտվելով 1988թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժից հետո ստեղծված ծանր վիճակից՝ ԽՍՀՄ ղեկավարությունը ձերբակալեց Ղարաբաղ կոմիտեի անդամներին՝ Իգոր Մուրադյանին, Վազգեն Մանուկյանին, Լևոն Տեր-Պետրոսյանին և ուրիշներին: Հայտնի մտավորականներ Անդրեյ Սախարովի, նրա կնոջ Ելենա Բոներ-Ալիխանյանի, Գալինա Ստարովոյտովայի ջանքերով, վեց ամիս անց, նրանք ազատվեցին:

1989թ. նոյեմբերին կայացավ ԳՀՀ-ի 1-ին հիմնադիր համագումարը: ԳՀՀ-ն թև գլխավորեց շարժումը, սակայն չդարձավ համաժողովրդական կազմակերպություն: Թույլ տրվեցին մի շարք կոպիտ սխալներ, ինչպես «Նաիրիտի», Ալավերդու պղնձածուլական, Կիրովականի քիմիական և այլ գործարարների փակումը՝ տնտեսական հարված հասցնելով երկրի էկոնոմիկային:

1990թ. մայիսին խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան ժողովրդավարական ընտրություններ բազմաթիվ քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների մասնակցությամբ: Քանի որ ավանդական հայ քաղաքական կուսակցությունները դաշնակցությունը, ռամկավարները և հնչակյանները դեռ Հայաստանում կազմակերպչորեն չէին գործում, ուստի ընտրություններում ծայրերի մեծ մասը ստացան «Հայոց համազգային շարժում» կազմակերպության և Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչները: Կոմունիստական վարչակարգից հոգնած և Արցախի հարցում ԽՍՀՄ կոմունիստական ղեկավարության հակահայկական դիրքորոշումից հիասթափված ժողովուրդը ծայրերի զգալի մասը տվեց ԳՀՀ-ի օգտին:

1990թ. օգոստոսի 4-ին հանրապետության նորընտիր խորհրդարանը Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց ԳՀՀ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Վերջինս Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նախագահն էր, որ կոմունիստական կուսակցության

անդամ չէր: Դրանով իսկ Հայաստանում վերջ էր տրվում կոմկուսի մենիշխանության յոթանասունամյա շրջանին:

1990թ. օգոստոսի 23-ին հանրապետության նորընտիր Գերագույն խորհուրդը, երկարատև ու հանգամանալից քննարկումից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»: Այս կարևորագույն փաստաթղթով հանրապետության խորհրդարանը հռչակում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, Հայաստանի կարգավիճակը Խորհրդային պետության համակարգում՝ մինչև լիակատար անկախության ձեռքբերումը:

Հռչակագիրը կարևոր հիմնական փաստաթուղթ էր դեպի անկախության տանող ճանապարհին: Այն նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները: Փաստաթուղթը բաղկացած էր 12 կետից:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետության /կրճատ՝ Հայաստան/, այսինքն՝ այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել է 1918թ.: Այսպիսով Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը /առաջինը՝ 1918- 1920, երկրորդը՝ 1920-1990 և երրորդը՝ 1990թ. հետո/: Կարևոր է նշել, որ թև Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր և չէր օգտվում իրական պետական անկախություններից, սակայն նրա շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, չէր գործում հանրապետությունում:

Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում էին բացառապես հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսական հիմքում պետք է ընկած լինեին մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Հողը իբրև մասնավոր սեփականություն, պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա

իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի միջոցներից: ՀՀ-ն պետք է հասնի սեփական դրամական միջոցների ստեղծմանը:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի՝ իբրև պետական լեզվի կիրառման հիմնահարցին: Ներքին ամբողջ գործավարությունը կատարվելու էր միայն հայերենով:

Հռչակագիրը արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները:

Լ.Տեր-Պետրոսյանը թեև դեմ արտահայտվեց հռչակագրում 1915թ. հայոց եղեռնի և հայկական տարածքների մասին կետ մտցնելու պատգամավորների մեծ մասի պահանջին, սակայն քվեարկությամբ այդ մասին հողված, այնուամենայնիվ, մտցվեց: Կարևոր էր, որ հռչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունը Արցախը իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:

Մինչև նոր սահմանադրության հիմնական օրենքի ընդունումը, հռչակագիրը ծառայում էր իբրև ծրագրային փաստաթուղթ: 1991թ. սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի ժամանակ Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը քվեարկեց ԽՍՀՄ-ից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու օգտին: Հանրաքվեի արդյունքների հիման վրա սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:

1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում անցկացվեցին առաջին նախագահական այլընտրանքային ընտրությունները՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: ՀՀ առաջին նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը, փոխնախագահ՝ Գ. Հարությունյանը:

1991թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսի մայրաքաղաք Մինսկի մոտ՝ Բելլովեժսկ քաղաքում երեք սլավոնական հանրապետությունների միջև կնքված համաձայնագրով հայտարարվեց ԽՍՀՄ վերացումը: Սկսվեց նորաստեղծ հանրապետությունների հռչակման գործընթացը: 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում կազմավորվեց ԱՊՀ-ն՝ Անկախ պետությունների համագործակցությունը, որի մեջ մտան նախկին ԽՍՀՄ 12 հանրապետություններ, այդ թվում՝ Հայաստանը:

Մինչև 1991թ. վերջը Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց աշխարհի 30 երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլոց կողմից, իսկ 1992թ. մարտի 2-ին դարձավ ՄԱԿ-ի՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամ: ՄԱԿ-ին անդամագրվելով՝ Հայաստանը դարձավ միջազգային հանրության անդամ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական լեռնաշխարհի /բնաշխարհի /	3
2. Նախնադարյան - համայնական հասարակարգը Հայաստանում	5
3. Հայ ժողովրդի կազմավորումը	8
4. Ուրարտու - Արարատյան թագավորություն	12
5. Հայաստանը Երվանդունիների օրոք	15
6. Հայաստանը Արտաշես I-ի օրոք: Հայկական հողերի միավորումը	18
7. Հայկական պետության հզորացումը Տիգրան Մեծի օրոք	22
8. Հայ-հռոմեական պատերազմները Տիգրան Մեծի օրոք	24
9. Հայաստանի պայքարը Հռոմի դեմ Արտավազդ II-ի օրոք: Արտաշեսյանների անկումը	26
10. Հին Հայաստանի տնտեսական կյանքը և պետական կարգը	28
11. Հին հայկական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև մ.թ. III դարը	31
12. Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում /Տրդատ I/	33
13. Քրիստոնեության ընդունումը Հայաստանում	35
14. Ֆեոդալիզմը /ավատատիրությունը/ Հայաստանում: Պետական կարգը	37
15. Հայաստանը IV դ.: Հայ ժողովրդի պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ: Արշակ II	40
16. Հայաստանը Պապի օրոք: Արշակունիների անկումը	42
17. Ազատագրական ապստամբությունը 450-451թթ. /Վարդանանց պատերազմ/	45
18. 481-484թթ. ազատագրական ապստամբությունը /Վահանանց պատերազմ/	48
19. Ազատագրական ապստամբությունները Հայաստանում 6-րդ դարում: Հայաստանի երկրորդ /591թ./ բաժանումը	50
20. Արաբական առաջին արշավանքները: Հայաստանի նվաճումը արաբների կողմից	53
21. Հայ ժողովրդի պայքարը արաբական տիրապետության դեմ 8-րդ դարում	55

22. 850-855թթ. ապստամբությունը արաբական տիրապետության դեմ	59
23. Հայ գրերի գյուտը: Մեսրոպ Մաշտոց	61
24. Հայ մշակույթը վաղ միջնադարում /5-8-րդ դարեր/	64
25. Պավլիկյան շարժումը Հայաստանում	67
26. Հայկական պետականության վերականգնումը Բագրատունիների օրոք: Աշոտ I Բագրատունի	69
27. Հայաստանը Սմբատ I-ի և Աշոտ II Երկաթի օրոք	71
28. Բագրատունյաց Հայաստանի վերելքը 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբին	74
29. Բագրատունյաց թագավորության տրոհումն ու անկումը	76
30. Հայաստանի հասարակարգը և սոցիալ-տնտեսական կյանքը 9-11-րդ դարերում	79
31. Թոնդրակյան աղանդավորական շարժումը Հայաստանում 9-11-րդ դարերում	82
32. Սելջուկ-թուրքերի արշավանքները Հայաստան	84
33. Հայ-վրացական զինակցությունը սելջուկների դեմ պայքարում 12-13-րդ դդ.	86
34. Կիլիկիայի հայկական պետության առաջացումը: Իշխանության ժամանակաշրջան	89
35. Թագավորության հռչակումը: Լևոն II	91
36. Կիլիկյան Հայաստանը թագավորության ժամանակաշրջանում	93
37. Հայաստանը մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում	96
38. Հայաստանը 14-15-րդ դարերում	99
39. Հայ մշակույթը 9-14-րդ դարերում	102
40. Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում /16-17-րդ դարեր/: Հայաստանի բաժանումները	105
41. Հայաստանի ազատագրության խնդիրը 15-17-րդ դդ.	108
42. Ազատագրական շարժումները 17-րդ դարի վերջին քառորդին և 18-րդ դարի սկզբին: Իսրայել Օրի	110
43. Ռուսական գործերի Կասպիական արշավանքը: Ազատագրական պայքարը Արցախում 1720-ական թթ.	112

44. Ազատագրական մարտերը Սյունիքում: Դավիթ Բեկ	115	պատերազմում: Կամավորական շարժում	177
45. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 18-րդ դարի երկրորդ կեսին: Հովսեփ Էմին	117	66. 1915թ. հայոց մեծ եղեռնը	180
46. Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը	120	67. 1915թ. ինքնապաշտպանական կռիվները	182
47. Հայ մշակույթը 15-17-րդ դդ.	123	68. Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո: Ազգային խորհուրդների ստեղծումը	185
48. Իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դ. սկզբին	126	69. Հայաստանը 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Թուրքահայաստանի մասին դեկրետը	188
49. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին	129	70. Թուրքական ներխուժումը Անդրկովկաս 1918թ.: Մայիսյան հերոսամարտերը: Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը ...	192
50. 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը և արևմտահայերի գաղթը	132	71. Հայաստանի Հանրապետության կազմավորումը	197
51. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում 19-րդ դարի 30-60-ական թթ.	135	72. Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920թթ.	200
52. Արևմտյան Հայաստանը Թուրքիայի լծի տակ 19-րդ դարի 30-60-ական թթ.	138	73. Հայաստանի Հանրապետության արտաքին դրությունը (1918-1920)	204
53. Ձեյթունի 1862թ. ապստամբությունը	141	74. Փարիզի խաղաղության վեհաժողովը: Սևրի դաշնագիրը ..	206
54. Հայ մշակույթը 18-րդ դարում և 19-րդ դարի I կեսին	143	75. 1920թ. թուրք-հայկական պատերազմը: Ալեքսանդրապոլի պայմանագիրը	208
55. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցը	146	76. Հայաստանի խորհրդայնացումը	213
56. Ազգային-ազատագրական խմբակների առաջացումը /1860-80-ական թթ./	150	77. Ձանգեզուրի զոյամարտը 1918-1921թթ.	216
57. Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը	152	78. Արցախը 1918-1923թթ.: Արցախահայության ազատագրական պայքարը	219
58. 1890-ական թվականների հայկական կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը	155	79. 1921թ. փետրվարյան ապստամբությունը: Զաղաքացիական կռիվները Հայաստանում	222
59. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը 19-րդ դարի 90-ական թթ.	158	80. 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը	226
60. Ֆիդայական շարժում /19-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկզբ/	160	81. Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը	229
61. Հայ մշակույթը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին	163	82. Խորհրդային Հայաստանի տնտեսությունը 1921-1928թթ. ...	232
62. Հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները Հայաստանում 20-րդ դարի սկզբին	167	83. Խորհրդային Հայաստանի ինդուստրացումը (1928-1940թթ.)	235
63. Արևելյան Հայաստանը ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին /1905-1907թթ./	171	84. Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության կոլեկտիվացումը	237
64. Հայաստանի բարենորոգումների խնդիրը առաջին աշխարհամարտի նախօրյակին /1912-1914թթ./ ..	174	85. Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-30-ական թթ.	239
65. Հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմում: Կամավորական շարժում	177	86. Հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում 1920-30-ական թթ.	242
		87. Հայկական սփյուռքը 1920-1930-ական թվականներին	245

88. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին /1941-1945թթ./	248
89. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1945-1980-ական թվականներին	252
90. Հասարակական-քաղաքական էյանքը Խորհրդային Հայաստանում 1945-1985թթ.	255
91. Սփյուռքը ժամանակակից փուլում	257
92. Հայ մշակույթը 1945-1980-ական թթ.	260
93. Արցախյան շարժման նոր փուլը	264
94. Հայաստանի անկախության հռչակագիրը: Անկախ պետականության հռչակումը	268

Աշոտ Աղասու Մելքոնյան
Հայոց պատմություն
Դասախոսությունների ձեռնարկ

Ашот Агасиевич Мелконян
История Армении
Курс лекций

Հրատարակիչ
Ա.Վ.ԻՍՈՅԱՆ

Խմբագիր
Լ.Վ.ԱՍԻՐՉԱՆՅԱՆ

Տեխ. խմբագիր
Վ.Յ.ՅՈՎԱԵՓՅԱՆ

Համակարգչային ձևավորումը
Վ.Յ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Սրբագրիչ
Ռ.Ն.ԱՆԻՉՅԱՆ

ծավալը՝ 17 մամուլ

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ
«ՀԱՅՔ» ՏՊԱՐԱՆՈՒՄ (ԵՐԵՎԱՆ-19, ՄԱՐՇԱԼ ԲԱԴՐԱՄՅԱՆ 24Դ)